

Учредительский

уведомление

Змеинский

участок

IV

-

1913

891.99.092

2-79





Sam Liganjian
PERSONAL LIBRARY

ԳՐԱԳԷՏ ՀԱՅԵՐ

ԶՈՐՐՈՐԴ ՇԱՐՔ

13 APR 2011

891.99.092

Ե-79

Հ. ՍԻՄԷՈՆ ԵՐԵՄԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԴԵՄՔԵՐ

ԳՐԱԳԷՏ ՀԱՅԵՐ

ԶՈՐՐՈՐԴ ՇԱՐՔ



ՎԵՆԵՏԻԿ

ՏՊԱՐԱՆ Ս. ՂԱԶԱՐ

1913

Ե. Տէմիրճիպաշեան իր քերթուածները պարբերական մամուլի մէջ հրատարակած է: Տէմիրճիպաշեան իմաստասէր է բայց և քնարասէր, տեսէք ո՞ր աստիճան կը գուրգուրայ քնարին վրայ. « Իմ դպրոցական ընկերներէս մին, — որ չէ Ռէթէոս Պէպէրեանն անշուշտ, և ո՛չ Մինաս Չեբազ, — որ մը կ'ըսէր ինձ լըջօրէն. «Պիտի վաճառեմ բոլոր գրական ու քերթուական հատորներս, և միայն ուսումնական գրքեր պիտի պահեմ գրատանս մէջ:» Չը խոստացայ դասընկերոջս՝ հետեւիլ իր օրինակին: Վաճառել Աստուածաշունչ, Հոմերս, Վէրգիլիոսս. վաճառել Ալիշանս, Պէշիկթաշլեանս. բայց այդ բանաստեղծք գիտնոց ինչ վնաս կը հասցնէին մատենադարանիս մէջ, որպէս զի զայնս ի միմեանց անջատէի, որպէսզի զայնս ի վաճառ հանէի: Քնարատեաց ընկերակցիս խօսքն իմ վրայ այն տպաւորութիւնը ըրաւ, զոր պիտ'ընէր բանն Յուդային՝ որ զար ըսէր ինձ. « Ես պիտի վաճառեմ Յիսուս...: » Քնարը իրեն համար չափազանց թանկագին է. միայն կը մնայ գիտնալ թանկագլին էր նաև իր մտքին սեփական քնարը: Ընդհանրապէս սիրոյ քնարը աւելի սիրուած է քնարասէր մտքերէ: Տէմիրճիպաշեան այդ տեղ անտարա-

կոյս բացառութիւն պիտի չի կազմէր: Ան Նաոինա սուրբ սէր մը կը ձօնէ.

« Խնդրես յինչ տաղեր բազում,
Այլ շնորհովըն շքիանոյշ
Որով մանուկ մը փափկասուն
Մօրմէն հայցէ միրզ եւ անոյշ:

Շրթամբ ւ'աջօք « տա՛ղ տա՛ղ » գոչես,
Մանո՛ւկ, կի՛ն, ճի՛ն, թէ քերո՞ք ես:
Թրթոյ քնարս ահա ձայնիւդ,
Երգոցս ո՛վ դու սըխրագոյն նիւթ. — »

Ու այս տողերը ձօնելուն, անհուն աղերսներ կը լսես իր բերնէն. Նաոինա ձայնը թէ լսէ, պատրաստ է թողուլ գիրք, զրիչ, դրախտ ու տաճար:

Ծաղկանոյշին կարծես մտադիր է ծաղկի թերթիկներ նետել. քերթուածը կը կրէ « Եկեալար և արտասուք » վերնագիրը. ինչ է, ոտնաթօրիկ թիթեռնիկ.

« Երէկ եկայ
Շուրթներուդ վրայ
Մեղը հաւաքել,
Այտերուդ վրայ
Սէր ճաշակել: »

Անյագօրէն անոր աչուրներուն մէջէն կ'ուզէ խմել անմահարար նեկտար. և յուսակտուր տուն կը դառնայ, նեկտարի տեղ արտասուք կը խմէ:

Առ Նայիս «Թաշկինակ» ով կ'ուզէ սէրը յայտնել, զերդ լուսնկայ՝ Թաշկինակը հմայիչ է.

«Այլ Թաշկինակ ոչ ունի բառ.

Յիւր ծաւն ասեղդ ոստոստ խաղայ.

Դաշնակն այն, է՛ բերանդ անճառ, —

Մե՛ղը ի շըրթանցդ յիմ սիրտ տեղայ:»

Մահասարսուռ տխրութիւն մ'ունի իր սիրոյ այս հարցը

«Որ մեռանի սիրով, ո՞չ կեայ յաւիտեան:»

Ինչ է այս հարցը. Տէմիրճիպաշեան ունի վարդ մը հոտաւէտ, շնչաւոր, այգուն փթթող, երեկոյին չի խամրող վարդ մը. արփենիին ներքեւ գոհարի հանգոյն կը շողայ, անգիւտ ծաղիկ մըն է այն և ծաղիկներու փունջ. իրեն՝ երկինքէն ձօնուած է այն անմահ վարդը. և բարեկամ մը մայիսի ծաղիկ մը իրեն նուիրելուն կ'ըսէ այս խօսքերը.



Ն. Տէմիրճիպաշեան

« Պահէ՛ գիւմ վարդ. բոյինն առ բեզ տացէ՛ մահ: »

Բանաստեղծը համոզուած է, որ սիրով մեռնողը, մահ չի տեսնար, այլ անմահ կը մնայ:

Սէրը իրեն համար երկնային պարգեւ է: Տէմիրճիպաշեանի սիրահարական քնարին ձայնը, յուզում չունի. հոն իր լեզուն չոր է, զգացմունքը խամրած. ինքնին կրնայ խոկալ իր այս տողերուն վրայ.

« Ասես. « Յամար ես, երգդ է հին. »

Մընաս բարեաւ, ո՛ր Սէր իմ... »

Կարգ մը գրիչներ անձնական յիշատակներով կը հրճուին, անձնական փառքերով կը հիանան, և այն ատեն իրենց գրիչը կրակոտ լեզու մը կ'ունենայ. կրակ մը սակայն որուն ջերմութիւնը, ինքնագովը միայն կը զգայ, ոչ ընթերցողը: Խորհրդաշեանի « Գրիչս ու մկրատս » քերթուածը. Մկրատը նուէր է Տիրան Նազարեանէ, ոսկի Գրիչը՝ Տ. Բժիշկ ֓էշտիմալճեանէ. ուրիշներ ալ Գարեգին Երամեան և Մինաս Զերազ իրեն գրիչ նուիրած են.

և տեսէք թէ այդ նուէրներուն առթիւ ի՛նչ կը գրէ. —

« Մկրատ մ'ընտիր, սո՛ւր, ինձ նուէր տըրուեցաւ

Այլ չեմ կարող զայն գործածել զրչի պէս. Գրգուէ զրիչս, իսկ հատանէ դա անցաւ. Գրրիչս է կին, մըկրատս այր է յայտնապէս:

Գրրիչս է կին ոսկեհեր, կէս հոլանի. Զգայքս ու հոգիս համակ յուզէ հեշտաբար. Եւ թըղթոյս վրայ՝ փոխանակ սեւ մեղանի՝ կաթէ նեկտար, մե՛ղր, եւ արտօսը զո՛վարար:

Արծաթափայլ մին, ոսկեփայլ միւսն յորժամ

Կան առ երի, շիկնի՛ գրրիչս ամօթլեած. Մըկրատն է լիբը՝ բաց սըրունիւքն յարժամ,

Փետրովքն ոսկի՛ փափուկ գրրիչս է ծածկուած:

Այլ մըկրատին մօտ չեմ թողուր գիւմ գրիչ. Սիրէ զաջն իմ, եւ աջս իրանն իւր պաշտէ. Յորժամ գրեմ, գո՞գ դրախտին իմ բնակիչ, Եւ հըրճուանքէն՝ գրրիչս ալ յաջս ոստոսէ:

Շարժմանն յորժամ ընկալագիր զըրեմ ես,
 Յայնժամ եւեթ ի ձեռս առնում ըզմկրատ.
 Այլ երբ զըրեմ թուղթ առ կուսան սի-
 րակէզ,
 Գըրիչս ափիս մէջ յանըզգայս գայ զերդ
 հրատ:

Յորժամ նիշեմ, յորժամ վիպեմ, կամ
 ձառեմ.

Յորժամ թըղթեմ առ դիս, առ վեհս, առ
 վահրամ,

Գըրիչս հոգւոյս համայն հըրօքն ես վա-
 ռեմ,

Եւ քարտիզին վրայ բոցաթեւ բանք սու-
 րան:

Մըկրատն՝ օր մը՝ սակայն տարպւ յաղ-
 թանակ

Ի վերայ թանկ ոսկի զըրչիս անարատ:

« Հիւսք մը հերացդ ո՞չ ինձ տաս՝ քաղցր
 յիշատակ. »

Պատասխանեց կոյսն. « Ո՛հ, ու՞ր է քո
 մըկրատ »:

Գի՛ւտ, հիանալի գիւտ... զրելու ատեն
 ալ դրախտի բնակիչ է, ու զրիչը այնքան
 կը շփանայ, որ մինչեւ իսկ կը սկսի ու-
 տոստել:

Ու զըչին հետ միայն չի զուարճանար,
 այլ սեւ մեռելական փոսեր կը փորէ, ուր
 իր մաղձը կը թաղէ. ի՞նչ զարշահոտ յո-
 ռետեսութիւն, կը սիրէ ամայի ծովափը
 ուր կայ ցուրտ դիակ.

« Ո՛հ, դիակաց սիրեմ բոյրն, եւ մանա-
 ւանդ տօթ յամառ », ,

Իրեն համար դիակին մարմինը մեղը է,
 դիւցային համադամ...

« Յայնժամ մատչիմ այնմ, որպէս համեղ
 պըտղոյն վեհն Ադամ. »

— Ո՛հ, իմ դրախտն է մահատունն եւ
 սիրեմ յոյժ ըզկիպար... »

Մեռնիլ կը սիրէ, դիակ կը սիրէ. բայց
 մահուան ճաղը միայն իր մաղձոտ յուշե-
 բուն թող ծառայէ: Ինքը ուրիշին մահն
 ալ կ'ուզէ: Տեսէք ի՞նչ խելայեղ տողեր
 կը թռչին իր թռուցիկ քնարէն.

« Երբ՝ գիրկընդիստն ի ցամաքն՝ ամօլ
 տեսնեմ սիրակաթ »

Ոյք տան հրաժեշտ առ միմեանս, քանզի
 զընայ այրն հեռուն,

Զերդ կինն եւ ես աղօթեմ զի... ծով՝
 սահուն որպէս կաթ՝

Ուրի՛, պայթի՛ր, կըլանէ՛ նաւն ընդ կոհակս
երերուն,

Ո՞ ուղեւորին կեանքն նետէ հոն՝ աւազին
վրայ, երկաթ...»

Բնական է այսպիսի յոռետեսի մը հա-
մար՝ քննադատ գրիչներ կարող չեն նպաս-
տաւոր գաղափարներ յայտնել: Առիթը
ներկայացած կը գտնեմ յիշատակելու Տր.
Պողոս Քօլօլեանի սա քննադատականը.
«Ամենէն շատ աղմուկ հանող ու ինքզինքը
յոռետես հռչակող գրագէտը Եղիա Տէմիր-
ճիպաշեան եղած է: Քսան տարիի չափ
Պոլսոյ հրապարակը լեցուցած է իր ան-
հասկանալի գրականութեամբը, ուր ան-
հեթեթութիւնները, միջակութիւնները, ցա-
ւազարութիւնները ու գլխաւորաբար վտան-
գաւոր իմաստասիրութիւնը սեղմեցուցած
է առանց ձեւին, ոճին, գաղափարին կա-
րեւորութիւն տալու... Տէմիրճիպաշեան
անկշիռ ուղեղ, ըրած է մէկ քանի անգամ
անձնասպանութեան փորձեր, Նիրվանա-
յին ծոցը երթալու թաղուելու համար վեր-
ջապէս: Նիրվանան եղած է իրեն համար
անէացումի մէկ հատիկ միջոցը, որով
մարդ կեանքի պատրանքներէն խուսափե-
լով կ'իյնայ մահուան ծոցը: Պուտոյա-
կանութիւնն է աս, որու մէկ հատիկ ու

ապիկար ներկայացուցիչը եղած է Տէմիր-
ճիպաշեան: — Չարչարուած հոգի մը իբրը,
հիւանդ ուղեղ որ «Գաղափարներու իմաս-
տասիրական ճշմարտութիւններուն հետ»
կը խաղայ:» Մեղմացուցիչ տող մը կըր-
նանք գտնել այս ծանր ճշմարտութեան
մէջ: Նիւթեր կ'ընտրէ՛ երբեմն գեղեցիկ,
շատ անգամ տգեղ, բայց ինչ որ ալ ըլ-
լայ, նիւթը ինքնին խնդիր չէ, անոր հոգի
տուողը ձեւն է, շունչ տուողը երեւակայու-
թեան կրակը: Սակայն ամէն պարագայի
մէջ, տարօրինակ է Տէմիրճիպաշեանի քեր-
թողական գրիչը: Միեւնոյն քերթուածին
մէջ այլանդակ յեղաշրջումներ կ'ունենան
նիւթ, ձեւ, զարդ, գոյն, որոնք խառ-
նակուած են. պատկերներու այլակերպու-
թիւնը շատ դիւրին է, դրախտը դժոխքի,
ծիծաղը, արտասուքի, տգիտութիւնը լոյսի
կը փոխուին. ու չենք հասկնար թէ ինչ
է բանաստեղծին միտքը. լալ կ'ուզէ թէ
խնդալ, և ընթերցողը ոչ կուլայ և ոչ
ալ կը ծիծաղի, այլ կը ցաւի այդ ար-
գահատելի ուղեղին վրայ: Գծուարաւ կը
գտնենք յաջողակ, գրաւիչ ամբողջական
քերթուած մը, որ ըլլայ պատիւ, փառք
իր քնարին: Բայց պէտք է ըսել թէ ու-
նի երբեմն փափուկ մտքեր, ինչպէս սա
իր «Ապրիլ» տաղին մէջ.

« Ո՛ր բանք երկուց
 Աոն եւ կնոջ անհանգոյց,
 Ո՛ր միութիւն
 Մըտաց, հոգւոյն ու մարմնոյն
 Փափկիկ կուսին ու խանդավառ պա-
 տանւոյն: »

Ալեակը երկու
 Քանի՛ դժբախտ են, Մաննու՛.
 Գըրկընդխառնումն,
 Շըթանց մեղրանոյշ հըպումն,
 Զըլացուած է ջուրց — այն անճառ վայե-
 լումն:

Իսկ մենք ալիք
 Եւ թէ՛ թռչուն ենք, Մաննիկ:
 Զերդ այն կապոյտ
 Սիրահարներ՝ վազենք շոյտ.
 Եւ համբուրենք զիրար զո՛րգ այն
 արտոյտ:

Ես ալիքն եմ,
 Սեւ հուր աչուիդ ցուպցնեմ:
 Թռչունն ես դու,
 Տանիս ընդ քեզ երկնաչո՛ւ
 Սխաբս ու հոգիս ու քնարս յաւէտ քեզ
 հըլու:

Ես թռչունն եմ,
 Դու սուրբ լըծին կոհակն ես.
 Ի քեզ մաքրին
 Շըթունք իմ, թեւք ու հոգին.

Քեւ ես լինիմ երգիչ մ'անրիծ, երկնային:
 Ո՛ր կեանք երկուց. —
 Թէ տըրուէր ինձ Մաննուհույս
 Հետ կեալ յաւէտ.
 Սիրել է՛երգել ետ ընդ ետ
 Իր ոտից տակ իր զրկաց մէջ խնկաւէտ...»

ՕՐ 7825

Իղձերու ներգաշնակութիւն, գորովի
 փափկութիւն ահն յայտնի են ասոնք այս
 համեստ քերթուածին մէջ: Ուրիշ քեր-
 թուածով մը իմաստասիրական եղերգ մը
 հիւսելու ջանք կ'ընէ. գո՛ւր ջանք. բայց
 կը գովենք զինքը, վասն զի կանխաւ կը
 խոստովանի իր համեստութիւնը. կը գրէ.
 « կը հրատարակեմ եղերգս, որ ցուրտ է
 դամբանին պէս»: Սուգն ալ ողբալու հա-
 մար ո՛չ սառն անտասուք, այլ կրակոտ
 հեղեղ պէտք է հոսի քնարէն, որ կարե-
 նայ այրել անմխիթար սգաւորին վշտերը:

Տէմիրճիպաշեանի ներկերը շատ աղքատ
 են, և այդ պատճառաւ իր պատկերները
 բացարձակապէս արժէք չունին. և արդէն
 քիչ են պատկերները: Քերթողական քնա-
 րին ամէն լարերը թրթռացուցեր է. Մէ-
 ֆիսթոֆէլն ալ իր քնարին առջև հաներ
 է: Կէօթէի մեծ սատանը՝ արգահատանքի
 ժպիտով պիտի զիտէ իր նոր պատկերը:
 Եւ որչափ շատ երգեր է մեր բանասիրտը:

Գրութեւ շոյտ. - Գ.



Քայց լաւ էր, քիչ ու ընտիր: Սիրուն կտորներ կը տեսնենք՝ անկազմ երեակա-յութեան հարուածով քարուքանդ. երգի մը ձայնը կ'առնենք. կ'աշխատինք, և ի զո՛ւր, անոր շեշտերը անըմբռնելիին մէջ կը հալին: Եւ սակայն ինքը փոքրիկ դա-սակարգի մը մէջ՝ խոշոր համակրանք մը ստեղծած է իր քնարի մասին:

Բ.

Ձրանսուա Գորէի ընկերական երկար քերթուածներու ազնուական հոգեբանու-թիւնը կը բուրէ իր «Եանգօ» քերթուա-ծըն: Ծովու պատմութիւնն է և միանգա-մայն նաւավարի հոգեկան նկարը: Հա-զուագիւտ համարուած հին բարքերու պատ-մութիւնը կ'ընէ: Չայն կը ձօնէ Հրանտ էֆ. Ասատուրի. ու լաւ է որ ինքն ալ կը խոստովանի թէ այդ ձօնին մէջ բարոյա-կանը շատ է, բանաստեղծութիւնը քիչ: Տէմիրճիպաշեան իր քնարը նաւավարին տուած է, ան կը պատմէ իր ինքնակեն-սագրութիւնը: Ու մենք կը լսենք նաւա-վարին պատմութիւնը: Ան ուսումնասէր չէ, այլ ծով կը սիրէ, և միևնոյն սէրը կը հաղորդէ իր զաւակաց:

Իր ախոյանը ծովն է, սակայն միան-գամայն իր սրտակից մտերիմը: Կեանքի կռիւը ալիքներու վրայ փոթորկող է, քա-ջարի Եանքօն կը սիրէ այդ կռիւը:

«Ո՞վ կ'ըսէր թէ լաստն այն կըտոր մ'էր ծառի,

Իմ պալատս էր այն, իմ դըրբախտ, բարձր իմ գահս,

Եւ՛ ըզբօսանքս, եւ՛ սէրս, եւ՛ փա՛ռքս, — նա՛ւ շահս,

Մըտայ մէջն, եւ աշխոյժ ալիք պար առին նաւակս. համբո՛յր, զըզուանք, նըւա՛զք:

Ծով խորին

Սարսափ ազդեց յիս, սակայն նո՛ր ալ աւիւն.

Իբրեւ զինուորն, որ գնայ հեղուլ ջերմ արիւն

Համակուեցայ գոռզութեամբ լ'ահիւ մեծ: Ձոյգ փայտ նըրբին, եւ մըլանունք մեծա-

մեծ:

Այլ գոչեցի՛ պիտի յաղթեմ ծովուն յար: Եւ ըսկըսայ թիեւ, թեւել խանդավառ:»

Ան իր ջանքով կը յառաջադիմէ, կը յաղթահարէ նախանձորդները . ծովուն նուաճողն ինքն է, իր յաճախորդները կ'ըլ-լան քաղբին մեծամեծները. ու պալատ-

ներու մարմառ ու փայտ կրողն ինքը կ'ըլլայ: Աշխատանքը զինք կը վարձատրէ: Բայց միշտ նոյն համեստ նաւավարը կը մնայ. տուն տեղ կ'ըլլայ, սակայն աղքատ է, և աղքատին ամենէն հարազատ բարեկամը թշուառութիւնն է: Թշուառ է ան. բայց երջանիկ իր աշխատութեամբ:

Տէմիրճիպաշեանի այդ մեծ քերթուածը ինձի այս մէկ գաղափարը կուտայ՝ թէ այն կատարեալ ընկերական կեանքի մէկ նկարն է, ուր ուրախութեամբ կը տեսնեմ աշխատանքի արօթէսը: Պարզ սիրուն մտքեր, չկան խտերախ արփաթեւումներ: Պարզ, ինչպէս կեանքն այն համեստ նաւավարին:

Կը սիրուի այդ քերթուածը. վասն զի հոգեբանութիւնը որքան համեստ, այնքան և ազնուական ու վեհ կ'իշխէ անոր ամէն տողերուն վրայ: Մեղք որ լեզուն փոքր ինչ մշուշապատ է:

Քնարը ձեռքը՝ երբեմն չարածճի կատակներ ալ կ'ընէ. միտքը պարզ, հոգին պարզ, սակայն խորամանկութիւն կ'ուզէ ցոյց տալ. այդ հոգեբանութիւնը խտացած է իր « Գիւղանկար » սա քերթուածին մէջ.

« Խոտերուն տակ՝ որ աջ ահեակ.
Խոտերուն տակ՝ որ ետք առաջ,

Քրմայօրօր, քրմայապար,
Կը պատկերեն զխորհուրդ կենաց,
Կը թաքչի օճն աչքերը բաց,
Դաշտաց աղջկան բոպիկ ոտիցն
Ըսպասելով, թեւ համակ օճն,
Երբ թուխ ամպոց մէջ ծրարուած
Կնոջ գլխոյն, լանջքին լրտես
Մնայ արծին, զոյգ թեւ, մէկ թիռ:
Իր լըրութեամբ աղջկան մարմնոյն,
Մըտաց, սրտին ու հոգւոյն տէր
Միմիայն մարդն ըլլալ կրնայ,
Թեւին՝ շրթամբք ընու զթերին: »

Բանաստեղծը շատ անգամ իր միտքը միգապատ կը թողու. և կ'ուզէ որ ընթերցողը աշխատի ու լուծէ իր քնարին խորհրդաւոր լեզուն:

Հասկցուի թէ ոչ, Տէմիրճիպաշեան որոշ նպատակ մ'ունէր, սեւեռուն իր երեւակայութեան մէջ. գիտէր որ անըմբռնելի գրականութիւն մ'ունէր, անոր համար 1900ին վերջերը ընդունելով թուրքահայ գրիչներէն Պ. Ենովքի այցելութիւնը, անոր կ'ըսէ. « Մենք գրականութիւնը գրականութեան համար կ'ընենք, բայց ինչ օգուտ չհասկցուեցանք »: Ծատեր ունեցած են արժանիք բայց հասկցուած չեն: Ժամանակն է որ կը սրբէ սխալները: Տէմիր-

ճիպաշեան յոռետեսութենէ մղուած՝ կը կարծէ թէ իր արժանիքը չէ ճանչցուած՝ ամէն հեղինակներու պէս բնականաբար ինքն ալ պիտի ունենար իրեն հակակիրներ ու համակիրներ. վերջիններն աւելի շատ էին: Ամենէն մեծ համակրողն պիտի ըլլար Գրմէն Լուսինեան որ կը գրէր. « Բիւրեղեայ և բիւրհմայ հոգեսաւիղն հայոց Ե. Տէմիրճիպաշեան »: Բանաստեղծը այդ պարարտ ածականներուն կ'արժանանար իր « Երկու գառնուկներ » սա քերթուածին համար.

« Արապուստ, ինծի աղուոր խոզի մ'առ. Պրզտիկ ըլլայ, խարակէօզ ու ճերմակ գառ:

Նայէ՛, խոտերն ինչտար մենծցան, երկընցան,

Մէջն է մըտեր, կը կոխկըռտէ Մարիցան:

Մեղքը չէ՞, հայր, պոռո՛ս կանչէ՛, գառնուկիս

Համար ըսէ...: Բէ՞ք շատ փարայ պիտի տաս

Մայիսին կաթ չի՞ տար... ինչո՞ւ կը խընդաս...:

Շատ խոտ կուտամ, բոլոր օրը թո՛ղ ուտէ

Ան մէկդիէն կը բուսնի, ջուրն ալ մօտ է

Առտու իրկուն էս ջուր կուտամ հառաչիկ..

Գառնուկիս ալ տամ ան ջուրէն, չըլլայ գէն: —

Հայրիկ, ընտո՞ր ջուրը կաթի կը փոխուի... Երկինքէն ալ լուսինն ընտո՞ր կը կախուի... Նայէ՛, հայրիկ, գիտես քի կաթ են թափեր

Երկինքը հո՞ն ալ գառներ կան. հոնկէ բէ՛ր, Պաղի պաղի լուսընկան ալ պոռչուողի Մը կ'ըլմանի. իրա՞ւ, հայրիկ, հոն խոզի կայ. ամա մենք՝ ընտո՞ր կ'ըլլայ՝ չենք տեսնար

Աճապ գա՞ռ են մանտըր լուսերն անհամար. Առտուն կանուխ լէ՞որ կ'իջնան, խո՞տ կ'ուտեն

Կանանչ խոտերն ըսել է քի լուս սիւտ են. —

Հովիւն անցաւ, չի կանչեցիր նէ, հայրիկ: Նօրէն կուգայ... պրզտիկ, ճերմակ կըլուրիկ

Գառ մը գատենք... թող տը չի՞ տար չօպակը

Ծաղիկ կուտանք. ու ես... իրեն գրպանը... Ոսկի հաւկիթս ալ կը զընեմ որ տանի

Իրեն տղուն. ան ալ աճապ գառ ունի՞...: Աղուոր հայրիկ աղէկ որ դուն չօպակ չես.

Ան ինչ մարդ է մռնտաւ չիրքիկ, սեւերես.

Ամա չօպակ ըլլայիր նէ, շատ խուզի

Կ'ունենայի... Չօպակ մը ա՛լ, նա՛. խուզի՛,

Խոռզի կ'ուզեմ, աղսպասպն, կանչէ՛, բայց
Չախոռխ դուռը, Մառի՛, քաշէ՛, դուռը
բայց:

Խոռզիս, նա՛, խոտ. ջո՛ւր ալ կ'ուզես, մի՛
պոռար

Ինձի նայէ՛... Էջը. չէ՛, ան չի զըռար:
Հայրի՛կ, Խոռզիս կը վախնայ կոր մեր
էջէն.

Բսէ՛ կրտոր մը թո՛ղ տոշարը քաշեն,
Անկամները էրկան էրկան տընկեր է.
Աչուըներն ալ խոռո՛ր...: Եկեր է
Աղամռանս. թող էջը ներս տանի, հա՛մ.
Էյեր մէյ մը հանէ ծանը հի՛ ինս՛,

Խոռզիս բանը բուսած է: Աղուորի՛կ
Ան ինչ կակուզ, կըլոր, բամպակ, գէր
փորիկ

Երեսս նայէ՛. տանս պոյնուզ ալ չունիս.
Թուշը սիրեմ. մեր պախանին կը հաննիս
Բիւրի՛ն քուկդ էն աս խոտերը. կե՛ր, մեծ-
ցի՛ր

Աման, ինչու չուվանն ատանկ փաթտե-
ցի՛ր.

Հիմակ ընտո՛ր խալըսեմ քեզ. մի՛ դառնար.
Կեցի՛ խոռզիս. կը խըխտըվիս... Չեմ կըր-
նար

Աղամռանս, հասի՛ր, ծանը մարեցաւ... »

Նման գողար գուրգուրանքով կը շա-

րունակուի այդ մանկական քերթուածը.
բանաստեղծը հոն կը զգացնէ մանկական
միամտութեան երջանկութիւնը: Իր 1884-
ին հրատարակած « Երկրագունտ » թեր-
թէն կը սպասուէր քերթողական էջեր.
Թուրքահայոց ամենէն հաճելի ճիւղն էր
այն. Տէմիրճիպաշեան այդ պահանջը կը
յարգէ, կը շարժէ իր քնարը: Ողջունով կը
սկսի. 1883 թուականին վրայ տարեկան
քննութիւն մը կը կատարէ, ու հայ կեանքի
նիւթական և մտաւորական վիճակը նա-
խանձելի չի գտներ: Անձաշակ ակնարկներ
կան հոն, հոգեզուրկ քերթուած մը:

Գիտութիւնը լոյս է, բայց այդ լոյսով
մոլորողներ շատ և ատոնք են որ երջան-
կութեան վրայ կ'ողբան, ու երանի կը
կարդան պարկեշտ տգէտներու, Գիտու-
րիւն քերթուածին մէջ կը խոստովանի.

« Իմ հայրս անուս, անլեզուագէտ, պարզ
մարդ մ'էր.

Նիւթոյն տարերքն, հոգւոյն օրէնքն ան-
գիտէր.

Էր նա սակայն գիրուկ, ցընծուն, վար-
դերես.

— Տըժգոյն, դըժգոհ, է՞ր չը թողում գիրք,
քարտէս: »

Ու կը զգայ որ կարելի չէ որ թողու գիտութեան երանութիւնը. կը կանչէ Ծաղկանոյշը որ գայ իր քրտունընքը ի ցօղ ծիածան փոխէ:

Անոյշ սքանչելի յուզում մը կը հոսի իր Տրտմանքներէն. ան ցոյց կուտայ Պոլսոյ բնական գեղածիծաղ վայրերը. տրտում հոգին զուարթութիւն կ'ուզէ, և կը կարծէ թէ զուարթութիւնը կրնայ գտնել Մայիսի ծոցին մէջ, և շար ի շար գեղանկար տեսարաններ կը թուէ. կը յիշեցնէ Ալէմտաղին, Կէօք-Սուլին, Մօտա-Պուռնուն, Մեծ-Կղզին, անոնց պերճագեղ ծոցին մէջ կը փնտռէ զուարթութիւնը. այլ ի զուր ինքը տրտմութեամբ թաթախուն կը սկսի ողբալ.

« Սմենուրեք է տրտմութիւն,
Որորանէն մինչեւ տապան,
Ո՛չ բընութիւն ո՛չ մարդկութիւն
Չըուարթութիւն ինձ տալ կրնան:
Եւ որ կոչէ զիս ի խորոց,
Նիրվանան է — հանգիստն հոգեոց...:»

Ու ամէն առթիւ անյիշատակ չի մնար այդ Նիրվանան: Ու կը յիշէ որ կայ վայելք մը, զայն ուրիշ մէկ երգին՝ Կիև Ժրագրութիւն մէջ կը գտնէ. այդ երջանկութիւնը զուարթութիւնը նոյնինքն ժրագրութիւն կինն է.

« Նա՛ եւ աղբիւր սուրբ վայելից,
Յու՛մէ բարեաց բըղխին բիւր ուխ: »

Երջանկութիւնը սուգ կը հագնի գերեզմանին մէջ. կը կարգաս իր Յեղեղակա՛ն մահ Յովնանեո՛ւ Խորասանճեանին. ամենուն ծանօթ է պատմական Բէն-Լաշէզ գերեզմանատունը, զոր ինքը կ'անուանէ անհոն մահաքաղաք, որուն լուսութիւնը երբեմն մինչեւ մեծ քաղաքը կը հասնի.

« Ի Բէն-Լաշէզ, զոյր սեւաւ այլ պերճ
Թախճութիւն
Մեծ քաղաքին ամբոխն յօշէ թերթ առ
Թերթ: »

Հայանուն մեռեալը՝ այդ գերեզմանատան մէջ քերթողին հառաչանաց կ'արժանանայ:

Իր Կօշիւսիւնը (լուստրաճի) ողբ մըն է վարժապետներու անվարձատրելի կացութեան, վիպական քերթուած մըն է, ուր կը տեսնես որ վարժապետը անարգ է, և ստիպուած փշուր մը հացին համար տառապիլ, ու լքանելով Կօշիկ փայլեցնելու հասարակ պաշտօնը յանձն առնել: Ուրեմն վարժապետի լոյսը, արժէք չունի. «Կէօթէի բառն հնչուն՝ ը՛յս՝ հեգնական ալ կը թուէր իմ ունկան»: »

Տէմիրճիպաշեան վարժապետ է եղած, ինքը ըմբռնած է անոր փշոտ վիճակը. զայն ողբալու համար ունի հարազատ շեշտ: Երեւակայութիւնը խեղճ դեր է կատարած այդ վիպական բերթուածին մէջ. հոգեբանութիւնը սիրելի է. գթութեան ձայնը կը լսես լռելեան: Ուրախութեան մէջ արտում՝ հոգին իր տանջանքը կ'երազէ: Մայիսի վարդն սիրուն երգ է, ուր սակայն Տէմիրճիպաշեան բերկրութեան դէմ կը մաքառի, վասնզի անցեալէն ու ապագայէն գոհ չէ. «Մոայլ եղաւ անցեալս, ինձ չեն ապագայը»: Դառնացեալին անոյշ է լեղին:

Տէմիրճիպաշեան ընդհանրապէս կ'ուզէ ցոյց տալ որ սիրուն բերթուած մը հիւսելու վրայ է. բերթուածի վախճանին՝ կը ցաւիս թէ ինչո՞ւ գեղեցիկը անհաւասարակչիւ շարժումով մը կը խորտակի. այսպէս կը մտածեմ իր շատ մը բերթուածներու մասին, և նաև իր Մայր իմ և հայր իմ երգին վրայ. խեղճը կը ցնդաբանէ.

«Ո՞վ է հայրն իմ, չը գիտեմ զայն. թե՛ բեւ Աստուած, Գեւ կամ Յաւ.

Այլ ճանաչեմ զմայրն իմ, որ վաղ անցանի, որ անցաւ...»

— Մայրն իմ, այո, ինքն է Մայիս. և անշուշտ հայրս ինքն է ցաւ...»

Չկրնալով որոշել թէ ո՞րն է իր հայրը, վերջապէս հաւանորէն կը կարծէ թէ ցաւն է իր հայրը, անոր հաւատարիմ կը մնայ միշտ. ցաւին հետ կ'ապրի իր յոռետեսութեամբ:

Խօսական ու մոլեկան մտքեր ունի Առ Տ. Միլաս Չեղազ ուղղած բերթուածին մէջ. անհուն հիացում կայ դէպ ի Պ. Չեղազ. այլ է թէ քնարով հոգեկան ցնդաբանութեան մէջ ուզած է մոլորիլ: Թովմաս Թէրզեան՝ Պօլիս պետական վարժարանաց մէջ արդիւնք ունենալով, Համիտէն Օսմանիյէ պատուանշանին կ'արժանանայ, այդ առթիւ Ե. Տէմիրճիպաշեան Առ Թովմաս Եփ. Թէրզեան բերթուած մը կը գրէ. հոն կ'ուրուագրէ վարժապետ բերթողին հոգեկան կարողութիւնը, նախանձի խնդիր չկայ. գովեստ առնողն ալ և տուողն ալ հաւասարապէս քնարասէր սիրուած գրական գործիչներ են: Տէմիրճիպաշեան գրազիտական աւելի գործունէութիւն է ունեցած, և սակայն Թէրզեանի վրայ կը հիանայ: Տգէտները միայն հիացում չունին, իրենց անպատուութիւն կը համարին ուրիշին գովեստ տալը և գովելին գովելը:

Քերթողը՝ զայն սիրելու համար, ունի ուրիշ պատճառ, զի թէքզեան Ալիշանին աշակերտած էր.

«Եւ սիրելի դու մանաւանդ էիր մեզ,
Զի քերթողաց հայոց արդեաց հայրն ըզքեզ
Յիւր արզանդին, յիւր սիրտն, եւ միտան
էր կըրած.

Գիցական շուրթք էին զճակատդ համբուրած:»

Պահ մը թէքզեան կը քաշուէր գրական միջավայրէն. քերթողը իր այդ բանաստեղծութեամբ, անոր քնարահար գրչին հրաւէր կը կարդար:

Ընտանի է և աստուածներուն հետ. բանաստեղծները ինքզինքնին աստուածներու ընտանիքէն կը դասեն: Տէմիրճիպաշեան Ա» Յիտաւս քերթուածին մէջ սա ընտանի լեզուն կը բանեցընէ.

«Ըզքեզ տեսնեմ, որ միշտ ելնես լեռնէն վեր.

Եւ միշտ հեծես, հիւծիս, կըքիս, լըքանիս.
Ըզգամ թէ մահդ է մերձ, եղբայր իմ եւ
Տէր,

Եւ բանամ սիրտս, զի հոն, Յեսո՛ւսդ իմ,
հանգչիս:»

Գ.

Ուրախ երգին մէջ չի մոռնար խառնելու իր հոգիին լեզիէն պուտ մը դառնութիւն. Անկա Բուրոյ զուարթ երգին մէջ կը յայտնէ իր յոռետեսութիւնը. «Թուի սոխակն ինձ բու, եւ զո՞գ ամպ մ'է վարդ»: Սակայն յիշելու ենք որ քերթողը մեր աւետարանէն զատ, ունի իր Սաքիա-Մուսին, որ կը քարոզէր. «Հոգիս համակ լըցուած է կարեկցութեամբ աշխարհի հիւանդութեան համար: — Կը խնդրեմ ես գերագոյն հանգիստն, անփոփոխ բնականն, յաղթանակն ի վերայ ժամանակին և ի վերայ միջոցին:» Այս քարոզները Տէմիրճիպաշեանի հոգիին սնունդ կուտան, ըստ այնմ ինքը միտք ու գրիչ կը շարժէր: Այդ խօսքերուն վրայ կը գրէր իր Նիրվանա քերթուածը.

Նոյնինքն Պուտտա՝ չէր կըցած բացատրել թէ ինչ է Նիրվանան. պիտի ըսենք թէ գերագոյն վախճանն է, Նիրվանա արքայութիւն է, դրախտ է. սակայն պուտտայականները երանութեան տեղ չեն ընդունիր. անոնց համեմատ՝ Նիրվանան պէտք է ըլլալ կատարեալ սուրբի երանական

վրձակը: Չեմ գիտեր թէ քերթող Տէմիր-
ճիպաշեան՝ Նիրվանա ըսելով, ինչ է
հասկցած, իր հիացումները միշտ մեկնու-
թեան կարօտ են: Կարողալով իր ընդար-
ձակ Նիրվանա քերթուածը, կը հասկընաս
որ բանաստեղծը հաւատքի մէջ ուստոստուն
թափառումներ ունի. « Ընդէ՛ր արդեօք մեծ
տրամուծիւնն ես, Եղիա՛ »: այս հարցին
իբր պատասխան կը գրէ իր Նիրվանա
քերթուածը. այնտեղ իր հոգեկան ըմբռնում-
ներու ուրուպատկերը կը խտացնէ, ու
որոշ գաղափար մը չի տար. քաղոց մ'ը-
նելով իր այդ քերթուածէն՝ փոքր գաղա-
փար մը կարող ենք առնել, թէ ինչ էր
Տէմիրճիպաշեան, և ինչ ցնորական ա-
նուրջներով կ'օրօրուէր.

« Բարձր իմ ճակտիս, խոր իմ հոգւոյս
հաւ հայի

Յաւուր միում. եւ, մտատանջ մօրս ասէ.

« Աստուած տեսած չեմ, բայց Սատանն
ա՛հ՝ աս է: »...

Ես պաշտեցի, պաշտեմ ըզՅոր զանիծող,
Որ ինձ ուսոյց թէ բնաւից է վախճանն
հոգ:...

Գանկ մը դատարկ խաչին առ ոտս, սեւ
ու սառն,

Ինձ խօսեցաւ անշուրթ բերնովն անակոայ.

« Այս լեռնէն բարձր, Յիսուսէն հին՝ նաեւ
մե՛ծ,

Լեռ մը, մարդ մը կայ, հո՛ն, ի հինա,
Բենարէս... »

Ես զայն ցանկամ, զանէացումն իմ եսին
Յանյատակ ծոց տիեզերաց անպարոյր,
Յանկամ զհանգիստ ի ջուրս ի սուրբ Գան-
գէսին. —

Գանկն իմ լիցի՛ թաղար ծաղկին սրբա-
բոյր.

Ձիմ էութեան զվախճան ցանկամ, իմս
Օհան,

Ձոջընչութիւնն անգիւտ, անճառ, անվախ-
ճան...:

Գիշերախառն, Յովհանն, ի ձայնդ յարու-
ցեալ,

Յըմահ տրտում, պատասխան տամ. « Ձը
գիտեմ. »

Հարցման՝ զոր ինձ ուզդես ի խոր դու
յուզեալ՝

« Ընդէ՛ր արդեօք մեծ տրամուծիւնն ես,
Եղիա՛: »

Գիտութիւնս է, տենչս է միակ — Նիր-
վանս...: »

Բանաստեղծ Յովհ. Սեթեանին կ'ուզդէ
իւր խօսքերը, անոր է բացած իւր խորհրդա-
ւոր սիրտը: Բանաստեղծը որ կը հարցնէր

Թէ ինչո՞ւ Տէմիրճիպաշեան կատարեալ արամութիւն է, ինքն ալ ըստ նոյնինքն Տէմիրճիպաշեանի միեւնոյն տխրութիւնն է. Բաւնաստեղծոչիւն բերթուածը՝ իր սատողերով կը հաստատէ մեր ըսածը. «Եւբարբ եմք մեք համաձնող: Մեր ճակատն, ո՛հ, երբ ողողէ մթութիւն»: Այս բերթուածին մէջ Տիմիրճիպաշեան կնկան համար կը գրէ.

« Աւստի՞ գայ կի՛նն: Ոչ ինձ է յայտ. այլ Թըւի

Թէ ի խորոց երկրի կամ ջուրց ելանէ. Հայի խորունկ մեծ աչքերովն իւր ծաւի, Ու ակնարկ իւր մէն՝ գոգցես մէն սիրտ կըլանէ:

Սըխրալի յոյժ, սիրելի եւ... սոսկալի. Նորին ի տես դողայ սիրտն իմ եւ հալի:»

Կը հրամայէ որ ալիքները սկսին լալ, Լացեք Ալիք, մարդս գազան է, ծովի ափունքը փշրուած ալիքները կուլան մարդկային անիրաւութիւնները: Քերթողին համար ալիքները շարժուն բուրգեր են: Իր ցաւերն ալ երեւակայութեամբ կը բըրգանային իր հիւանդ հոգիին վրայ: Արձակ և տաղաչափական գրութեանց մէջ, Տէմիրճիպաշեան չի կրնար քողարկել իր

տխրութիւնը: Ինքը տխրութեան ժանիքով կալանաւորուած, բերթոյ միտք մըն է: Բարեկամներն կ'ուզեն բուժել իր յոռետեսութիւնը, ամենէն սրտակից մտերիմն է գրագէտ գործիչ Մինաս Չերազ, որ կը գրէ անոր.

Հասգիւղ, 12 Նոյեմբեր 1874.

«Շատ ուշ ստացայ նամակդ, Եղիա, և կը փութամ պատասխանել:

Յուսացած էի թէ կեանքիդ մէջ փոփոխութիւնը նկարագրելի մէջ ալ փոփոխութիւն պիտի բերէ: Մեծ եղաւ վիշտս երբ նամակդ կարդացի, զի զքեզ այնքան դառնացած գտայ որքան էիր երբեմն: Թո՛ղ եղբայր, թո՛ղ այդ մեղամաղձոտ վերացումները որք անյազ են մահին պէս և որք կրնան թունել երիտասարդ ամերիդ ծաղիկը: Ապրէ այնպէս որպէս կ'ապրին ուրիշները: Հաստատութիւնը տուր գաղափարներիդ, ամոքէ զգացումներիդ բոցը, անդորր պարգեւէ հոգիիդ որ կ'ալէճփի անգաղար: Ես, որ անհուն կարեւորութիւն կը տամ կեանքիդ, զոր, աւա՛ղ, կը սպառես դու անխիղճ, պիտի փորձեմ դնել նամակներիս մէջ այն խաղաղութիւնը որում պէտք ունիս դու թերեւս ընտելա-

նալով նմա, հեշտալի գտնես զայն, թե-
րեւս մի օր, փոթորիկներէ ձանձրացած,
սիրես նաւահանգիստը:... Օտեան, որում
տուրի կարգալ քո նամակը, պատուիրեց
ինձ պատասխանել թէ ինք չը պիտի գրէ
այսուհետեւ (դա ալ մի վշտակիր էակ է),
և թէ իւր ձայնը ենթադրէ լսել ամէն ան-
գամ որ իմանաս հովին ազմուկը որ կը
խուժէ և թաւալումը հեղեղին անդնդա-
խոր:... Դարձիդ տենչացող — ՄԻՆԱՍ:»

Տարիներ վերջը և արդէն միշտ Տէմիր-
ճիպանեան միեւնոյն մեկամաղձոտ հոգիով
կ'ապրի, իր բարեկամ Չերազը դարձեալ
կը գրէ.

Պէրլին, 24 Յունիս (ն. Տ.) 1878

«Կարդացի ծրարդ, Եղիա, մի քանի ան-
գամ կարդացի զայն: Սիրտս ծածկուեցաւ
խոցերով: Աւաղ, հեռի եմ ի քէն...: Մի
վհատիր, եղբայր: Հաւատքն է հզօրագոյն
դեղն: Բարոյական առողջութիւնն կը ծնի
նիւթական առողջութիւն: — Ես ալ եմ
տկար. մարտ Տէն ի վեր, անխնայ կ'աշ-
խատիմ և սրտայոյզ օրեր կ'անցունեմ.
այլ որոշած եմ կանգուն մնալ մինչեւ
պաշտօնիս աւարտն, և հոգիս կը պահ-

պանէ մարմինս: — Հետեւէ բժշկիկ խոր-
հուրդին. հեռացիր սենեակիկը որմերէն, և
ճեմէ: Ճեմէ կանաչ դաշտին վրայ, շնչէ
Բիւզանդիոնի եթերն և ըմպէ արեւելեան
ճաճանչներն. ահա այն ղեղազիր զոր
կ'աւանդեմ քեզ: — Բնութիւնն նոր ոգի
պիտի բաշխէ քեզ, մինչեւ որ աշունին
հետ և աշունին պէս զայ գրկել զքեզ —
Եղբայրդ ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ:»

Տէմիրճիպանեան ինքն իրեն համար
տխուր էր և յոռետես, գալով իրեն սի-
րելի հեղինակաց և իր բարեկամաց, կը
մոռնար իր տխրութիւնը, ամբողջովին
հիացմունք և պաշտում կ'ըլլար. նոր հե-
ղինակները կը քաջալերէր, իսկ հիները
իրեն կուռք կ'ընէր. հիներուն մէջ անգու-
գական պաշտելի էին Օտեան և Պէշիք-
թաշեան. սիրուած բանաստեղծին համար
կ'ըսէր. «Որոյ հիւժեալ հիացեալ կերպա-
ւանացն ընդմէջէն կ'ընդնշմարէինք ան-
դրաշխարհեան անճառ սքանչելիքները...
Եւ հիմայ զրասեղանիս առջեւ, կը փըն-
տոեմ, այո՛, Մկրտիչ Պէշիքթաշեանի Մա-
սենագրութեանց նուիրական հատորն, որ
կերպիւ իւր իննեւտասներորդ դարու Ա-
ւետարանն է Հայոց:»

Տէմիրճիպաշեան սիրելով իր ժամանակակից վարպետները, յաւակնոտ երիտասարդութեան օրինակ կ'ըլլար, որ ապագային վարպետի յարգը բնաւ չի պակսի մեծ ըլլալու համար, մեծերուն աւերակներուն բաղձալու չէ. այդ սկզբունքը ունեցան տաղանդները: Տէմիրճիպաշեան յոռետես էր և նաև յարգող մը, և անոր համար միշտ յարգուեցաւ իր շրջանակին մէջ. և այդ շրջանակէն դուրս չէր մնար զրգուր գրիչ Յ. Սեթեան, որ Տէմիրճիպաշեանի համար կը գրէր. « Սրտակից բարեկամս, եղբայրս, իմացականութեանս առաջին սէրը և առաջին զարթուցիչը, պատանութեանս զարմացումը և կուռքը: » Եւ հիմայ նոր գրողներ ալ՝ հիներուն հետ միաձայն կը զրուատեն այդ անդրաշխարհային անըջանքով ապրող մարդը:

Ծատ բնական է մեռելներու վրայ գուրգուր հիացումները, այդ մեր ցեղային առանձնական յատկութիւնն է:

Գրականին համար սակայն բնական չէ այդ. Տէմիրճիպաշեան թուրքահայ ծանօթ գրողներու փոքր դասակարգին մէջ, մեռնելէն առաջ և վերջը հաւասարապէս արժէք մ'ունեցաւ:

Մեռնելէն առաջ իր բանաստեղծութիւնները այնքան նշանակուածութիւն մը չունէին,

վասնզի Տէմիրճիպաշեան զինքը կը ճանչցնէր իրր համայնագէտ հանճար մը. ուզելով ցոյց տալ իր քնարին ամբողջական ուրուանկարը. իմ այս գրութեանս մէջ նկատի առած եմ իր ծանօթ քերթուածները, որոնք անձանօթ մնացած են պարբերական հրատարակութեանց մէջ. չեմ գտած զիրք մը, ուր ամփոփուած ըլլան Տէմիրճիպաշեանի գրական երկերն: Ներկային գործը, ապագային թողնելով, տակաւին անտիպ կը մնան գործերը հեղինակներուն, որոնք քիչ շատ անուն մ'ունին. հիմայ երբեմն իր անտիպ գործեր՝ Տէմիրճիպաշեանէն պատասխիկներ կը հրատարակուին. իր « Փոսուռայն » տխրութեան ճշմարտութիւնը կը կայծկլտէ.

« Բոպէ մը այգ, ու դար մ'ապա մըթութիւն,

Յուսոյ նըշոյլ, ո՛ւ անյուսութիւն թանճրագոյն: »

Իմաստասէր է և սակայն անյուսութեան ուրուականէն, զերդ Դուրեան մը կը դողդղայ:

Հարագատ գոյներ կ'առնեն իր մտքերը, երբ յուսահատութիւնը սեւցոցած չէ իր երեւակայութիւնը. « Մատանի »-ն վկայ է ըսածիս, կուռ ու կոկիկ կը գրէ.

« Խօսեցելոյս պիտի չը տամ մատանի,
 Իր այսրին ոսկի չունին երկրիս հանք,
 Չնմ ուզեր որ իր մատն իսկ բեռ մը
 տանի,

Մեղրանո՞րջ մը պիտի ընեմ ես իր կեանք:
 Խօսեցելոյս պիտի տամ ես մատանի՝
 Ոսկեհանքաց զուտ ոգիովն յօրինուած,
 Մատնեմատին խանդիւ փարած հոլանի,
 Անո՞րջ մը՝ դից սիրոյ քունէն կապտուած:»

Իմաստասիրական միտքը, միշտ չի կըր-
 նար սահմանափակուիլ պատկերին խօսող
 արտայայտութեան մէջ: Իդձերու վառա-
 բանին կրակով կը տաքցնէ իր խօսքերը:

Եթէ ինքնընեն սրբագրէր իր քերթուած-
 ները, աւելի արժէք պիտի ունենային ա-
 նոնք: Առհասարակ իր ամէն բանաստեղ-
 ծական գրուածքները ոչրուչի կարօտ են:
 Գեղեցիկ քերթուած մըն է « Գնչուն »,
 բայց կարօտ է ձեւի սրբագրութեան. լի
 է աւելորդաբանութեամբ: Գնչուն իր գե-
 ղովը գերբնական է... անոր կ'ըսէ.

« Պիտի ծաղկի մարգն՝ ոյր վրայ սըփոեն
 ճաճանչքն աչերուդ

Աւագք այտեր պիտ՝ ըլլան ընդ հրահամ-
 բոյր ոտներուդ:

Եւ երբ արբշիռ այն բուրմամբքն՝ առ լճա-
 կաւ դու նիրհես,

Պիտի մարմնոյդ մօտենայ մեղուն՝ վարդի
 կարծեալ զքեզ...»

Պարզունակ պատկեր մը կարելի է հա-
 մարել իր « Թափուր վանդակն » զոր կ'ու-
 բուագրէ բանաստեղծի սա զոյներով,

« Քառակուսի սենեակ մ'էր ցած,
 Բարձանց վըրայ, բուրմանց ի մէջ,
 Բնակուհին է զայն մոռցած,
 — Պայծառագոյնն իւր կենաց էջ:
 Քառակուսի խուցն այն ունէր
 կըլոր սանդուղ մը մարմարեան,
 Ուր շողային բիւր մեղուններ,
 — Այնքան սանդուղն էր այն բուրեան:
 Միակ ծաղիկ մը շնչաւոր,
 Սանդուղ, սենեակ լընոյր խընկով.
 Գոգ իմն շող մ'էր նա գիսաւոր,
 Ոսկի հերօքն ու լոյս դէմքով:
 Այլուր երագք կոյսն այցէին,
 Անդ այցէի զայն ես միայն.
 Տայր կերակուր քանարիկին.

— Մեր համբուրից միակ վըկայն...

Ըզպատուհան ծածկէր դաւար,
 Երկինքն յաչկունքս էր իւր կապուտ
 Մերթ ինձ ասէր. « Եղիս՝ մի՛ լար: »
 — Ա՛հ գանձն իմ այն չէր անկապուտ...
 Թի՛ր հաւն էառ, կոյսն եղեւ կին,

Կան արդ թափուր խուց ու վանդակ...
Ես այժմ յաճախ նայիմ յերկին,
— Գան զերկինս էր խուցն անյատակ...»

Արձակ քերթուածի անձեւ բայց ճաշակաւոր և գուրգուր, խանդակաթ գրութիւն մը կը համարիմ իր «Ո՛վ մօր մը սէրն» սա նկարագրութիւնը.

«Թիք-թաքին արուեստական յաւիտենական ջղասպան արթնութեան ու թռչնիկին բանաստեղծական հոգեւառ քնոյն ընդ մէջ կամ քուն եւ արթուն, տարտամօրէն յիշելով ժամանակն՝ ուր լեզուս միավանկ էր այդ ժամացոյցի լեզուին նման, ու հոգիս միամիտ՝ այդ թռչնիկին հոգւոյն նման: Անկողնեակս կ'որորուէր, հագուստս վարդ կամ շուշան ամպեր, ոտիցս գետին՝ մօրս ծունկեր, աթոռակս՝ իր թեն, ու պնակս՝ իր ստինքն, ու ճաշասեղանս՝ իր լանջքն, ու գրասեղանս՝ իր դիմակն ու զիրս՝ իր աչքն: Ա՛հ, ինչեր չը կարդար մարդ մօր մը աչացը մէջ, որ արգանդին պտուղն ունի իր գիրկին: Ո՛հ, մօր մը սէրն...»

Տարօրինակ է այս գրութեան արտասույտութեան լեզուն: Ուզած է բանաստեղծել իր երեւակայութեան թելադրութեամբ: Քնքշութիւնը անկեղծ է:

Յուսահատութիւնը իր առջեւ հանած

է մեռելական սեւ մտածութիւնը, մեղամաղձոտութեան շիրմական գոյնով կը պատկերէ իր «Անգեղն երգ»ը, ուր աստղերը, լճակը, շուշանը և ամենայն ինչ իրեն համար սեւ են: Ու չարագուշակութեամբ կ'ըսէ.

«Եւ ինձ թըւի թէ կամ առ եզրն անգունդին,
Եւ թէ դըժխեմ հան հոտոտէ զցուրան
իմ դին:»

Եղբրական հաւը իր պահապանը կ'ըլլայ, մեռելին ուրուականը կարծես իրեն հետ կը քալէ:

Տխուր քնքշութիւն մը կայ «իմ կեանքս» երգին սա տողերուն մէջ:

«Վարդագեղ բոյնին՝ անպարագրելի
Շրջանակ մ'եղայ սեւ՝ խաւարակուռ,
Չոր կասողացունէր հո՞ծ արտասուրը մօրս,
Անդունդիս լոյսերն եղան այդ արտասուր...
Վայրէջքս ի խոր վիհն այնքան տենդոտ
էր,

Ձի լոյսն ետեւէս հազիւ կը հասնէր.
Այլ միշտ կը հասնէր, զի մօրմէս կուգար,
Ձի սըրտիս սընունդն այն պիտի ըլլար:»

Հիւանդ բանաստեղծը առողջ գաղափարներով չապրեցաւ. ամէն ատեն ողբերգու մահը կ'երազէր և բնականաբար սովորական մահկանացուի պէս չէր ուզեր մեռնիլ. կ'ըսէ մեզի, տեսէք թէ « Ինչպէս կ'ուզէի մեռնիլ ».

« Մեռնիլ ես ինչպէս կ'ուզէի, զիտէ՞ք. Անձնասպանութեամբ. օթակախելով Մարմինս առածի՞գ՝ փայլակնածայրէն Հուր խարազանին բեկբեկ փեռեկող, Որով Ամուրին յաւիտենական՝ Բռնուած բրոնզկամ անհուն մոլուցքէն՝ Ծեծէ փոթորիկն, ու ծովուց վըրայ Փրփրեղէն ոտիւք եւ ամպրոպ թեւօք Ծուտ շուտ վազընէ՛ զայն յիմարարչաւ, Ու ծրէն ծրէն ցըրուէ հալածէ. Եւ անձինքս հետ՝ յուսահատութեան Խիտ խըցիկներով հիւսուած ծանրացած՝ Մինչ անդընդոց խորն ընդ քարը տանէի՛ խարազանն հուրէ եւ զայն բըռնող ձեռք...: Ու առանց կայծակի մընար փոթորիկ, Եւ առանց ձեռքի՛ Ծանթարձակն Աստուած, Եւ անունս առանց յուշ յիշատակի: Կամ թէ լինէի յիշատակն հըրէշ, Որ երկընքի մէջ եւ երկրի վրայ, Երբթամբք հըրեղէն, ձեռք ջրղածի՞գ Անէճը անիծուէր յաւէտ յաւիտեան...»

Պարկեշտ բանաստեղծը զինքը խանդավառող կայծին գաղափարովը՝ է՛ զի կեանքի սէրը կը զգայ: Ու երբ կըրցեր է լըջամիտ պահերուն խոհական քնարին հմայքը ըզգալ, միեւնոյն ատեն իր քնարը կ'ախորժիս լսել:

Իր լուրջ քերթուածներէն մէկը կրնանք ընդունիլ «Շրջան սրտիս»ը. ուր սա խտացած մտքերը կը յայտնէ.

« Յերեկն արփուոյն ու զիշերը լուսնինն է, Առագաստը՝ ծովուն, կարապն ալ լըճին, Ծիծը՝ մանկան ու վարդը միշտ մեղուինն է, ձերմակ շիրիմն ունի յաւէտ սեւ նոճին, Իսկ դուն՝ իմս, զիս պի՛ ունենաս յաւիտեան: »

Անաղօտ սեւ աչքէն կախարդանքի հոսիլը կը տեսնէ, ու կը դիտէ թրթոացումը փրփուրին՝ ալիքին ծայրը: Եւ դարձեալ սեւին սեւեռուն կը մնայ, սեւ ալք մը կը տեսնէ լուսնկայի ծոցին մէջ: Ու ցոյց կուտայ աչքը հոգեվարքին՝ յառած վհին:

Գ.

Քերթողը ինքնին պէտք է խոշոր մտքի տէր ըլլայ որ կարենայ քնարին նիւթը նեւ հասարակութեան այն հարցերը, որոնք անհրաժեշտ են երգուելու. ըստիս անձնապաշտութիւն է պարզ ներքին հոգեկան խնդիրներով յուզել երեւակայութիւնը ու չարչարել նաեւ ընթերցողին միտքը:

Բանաստեղծին մուսային քով կը փընտոենք՝ ինչ որ հետաքրքրական է և հանրութեան հմայք կրնայ պատճառել: Անոր քերթումներուն մէջ յատուկ գնահատումի կ'արժանանան մեծ մտքերը և հանճարեղ գիւտերը:

Խայտաբղէտ հոգեբանութիւն մը հազած է Տէմիրճիպաշեանի քնարը. երեւակայութիւնը հիւանդ նիւթերու մէջ հզօր է. ու երբ կ'ուզէ երգել փափուկը, զուարթը և քաղցր ներշնչումները, չի կրնար հաւասարակշռութիւնը պահել: Մեծ ու փոքր մտքեր զինքը նկատեցին իր քնարին մէջ՝ տաղանդաւոր բանաստեղծը. միայն քննադատութեան առջեւ կը սասանի իր համբաւը: Ատեն մը իր ձայնը պատգամ էր,

վասնզի սիրուած էր և իր մասին ստեղծած էր համակրելի հռչակ մը: Քնարին մէջ կրօնք մ'ունէր, շուարած կրօնք, ու քերթողին հոգին զինքը կ'առաջնորդէր մինչեւ Մօտայի ծովուն ալիքները, ուր կ'ուզէր վերջ տալ իր կեանքին: Նիրվանան մահը իրեն շատ սիրցուց: Եւ ամէն պարագային աշխատեցաւ իր երգերուն մէջ պարկեշտութեան հոգին չի վիրաւորել: Երգած ատեն, իր հոգիէն կը դնէր հոն չարչարանքը, յուսատուութիւնը և անդրաշխարհային մրրկածուփ խոռվքը, և այս վերջինը ինքը կը ծծէր այն իմաստասիրութիւնէն որ միայն իրեն յատուկ էր. լաւ պիտի ըլլար եթէ ինքն ալ ժամանակին Լուի Վէյոյի հետ ըսէր, J' ai bonheur d'être complètement inepte en philosophie, այդ երջանկութիւնը ինքը չի զգաց, վասնզի անձնատուր էր փիլիսոփայական երեւուն և անըմբռնելի վարդապետութեանց:

Ունի բանաստեղծի շնորհք, բայց այդ յորդաբուխ չէ: Իր քնարը կը պարտի հոգեկան հիւանդութեան. տրտմութեան խոռվքն է որ իր քնարին թիւեր կուտայ երգելու: Զինքը իբրեւ մտաւորական տաղանդ, կարելի չէ գետեղել մուսաներուն շարքին մէջ: Ինքը զգացմունքի մարդն է, և այն որ գիտէ՝ միեւնոյն ատեն, զգալ՝

գեղեցկագիտութիւնը և զգացնել գեղեցիկը՝ այդ արդէն արժէք մըն է, զայն ունէր ինքը:

*
* *

Տէմիրճիպաշեան զրած է վիպակներ. իր օրերուն սովորութիւն էր դարձած ֆրանսական հոսանքէն մղուած, վիպակներ գրել պարբերական մամուլին մէջ: Տէմիրճիպաշեան կը մղուէր այդ հոսանքէն: Իր «Շարժումին» մէջ կը հրատարակէր «Չատիկ» վերնագրով նորավէպ մը. հինգ դրուագներու մէջ ամփոփուած գրութիւն մըն է: Տէր Յարութիւն անարժան տգէտ քահանային՝ Նուարդ աղջկան նշանածն է՝ ուսեալ պատանի Չատիկը: Ասոր կը դիմադրեն ծնողը, և ամուսնութեան խընդիբը ջուրը կ'իյնայ: Չես գիտեր ինչ եզրակացնել այդ գրութենէն: Կը հասկընանք որ Տէր Յարութիւնը գովելի կէտ մը չունի: Ունի հրեշտակի նման սիրուն Նուարդ աղջիկ մը: Յետոյ... Տարտամ ու վիժած տեսարաններ: Գոնէ ըլլար պատմական պարզ, համեստ հանգոյց մը: Մի մտածեր զիտի, ձեւի և գեղեցկագիտական ո՛ր եւ է մէկ մասի վրայ: Վերջի դրուագը կը կարգաս ու «Շարժումը»

զայրոյթով կը նետես, դու քեզի բարկանալով՝ թէ ինչո՞ւ կը հաւատաս ու կը յուսաս կարգացածէդ գաղափար, հրապոյր, պատկեր, և յղացում: Կը բարկանաս թէ ինչո՞ւ իր «Չատիկը», ընդ վայր ժամանակդ կը գողնայ:

Իր «Մակրինէն» կ'երեւի հոգեբանական խոովքի ժամերուն զրած չէ: Այդ պատկեր է, աղքատ, բայց պարզ ու համեստ գոյներով ներդաշնակուած: Եւ բաւական յաջող: Նպատակաւոր գրութիւն է, հրապարակախօսի, քննադատի ակնարկութիւններ կ'ընէ. մամուլը, մանաւանդ պահպանողական մամուլը կը դատապարտուի, և ինքնագովութիւնը յայտնի է. խանութպան մը կըսէ. «Չեմ կրնար բացատրել թէ ինչ կ'զգամ, երբ գրածներդ կը կարդամ». Պէյլիկճեան մը կ'ըսէ, «Սրտիս մինչեւ խորը կ'ազդէ գրութիւնդ... մի տխուր գրեր, մի տխուր գրեր կ'աղաչեմ...»: Տէմիրճիպաշեան կը կոչուի նաև զրասէր Ատովմ: Ինքնին իր հրատարակչական գործին նպատակը կը պարզէ իր այդ գրութեամբ.

«Ո՛հ, խմբագիր մի՛ կոչէք զրասէրն, իր քսակն երբեք չը պիտի լինայ, բայց իր սիրտն երբեք չը պիտի ամայանայ, բայց իր զլուխն երբեք չը պիտի դա-

տարկանայ. գրասէրն, այն նիւթապաշտն, այն անհաւատն, ամենէն աւելի հոգի ու հաւատք ունի...»: Աղքատ է գրասէրը, քիչ մը դրամ կ'ուզէ ոչ հարստութիւն, դրամ ապրելու համար, դրամ ապրեցնելու համար գրիչը: Վանական մամուլները յաջս նոր մտքով մտածողներու, պահ մը կը նսեմանան, երբ աշխարհական գրիչներ կը սկսին ֆրանսական վիպասանական գրականութիւնը թարգմանելով ծանօթացնել: Այդ նոր մարդերէն է նաեւ Տէմիրճիպաշեան. իր «Մակրինէ» ին մէջ կը գրէ. «Թէ որ Իզմիրը, թէ որ Պօլիսը չըլլար. թէ որ Սաղմոսին ու լիակատար Վարք Սրբոյն կապուած մնացած ըլլայինք մինչեւ այսօր վայ էր մեզի. Վենետիկ, Էջմիածին, Երուսաղէմ, Արմաշ, դեռ շատ ստակ կը քամէին աս խեղճ ազգին քսակէն, աս խեղճ ազգին կեանքէն...: Բայց Մեղուեւ էկաւ, Միւնատիւն էկաւ. Ոսկանեան ու Ռուսինեան էլան. Արմենակ Հայկունիէն սորվեցանք որ՝ մարմին ունինք, ու մարմինը պաշտելն ալ Աստուծոյ օրինաց դէմ չէ. Մամուրեանէն ու Չիլինկիրեանէն սորվեցանք որ՝ միտք ունինք, ու մինչեւ որ մտքերնիս չի մշակենք մարդ չենք կրնար ըլլալ. Եհնազարեանէն ու Խորմեանէն սորվեցանք որ՝ ազգութիւն ու

նինք, ու ազգութիւնը պահելը մեր ամենէն մեծ պարտականութիւնն է: Ասանկ կամաց կամաց արթնցանք, հասլւ. ու տեսանք որ Սաղմոս Նարեկ քաղելը շատ սուղի նստեր է մեզի... Գրասէրը ընտոր բմծիծաղ մը կ'ընէ. որովհետեւ իրեն բերնէն կը խօսիմ կոր:» Պետրոս Աղային լեզուն է խօսողը, մտածողը Տէմիրճիպաշեան: Վիպագիրը կ'ուզէ իմացնել որ այլ եւս նաեւ թրքահայ խանութպանը, շնորհիւ մամուլին, արթնցեր է, կղերական հրատարակութիւնները մեծ ազդեցութիւն մը չունին. ժողովուրդը ինքնին սկսեր է կշռել քննադատել իր մտքի և հոգւոյն առաջնորդները, իր եկեղեցական քարոզիչներէն կը սպասեն համոզիչ փաստեր, թէ ոչ եկեղեցիէն կ'առնեն կը քալեն: Ժողովուրդը կը փափաքի զարգացած գտնել իր հոգեւոր առաջնորդները: Այդ պատկերին մէջ յառաջդիմական և բարեշրջումի տարրական մտքեր շատ կան: Բայց նման գրութեանց մէջ ամենէն աւելի ուշագրաւ կ'ըլլայ ուսմանդիկ ոգին: Գրութիւնը կը կրէ «Մակրինէ» անունը: Ամենէն վերջին էջին մէջ, կ'իմանանք որ գոյութիւն մ'ունի հոն այդ աղջիկը: Վերջին մասը պայծառ գաղափար մը կուտայ վիպակին վիպասանական արժէքին վրայ. հոս կը դնենք այդ էական պատահիկը.

« Պետրոս Աղային տունն անցուցի զիշերն: Քանի տարիներէ հետէ կորուսած է խեղճն՝ իր կողակիցն, որ չքնաղ կին մ'էր. աղջիկ մ'եւ զոյգ մը մանչ գաւակունի, որք կը զուրգուրան իրենց հօր վրայ. որբեւայրի, բարի, հօրաքոյր մը կը հսկէ նոցա վրայ, ջանալով դարմանել ժրագլուխ տանտիկնոջ և որդեգորով մօր բացակայութիւնն: — Հարցուց ինձ Պետրոս Աղան թէ ինչ պարտէր ընել, որպէսզի գերազանց հիւրընկալութիւն մը ըրած ըլլար ինձի: Չէ համարձակեցայ փափաքս յայտնել շրթամբք: Սչքերս կարգաւ յածեցուցի այն երրեակ խարտեաշ գլխոց վրայ, — վեշտասնամեայ կուսին, եօթեւասնամեայ և ութեւասնամեայ պատանեաց վրայ. Պետրոս Աղան թափանցեց միտքս, սրտիս խորն ընթերցաւ իղճքս, և ըսաւ փափուկ արտասանութեամբ մը՝ որ գրեթէ լիովին կը համաձայնէր շուկայի խօսակցութեան սովորական եղանակին հետ. « Պէտք է որ Մակրինէս դաշնակին վրայ զարնէ ամենէն աւելի ախորժած եղանակդ. պէտք է որ Վահէս կրկնէ ամենէն աւելի սիրած բանաստեղծութիւնդ, պէտք է որ Հրանդս զլուխ մը կարդայ ամենէն աւելի յարգած փիլիսոփայէդ »: — Եւ Մակրինէն ածեց դաշնակին վրայ կուսին աղօրքն. և Վա-

հէն ոգեց Ալֆրէտ տը Միւսէի Լիւսին. և Հրանդ կարդաց Համիկի վերջին արարուածն:

— Ինչ, դիտողութիւն ըրաւ Պետրոս Աղան, ես կարծէի թէ Շէքսպիրն ամենամեծ թատերգակ մ'է:

— Շէքսպիրն ամենամեծ թատերգակն և ամենամեծ իմաստասէրն է, պատասխանեցի՝ սարսուռ մը զգալով ի լուր անուան Համիկի և Օրեյոսի հեղինակին:

Գիշերն երազիս մէջ մինչեւ անուտ նոյն սրահին մէջ էի, բայց առանձին... Մակրինէին հետ: Նա խօսեցաւ ինձ իր լուսահոգի մօր վրայ, ես խօսեցայ նմա իմ լուսահոգի հօրս վրայ. մեր արտասուքն իրարու խառնուեցան, նաեւ մեր զրկերն ու մեր հերքն: — Առաւօտուն Պօլիս իշանք Պետրոս Աղային հետ: Բարեկամս իր գործին գնաց, ես գնացի տպարան, և սկսայ սրբագրել Երկրագունտին փորձերն, հոգուց հանելով, յիշելով իրիկուան գգուելի հրեշտակն ու գիշերուան դրախտային երազն, և անիծելով տուրնջեան վաղահաս ճաճանչներն՝ որք սեւ տառեր աչացս կը յայտնէին՝ փոխան սեւ երկայն հերացն և սեւ աչացն և սպիտակ երկնագունակ լանջաց... Մակրինէին: »

Այդ պատկերին մէջ նախ քննադատ

է, յետոյ հրապարակախօս, երբեմն ալ շատախօս. ումանդիկ թեթեւ գործերու թարգմանութենէն ծագած կը գտնէ բարեշըրջումի արեւը. իր կենսագրութենէն վերջը, Մակրինէի յիշատակովը չի մոռնար իր սիրահարութիւնը:

Պատկերը ինքնին իր համեստ նիւթին մէջ ձախողակութենէ ազատ է. միամիտ խօսակցութիւնները անկեղծ շեշտով սիրելի. հեղինակին ինքնագովութիւնը աւանտուրժութիւն չի պատճառեր, վասնզի իր համոզումին խոստովանանքն է. յուսախար չէր, քանի որ արդէն իրօք ընթերցող հասարակութեան մէջ իր գրիչը գնահատողներ շատ էին:

*
* *

Երամ ու վառվառա, այր և կին զոյգին սիրատրոփ պատմութիւնը իբր թերթօն ունի արժանիք մը. հաւատարմութեան, ամուսնական սիրոյ և հարազատ կապակցութեան դաւանանք մըն է որ կը լսուի վառվառայի բերնէն. Երամ յափշտակուած է: Անոր հոգեբանութիւնէն պէտք է հետեւցնել, որ կարգալով եւրոպական թեթեւ գրականութիւնը, վառվռուն արիւն մը կը հոսի պատրանքէն կոյր սերունդին

երակներու մէջ, ու կ'արթննան անոնք և կը զգան ընթերցումի երանութիւնը: Բայց թեթեւ ընթերցումները՝ առանց թոյնի երջանկութիւն կը խմցնեն: Ահա հարց մը Տէմիրճիպաշեանի «Գոեմ Սիմօնի թերթօն»-ին: Պատասխանը, նորավէպին վերջին պարբերութեան մէջ, տեսէք ինչ է.

«Երկինքէն երեք խնձոր ինկաւ: Մին վառվառային, միւսն Երամին և երրորդն ինձ համար անշուշտ, որ պատմեցի թէ ինչպէս թերթօն ու Գոեմ Սիմօն կը նպաստէին մարդկային ազգի քաղաքակրթութեան, երիտասարդաց և երիտասարդուհեաց ձայնին տալով աւելի ներդաշնակութիւն, լեզուին աւելի ճոխութիւն, նայուածքին աւելի ազդուութիւն, շարժուածքին աւելի վայելչութիւն, մորթին աւելի փափկութիւն, այտիցն աւելի զոյն ու ձակասոյն աւելի փայլիւն, ու մարմնոյն աւելի բուրումն ու փողփողումն, և թէ ինչպէս աւելի երկարատեւ կ'ընէին երիտասարդութիւնն, որ — ժողովրդոց իմաստութիւնն ինչ ալ ըսէ — մեծագոյն բարիքն ու մեծագոյն գործոց շարժառիթն է յաշխարհիս:»

Այս է Տէմիրճիպաշեանի համոզումը, եթէ լուրջ առնենք իր վիպասանական լեզուի հոգեբանական վճիռը:

Տէմիրճիպաշեան իբր բարեշրջական միտք մը ինքզինքը կը ներկայացնէ. ինքը ազգինն է, և ազգին նուիրուած, բայց ազգ մը բարեշրջելու համար՝ գերբնական առաջնորդի տուրք և գիտութիւն պէտք է: Ես կարծեմ ինքը բարեշրջում սիրող մըն է, քան թէ բարեշրջող: Եւ ինքը կ'ուզէ բարեշրջական տեսնել. կը գրէ. « Բարեշրջութեամբ պիտ' ունենան հայը լաւագոյն վիճակ, լաւագոյն կրթարանք, լաւագոյն մանկավարժութիւն ու մատենագրութիւն ու խմբագրութիւն, լաւագոյն վարչութիւն և երեսփոխանութիւն, լաւագոյն ամէն բան... բաց ի բարոյականէն անշուշտ, ըստ որում Խիկար՝ Ամուրինե-րու վրայ օրէնքի մը հաստատութիւնն հարկ անհատեշտ համարած է: » Բայց այս ազգին համար է. իսկ Տէմիրճիպաշեան իր բարեշրջումին համար՝ տակաւին չէ որոշած թէ ինչ օրէնք պէտք է յարգել, հակասութիւններով խմորուած ըլլալը ինքնին կը խոստովանի: Շօբէնհաուէրի յուսահատական իմաստասիրութիւնը իրեն սիրելի է, և անով կ'աշխատի սփոփել իր իմաստասիրական խռովքը: Հակասական է. կ'աշխատի իր մէջ հաշտեցընել Սպէնսէր և Շօբէնհաուէր: Զարմանալու չէ, քանի որ ինքը կ'ըսէ. « հակասութենէ

զերծ ո՛վ էր »: Բնաստէօրի հաւատքը քննադատող Տէմիրճիպաշեանը՝ յանկարծ ջերմեռանդօրէն յափշտակուած, ծնրադիր անկեղծ հաւատացեալի մը պէս կ'աղօթէ: Բայց յուսահատ իմաստասիրութիւնը աւելի տեսողական ձայն մ'ունի իր գլխին մէջ. « Մարդն՝ ամենէն դրական մարդն՝ այն ճարտարվարական հոսանքէն մղեալ որ այս երկաթէ դարուս մէջ կը վարէ ժողովուրդներն, ունի վայրկեաններ, ուր հոգևով չափ կ'արհամարհէ նիւթն ու նիւթական հեշտութիւններն, աշխարհն և աշխարհային վայելքներն՝ որոնցմէ անդին ոչինչ կը տեսնէր վայրկեան մը յառաջ տակաւին: Աշխարհատեսաց Շօբէնհաուէրի համար ո՛չ վայրկեանական, այլ տեւական, յաւիտենական են արհամարհանքն և այդ զգուանքն, այդ հոգևոյ հիւանդութիւնն: »

Ուրնան կը սիրէր կատուն, փէթրար-քան կը սիրէր կատուն, և կարծես անոնց հետեւելով և Տէմիրճիպաշեան կը սիրէր կատուն ու անոր բերնով կը տարածէր իր իմաստասիրական մտքերը, և անոր բերնով իր օրուան կենսագրութիւնը կը ծանօթացընէր, խօսելով Մինաս Չերազի վրայ, կը խօսի կատուն բերնով. « Խեղճ Մինաս Չերազն ալ կեդրոնական վարժարանին մէջ կը չարչարուի. գէթ Տեսուչ

անուանուելու միտքով ինքն ունենար. գէթ հիւանդ չըլլար. գէթ հանճար չունենար: Մէկն ալ Տէրս է. պառկելու ժամանակն անցաւ և դեռ փորձ կը սրբագրէ. վաղն ալ պիտի գրէ, յօղուած, վէպ, բերթուած, բառարան, դաս, թղթակցութիւն, ու գործեր որոնք տարիներու աշխատութեան կարօտ են ու կուրծքը կը ցաւի...: Պէտք է ապրիլ...:» Համայնագէտ միտք մ'է ուրեմն, և արդէն ատոր աշխատեր է. բացէք իր պարբերական թերթը, իր գրչին այդ յատկութիւնները շոյալած է: Եւ ամէն այդ գրութեանց մէջ միանգամայն ուզեր է թէ՛ բանաստեղծ, թէ՛ իմաստասէր, թէ՛ հրապարակախօս և բնախօս ըլլալ: Գիւրիին չէ այս տեսակ գրականութիւն, տարօրինակ հանճարներուն միայն յատուկ, և կ'երեւի Տէմիրճիպաշեան այդ տարօրինակներէն է կամ կը կարծէ ըլլալ:

*
* * *

Եւ ահա՛ իր ուրուպատկերը:

Ետինդը տարածական, արժանիքը ճշգրտման, պաշարը առատ, արդիւնքը ոչինչ. հանրագիտակ բայց շաղփաղփ. մեռնիլ կ'ուզէ, կ'ատէ կեանքը ու մեռնողներուն

վրայ տղու պէս կուլայ: Փափուկ սիրտ մը, անկարող գէշ խօսելու ու կը շոյալէ գովեստներ նորեկ զրագէտներու հասցէին, ու կը պաշտէ այն ամէնը որ գրիչ շարժած են անփոյթ անոնց արժէքին: Անմոռանալին՝ Նիւրվանան է, իր մեծ փիլիսոփան Ծօբէնհաուէր: Յօղուածները հաւաքելով, իրմէ կ'ունենանք բազմահատոր զրքեր: Տարտամ միտք մը, կը շուարեցընէ, ու դու կարող չես որոշ նկարագիր մը գտնել իր մէջ. տարտամ գրիչ մը խոհական և միանգամայն զառանցական, գեղեցիկ և միանգամայն տգեղ, հրապուրիչ և միանգամայն ձանձրացուցիչ:

Ե.

Տէմիրճիպաշեան իրեն գրչով ուշագրաւ եղաւ. գրագէտ ու բանասէր իր վրայ խոսեր են. քիչ են անոնք որ լրջօրէն քննած ըլլան իր գրչին արժանիքը: Հարկ կը համարիմ իր վրայ խօսողներէն պատանիներն յիշատակել: Գուցէ իր վրայ գրողներն ալ ենթարկուին ընթերցողին անաչառ դատաստանին: Տէմիրճիպաշեան անկարեկիր քննադատներու հետ խնկարկու փառաբանողներ ալ ունեցեր է:

Իր իսկ «Շարժումէն» կը քաղեմ Օրմանեան սրբազանի յափշտակուած սատողերն.

«Հարկաւ կը հաւատաս եթէ ըսեմ թէ գրեթէ բոլոր Ատոմ-Եղիայիդ յօդուածները կ'ընթեռնում, և յընթեռնուլս կը յիշեմ միշտ զիմ Եղիայն, երբեմն մեկամաղձօտութենէ յուզեալ փիլիսոփայ մը, երբեմն զայրոյթը չզսպող ազատախոս մը, երբեմն սրտին զգացումները անսանձ թողնող բանաստեղծ մը, և երբեմն գործնական խընդրոց հետաքննին ազգային մը: Նոյն համարձակութեամբն որով զՔեզ կը սիրեմ պիտի յայտնեմ, թէ միշտ նոյն զգածմամբ կ'ընդունիմ զբաժներդ: Բանաստեղծութիւններդ սկսան զուարճացնել զիս յորմէհետէ բանաստեղծական աշխարհի երեւոյթները կորուսի. իմաստասիրութիւններդ կը կարծեմ թէ շատեր վերացեալ և անօգուտ կը դատեն, ազատախոսութիւններդ ներկային համար են գրուած, իսկ ազգային և գործնական խնդիրներդ գեղեցիկ են, և այնպէս դրական իբր թէ փիլիսոփայ բանաստեղծին գրիչէն չլինէին:»

Օրսևանեան Մարտի. վ:

«Թախձութեան ոգին՝ տիրելով հոգւոյդ, տրամալից աւաչներ հնչեցնել կուտայ նմա.

այլ այդ աւաչը՝ քաղցրալուր կը հնչեն ի լսելիս ունկնդրաց: «Տրտմութիւն երկրի վրայ կը տարածեմ ես իմ շուրջս» կ'ըսէք, սակայն այդ զգացումն ունի իւր հրապուրիչ քաղցրութիւններն: — Ոչ, դուք չէք հալածեր հաւատքն հոգիներէն, ինչպէս կը խիթայք. այլ յաւէտ կը լուսազարդէք զայնս: Չեք թախձագին մըմունջները կը թափանցեն հոգիս, և աչերն յուսավառ կը բարձրանան շեշտ ի լուսազեղ վառարանն հաւատոյ, Անմահութեան ակթոռոյն քով:»

Գուխտու Լուսինեան

Ինքը իր «Շարժումին» մէջ հիւրընկալելով նման գրութիւններ, բնական է որ համեստութեան գաղափար մը չենք ներշնչեր իրմէ: Սակայն իր ներքին կեանքը քննադատելու մէջ լաւ է զգուշաւոր ըլլալ: Նկատելով որ ոչ միայն գովեստ կը սիրէ այլ և գովել ալ կը սիրէ: Ու եթէ ինքն իր վրայ բարձր գաղափարներ ունեցած է, նկատելու է որ իբր գրական գլուխ փոքրացած չէ բնաւ. ունեցեր է բարձր համբաւ. ինքզինքը այդ աստիճանէն վար առնելու փորձը՝ գերբնական առաքինիներուն միայն յատուկ է:

*
* *

Կը տեսնենք Տէմիրճիպաշեան օժտուած համայնագիտակ ընդունակութեամբ. զիտութեան լոյսը իր կեանքին կազդուրիչը եղած է. սակայն չոր գիտութիւնը անախորժ է, ամէն պարագայի մէջ նախադասելի է գեղեցիկը, գեղարուեստը, գեղեցիկը կը սիրցնէ. առանց սիրոյ միտքը սրտին հետ ներդաշնակ լեզու մը չունենար: Տէմիրճիպաշեան Պօլսոյ նոր սերունդին մէջ՝ գեղեցկագիտականին մեծ ներշնչողներէն մէկը եղած է: Իբր գեղեցկագէտ ու գեղապաշտ յարգուած է և գնահատուած: Ինքը գուցէ Գրիգոր Օտեանէն շատ աւելի լրջօրէն հետազօտած ըլլայ՝ վիպասանական գրուածքներու շահեկանութիւնը:

Ու երբ կեանքը այլեւս սեւ պատանքին մէջ ծրարուելու կը պատրաստուի, Պօլսոյ Ազգային հիւանդանոցէն, «Մասիս» շաբաթաթերթին կը գրէ գեղեցկագիտութեան մասին իր որոշ և ողջ գաղափարները: Կը յիշատակեմ մէկ քանի տողեր, իբր գրականութեան էական օրէնքներ.

«Արուեստն ալ բարոյական գործ մը կը կատարէ ու թերեւս ամէնէն բարոյականը՝ Գեղեցիկը արտադրելով կամ ցո-

լացնելով: Եթէ տիպարը կամ յղացման առարկան մերկ կամ կիսամերկ է, Արուեստագէտին համար պատճառ մը չէ վրձինը կամ ու է է գործիք նետելու, ընդհակառակն, հանդէպ մերկին արուեստագէտն ինքզինքն աւելի կ'ամփոփէ, զի մերկն այն վիճակն է ուր մարդս՝ հրաշակերտն Արարչութեան՝ Արարչին ձեռքէն կ'ելնէ: Արուեստագիտական այն անհամեմատ փառաւորագոյն շրջանն, որ կը կոչուի վերածնութիւն, մերկին ուսումնասիրութեան արդիւնքն եղաւ՝ ամէն ոք գիտէ: »

Գեղարուեստի հրաշակերտը մերկութեան մէջէն ծնաւ. մեծ ու տիեզերահոյս հելլէն և հռովմայեցի արձանագործ և նկարիչ՝ մերկին մէջ ցուցադրեցին գեղարուեստին կախարդիչ ուժը. և հեթանոսական շքրջանէն, գեղարուեստական մերկութիւնը՝ Կապիտոլիոնի Արամազդի տաճարէն, Երիտոնէական տաճարը Ս. Պետրոս, ու պապական թանգարան վատիկան մտնելու Իդմատանը ու վարանում չունեցաւ: Գեղարուեստի առջեւ գայթակղութիւն զգացողներուն կարելի է Սգրատուսի այս հարցը ընել: — «Ո՞վ կը հրաւիրէ զձեզ, ո՞վ կը հարկադրէ որ գեղարուեստից թանգարանը մտնէք. հոն իբրեւ եկեղեցի մը պէտք է մտնէ մարդս»: Արուեստին մէջ գեղեցիկը

ներշնչել՝ մտքի ազնուացումի քերականութիւնը սորվիլ է:

Նորավէպ գրել, այդ թեթեւ զգայնական գրականութիւն նկատուած է. սակայն թրքահայերը՝ մղուելով Եւրոպայի գրական հոսանքէն, այդ բամբասուած գրական ճիւղը մշակելու անփոյթ չեղան. գեղեցկագիտութեան ու գեղարուեստի արդուզարդը համարելու ենք նորավէպը, անբնականաբար այն լայն ըմբռնումը չունի տգէտին կամ միամիտին գանկին մէջ, որով շատ լրջօրէն չմտածուեցաւ այդ ճիւղին վրայ: Տէմիրճիպաշեան ուզելով բուժել գայթակղած միտքերը՝ նորավէպի մասին կը գրէր. «Մասնաւորելով մեր խօսքը Նորավէպին վրայ, հեղինակ մը այն ժամանակ պախարակելի է, երբ գրիչը ձեռք առած ատեն, նպատակ ունի ընթերցողին զգայարանքները գրգռել կամ նորավէպի ձեւին տակ անբարոյականութեան ջատագովութիւնն ընել: Դարձեալ այսպիսի պարագայի մէջ, ընթերցողն աւելի յանցաւոր է, քան գրողը, քանզի գրողն ընթերցողը չի ճանչնար իսկ, ուստի անոր հասցէն չը գիտէ և անոր վրայ հարկ չը դնէր որ իր գիրքը կարդայ: Սակայն ճշմարտութիւնն այն է թէ անբարոյականութիւն քարոզելու նպատակաւ գրող քիչ կայ,

չըսելու համար չըկայ: Եւ նորավէպն կամ վէպն երբեք պատասխանատու չէ այս տեսակ արտադրութեանց:» Կարելի չէ ըսել թէ չկան խենէշ նորավէպ գրողներ, բայց ողջմտութիւնը ո՞վ կը խլէ ընթերցողի գլխէն. չարութիւնը ամէն անկիւնէ կրնայ իր ճիրանները երկնցնել, ո՞վ կ'ուզէ կամովին անոր մօտենալ: Պէտք է ըմբռնել որ անպարկեշտ վիպասանութիւնը առ հասարակ շահամուտութեան նպատակով գոյութիւն կ'առնէ, այդ տեսակ գրութեանց մէջ կրնանք մտածել որ բարոյական շահը բնաւ նկատի առնուած չէ. ուր չկայ հոգեկան ու բարոյական սնունդ, այն վէպը նշանակութիւն չունի: Վիպասանը մեզի հետ խօսելու է գեղարուեստի կամ բարոյախօսի բեմէն. այս է վիպասանութեան նպատակը: Տէմիրճիպաշեան վրէժխնդիր է, որ մեր մէջ ուժ տրուի վիպասանական ճիւղին. և համամիտ եմ իրեն. կոյր երկչոտներ չըլլանք, մաքուր վիպասանութեան համար է խօսքս. թողունք որ ինքը Տէմիրճիպաշեան պաշտպանէ վիպագրութեան օգտակարութեան դատը. «Իմ փափագս այն է որ Մասիսի մէջ թէ այլուր նորավէպ աւելի գրուի, նորավէպ ամենէն աւելի գրուի, փափագս այն է, քանզի համոզումս ալ այն է թէ գրականութեան

ծաղկման ու մտաւոր զարգացման ամենէն աւելի նպաստող զրական սեռն է նորավէպը: Եւ նորավէպը ընթերցասիրութեան ամենէն աւելի կը նպաստէ:

« Ընդլայնենք, մեր համոզումն ընենք նաեւ համոզումը բոլոր անոնց, որոնք կը մտածեն կամ երեւոյթն ունին մտածելու թէ, առանց նորավէպի ալ զրականութիւնը նոյնքան պիտի ծաղկէր և ընթերցողաց միտքը նոյնքան պիտի սրէր և ընթերցողք աւելի ընթերցասէր պիտի ըլլային: » Շատ իրաւացի է նորավէպի մշակումը պաշտպանող այս լեզուն. Եւրոպայի զրականութեան զօրեղ ձայնը գեղեցկագիտականին մէջ կը փնտռենք, ու վիպասանութիւնն է որ ամենէն աւելի խորթելի սիրուած շեշտ մ'ունի, ան կը հասնի մեր սրտին ու կը պարփակէ մեր միտքը. կ'ուզեմ ըսել այն վիպասանութիւնը որ հոգեկան կազդուրում մը կ'ընձեռէ, բաւական է որ ընթերցողը խորաթափանց խելք ունենայ ծծելու այդ զրականութենէն սնունդը որ կարեւոր է բարոյական զարգացումին: Եւ ինչո՞ւ այդքան կարեւորութիւն տանք այս ճիւղին. ահա թէ ինչ կ'ըսէ Տէմիր-ճիպաշեան. « Յօդուած մը կամ վարդապետական գրուած մը կ'ուսուցանէ, և շատ անգամ նպատակին չը հասնիր. — ին-

չո՞ւ. — որովհետեւ հեղինակն ընթերցողին մտքին կ'ուղղուի և ոչ երեսակայութեանը: Շատ անգամ ո՞՞չ չը կայ պատկեր չը կայ, թանձրացում չը կայ, խոյանք չը կայ, խորամխութիւն չը կայ, կեանքի պատկերացում և տեսականի ընդհայեցում չը կայ, մէկ բառով՝ Գրականութիւն չը կայ կամ հազիւ կայ լրագրական յօդուածի մը կամ վարդապետական հատուածի մը մէջ: Ամենակարեւոր պակասութեան մը վրայ ալ խօսեմ. բառ չը կայ յօդուածի մը մէջ. և գիտցած եղէք, ուր որ աւելի բառ կայ, հոն աւելի կեանք կայ, կեանք ընկերական կամ թէ կեանք հոգեկան: Նորավիպական համադրական սեռն այդ ամէն յատկութիւններն, այդ ամէն հարստութիւնները կը վերցնէ և կը պահանջէ: Գրական բոլոր սեռերէն աւելի վէպը կը ճոխացնէ զրականութիւնն ու լեզուն: » Այս անվիճելի է. և քանի որ վիպագրութիւնը ներկայ մարդկութեան բարոյականին դաստիարակ ըլլալու սահմանուած է, լաւ է իրեն դիմել, զուարթ դաստիարակ է այն, իսկ չոր գիտութիւնը խոժոռ վարժապետ. գիտութիւնը դրամ կը շինէ, վիպասանութիւնը սիրտ: Աքոլաստիկ խորախորհուրդ աստուածաբանութիւնը այնքան համոզիչ չէ որքան Աւետարանը. այս մեր

սրտին հետ կը խօսի՝ վասն զի ոճը վիպասանական է, լեզուն հրեշտակային, պատկերները սրտագրաւ:

Համոզելու համար պէտք է մոզել, տիրել ուրիշին համակրանքին. վիպագրութիւնը կախարդիչ կ'ընէ գիտական օրէնքները և համոզի՝ բարոյական սկզբունքը:

Գեղեցիկ գրականութիւնը վիպասանութեամբ կարելի է մշակել. գիտութիւնները գրականութեան զարդերն են, իսկ գրականութեան հոգին գեղեցկագիտութիւնը և գրականութեան մարմինը նոյն ինքն վիպասանութիւնն է որ հագնելով գեղեցկագիտութիւնը, կ'ունենանք ստեղծական մտքի հրաշալիք: Տէմիրճիպաշեան կը գրէ. «Տեսնենք գրական քանի՛ սեռեր միանգամայն կրնան միանալ վէպի մը, նոյն իսկ վիպակի մը շարագրութեան մէջ: Նախ լեզու. հեղինակն ուշադիր պիտի ըլլայ որ՝ իրերն անսայթաք հետեւցնելու համար՝ ընթերցողին միշտ իմանալի, յտակ, ուղիղ լեզու մը գործածէ, կարգացուի ժողովրդեան ամէն դասերէն: Ուստի և կենդանի լեզուն, աշխարհաբարը պիտի զարգանայ, հաստատուի վէպով աւելի քան ուրիշ գրական սեռով: Լեզուի առթիւ, իբրեւ գեղեցկագէտ, վերապահում մ'ունիմ, հեղինակ մը յուզման ու մտած-

ման աստիճաններուն համեմատ իր լեզուն անզգալապէս պիտի փոխէ, աւելորդ է ըսել՝ բառարանն ալ: Աւելորդ է նաեւ ըսել որ խօսակցութիւններուն մէջ իւրաքանչիւր դասակարգի գաւառի իր լեզուն խօսեցնել պարտի վիպողը, բայց նոյնութեամբ, սղագրական ճշդութեամբ, եթէ կարելի է:» Վէպով կարելի է ամէն գիտութիւն և ամէն վարդապետութիւն քարոզել, և գրական ճոխութեամբ հրապուրել մեր գաղափարները. այժմ ճառարասութենէն աւելի զօրեղ է վարդապետական վիպասանութիւնը, քարոզիչը իր բեմէն այնքան ազդեցիկ չէ, որքան կրօնական կամ բարոյախօս վիպասանը, թէև այս վերջին մասնաճիւղը տակաւին անմշակ կը մնայ: Տիմիրճիպաշեան վիպասանութեան մտաւորական օգտին համար կը գրէ. «Վիպասանն ընթերցողին մտաւոր զարգացման կը նպաստէ նախ, ուղղակի եղանակաւ, խորհրդածութեամբ, եղանակ որ յօդուածագրութեան և ուսումնասիրութեանց յատուկ է: Սակայն նուազ ինքը խորհրդածելով քան ընթերցողին խորհրդածել տալով՝ վիպասան մը կը նպաստէ անոր մտաց անզգալի կերպով զարգացման. վիպասանը նոր պատկերի մը գործածութեամբ ընթերցողին ուշը կը դար-

ձնէ իր իմացականութեան և առարկայական աշխարհին թաքուն վերաբերութեանց վրայ, որոնք առանց ատոր անըմբռնելի պիտի մնային ընթերցողին մտքին, ուստի ամէն մի պատկեր, կրնանք ըսել, զոր վիպասան մը կը գտնէ կը գործածէ, գրեթէ նոյնքան կարեւոր փիլիսոփայութեան դուռ մ'է որքան Պէրպէրեանի հոգեբանական դասախօսութիւնները: Վիպասանը ընթերցողին միտքը կը սրէ, կը զարգացնէ, կը զօրացնէ նաեւ՝ անհատական կամ ընկերային դրից ու կացութեանց ու հոգեկան ներհակ վիճակներու հակադրութեամբ:...

Կը կարծէք թէ Վիքթոր Հիւկօ պիտի գրաւէր այն բարձրագոյն դիրքն իմաստասէրի կամ խորհողի մը որ դարուն կը տիրէ, եթէ ժողովուրդը իր գործոց ընթերցմանէն չը զօրանար այնքան մտքով ալ կամ խորհելու կարողութեամբ:» Իմ և Տէմիրճիպաշեանի գաղափարները շատ որոշ են այս էջերուն մէջ. կ'անդրադառնաք որ բուն ջատագովութիւն մը ունինք վիպասանական գրականութեան մասին. թէ ինչո՞ւ, պատճառը արդէն բացատրուած է: Միայն և գիտնալու է որ կոյր ջատագովանք մը չկայ: Վիպագրական գրքերէն դրուատելի թէ յանձնարարելի են միայն անոնք, որ ունին անմիջական օգուտ մը.

և օգտակար են բարոյական, հոգեբանական, կրթական, տեղեկագրական, ազգագրական, գիտնական, ընկերական վէպերն. մանաւանդ կրկին օգտակար են, եթէ անոնք գեղապաշտ գրչի մը արտադրութիւններն ըլլան: Անառակ, ցած ու պակշտ վիպասանութիւնը երբեք վայելուչ չէ պատուաւոր ու մաքուր անձնաւորութեան մը ձեռքը տեսնել. նման գիրք մը տղմի աղբիւսի փոսն է, ընթերցողը անոր մէջէն անցնելով, թող չի խաբուի թէ անկէ մաքուր դուրս կ'ելլէ, այս է իմ գաղափարս. Տէմիրճիպաշեան եւս հակառակ է վաւաշտ գրութեանց. տեսէք ինչ կը գրէ:

« Հակառակ եմ ես ալ այն հեղինակին որ կը նկրտի մարդկային ընկերութիւնն անասնական բնագոյններու ենթարկել:» Երբեմն Զօհրապի, Ալիիարի ականջները խուլ կը մնան այս գաղափարներուն յստակ ձայնին: Ամէն գրիչ միտում մ'ունի: Զօհրապ Զուլայական է կ'ըսուի: Հապա Մալեգեան...

9.

Գեղեցկապաշտ է Տէմիրճիպաշեան. ու բնութիւնը ինչո՞ւ այնքան անգութ գտնուած է ու խլած անոր մտքի հաւասարակշռութիւնը: Եթէ Տէմիրճիպաշեան չունենար մտաւորականին թեթեւ հիւանդութիւնը, իր մէջ պիտի տեսնէինք մեր ամէնէն տաղանդաւոր գեղեցկագէտը. պիտի յիշենք իր «Վարդէն Աստուած» գեղեցկագիտական պարբերութիւններ, ուր կարող ենք դիտել իր գեղեցկագէտ մտքի գեղապատմութիւնը անասնձելի:

«Թիթեռնիկն — արհամարհեալ — որուն նմանողներ կը հանդիսանան պարզապէս իր արհամարհողներ. Թիթեռնիկն իր բեւեռագրեալ թեւերուն նուրբ ու սուրբ փոշին կու գայ հպանցողակի ցանել վարդին բաց բոլորման վրայ, փայլակնաբեկ իր արբեալի մոլորայածութեան մէջ պարուրելով բոլոր վարդերն ալ, զի այս է ճակատագիրը Թիթեռնիկին ու Ռօլային:

«Մանր ծանր, իբր ծնրազրիկ ընթացիւք, նրբանազիկ միջատն ոսկեմարմին ոսկեթեւ, հարկ է անուանել մեղուն, ոսկեհուր գոգցես հնոցէն տիեզերաց մանրա-

դիտակ մեկնելով, կ'իջնէ, ցանկութեամբ այլ և երկիւղածութեամբ կը մօտենայ ծոցին ծաղկանց գեղեցկագոյնին: Կը մօտենայ, բայց խսկոյն չը մօտիբ. ո՛հ, ո՛չ: Երբ ծեքանաց ծաւի նրբագգայութիւններ, նրբապարիկ լուսածորան ծածանում, ցանկացիկ անյագեցիկ ակնարկներու հո՛ւր ուրուազրութիւն, վարդ լոռութիւն, և ոսկի քնարերգութիւն, կասում, սեւեռում, խոյանք, ապա նազանք, յետադարձ ակնարկ անվախճան՝ երկայնքն ոսկեթեւ ճառագայթի արփային որ զայն երկնից կամաւրին կը կապէ, և ապա անդարձ ընդզրուկում, ո՛չ հուր այլ համակ թոյր՝ ոչ արեւ այլ արփածեւ վարդին՝ որ զայն երկրի կաւէն կազմուած ծաղկին կը յարէ: Ճոխամէջ շրջանակ, բոցավառ նախափեթակ, ցօղին մագնիսակ, շողին ըմպանակ, տուրնջեան լուսնակ, բուրաւէտ լուսնակ, թերթերու կուտակ, թեւերու թառ՝ նրբաթեւերու դարակ դադարակ, դալարը քոյտակ, կապոյտը քոյ դիտակ, Թիթեռնիկը քու կատակ, մեղուն քո՛ւ դու մեղուն քոգցես նպատակ:»

«Հապա պիւլպիւլը, թովածայն այլ դիմատգեղ, որ անտառակին սաղարթուցը տակ կը թաքչի և կը գեղգեղէ յամառ, որու ձայնին դուն տուիր՝ թագուն մեղրը,

գոր չընադագեղ այն միւս կիսաթուշունն ոսկեթեւ կուգայ համարձակ քողել ծոցէդ հեշտուէտ. պիւլպիւլը՝ կ'ըսեմ՝ ո՛չ ապաքէն, իր խօսակցին՝ խօսեցելոյն ուղղեալ, զքեզ կը գովերգէ, զքեզ կ'այգերգէ, վարդափայլ մանրանկար դու տարրացումն, զեղ համակ, ու բոյր ու հրապոյր բովանդակ, վարդ, միավանկ հէշիւն, միակ քերթութիւն, Մայիսին պսակ, Մօրն երկնից այտերուն զուգեակ՝ հրաշափառ միութիւն:»

Բառախաղերու նրբակերտ հիւսուածք, բայց և նկարէն խայտաճամուկ. պէտք է ըսել սրբագրուելու և քիչ մը ողջմտութեան կարօտը կը զգայ: Բայց խոստովանելու է արժանիքը, գեղեցիկ է. գեղեցկագիտական, գրաւիչ և հրապուրիչ. ակնյայտնի ցոյց կու տայ գեղապաշտ մտքի կարողութիւն, և սովորականէ դուրս մշտաւորականութիւն մը: Պիտի ըսենք Նարեկեան ներշնչումներ կայ. ու չենք սխալած: Եւ Նարեկեան երկնաթիւ հառաչներն գմբուխէ, աղամանդէ ու կարկեսանէ զանգուած իմաստներու ճոխ բառերու մանուածք մը չէ: Բանաստեղծ մտքեր են Նարեկ և Տէմիրճիպաշեան, բառեր սիրող՝ ոսկիով արշալոյսով շաղուած բառեր:

Կը կարգաս առ իր խնամակալուհին

Տիկին Լլէն Նիսըն գրած «Յիշատակ մը» արձակ բանաստեղծական ինքնակենսագրականը, և ինչ. կարծես Տէմիրճիպաշեանի հոգին հոն կը փոթորկի. սառնաշունչ հողմատատան ձիւնի փշրանք մըն է որ գթութեան օճախին կը հպի:

Պիտի չի վարանիմ կրկնելու թէ Տէմիրճիպաշեան գեղեցիկ կը գրէ. գեղեցկագիտութեան ամենէն նշանաւոր քուրմերէն մէկն է, սակայն գեղեցկագիտութեան ըմբռնումին մէջ, երբեմն հակասելն իրեն սովորական է. և արդէն ըստ իրեն՝ կը հակասեն նաեւ մեծ մատենագիրներն, կը գրէ. «Հերպերդ Սբէնսէրի գործերն ուշի ուշով կարդացող մը՝ մարդկային ընկերութիւնը վարող սկզբունքները ճանչնալովն հանդերձ, անոնց շատին զարտուղականութիւնն ալ պիտի հաստատէ: Սոյն անհաստատութիւնը միեւնոյն անձին վրայ իսկ և ամենէն հանճարեղներուն, չը հաստատուիր երբեմն և կամ յաճախ: Բըսքին մեծ գեղեցկագէտն՝ յաճախ կը հակասէ կամ ինքզինքը կը հերքէ միեւնոյն գրքին մէջ. Նիչէ մեծ իմաստասէրը՝ մէկ գրքէն կամ մէկ կիսագրքէն միւսը. դրական իմաստասիրութեան ամէնէն ինքնակշիւ ներկայացուցիչը՝ Լիդոն՝ իր իմաստասէրի կենաց առաջին կիսուն մէջ գրածն յետս չը

կոչեց վերջին կիսոյն մէջ, գոգցես հաւատարմագոյն աշակերտ ըլլալու համար Օկիւսդ Գօնդին որ դրակականութենէ... օգրականութեան ինկաւ, բարձրագոյն քանակագիտութենէ դրական իմաստասիրութեան հիմն՝ մոլորեցաւ մինչեւ իմաստասիրական գառամութեան:» Եւ այս յիշած վարպետներուն ինքը աշակերտելու և հետեւելու չվարանեցաւ, ասոնց պէս և աւելի չափազանց հակասող մըն ալ ինքը ամէն ճիւղի մէջ, ոստոստ կեանք մը մշակելու հետամուտ եղաւ: Գեղեցկին բարեշրջութեան մասին՝ ունի յատուկ յօդուած մը, ուղիղ նպատակով պարզած չէ իր միտքը. միայն վերջաբանին մէջ կարելի է ըմբռնել իր գեղեցկագիտական գաղափարը. գրած է. «Գեղեցիկն իր բարեշրջութեան մէջ ղէպի տգեղը կ'երթայ (միայն թէ տղեղ բառը շատ, անհամեմատ լայն է). կամ թէ Տգեղն իր յատուկ գեղեցկութիւնն ունի նոյնքան գեղեցկագիտական գոր ըմբռնել ու բացատրել հասուն մարդկութեան անշուշտ վերապահուած է: Մանէ պատկերահանն ու Պօտլէոբանաստեղծը նախ չը հասկցուեցան թէ՛ եւ, սակայն ապա ղպրոցի գլուխ հոչակուեցան երկուքն ալ, գլուխ Տգեղին... Գեղեցկագիտութեան»: Ինքն ըստինքեան

տգեղութիւն չկայ: Պիտի ըսէք Տէմիրճիպաշեանէ աւելի տարօրինակ գաղափար: Եւ սակայն պիտի համոզուինք: Կարելի է ընդունիլ թէ բնութեան մէջ չըլլայ տգեղութիւն. երբ կայ գեղեցիկը, պէտք է տգեղն ալ ըլլայ որ կարենանք որոշել գեղեցիկը: Բայց ընդունինք նախ սա սկզբունքը, որ երբ արուեստին մոգական ձեւը կը հպի տգեղին, ան կը գեղեցկանայ: Չէ որ տգեղ են կոկորդիլոս, կարիճ, չղջիկ, մողէզ, օձ, կենտաւրոս, կապիկ, ասորական, չինական կուռքեր. սակայն այս ամէնը երբ կը տեսնենք իբր գարգ հըրաշքանդակ յուշարձանի մը, կոթողի մը կամ խոյակի մը վրայ՝ ինչ գեղեցիկ են չի թռչիլ մեր շրթունքէն. այդ ամէնն երբ տեսնենք գեղահիւս նկարէն վարագոյրներու կամ գորգերու վրայ, հիացումնիս կրնանք զսպել: Ուրեմն տգեղը արուեստին թափաւորութեան մէջ գեղեցկացած է: Ինչ տգեղ էր Պիզմարք, ինչ տգեղ Լեւոն ԺԳ. պապը, սակայն անոնք Լէնպախի վրձինով հիացումի արժանացեր են:

Եւ գեղեցկին վրայ, երբ հանճարեղ միտքը թափէ արուեստին կախարդանքը, անհուն ներդաշնակ երգ մը կ'ըլլայ առարկան. ինքնին հիանալի է թիթեռնիկը ու երբ այն կ'առնէ նկարչի կամ մոգիչ

գրչի հպումը, ալ մեր հոգիին հետ ոսկի
թելով կը կապուի անոր հրապոյրը. Տէ-
միրճիպաշեան կ'աշխատի որ նոր գոյնե-
րով նկարէ թիթեռնիկի գեղը, և ինչ կրնայ
ըսել, զայն կ'անուանէ « թռչուն անբոյն,
անկաց մեղու, թերթ ոգեւոր և ծաղիկ
թռչող: » Միայն վերջին անունը մեր
սրտին հետ կրնայ ապրիլ, ծաղիկ թռչուն
գեղեցիկ սիրուն միտք. և եթէ Տէմիրճի-
պաշեան քիչ մը շատախօս չըլլար « ծա-
ղիկ թռչուն » բառով գոհանալու էր, և
« թիթեռնիկ » երգը աւելի նշանակութիւն
մը կ'ունենար: Ինքը գրած է « Սիրոյ լե-
զուն », սակայն գեղեցկագիտութեան մէջ
ան համը մնալու դատապարտուած է: Տէ-
միրճիպաշեանի կեանքը ողբերգական է.
իր կեանքի բանաստեղծութենէն, պիտի
յիշուի տխուր տողերը՝ մօրը հասցէին
ուղղուած:

« Սիրտը քարին տակ կաթ տըլաւ ինծի,
Ոտքը փուշին վրայ քալեց ինծի հետ: »

Տխուր է այս բացատրութիւնը. սակայն
տխրութեան մէջ գեղեցիկը որքան գողտ-
րիկ անուշութիւն մ'ունի:

*
* *

Տէմիրճիպաշեան ուզած է հնչական
ձայն մը ունենալ հանդիսական օրերուն:
Շահնազարեան աշակերտաց յատուկ է
կիկերօնեան հոետորական բանախօսու-
թիւնները:

Դժբաղդարար իր ճառախօսութեանց մէջ
լեզուի հաւասարակշռութիւնը շատ ան-
գամ կորսնցնելով, իր սրտին անկեղծ ու
սիրուն ձայնը կը խափանուի:

Սակայն որոշ է իր ազգամուլ ըղձանքն:
Ազգին զարգացումը, ազգին վարժարան-
ներուն յառաջդիմութիւնը, վարժապետնե-
րու վարձատրութիւնը, կրօնական ան-
խրտրութիւնները, շահեկան խնդիրներ են
ըր կը ջատագովէ, և սրհապանողական
ու ազգին շահերուն վնասակար համա-
րուած տարրերուն չի խնայեր իր հա-
րուածները: Խայթող չէ լեզուն, հառաչե-
լով կ'ուզէ կշտամբել յառաջադիմութեան
ոտխները:

Սակայն իր ճառին նիւթին վրայ խօ-
սելէն առաջ, լաւ համարած է ինքզինքը
ներկայացնել ունկնդիր հասարակութեան.
կ'ուզէ որ ունկնդիրները գիտնան, թէ
Պայրըն այն բանաստեղծն է, որ ամենէն

աւելի խորին տպաւորութիւն ըրած է իր հոգւոյն: Ինքը անբացատրելի կերպով յուզուած է, վասն զի թեւակոխած է այն տարիքն ուր վախճանեցաւ Պայրըն, սա սակայն տեսած է Յունաստանին փրկութիւնը և նախատեսած իր անձին անմահութիւնը, ու մահուընէ վախնալուն համար չէ որ կը տխրի, այլ վասն զի իր պաշտած բանաստեղծին այն երկու մը-խիթարութենէն և ոչ մին ունի: Սակայն ունի ուրիշ միւխիթարութիւն, իր սուկեհիւս երագնեբէն մէկն է այն. և թող ինքը պատմէ.

« Մահուան առջեւ միակ միւխիթարութիւնս այն է թէ... պիտի մեռնիմ, թէ Նիրվանայի գրկաց մէջ պիտի ընդունուիմ. ու պիտի հանգչիմ յաւիտեան: » Ու յետոյ կը սկսի իր կարդացած իմաստասէր հեղինակներու անունները յիշատակել:

Կարեւոր կը համարի այդ յիշատակութիւնները, անով հանդիսական ունկնդիրները պիտի գիտնան որ ճառախօսը հմուտ բանաստեղծ մըն է և իմաստասէր...

Բանախօսը ուժգնօրէն կը պաշտպանէ վարժապետները, վասն զի անոնք ազգին ապագան կը պատրաստեն: Ու կը ցաւի որ վարժապետները տակաւին լքուած կը մնան: Եւ ցոյց կուտայ պատասխանատու

վարչութեան սխալները: Ինքը տխուր պատկեր մը մատնանիշ կ'ընէ, և այդ պատկերը հայակուլ հին ուժիմի ամենէն կատարի շրջանէն առաջ նկարուած է. քմահաճ վարչութեան գործերն ալ երբեմն շատ ծանր պատասխանատուութիւն կ'ունենան ապագային արձանագրութեան մէջ. սխալները շատ անգամ կրկնուած են, ու ամենէն ցաւալին, սխալէն օգուտ չբողելն է, և ապագային մէջ ուղիղ չընթանալն: Սխալներու պատկերը ահա ինչպէս Տէմիրճիպաշեան կ'ուրուագրէ: « Սխալներն համընք, — թէեւ կըթական խուրհուրդէն համարողութեան վկայական ստացած չենք: Մարմնապէս ու բարոյապէս իր պաշտօնին անյարմար անձ մը կըթական տեսուչ կարգուեցաւ. — մէկ սխալ: Անձեռնհաս մարմնոյ մը ձեռամբ քննութեամբ կամ անքննութեամբ գրեթէ առհասարակ առաջնակարգ ուսուցչի վկայական տրուեցաւ կարող և անկարող ուսուցչաց. — երկու սխալ: Հայ ուսուցչական մարմնէն տարամբժուեցան հայ ուսուցիչներ՝ Դարագաշեանի, Թէրզեանի, Յովհաննէսեանի նման, — երեք սխալ: Դասագրոց ցանկէն արտաքսուեցան ամենընտիր դասագրեան, — չորս սխալ... » Ու հեզնելով կը շարունակէ իր ճառախօսութիւնը. « Հայ

մանկտին երկու հարիւր հնչուն ոսկւոյ փոխարէն ուսաւ թէ... գուշակեցէք... ուսաւ թէ Գարագաշեան բողոքական է և թէրզեան՝ հոովմէական:»

Եւ ո՞վ է այդ ձախողակ շրջանի վարչապետը, վսեմաշուք... Յովհաննէս էֆէնտի Նուրեանը: Ուրեմն այս անունը բաւ է, սխալներու մեկնութիւն ուզելն աւելորդ է:

Հայ յիշատակարաններ են քրոնիկները. և յօդուածները որ մերթ ընդ մերթ լոյս տեսած են օրագիրներու մէջ, թէ անոնք կը շօշափեն ազգային պատմութիւն կամ գրականութիւն և կամ կ'ուրուագրեն նշանաւոր դէմքերու գործերն ու հոգեբանութիւնը, ատոնք ժամանակագրական փնտռուած արձանագրութիւններ են:

Ու, թերթելով օրագիրներու լայնատարած էջերը, շատ քիչ անգամ կը պատահիմ կենսական քրոնիկներու, որոնք նիւթ կ'ըլլան իմ այս գրածներու: Արեւեկի 1887, թիւ 1142ի եօթը մեծ սիւնակները «Նօքա եւ ես» վերնագրով յօդուածը կը կրէ ստորագրութիւնը Ե. Տէմիրճիպաշեանի. ինքնին յօդուածը

շատ հետաքրքրական է, ու կը կարգամ: Նոյն յօդուածագրին պէս հեղինակի մը վրայ գրելու համար, ստիպուած եմ մուրացկան թափառիլ լրագրական էջերու մէջ:

Տէմիրճիպաշեան արդէն վերնագրին մէջը հնչեցուցեր է իր եսը: Ինծի համար անոր եսը տաղտուկ չառթեր, վասնզի անպարփակելի գոռոզ մը չէ: Օտեանէն անզգամ կ'անուանուի, Արփիարէն տգէտ կը կոչուի և ինքը անյիշաչարօրէն զանոնք մեր ամենէն նշանաւոր գրագէտները կը համարի:

Իր յօդուածը սկսելուդ կը կարծես թէ պիտի կարգաս Պլուտարքոսական գուգակշռութիւն մը՝ երկու նշանաւոր Գրիգորներու՝ Աղաթօնի և Օտեանի վրայ: Թռուցիկ ոճով կը գտնես այդ գուգակշիւրը, բայց ամենէն աւելի յայտնի է իր ինքնակենսագրութիւնը:

Այդ ընդարձակ յօդուածը սկսելուդ, դարձեալ միտքդ կ'իյնայ պահանջ մը: Ու ինքնիրենդ կը հարցնես թէ ինչո՞ւ Տէմիրճիպաշեանի հիւրընկալ խմբագիրները բարեկամ դատաւորներ չեն եղած, անոր յօդուածներուն խենդ մասերը չեն մկրատած. «Նօքա և ես» ի առաջին պարբերութիւնը կատարեալ խենթի բոլորովին անճաշակ գրութիւն է:

Կայ այդ մեծ յօդուածին մէջ գրաւիչը և շահեկանը: Ըստ Տէմիրճիպաշեանի Աղաթօն և Օտեան ունեցեր են նոյն նսեհն և միեւնոյն վախճանն, սակայն Աղաթօն կը մեռնի ու կը թաղուի իբր աստուածաբան նախարար մը իսկ Օտեան իբր տառապեալ մը:

Է.

Քաղաքագետ Դալէոն ըսած էր. Սիէյէս կը խորհէր, Լաֆայէդ կ'երագէր. Տէմիրճիպաշեան ալ կը հարցնէ. « Զ՞ք կրնար նոյն դատաստանը Աղաթօնի կամ Օտեանի ալ պատկանիլ. կամ մանաւանդ քաջ որակած չ՞ը պիտ' ըլլանք մեր կրկին ողբացեալ հայրենակիցներն՝ ըսելով. Աղաթօն էֆէնտին կ'աշխատէր, Օտեան էֆէնտին կը վայելէր: » Չեմ գիտեր որքան ճշդութիւն կայ այդ զուգակշռին մէջ, ինչ որ կ'ընէ Տէմիրճիպաշեան: Եւ այս գրագետը երկուքին ալ ուզեր է նմանիլ: Իր կենսագրութեան մէկ փետուրը կը համարիմ իր այս խոստովանանքը. « Աղաթօն էֆէնտին, ում կը հետեւէի մասնաւոր ու հանրային կենաց մէջ: Աղաթօն էֆէնտին գորտեասած եմ իր համեստ տան մէջ՝ իր

տնտեսագէտներէն շրջապատեալ, ներշնչեց ինձ այն հաւատքն որով լի էր իր հոգին — հաւատքն ապագային: » Ու կ'երկարէ վերաչուական հաւատարմութիւն մը, հաստատածը և խախտածը գուցէ ինքն ալ հասկցած չըլլայ: Օտեանի հաւատքը քննութեան կ'ենթարկէ. նպատակը այն է, որ իր պատկերով մեզ զբաղեցնէ: Հտպտի և քերթողի դիմանկարներն երբեմն համահաւասար հետաքրքրական ու հաճոյատեսիլ կրնան համարուիլ: Գիտենք ինքն իր ցոյց տուած պատկերը. ոչ դէմքի, այլ ուղեղին մտապաճոյճ ուրուապատկերն. « Հարցուց ինձ Օտեան՝ թէ ինչ զբքեր կ'ընթեռնուի նախասիրաբար: Աղաթօն Գրիգոր էֆէնտին ազգած էր յիս սէր տնտեսագիտութեան. Կիւմիւշեան Գրիգոր էֆէնտին, ազնիւ և ազատամիտ մօրաքեռայրս, ինձ տուած էր Էմէ-Մարգէն՝ ի մէջ այլ իմաստալից հոգեշունչ մատենից: Արդ, պատասխանեցի մեծանուն խօսակցիս. Էմէ-Մարգէն կարդացած եմ. Ռոսի կը կարդամ: Յոյժ գոհ եղաւ Օտեան էֆէնտին. գրեթէ զարմացաւ. ուսանող էի յայնժամ: Այլ հարցուց նորէն. Լամարզին չէ՞ս կարդար. Ռաֆաէլ կարդացած չէ՞ս: Վերթեր կարդացած եմ: Ամենախորին յուզմամբ արտասանեցի այս խօսքն, և

սարսուռ մ'ըզգացի հոգևոյս խորը:» Ուր այս հարց ու պատասխանները տեղի կ'ունենան, բանաստեղծական է միջավայրը. Տէմիրճիպաշեան վերթերական ջղագար փոթորկով մրրկուած է: Ու կը սիրէ այդ հոգեկան խռովքը: Գանգրահեր կուսան գեղանին, սեւաթոյր կայծակնացայտ աչօք կը յուզէ անոր խորշերը և էութեանը խորերն. ու այդ կոյսը իր գիմացը կեցած էր ճակտին վրայ կը վերծանէր բանաստեղծին վերթերական հոգեբանութիւնը: Զարմանալի չէ, Կէօթէի այդ թոքախտաւոր գիրքը կրնար սիրուիլ հիւժախտաւոր երեւակայութենէ մը:

Եւ զարմանալի չէ բանաստեղծ Տէմիրճիպաշեանը. երբ ըմբռնած ենք որ ան մեր անհաւասարակշիռ միտքն է, որուն ինքնակենսագրական էջերն բնականաբար անհամաձայն ու տարանջատ կը մնան: Սղենիօսի գիականացեալ կացութենէն՝ յանկարծ յարութիւն կ'առնէ: Սղաթօն մը ըլլալէն աւելի, կը զգայ կոչում մը Օտեանի նմանելու, անոր պէս ուզեր է երազել, վայելել ու տառապիլ:

Պէտք է խոստովանիլ որ Տէմիրճիպաշեան ամէնէն քաջարի գինուորն է եղած: Սակայն անըմբռնելի կ'երեւի իր սա խոստովանանքը. «Աշխատած եմ՝ ոչ հանրու-

թեան օգտակար. ըլլալու նպատակաւ, — անլճուր և անգուլթ խոստովանութիւն — այլ աշխատած եմ վայելիքս նպատակաւ:» Ու կրնանք ըմբռնել թէ Տէմիրճիպաշեան մտաւորական շեղումներու պատճառաւ որքան տուժեր է: Իր այդ վայրկեանի, խենթանոյշ վայրկեաններու խօլական խօսքերուն ներողամիտ գտնուիլը պարտականութիւն մըն է, քանի որ իր հոգին՝ իր էութիւնը՝ ներող, տղու ու համեստ ըլլալու դրական ձգտում մ'ունեցեր է: Գիտենք իր ներքին խառնուածքին ամենէն զուարթանոյշ պատկերը. տեսէք ինչ կը գրէ. եթէ կ'ուզէք երգ մը, արձակ քերթուած մը համարեցէք:

«Գիտէի թէ ծաղկին կ'երթան մեղուններն, և բանաստեղծին՝ ծաղկանոյշ աղջիկներն. և աշխատեցայ քաղել բոլոր ծաղիկներն՝ ոյք գեղեցիկ հանճարներու ձեռամբ սրբուում են մատենագրութեանց հրաշակերտներուն մէջ: Աշխատեցայ բնութեան կարգը յեղաշրջել, գլուխս մասամբ փոխադրել սրտիս մէջ, քանզի գիտէի թէ մտածումը յայնժամ մանաւանդ կը հրապուրէ իգական մտքերն՝ երբ ծալքերուն մէջ փայլիլի սիրական թարսասուքն, թէ զգացումն յայնժամ մանաւանդ կը զօրէ՛ յորժամ պատուաստուի նա հզօր մտածմամբ: Աշ-

խատեցայ. Պրոմէթէզ գողցած էր երկնից հուրն անմեղ ոսկեգոյն. առաւել արի քան Արիական կիսաստուածն՝ իջայ դժոխք, և երկնից հուրէն բոցագոյն արիւնխառն հուրն ես գողցայ...: Աշխատեցայ, յերկինս համբարձայ, և զլոյսն երկնից կապտեցի, զոր ոչ ոք ի հնդիկ կամ ի հելլէն դից ժտած էր յափշտակել անտի: Աշխատեցայ, հրեշտակաց թեւերն առի, դիւաց թաքուն և երեւուն այլանդակութիւններն: Անասող արջնաբոլոր զիշերներն արթուն կեցայ, որպէս զի խաւար շօշափեմ, և որպէս զի խաւար համբուրեմ սրտիս մէջ: Մնացի մրրկաց մէջ, որպէս զի վայրագ հողմոց վայրենութեան ընտելանամ, որպէս զի բոց փայլակներն հոգուոյս մէջ զբաւեմ ու գումարեմ: Եւ... անոր զոր կը սիրէի, յայտնեցի խաւարային ու աստուածային գանձերս, որպէս զի պաշտելի ըլլամ, և որպէս զի սոսկալի անոր զոր կը սիրէի...: Այո՛, աշխատեցայ սիրոյ համար:»

Ու դարձեալ կը խոստովանի թէ ո՛չ պարտուց, այլ սիրոյ համար աշխատած է: Իր խոստովանանքը հանելուկ մըն է. իր ամբողջ զբաղման աշխատութեան նպատակը կարծես իրօք հանելուկ մըն է. Օտեան Գրիգոր ինքն իր անձին համար

կ'ըսէր թէ. « Հանելուկ մըն եմ ես »: Նոյնը ինքն իրեն համար Տէմիրճիպաշեան կրնայ ըսել: Եւ արդէն քանի որ մարդն ինքն իր մէջ, շատ մը հակասութիւններով հանելուկ մըն է, ո՛րքան աւելի առեղծուած մը և հանելուկ մը չըլլայ Տէմիրճիպաշեանի մէջ օգտաթոյնի տխրանոյշ մտքերն. ինքնաճանաչութիւն և իր ընկերը ճանչնալը հասարակէս դժուար է և միթէ Լամարգին սխալած է ըսելով. « Մարդն իր շուրջ անձանօթագոյն ինչ ոչ ունի քան մարդն իսկ:» Կեանքի փորձառութիւնը անճշդութիւն չի տեսնար այդ Լամարգինեան մտքին մէջ, ուսկից անբաժան մնալու է « Ծանիր զքեզ » իմաստուն պատուէրը: Ու ո՞վ ճանչցեր է ինքզինքը: Ոչ ես գրողս ոչ ալ դու ընթերցողս:

Ու երբ կը յանդգնին ուրիշին հոգեկան կամ գրական ուրուսպատկերը գծագրել, արտադրութիւնը նկատելի է առ երեւոյթս, մտքի աչքը մինչեւ մէկ կէտ կրնայ խորաթափանցել: Իսկ Տէմիրճիպաշեան ուրիշներուն հոգեկանին մէջն ալ խոր թափանցելու անպարունակելի ուժը կ'աշխատի ունենալ: Տեսէք Օտեանի սիրոյ հոգեբանութիւնը ինչպէս կը պատկերէ:

« Թշնամանած չենք ըլլար Օտեան էֆէնտին՝ ըսելով թէ սուրբ մը չէր նա. և

Թուի՝ զուտ ճշմարտութիւնն յայտնած կ'ըլլանք, ըսելով որ Թատերասիրական մարդ մը չէր Օտեան և սակայն... սուրբ կ'երևի նա կամ սուրբ՝ կը ցուցնէ զինքն իր գրուածոց մէջ. սուրբ սիրոյ նկատմամբ, սուրբ՝ գրականութեան նկատմամբ: Գոհ չէր թէ յգգալիս անկախ սէրը պղատունական կոչուի: Պղատուն՝ թէև իմանալու իմաստասէր՝ այլ մարդ է հուսկ ուրեմն և մանաւանդ հեթանոս մարդ: Արդ՝ ինքը Օտեան այդ սէրն հրեշտակային կը կոչէ: — »

Եւ ինչպէս յայտնի է արդէն՝ Օտեան վրան բաց ըսուած գրականութեան համար ալ՝ ունի յատուկ անախորժութիւն մը: Իրեն համար Զօլայի զրքերն անհունօրէն ատելի եղած են. ինչպէս հաստատած են արդէն Ա. Արփիարեան, Հրանտ Ասատուր: Օտեան թարգմանել տալով Արքա Գոնսրակի և կը համարի երանութեան դոները բացած ըլլալ, և այդ վէպը կը յանձնանարէ որ կարդայ հայ ժողովուրդը: Ու Տէմիրճիպաշեան որ կ'երազէր Օտեանի կոչումը ունենալ, կը հակառակի անոր այդ իմաստասիրական ըմբռնումին մէջ. Տէմիրճիպաշեան կը սիրէ գիտութիւնը, կը սիրէ նիւթապաշտ գրականութիւնը: Եւ այս պատճառաւ Օտեանի համար Տէմիր-

ճիպաշեան անզգամ է. բանաստեղծը կը բացատրէ թէ ինչո՞ւ անզգամ է. « Զիս ակզգամ կ'անուանէ, քանզի... ժամանակին հետ կ'ընթանամ, քանզի կը հետեւիմ լիդուէի և կը համակրիմ Հարդմանի, քանզի կը հոտոտեմ Պօտըլէոի նեխերգութիւններն և ծափ կը զարնեմ հայհոյերգակ Ռիշբէնին, քանզի կը միտիմ արձագանգ գոլ անկապաշտից (décadent) և ախոյեան արուևտ վաւն արուևտի վարդապետութեան՝ զոր կը ջատագովէ և կը գործադրէ բնապաշտական դպրոցը: Նա որ կենդանիներէն աւելի մահացելոց հետ կ'ապրի, կը ստգտանէ ինձ իմ հոչակաւոր սիրահարութիւնս ընդ Նիրվանային, — որ ամենայն լեզուաց մէջ մահուան ամենագեղեցիկ անունն է: » Տէմիրճիպաշեան անփոյթ է, անտեղիտալի կը յամառի իր համոզումին մէջ, կ'ուզէ ընդգրկել նիւթապաշտ գրականութիւնը, վասն զի զայն մատենագրական բարեշրջումներու աղբիւր կը նկատէ. ինք ուզած է դաշնակցիլ անկապաշտ դպրոցին, վասն զի ըստ իր համոզումին, միւս գրական դպրոցները, այլ ևս հին են, ու իրենց վերջին բառն արդէն ըսած: Ինքն իրեն համար կը վկայէ թէ իր դաւանանքը լայն է՝ որքան տիեզերք: Եւ այս գրական իմաստասիրութեան նշանաբանն է:

Տէմիրճիպաշեանի անյեղլի դաւանանք մը ունենալուն վրայ միշտ տարակուսած են, քանի որ ինքը ըստ քառաթիւ հողմերու դաւաններ ու դրժեր է գաղափարները:

Սակայն Օտեանի մասին գրած սա ղիտողութիւնները շատ ճշգրիտ կը գտնեմ. « Իր կենաց մէջ իրապաշտ և իր յայտարարութեանց մէջ տեսլապաշտ, գործոցը մէջ յառաջադիմական ու գրուածոցը մէջ յետադիմական՝ գրէթէ միջնադարեան, անտարբեր ի մասնաւորի՝ և ի հրապարակի հաւատոյ ախոյեան անդիմադրելի, առողջութեան մէջ հիւանդ յաւէս՝ ու հիւանդութեան մէջ առողջ յաճախ, կանուխէն ձանձրացած կեանքէն և ազգային շրջանակին մէջ մանաւանդ կենաց արտայայտութեանց հեղինակ կամ հանդիսատես գոհունակ բարձրարոյն գրական մարդ և գրքի մը վրան իր անունը չը դրած. այսպէս էր Օտեան էֆէնտին: » Պատառիկներ արձանագրեցինք. ատոնք բաւական վկայ են թէ Տէմիրճիպաշեան ինչ գաղափար ունի իր ժամանակակից արգոյ ազգային դէմքերու մասին: Ակն յայտնի է որ խորհին պաշտում մը տածած է Օտեանի յիշատակին. վասն զի այն ժամանակին մարդն էր. անվիճելի պատգամը քաղաքական և կրթական ակումբներու մէջ:

Տէմիրճիպաշեան գիտէր յարգել՝ յարգելին. և իր ձայնը Օտեան կ'ենթադրէր լսել անդնդախոր հեղեղներու թաւալումէն:

*
* * *

Ըսած եմ թէ Եանազարեան աշակերտները աշխատած են ցոյց տալ բազմակողմանի յատկութիւն: Տէմիրճիպաշեան ամէն ճիգ թափած է իր այդ կարողութիւնները չթաղելու: Ինքը վիպասան է, սակայն վէպն ալ շատ ստորաբաժանումներ ունի: Ինքը կ'աշխատի ամէն տեսակը փորձել: Եւ որովհետեւ կովկասահայք կը գանգատէին թէ թրքահայք ժողովրդական բարբառով չեն գրեր, ինքը « Էրիկ Կնիկ » ընդարձակ նորավէպով կ'ուզէ այդ գանգատի առջեւ առնել: Այդ նորավէպին առաջին նպատակը լեզուական է. գաւառներու բարբառը չէ, այլ Պոլսական հայերէնն է, այն լեզուն որ բնիկ է Պոլսոյ անգիր հասարակութեան: Նիւթը յուսախարութեան պատմութիւնն է, էրիկ կնիկ զոջացեր են իրենց ամուսնութեան վրայ: Էրիկը կ'ըսէ:

« Ո՛րը կ'ըսէ. « կարգուիլ աղէկ ամա, սա ալաֆոռանկան չըլլար, ֆիստանին շարխային սօնը չի գար, ախպար, ոսկի-

ներդ քուրջի կտորներուն տուր, սըրմա, կլափտան, թըրթըռ, փուլ, բան մը չի կայ որ փարա ընէ աս Էվրոփայէն եկած կնկան հագուստներուն վրայ. էնթարի շաւվար մը կը շինէին, ծախէիր նէ, կէնէ փարա էր: Անկէց ետքը, կնկանդ ֆիստան շինէ, որ ուրիշին երեւնայ, սուռուէ պալօ, բիք-նիք, տահա՞ զօնսէն, կէնէ զօնսէնէն բան մը կը հասկնաս կոր, քիչ մը սիւրէ միշ կըլլաս կորնէ, քէյֆ մըն ալ կ'իմանաս կոր կէնէ: Չօլուխ չօճուխ էրէսի վրայ կը մնան կոր, ախպար: Խելուքին միտուընեն հիմակուան ընտանիքներուն՝ սիւսի ու՛ գետինն ասնի զօռթէզանութեան է. քիպարճա՛ սիրահարութիւն կ'ըսեն կոր: Աման, բերանս բանալ մի տար, էն աղէկը տեղը մնայ:»

Այսքան իբր նմոյշ բաւ է: Բնական է որ կատարեալ լուսանկար մը չէ այս Պոլսոյ բարբառին, այլ նմանութիւն մը: Կը գրէ որ գրած ըլլայ:

Նիւթը միսիթարական չէ, կինը Շօրէն հաուէրի վարդապետութեամբ դատապարտուած, անարգուած է, անոր մէջ յառաջադիմութեան ձգտում մը եթէ կայ, բայց նպատակը ամուսնական անհաւատարմութիւն է: Սակայն այդ նիւթը բոլորովին անմիսիթարական չէ: Տէմիրճիպաշեան գա-

դափարականը անհաւասարակչիւ կը պահէ, կը տխրեցընէ, կ'ուրախացնէ, դատապարտելու ժամանակ չի մնար, կը ստիպէ որ իր վէպին թոյլ հերոսները չը մեղադրեն: Եւ ըստ սովորականին՝ ինքը դարձեալ իր դերակատարութեան մէջն է: Այդ վէպին մէջ թէ՛ կինը և թէ՛ էրիկը կը սիրեն վարժապետ մը, ու ինքն Տէմիրճիպաշեանն է: Շօրէնհաուէրի, Պայըընի և Նիրվանայի սիրով բռնկած բանաստեղծ իմաստասէր Տէմիրճիպաշեանն է: Ժողովը դական պարզուկ ու բնական տեսարաններու շարքը շարունակութիւն եթէ ունենային, պիտի սիրուէր այդ նորավէպը և նշանակութիւն մը պիտի ունենար, բայց հնաւանդ վիպագիրը չկրնալով մոռնալ իր Նիրվանան, վիպակին վերջը կատարեալ քասոս մը կը դարձնէ:

Կը ցաւիմ որ ողջմտութիւնը չհաւասարակչուէր Տէմիրճիպաշեանի մտաւորական գեղեցիկ կարողութիւններն: Բուրուլի գրած նամակին մէջ, Երուանդի նկարագիրը ինքնին Տէմիրճիպաշեանի ուրուապատկերն ընդունելու ենք. տեսէք թէ ինչ է ինքը.

«Օր մը իմաստասիրութեան վրայ կը ձառէր Երուանդ, օր մը բանաստեղծութեան վրայ, փոփոխակի: Իմաստասէրներ կը կարգար կամ կը կարգայի, կը բա-

ցատրէր ու կը տառապէի, կ'արտասուէի: Մեծագոյն իմաստասէրք ու բարձրաթոիչ քերթողք գոզցես յինքն առ ժամ մի կը հոգեփոխէին. նոքա կ'երթային, իրենց հրապոյրը իր վրայ կը թողուին: Եւ քանի հրապոյրն իրեն աւելնար դասատուիս, տառապանքն այնքան կ'աճէր և իմ սրտիս: Պայրըն իրեն համար ամէնէն մեծ բանաստեղծն էր, Ծօբէնհատէր ամէնէն մեծ իմաստասէրն. որովհետեւ Պայրըն ամէնէն անձնական բանաստեղծն էր ու Ծօբէնհատէր՝ ամէնէն անձնական իմաստասէրն: Ի ծունր ընթերցաւ ու մեկնեց Պուտտայի կեանքն ու Պակալատ-Ժիրյան կարգալու համար գիրք մը բնաւ չբացաւ:»

Այդ վարժապետը շատ համակրելի ներկայացուած է. ան բազմակողմանի հմտութեամբ օժտուած. սիրել տուած է զայն, ան իր հոգեբանութիւնն է. և ինքը ատելի չէր, վասն զի ուրիշները չէր սիրեր տել:

Ինչ որ իրեն հոգիին իւրացուցած է Տէմիրճիպաշեան, անգթութիւն կը համարի զայն իրմէ յափշտակելն: Յաւ, թախիժ, չարչարանք պէտք են իրեն հետ ապրիլ իր հոգիին ընտանիքի անդամներն են անոնք, անոնցմէ անբաժան է. և այդ պատճառաւ է որ ինք շատ մորմոքեչ լեզուով

կ'աշխատէր, երբ իրեն յոռետեսութիւնը արուեստակեալ կը համարէին, ինքը անուշ ու մեղմ դառնութեամբ կը բողոքէր. ո՞վ իր մէջ արծարծեր էր յոռետեսութիւնը, ու բիւր հարցմունք. «Գրականութիւնն — Համէլէզի մենախօսութիւնն ու Մանֆրէտի մենայածութիւնն — արտադրեց և արծարծեց զայն, կամ թէ ինքն իսկ, լքման անյաղթելի տրամադրութիւնն՝ յիս ընդածին՝ ծնունդ ու սնունդ տուաւ իմ գրական գոյութեանս ու գործունէութեանս. հուսկ ապա կրնայ բուժուիլ, կրնայ դարմանուիլ, եթէ ոչ անբուժելի, մահու մահացու հիւանդութիւն է այս լքումն... կ'ըսեմ, ո՞վ հրապարակագիր իմ եղբայրակիցք, կ'ընեմ այս կեղեքիչ հարցումներն ես ինձ, երբ՝ համոզմամբ կամ անփտակից՝ զրչի թեթեւ խաղացմամբ՝ վէճի տակ կը ձգէք հրապարակի վրայ յոռետեսութեանս անկեղծութիւնն, երբ Երեմիայի կամ Եօզէ տը լառայի կապկութիւնը կը համարիք ողբասացութիւններս:» Ի ծննդենէ լաւատես է եղած ան, «զի մինչև ինը տասը տարեկան՝ կրկրկ պատտախ կոչուելու աստիճան խնդամուրիկ տղայ մըն էի...»

Ը.

Ու երբ սկսած է զգալ ու խորհիլ, այն ատեն մանկական հասակի ուրախութեան երաժշտութիւնը թոյն դարձած կը սկսի թորիլ իր հոգիին մէջ: Այդ հասակէն վերջը կեանքը ալ թունաւորած կ'երագէ մահ, որուն ետեւէն վազելը յոռետեսութեան վերագրելու ենք:

Եւ ամէն նիւթի մէջ կը սկսի ցաւը փնտռել և ողբալ: Կը կարդաս «Երկու քոյրերը» պահ մը կը սկսի պերճագեղ նկարագրութիւններ. գոյները միս կ'առնեն, հոգեկանութիւնը նիւթականութիւն կ'առնէ. ու ահա գեղեցկին քով տգեղ սուգը, ողբերգական վախճանները կը զիջերեն նորավէպին պայծառ հոգին: Այդ նորավէպին մէջ անկապաշտ է. տեսէք սա տարօրինակ բացատրութիւնը. «Ականջները մային ժպիտ մըն էին՝ երաժշտութիւն հոսելու... եթէ բերանը բանար ձայնային թաւիշ մը տարածելու համար օդոց մէջ»: Սա անկապաշտ բանաստեղծութիւն է...:

*
**

Ամէն քարոզիչ իր յատուկ բեմէն փայլուն ձայնով կը ճառէ. հոնտորին բեմ, զրագէտին մամուլ հարկաւոր է: Տէմիրճիպաշեան իբր զրագէտ նախ կը ծանօթանար Մասիսի և Թերձեմանի Էֆրեարի թերթերուն մէջ հրատարակած յօդուածներովը. անոնց մէջ ինքը հիւր զրիչ էր: Իրական ժիր գործունէութեան յատուկ ասպարէզը կը գտնէր իր սեփական թերթերուն՝ Գրական և Խնամաստիպական Շարժումին, յետոյ Երկրագունտ հանդէսներուն մէջ:

Շարժումին Տէմիրճիպաշեանը՝ ծանօթ է այս գրութեանս առաջին էջերէն. քննենք զինքը Երկրագունտին մէջ. նոյն ամսաթերթի հաստատութիւնը կը պարտինք Արական Ընկերութեան. խմբագրութիւնը յանձնուած էր Յ. Յ. Պարոնեանի մեծահանճար գրողին, որ իր օրով ոչինչ հրատարակեց իրեն վարած թերթին մէջ. իրեն յաջորդեց Տէմիրճիպաշեան: Ամսագրի ամենէն հին հիմնադիրը Շահնազարեան կարապետ վարդապետն էր. տարիներ վերջը Նուպար-Շահնազարեան աշակերտները կը վերակենդանացնէին իրենց հա-

մակրելի տնօրէնին վաղեմի թերթը: Պարոնեան ու Տէմիրճիպաշեան շրջանի Երկրագրւոտ հանդէսը՝ ժամանակին պահանջներուն ուզելով յարմարել, հանդէսը ընդհանուր բանասէր ու գրագէտ դասակարգին համակրելի ընելու ձգտում մը ցոյց կու տար:

Տէմիրճիպաշեան իր շուրջը համախմբելով իր ժամանակի ծանօթ գրիչները, սակայն ամենէն կարկառուն դէմքը ինքը կը մնար՝ իր վարած ամսաթերթին մէջ, ուր խմբագրականներուն հետ, լոյս կը տեսնէին իմաստասիրական, քերթողական և քննադատական գրութիւնները: Ատոնց մէջ գրական ու պատմական արժանիք ունեցողները ներկայ ուսումնասիրութեամբս քննութեան կ'ենթարկեմ:

*
**

Տէմիրճիպաշեան ինքնին իր համեստութիւնը և մեծութիւնը կը դրուատէ. Երկրագրւոտի յառաջարանին մէջ կ'ըսէ. «Ես ո՛չ գրագէտ եմ, ո՛չ գիտուն. սիրող ու մշակող գրականութեան. սիրող ու ծաւալող նոր իմաստասիրութեան. — ահա միայն իմ տիտղոսք:»

Եւ սակայն ինքն իր մէջ կը զգայ որ

գերագոյն յատկութիւններով օժտուած գրական ուժ մըն է. իր խմբագրած թերթը սովորական բան մը չէ. կարդանք իր Խօսք առ ժողովուրդն որ իմանանք. «Եւ դու, ժողովուրդ հայոց, «Երկրագրւոտ» կարդա՛ միշտ. կարդա՛ զայն եկեղեցի երթալէդ յառաջ և եկեղեցիէն ելնելէդ յետոյ: Ի՛նչ բան արդարեւ զմարդն աւելի կը մերձեցնէ իր Ստեղծչին և իր նմանին քան զգիտութիւն. և ո՛չ ապաքէն գերազանցօրէն գիտական հայ հրատարակութիւնն է Երկրագրւոտ:» Ինքը համեստ է, իր գործը գերազանցութիւն: Ի՛նչ մեծ յաւակնութիւն որ ունենայ Տէմիրճիպաշեան, դատապարտելի չէ, վասն զի ունի հանճար. ունի գրիչ և ունի աշխատելու անզուսպ կորով. իր Երկրագրւոտին նպատակն է — կ'ըսէ «Մտաւոր զարգացումն և ազատագրութիւն ազգին: Օ՛ն, աշխատինք. Laboremus»: Եւ կ'աշխատի, ու կ'աշխատցնէ իր խանգոտ գրասիրութեամբը:

Տէմիրճիպաշեան յօգուտ ազգին, ուրիշին աշխատելուն նախանձախնդիր է եղած, և դրուատեր է այն ամէնը որ հայ գրականութիւնն օժտեր են. Հրազդանին զովեստի բաժին մը կը բանայ արդէն Երկրագրւոտի առաջին պրակէն. գիտնալով հանդերձ որ անոր հետ տաք յարաբերու-

Թիւն մը չկրնար ունենալ: Տէմիրճիպաշեան օրուան պատգամատու գրագէտն էր, յառաջադիմական թերթ մը հրատարակելու երկունքին մէջ, իրեն աջակցութիւնը կը խնդրուի. քաղաքական ճիւղը զոր չէր սիրած զայն իրեն կ'առաջարկեն, կը մերժէ, ու այդ մեծ թերթը Արեւելքը լոյս տեսած օրը իր հեգնութեանց տարափով կը խոխոմի: Տէմիրճիպաշեան ցոյց տուած է խմբագիրը ըլլալու բազմակողմանի յատկութիւն. ինքը գրական մէկ ճիւղի մէջ սահմանափակուիլ չէ ուզած: Պոլսոյ Օրթաքէօյի գրական երիտասարդաց ընկերութիւնը կը պատրաստուի շաբաթերթ մը հրատարակելու. իրեն կը հարցուի, թէ ինքը ինչ ճիւղի վրայ կ'ախորժի գրելու կը պատասխանէ. «Ծնորհակալ եմ ձեր համակրութեան համար, բայց ես ճիւղ չունիմ. ճիւղէ ճիւղ կը թռչիմ:» Առաջարկողը դարձեալ կը պնդէ. «Անպատճառ ճիւղ մը պէտք է որոշես, ամէն ճիւղի համար մէկմէկ մասնագէտ պիտի ընտրենք և պիտի վճարենք:» Տէմիրճիպաշեանի վճռականը կ'ըլլայ. «Ես մասնագիտութիւն չունիմ. կամ եթէ ունիմ, այն երանգն է (rêveries), որ քաղաքական շաբաթաթերթի մը չի յարմարիր:» Իր գրական ու վերաչուական երազները ազատ թեր-

թիւն իր Երկրագունտին մէջ կը սկսէր հրամցնել ընթերցողներուն: Այդ ամասազիրը գրական սիրուն բովանդակութեամբ իր հովանիին տակ լոյս կը տեսնէր 1884ի Յունուարէն սկսեալ:

Իր միամիտ մեծամտութեան հեգնածպիտ կարեւորութիւն մը տալով, ներքին մարդը պիտի դիտենք իր մէջ: Նորայր բանասէրը իր «Մեծանուն եղբայրակիցն» է, աշխարհաբարի խնդրոյ առթիւ մարտագոռ խօսքերէ վերջը ոմբակոծում մը կը սպառնայ սա տողերով. «Գրաբարեանները եթէ նորէն երեւան գան, ես հոս եմ: Վայ անոր՝ որ ինձ դէմ ելնէ. գրական իմաստասիրութիւնն ունիմ իմ ետեւս, իմ առջեւս — ապագան...» Այս սպառնալիքներով Տէմիրճիպաշեան կը յատկանշէ իր ուղեղային անհաւասարակչութիւնը: Հարազատ անկեղծութիւնը կայ իր գրչին մէջ. և այդ իսկ պատճառ կ'ըլլայ իր մեծամտութեանց չի դիմադրել: Տէմիրճիպաշեան իր ներկային վրայ համեստութեամբ ակնարկ կը նետէ, իսկ ապագան շատ մեծ կը տեսնէ: Սուլթան Համիտի խորհրդադատու բժիշկ մեծանուն Տոքտ. Տիգրան Ս. Փէշտիմալճեան իրեն կը նուիրէ ոսկեփետուր սխրալի գրիչ մը. զայն կ'ընդունի սա տողերով. «Ամենաջերմ շնոր-

հակալուծեամբ կ'ընդունինք սոյն փափուկ նուէրն ո՛չ մեր զրական արժանեացն համար՝ որ փոքր է, այլ մեր ապագային համար՝ որ մեծ ըլլայ գուցէ...:» Եւրկայն ու ապագան նոյն էր մեզի համար, նոյն Տէմիրճիպաշեանն էր միշտ. նոյն եռանդուն, կրակոտ հոգին, նոյն խորհողը և նոյն քերթողը: Համերաշխութեամբ օժոն հոգի մըն էր. ինք իր ուժին վստահ կ'աշխատէր. ու կը ցանկար որ զրական գործը ուժերու համախմբութեամբ կարողանար վարել. իր զրական բեմին շուրջ հաւաքած էր կարեւոր ուժեր, իր փեթակին մեղրին նիւթ հասցնողներ էին Պէրպէրեան, Թէրզեան, Աղաբէգեան, Սուքիաս Վարդապետ Պարոնեան, Տէրվիշեան Վարդապետ, Փանոսեան և Սեթեան քերթողներ և ուրիշ ծանօթ գրիչներ. ինքը սակայն դեռ դժգոհ, Մխիթարեանց աջակցութեան կարօտը կը զգայ:

Գիտեմ ուղիղ և անմիջական աղբիւրէ որ կը դիմէ Հ. Ալիշան Վարդապետին և անկէ իր խմբագրած թերթին համար յողուած կը խնդրէ: Հ. Ալիշան կ'իմացնէ թէ իր ժամանակը չի ներեր. թէ «Աւարատ» տեղագրութեամբ զբաղած է. ու կը մերժէ և կը զլանայ աջակցութիւնը: Տէմիրճիպաշեան անվհատ միշտ նորէն կը

դիմէ. սակայն Հ. Ալիշան ժլատութեան մէջ կը յամառի. և օրին մէկը իր մտերիմներուն կ'ըսէ թէ Տէմիրճիպաշեան արժանի է իր մականունին. կատակով կը հեգնէր: Այս հեգնութիւնը չէր գիտեր նոյն ինքն Տէմիրճիպաշեան. յուսախաբութիւնը անհաճոյ էր. 1885ին «Երկրագունտ» երրորդ շրջանը կը սկսէր. ահա խմբագրականին մէջ դառնօրէն Մխիթարեանց կ'ուղղէր իր սա տողերն. «Յաւ ի սիրտ կ'արձանագրենք թէ՛ Հանդիսիս աշխատակցութեան համար առ Մխիթարեան Միաբանութիւնն ուղղուած հրաւերը անլսելի մնացին, որպէս անլսելի մնացած են Մասիս շաբաթաթերթին կողմէն եղած հրաւերը առ նոյն բազմարդիւն Միաբանութիւնն: Նորերն հիներուն քաջալերանքին կարօտ են. եկեղեցական և աշխարհական՝ ամէն բարի գործոց մէջ միմեանց աջակցութիւն պարտական են, վաղ կամ անագան՝ մահ կայ կղզիացման մէջ. և Մխիթարեան կրկին միաբանութեան աստիճանական խաւարումն՝ այլ իւրից չը կրնար մեկնուիլ բայց եթէ սոյն Միաբանութեան աճուն առանձնամոյրքեամբ (բառ հոմանիշ ինքնամոյրքեան): Ինչ օրեր անցուցինք, հայութեան սեւ օրերուն մէջ ա՛լ. հայութեան զուարթ օրերուն մէջ ա՛լ, վանականք նոյն

զգացումն ունին — անտարբերութիւն: Շատ կը կարդան, ազգային հին մատենագրութիւն և գրեթէ միմիայն ազգային հին մատենագրութիւն կը կարդան. սակայն երբ մենք Եղիշէէն էջ մը կարդալէ յետոյ, հայ մը կը փնտոենք մեր շուրջ՝ արտասուագին համբուրելու համար զայն, նորա՝ վանականը՝ գրիչ կը փնտոեն հայտտեղ, և մելան կը հեղուն արտասուքի տեղ: Եթէ գիտնային թէ զրագէտին ինչ զօրութիւն կու տան այդ շփումն ընկերութեան հետ, այդ ողջագուրանքն արենակից եղբարց հետ, այդ արտասուքն՝ Եղիշէի գրքին վրայ հեղուած՝ հոգեկցորդ էակի մը հետ, եթէ գիտնային զայդ, վանականը պիտի մօտենային մեզ, պիտ՝ աշխատակցէին մեզ, իրենց նիւթական և իմացական անսպառ զանձուց բաժանակից պիտ՝ ընէին զմեզ: — Օր մը Աղբիականին ալեաց վրայէն վսեմ վանդ մը թուանետահար թուչնոյ մը վերջին վանգն էր. հիւսիսային ծովուց ժայռերուն վրայէն հասնող այն հրաշափառ թուչունն՝ երեկոյ մը Ս. Ղազարու վանքին վրայ թառած էր. յետոյ վանքին մէջ մտած, իր թեւերով հով հանած, ու խորենացիին էջերն արագ դարձուցած էր. և մեծախորհուրդ ճիչ մը արձակած էր, ամէն մէկուն ա-

կանջին, ո՞ Սուրբ հարք Ղազարու, բառ մը վանդ մը հընչեցուցած էր, նոյն բառն, նոյն վանգն, որ ապա ձեզ Արեւելքէն՝ Աղբիականին ալեաց վրայէն՝ կը հասնէր. Տասնեւիններորդ դարու մեծ բառն մեծ ձայնն էր:

«Չիմացաք դուք, և դեռ չէք իմանար, արդեօք երբեք չի պիտ՝ իմանաք: Յայնժամ պիտի մահանաք. — և դուք անմահութեան էիք կոչուած. ո՞վ իմ վանականը:» Տէմիրճիպաշեանի այս գաղափարներուն ու թախանձանքներուն համամիտ են նաեւ այժմեան զրոյները. աշխարհիկ զրագէտ դասակարգը վանականաց կղզիացումը մտաւորական տեսակէտով անարդարանալի ու անբացատրելի կը գտնէ:

Վանքը այն իմացական վառարանն է ուր լուրջ զրիչներ կարող են ողջամիտ պարապումով մտաւորական գեղեցիկ հեղինակութիւններ յղանալ. աշխարհական յեղեղուկ կեանքի մէջ, անոնց լուրջ աշակցութեան կարօտը կը զգացուի: Վանականները առանց ո՞ր և է ակնկալութեան օգնելու են աշխարհիկ մամուլին:

Հայը եթէ ամէն տեղ պարբերական հրատարակութեան ձեռք զարնէ, իր անկեղծ բաղձանքն է — ընդհանրապէս — ազգին առաջնորդի դեր մը կատարել. բայց Պոլսոյ մէջ քիչ բացառութեամբ խմբագիր կ'ըլլան զրամ շահելու համար. կծու ճշմարտութիւն զոր կը հաւաստէ նոյն ինքն Տէմիրճիպաշեան իր սա տողերուն վն. «Քեզ ալ եկո՛ւ խմբագիր ընենք, այս օրուան ամենէն բանուկ արհեստն է. ծանուցում է՝ կ'ըսես, կ'առնես. հարսանիք է՝ կ'ըսես, կ'առնես. ննջեցեալ է՝ կ'ըսես, կ'առնես. ննջեցեալին տարիքը կը պատիկցունես ու արժանիքը կը մեծցունես, կ'առնես. կորկոտաւոր մարդու մը վրայ մուր կը քսես, կ'առնես:» Եւ կը շարունակէ վատ միջոցներով ստակ կորզելու խմբագրական ստոր արարքներուն շարքը:

Ինքն ալ խմբագիր է եղած, բայց կ'ահաբեկի եթէ զինքն ալ այդ զրամապաշտ ջուրին մէջ դասեն. ու տրամօրէն կ'աղաչէ. «Ո՛հ խմբագիր մի՛ կոչէք զրասէրն. իր քսակն երբէք չըպիտի լենայ, բայց իր սիրտն երբէք չըպիտի ամայանայ, բայց իւր գլուխն երբէք չըպիտի դատարկանայ:» Գրագէտը ճակատագրականօրէն զատապարտուած է գլուխը լե-

ցուն և քսակը դատարկ մնալը. այս դաննութիւնը ամենուն է թէ՛ թուրքահայ և թէ՛ ռուսահայ զրագէտ դասակարգին: Կովկաս Արովեան, Նազարեանց, Պատկանեան, Ռաֆֆի և Պոլիս Գուրեան, Պէշիկլիթաշեան, Պարոնեան, Ա. Արփիարեան և Տէմիրճիպաշեան զրական կուռքին առջեւ զրամը հալեցուցեք են:

Բանաստեղծ միտքը այնքան չի վերաւորուիր երբ իրեն ըսես, որ ինքը աղքատ է, բայց սրտաբեկ կը խոզիկ երբ իր հոգեկան կարողութեան մուր քսես: Տէմիրճիպաշեան ունի իր իմաստութեան համեմատ հաւատք մը, սակայն իր հաւատքին վրայ տատամտողներ կ'ըլլան, և անախ կը յուզուի և դառնօրէն կ'ըսէ. «Գրասէրն, այն նիւթապաշտն, այն անհաւատն, ամենէն աւելի հոգի ու հաւատք ունի...»: Պէտք է գիտնալ որ առանց հաւատքի մարդ իմաստասէր չի կրնար ըլլալ. և քանի որ Տէմիրճիպաշեան իմաստասէր էր, ուրեմն հաւատք մըն ալ ունէր: Հաստքի պաշտպանն էր:

Համեստութիւնը բնաւ արգելք չէր իրեն որ անձնագովութենէ ինքզինքը զրկէ. իր զրեթէ ամէն մէկ գրութեան մէջ իր եւր ընդառաջ կ'ելլէ վիպակին, քերթուածին ու ճառարխօսութեան մէջ ան

ինքն իր վրայ պիտի խօսի. կարդացէք սա սողերը ուր իր փառքին ուրուանկարը կը պատկերի. « Չեմ կրնար բացատրել թէ ինչ կը գգամ, երբ գրուածներդ կը կարդամ » ... « Սրտիս մինչեւ խորը կ'ազդէ գրութիւնդ... մի տխուր գրեր, մի տխուր գրեր կ'ազաչեմ »: Չգայրեն ու ազդեցիկ սիրուած գրողը ինքն Տէմիրճիպաշեանն է: Իր այդ « Մակրինէ » վիպակին մէջ վանական մամուլը մեռած կը համարի, կենդանութիւնը իզմիրի տպարաններէն կը հասնի. այսպէս խօսիլ կու տայ վիպակին միամիտ հերոսին: Անձնահաճ գրութիւններէն մէկն է « Մակրինէն »: Ուր կարելի է գտնել մի միայն անձնագովութիւն, և գաղափարի հնութիւն, ռճով, կենդանութեամբ շատ մանկական:

Գրագէտը իր կարճ գրութեանց մէջ կրցեր է խտացնել իր գեղեցկաճաշակ մտքին բեկբեկ կայծերն: Ուզած է արձակ բանաստեղծութիւն մը գրել իր « Կապոյտ » ի նկարագրութեամբ, բառերու հետ գրիչը մանկական կատակերգութիւն մը ստեղծած է: Լրջութիւն և զրական արժէք կարելի է չէ գտնել հոն:

Գիւտեր կը սիրէ՝ բայց գտնելու դժուարութիւնը յայտնի կ'ընէ: Բազմաբեղուն միտք մըն է և բազմակողմանի նիւթերու

մէջ մաշուած մը. ընդհանրապէս չի կրնար կիտուածել գեղեցիկը՝ պահանջուած պերճութեամբը:

Չիւնին առջեւ կը ներշնչուի ու կը գրէ « Մրցանակը »: Կը տեսնես որ հոն ինքը ուզած է հրաշալի արձակ էջ մը ստեղծել, բայց ներկերը չէ կրցած վարպետի թափովը գանգել: Անորոշ ուրուագիծ մը մէջտեղ կը հանէ. ընդունէ զայն անկապաշտ գրութիւն, սակայն այդ դասակարգի գրութեան մէջ ալ պատիւի տեղ մը չունի. հոն զրական ձեւը բոլորովին տարբեր է:

Խորհրդապաշտ բանաստեղծական հանճարները իրեն սիրելի են, սակայն ինքը ոչ ռոտանաւորներուն, այլ արձակ գրուածներուն մէջ աղօտ կերպով զործածած է այդ ոճը. կը կարդաս իր « օգապատկեր »ը, ուր կարծես ուզած է մեծղի ուռած բացատրութիւններով տիեզերական պատկեր մը նկարել. որուն գաղափար մը կու տան սա սողերն.

« Օր մը օդոց բարձրութեան մէջ, երկու հսկայից ճիշդ մէջտեղը կը գտնուէր գենիթին վրայ, թեւաւոր իբրեւ թուխ արծիւ մը վեհափառ, աչաց ու թեւոց մին՝ վառ լերան, աչաց ու թեւոց միւսը՝ սառլերան, ահա ծիածան մը՝ մէկ ծայրը խառնարանին ու միւս ծայրը սառնարանին՝

պարզուեցաւ ծովուց ու ցամաքաց վրայ: Թուխ իր թեւատարածութենէն վեր էր եօթներփեան անսահման թեւատարածութիւնն: Աշխարհի մէջ՝ ուրեմն՝ արծիւէն զեր ի վեր բան մը կար: Իր ճիչն այս անգամ՝ յաղթանակի երգ չեղաւ: — Հրակատարէն սառնակատարը՝ ծիածանին զուգահեռական ձայնի ծիածան մը կամարաւորեցաւ: Արծուոյն երգոց երգն էր այն. — հաշտութիւն »:

Մեծդի մտքեր ունի. անհունութեան մէջ ուզած է խտացնել էն կարեւոր և էն դժուարին առաքինութիւնը, հաշտութիւնը:

Գրականութիւնը լիազօր թափով մշակուած չէ. մեր գրողները բուն փափաքով ուզած են խորասուզիլ անոր մէջ, բայց ժամանակը նպաստաւոր չէ եղած. այդ ցաւալի ճշմարտութիւնը մեր օրերուն մէջ տեսանք ու զայն նշմարեցինք նաեւ հին օրերու հին գրողներուն մէջ: Տէմիր-ճիւղաշեան դառնութեամբ արձանագրած է այդ եղելութիւնը. գրած է. « Գրագէտն՝ հակառակ իր վեհ կոչման՝ պարտի նուաստանալ հզօրին առջեւ. ոսկեգօծել անբարոյականութիւնն ի վաճառ հանել իր գրիչն, իր խիղճն. ապա թէ ոչ պարտի լռել և երթալ կաղամբ մշակել... »: Ինքը գրագէտը կարծես խաբուած է իր սիրած մու-

սաներէն. սիրած է դաստիարակութիւնը, սիրած է բանաստեղծութիւնը, սիրած է խմբագրութիւնը, և սակայն ամէն առթիւ յայտնած է թէ ինքը մոլորեալ մըն է զանոնք մշակելու համար. սրտաձմրիկ շեշտով մը կը գրէ.

« Ո՛ր բանաստեղծութիւն, դեռ ևս մանուկ՝ ինձ մատուցիր դու սիրոյ բաժակն անյատակ. այն օշարակն՝ երկնի ցօղով երկրի լեղիով խառն, նախ այնքան քաղցր և այնքան յետոյ՝ դառն այն անիծից օշարակն...: Եւ դու իմաստասիրութիւն, դահիճ դու մեր՝ հոգւոյ թռիչներուն և առ Աստուած մեր վերասլացումներուն, դու՛ մինչ պատանեակ էի դեռ՝ ինձ մատուցիր աղիտալոյս այն քու ջահդ, որ ի սկզբան պայծառութեամբ իմ ճանապարհս ողողեց և բազում առեղծուածոց վասնէ՛րն ինձ յայտնեց, այլ որ ապա — նոյն շահն, նոյն լոյսն — ողջոյն տիեզերքն աչացս մթնցուց, և իմ կեանքս, անուշահոտութեանց և ներդաշնակութեանց մէջ փթթած իմ կեանքս, երանութեան դրախտին մէջ հեշտօրէն սահելու կոչուած իմ կեանքս, աւաղ, դառնացոյց և ինձ ատելի կացոյց: »

Այս տողերը պիտի ուզեն ստորագրել շատեր, որոնք զգացին այդ կեանքին դառնութիւնը: Բանաստեղծ Տէմիրճիպա-

շեան իր տարտամ մտքերուն մէջ է, չէ կրցեր հանճարեղ կուռ գաղափարներ յայտնել. էն մեծ տաղանդաւոր գիտուններէն հաստատուած և ընդունուած սա իր տողերն. « Ո՛րքան ուսիմ, այնքան աճին գիտելիք. որքան խորհիմ, այնքան վիհք և արհաւիրք: » Պէտք է խարանել արձանագրել մեր պատանի ուսանողներու ճակտին՝ ըմբռնել տալու համար անոնց, որ կիսկատար վարժարանական գիտութեամբ՝ ծով մը գիտութիւն պաշարած չեն ըլլար: Անժխտելիօրէն համոզուած եմ, որ հայ երակներու մէջ կայ յաւակնոտութեան թարախոտ հիւանդութիւն մը. և ատոր համար մէկ գիտունին առջև հարիւր մէկ տգէտ քննադատներ կը տեսնենք:

Տէմիրճիպաշեան իր մտքի թռիչքը այնքան լաւ չէ կանոնաւորած քերթուածին ու վէպին մէջ, որքան կենսագրականներուն մէջ: Այդտեղ ինքը լուրջ է ու կ'աշխատի որքան հնար է լաւ կշռէ նիւթը՝ զոր կը գրէ: Հրապարակափր կեանքին մէջ նկարագրած է Գ. Օտեանի, Մ. Չերազի, Ռ. Պէրպէրեանի, Թ. Թէրզեանի, Ա. Արփիարի, Մ. Մամուրեանի, Կորայրի մտաւորական աշխատութիւններն, բայց ամենէն աւելի յաջողած է Յ. Պարոնեանի սա կենսագրականին մէջ.

« Կան որ կ'արտասուեն ու կը ծիծաղին փոփոխակի, կամ ծիծաղը ողբին կը խառնեն նոյն երկին մէջ ու նոյն էջին մէջ. Գերմանացի Հանրի Հայնէ այնպէս է: Այնպէս չէ՛ Յակոբ Պարոնեան. ան կը ծիծաղի, կը ծիծաղի. — Թէեւ ճմարտութիւնը այն է թէ՛ ծիծաղի ձեւով կ'արտասուէ Պարոնեան մարդկային մոլութեանց ու մոլորութեանց վրայ: — Պարոնեան, Եզոբոսի պէս, Արիստոփանի պէս, վեհ կոչում մը ունի: Իր աչքերը աւելի խոր և աւելի բարձր կը տեսնեն քան հասարակ մահկանացուներու աչքերը: »

Մտաւորական արժանիք մը ունեցողը միայն՝ կարող է ճանչնալ ու գնահատել արժանաւոր տաղանդին յարգը. այդ դասակարգէն էր Տէմիրճիպաշեան:

Պոսֆորը նկարագրեցին մեր հիւներէն Երեմիա Չէլէպի, և Մխիթարեան մը վենետիկէն՝ տաղանդաւոր Հ. Ղուկաս վ. Ինճիճեան՝ ամբողջ հատոր մը նուիրեց զայն նկարագրելու համար. և զբազէտ Եւրոպացիներէն՝ Լամարդին, Շադոպրիան, Թէօֆիլ Կոթիէ և Բիէր Լօդի ու իտալացիներէն Տէ Ամիչիս՝ սիրուն էջերով պատկերեցին պոլսեցիներուն հիասքանչ Պոսֆորը: Պէշիկթաշեան Մկրտիչէն սկսեալ,

ամէն ծանօթ բանաստեղծ՝ հմայքոտ տղերը ստեղծեց Կ. Պոլսոյ այն հիանալի ջրանցքը նկարագրելու համար: Բնականաբար նաեւ Տէմիրճիպաշեան պիտի կրէր հմայքը այն ջուրերուն, ուր կը թրթռան Պալեաններու մարմարակերտ շէնքերուն փաղփուն պատկերներն: Մէկ քանի տող կ'արտատպեմ իր նկարագրութենէն, իբր նմոյշ իր տեղագրական վրձինին.

« Երկնակամարին վրայ, երկինքի անասնման, տարածութեան մէջ, երկու արեգակներ երբեք այնքան կապուտագեղ ու ձեւագեղ անջրպետով մը բաժնուած չեն իրարմէ, որքան արեգակնափառ այն երկու աշխարհները, Եւրոպան և Ասիան, զորս կը բաժնէ Պոսփորը: « Հոն, սիրելիս, հոն կ'ուզեմ որ տանիս զիս » կը հառաչէի հեռու Պոսփորի օփերէն: — Երկու անգամ հեռացայ զրախտային իմ ծննդավայրէս: Երեսս Արեւելք կը դարձնէի՝ հեղուկ ակնարկովը զոր դիւթական իր ծննդավայր երկրին կը ձգէր Մինեօն: Կը հարցնէի, կ'ոգէի Մինեօնին երգը: « Կը ճանչնամք զուք այն երկիրը: » Իմ երգս, առարկային հարստութեամբը, աւելի հարուստ էր. աւելի հարուստ արտասուքն ալ որ աչուրներէս վար կը հոսէր: « Հոն, սիրելիս, հոն կ'ուզեմ որ տանիս զիս: »

Ամէն անգամ որ կը հեռանամ մեր եզական ծննդավայրէն, ամէն անգամ աւելի սխրալի զայն կը գտնեմ: Բանաստեղծութեան գոյնը, կապոյտը լուսաւորներու աստուածամերկ յատակին գոյնը, կապոյտը. խոռնկին վերածխութիւնը, կապոյտը. լեռնային հարսերու արծաթ պսակին թելերուն գոյնը, կապոյտը. ֆերկես մայր նիւոյ ծաղիկին գոյնը, կապոյտը: Այդ կապոյտը ո՞ւր աւելի կապոյտ է քան հոն. ո՞վ, ի՞նչ աւելի կապոյտ է քան Պոսփորը: Ու կ'երգէի. « Հոն, սիրելիս, հոն կ'ուզեմ որ տանիս զիս: » Երբ առաջին անգամ հեռացայ Բիւզանդիոնէն, սիրտս փլաւ. աչուրներէս հեղեղներ իջան. նուաղեցայ երբ Գամպօճը Մօտան անցաւ: Մեր քաղաքին բոլոր գեղեցկութիւններէն ՄօտաՊուռնին կը գնահատէի, ու ան ալ որովհետեւ հոյակապ վերջալոյսի տեսարաններ կը պարզէր աչքիս առջեւ իրիկունը, ու գիշերը՝ փարօսին վրայ՝ լոյսի զմայլիկ նուաղումներ: Սակայն ինչ անդիմադրելի էր կապոյտին ձգողականութիւնը, երբ այն կապոյտէն, կապոյտ Պոսփորէն հեռացայ. Պոսփորէն հեռու, Պոսփորին համար լացի: « Հոն, սիրելիս, հոն կ'ուզեմ որ տանիս զիս: » Տէմիրճիպաշեան հիացումներու շարքին մէջ կը պարզէ Պոսփորի գեղեցկանագ

պերճութիւնը. դժբաղդաբար հոգեկան ծով ալեկոծութեան մէջ, չի կրնար որոշել չափել և ճշգրտօրէն ուրուագրել անոր անհամեմատ վեհափառ խայտաբղէտ գեղեցկութիւնը: Լամարդին իր նկարագրութեան մէջ աւելի դրական պատկերահան մըն է. քեզի կու տայ կարճ տողերով ամբողջական պատկերը Պոսֆորին:

Տէմիրճիպաշեան իր հոգիէն կը սրսկէ զգացմունքի խանդը այն ամէն նիւթին վրայ, որ զբշով կը նկարագրուի իր երեւակայութեան առջեւ: Ընկերվարականը ուրիշ շեշտով կը դրուատէ աշխատութիւնը, իսկ Տէմիրճիպաշեան իր փափուկ հոգիով գայն կ'ալելուէ. «Աշխատութեան երգն» կարծես նկարագեղ սաղմոս մըն է. կը հոգեբոգէ. «Արեւէն առաջ արտերուն մէջ են, արեւէն առաջ ծովերուն վրայ, այնքան հոգով փարած են հողին, այնքան խանդով յարած են ջուրին, որ արտէն և ալեակէն հեռու՝ իրենց արգար հանգստեան սուղ ժամերուն մէջ՝ իրենց կարօտը կը քաշեն ալիք ու դալարիք: Աքաղաղին հետ աչուրնին կը բանան, արշալոյշին հետ աչուրնին կը լուան. լուսոյ մկրտութիւնը իրենց աչուին և իրենց հոգին ամէն օր և ամենէն առաջ կ'ընդունին:» Բառախաղերով բանաստեղծ է Տէ-

միրճիպաշեան և ինչպէս Հ. Ալիշան ու Սրբ. Սրուանձտեանց, այսպէս և ինքը բառերու ճարտար կիսուածումով, նկարէն արձակ մը կը ստեղծէ:

Փ.

Ինքը եթէ նիւթերը չընդլայնէր, աւելի կուռ ոճ մը ունենար, դեռ աւելի կորովի էջեր պիտի ստեղծէր: Կրկնութիւններէ բնաւ խորշում չունի. գեղեցիկ բառերու շարքերի կոյտ մը կը բրգացնէ նկարագեղ էջին մէջ: Ու երբեմն սիրտ առնելու աստիճան շատ անուշ կ'ըլլայ իր ոճը. այդ ալ ախորժեղի չէ. պիտի ուզէի որ իր «Մայիս» ի նկարագրութիւնը սահմանափակուած ըլլար իր այս չորս տողերուն մէջ. «Ահա՛ մայիս, ամիս բուրմանց, ամիս նուագաց, ամիս՝ ուր ծառերն քնարի կը փոխարկուին, ուր քարերն դալարի: Աչքերդ թոյրով կը պարարին, անգունքդ բոյրով, ալանջներդ՝ երգերով: Ա՛լ պէտք չի կայ բանաստեղծութիւն կարգալու...» Նկարագրութեան ատեն, միտքը վերաչուական է. դրական աչուրներով չի զննար նիւթը զոր կը նկարագրէ. իրեն կը պակսի իրապաշտ նկարչի ուժը, իր բանաստեղծի

աւրնով կարող էր տալ շատ աւելի գեղեցիկ նկարագրութիւններ:

Տէմիրճիպաշեանի կեանքը գրականութեան մէջ հաճոյքի մարզանք մըն է եղած. բոլիշկները արգիլեցին իրեն գրել ու կարդալ. բայց գրագէտին համար այդ արգելքը ողջ ողջ գերեզման մտնել է: Ինքը չարաչար տուժեց այդ ժուժկալութենէն. բայց չկրցաւ տոկալ, և զիրքերը դարձեալ իրմէ անբաժան մնացին: Իր վերջին տարիները ինքը գրական արտադրութիւններ չունեցաւ. ցանցաորէն յօդուածներ երեւցան իրմէ մամուլին մէջ. նորերուն առջեւ իր վարպետի ձայնը կը լոնցնէր. և իր կեանքի արեւմարէն՝ կը տեսնէր որ արդէն հիացողներու ստուար թիւը իր շուրջ կը խտանայ: Տրամութեան առանձնութեան մէջ սփոփանք մըն էին համակրանքի ցոյցերն: Ձինքը քննադատութեան բեմէն դարձեալ կը կձէին. Ա. Արփիար «Բանբեր»-ին մէջ նկարէն ուրուանկար մը կուտար, ուր Տէմիրճիպաշեան կը տեսնէր իր պատկերը. երգիծող մըն էր Արփիար և միևնոյն ատեն երանգներու խալտաճամուկ ցողքերը կը բերեղացնէր բանաստեղծ-ի մաստասէրին կենդանագրին վրայ: Խեղճ Տէմիրճիպաշեան իր ծով բարութեան փոխարէն, չէր տեսներ պուտ մը կարեկցա-

կան վերարբերում նոյն ինքն Արփիարեանի խումբէն:

Ով քննադատութեան խարազանէն չի լքանիր, անոր է յաղթանակը. բանաստեղծ գրասէրը շարունակեց իր գրական գործունէութիւնը. անընդհատ գրեց և իր գրականութեան մէջ միշտ հոգիէն հոսեցուց. օրը օրին մտաւորական կեանքը պարեցաւ. նորութիւնէն խորշում չունէր, ընդհակառակը անոր սիրահարուած էր: Լամարդիւնէն Հիւկոյէն անցաւ Րիշըրէնի. և սիրեց սէմպուլիստ պանասները. ու եթէ այսօր ապրէր, ինքը Ապագայապաշտութեան էն ջերմ պաշտպանը պիտի ըլլար, զի խառնուացքը կը հաւաստէ ասոր: Ճշմարտութեան կը հետապնդէր, և իր առջեւէն բանակ մը իմաստասէրներ կ'ընթանան. ու ինքը կ'աշխատէր ամենուն ժամանելու, Շէքսպիրի լըջութենէն, կ'անցնէր Շորէնհաուերի յոռետես վարդապետութեան: Հ. Ալիշանի հոգեշունչ նուագներուն հետ կը փայփայէր Հայնէի երգիծող ու կճող քնարը: Չապրեցաւ ինչպէս Պէշիկթաշլեանը՝ խաղաղ թիթեռնիկի կեանքը: Կեանքի ալիքները իր մտքին ափունքը խուժելով՝ լեռնակուտակ կը փշրուէին և ինքը հոգեխոռով կոհակներուն յանձնած էր իր հիւժած և առկայծ կեան-

ըը: Հոգիին պատմութեան մէջ կը խորասուզէր, անոր վրայէն թեթեւօրէն չէր արփաթեւէր:

*
* *

Հեղինակ մը որ իր գրական գործերը հատորի մը մէջ ամփոփած չէ, դիւրաւ իր համբաւը, թեւ չառնէր. մեր գրողներէն շատեր անձանօթ մնացին կովկասի հայերուն, վասն զի իրենց գրական գործունէութիւնը Պոսֆորէն անդին չէր անցներ:

Տակաւին հատորի մը մէջ չամփոփուեցաւ Տէմիրճիպաշեանի գրական գործերէն էն ընտիրները: Միայն բանաստեղծ Պ. Հրանտ Նազարեանցն էր որ, բարի գտնուեցաւ վերջերս հրատարակելու Գրասէրին սիրային նամակները:

Անտարակոյս սիրտը էն անկեղծ խօսքերը կը հիւսէ մտերմական խօսակցութեան ատեն: Նոյն ատենը լսելու է գրագէտին հոգեբանութեան ձայնը: Տէմիրճիպաշեան իր մաքուր հոգիէն քաղցրութիւն տարափեր է սիրային նամակներուն մէջ, իմաստասիրական պաղպաղուն գաղափարներով քանդակած են իր նամակները, մտի հոտէն հեռու, գորովի աննիւթական

պաշտումի խնկանուէր մտքերով հիւսուած են երագող Տէմիրճիպաշեանի նամակներն:

*
* *

Գնահատել գրչի գործիչները՝ թռիչք տալ է մտաւորական յառաջադիմութեան. հին դարերը իրենց հանձարներուն անտարբեր էին. հեղինակները աստուածացան տպագրական դարուն յեղաշրջումին. ձեռագիր գրականութեան մէջ, գրողներու մասին փառաբանութեան էջեր հազուադիւր են: Մեռելներու պաշտումը վերջին դարու գործ է. քաղաքակրթութիւն կը համարուի մեռելներու արձանները կանգնելն և անոնց կենսագրականները պատրաստելը:

Ամէն դար իր պաշտումը ունի. յառաջադիմութեան պահանջն է՝ ճանչնալ ու դրուատել գործերը տաղանդաւոր դէմքերուն:

Հրապարակներու մէջ նուաճող վեհապետին արձանը կը տեսնես, շուկայներ կը նուիրագործուին մեծամեծ դէմքերուն անունին յիշատակով. տաճարներու մէջ կուռքերու հանգստութիւնը կը վայելեն

յուշարձանները ռազմիկ իշխաններու. կաճառներու որմերը կը զարդարեն տաղանդաւոր մեռնողներու կենդանագիր պատկերներն: Այս յարգանքի պաշտումը համեմատական չափովը գոյութիւն ունի նաեւ մեր մէջ: Սկսանք յարգել անցեալներու յիշատակը: Պատկերազարդ գրքերու մէջ, տուինք նշանաւոր դէմքերու նկարներն. յետոյ մեծադիր տարածեցինք այդ պատկերներն. Խորիմեան, Ալիշան, Արծրունի, Վարժապետեան ունեցան իրենց պատկերներն: Պատկերամարտութեան դարը մոռցուած է իսպառ: Եւ ունեցանք կռապաշտութեան յարգանք մը: Կովկասի մէջ կանգնուեցան Գամար-Քաթիպայի, Նալպանտեանի և Բաֆֆիի արձանները. և բարերար մը վենետիկի մատենադարանին մէջ կանգնեց Հ. Ալիշանի կիսանդրին. «Ազատամարտ»-եանները իրենց խմբագրատան մէջ կը յարգեն Վարժապետեան պատրիարքին կիսանդրին: Կիսազրական հատորները աւելի պիտի անմահացնեն արժանաւոր դէմքերու յիշատակը: Պլուտարքոս իր «Չուգակշիւ» կենսագրականներով քաղաքակրթութեան լոին մղում մը տուաւ: Մարդ ճանչնալով յարգը մեծ դէմքերուն, զանոնք պիտի սիրէ, անոնց պիտի հետեւի ու երբ իր մէջ եսը խլրտի, պիտի աշ-

խատի զանոնք գերազանցել, ու ահա ինքնին յառաջդիմութեան ճամբան կը բացուի:

Հիացումը առանձին՝ կատարեալ անմիտ կռապաշտութիւն մըն է. պէտք է հետեւիլ ու գերազանցել. յեղաշրջականին միակ գաղափարը այդ է: Եւ այդ սկզբունքով ճանչնալու է մեծ միտքերը, ու այն ատեն ուրիշ մեծ մտքեր ալ կը պատրաստուին:

Տէմիրճիպաշեան ալ գրական պաշտումներու շարքին մէջ մտած է, իր անունին կուռքին շուրջը հիացողներու համախմբում մը կայ: Համբաւովը կը դըրդէ: Բըթիճանէն շարունակէ ճամբադ՝ առանց Բերա Բալաս շեղելու, ձախ կողմդ զարկ ու բիշ մը զառիվեր և ահա ձախակողմդ բեզի ցոյց կու տան սենեակը, որուն պատուհանէն ինքզինքը կախեց բանաստեղծ Տէմիրճիպաշեանը. Պուսեցի նորատի գրասէր խումբը, դէպ ի այդ կողմերը կը շրջի. հիւանդ գրագէտին յիշատակին մեհեանը հոն լուսութեան մէջ կ'ապրի: Մենք Եւրոպացիէն կը տարբերինք մեր հիացումովը. անոնք լաւ կ'ուսումնասիրեն իրենց հեղինակները. անոնց գործը ժողովուրդին մատչելի գինով կը հրատարակեն. հեղինակը՝ գիտունին և սգէտին ծանօթանալէն

յետոյ, իր պաշտամունքը կ'ունենայ. այդպէս չէ մեր մէջ: Բաւական է որ ըսուի թէ այս ինչ դէմքը նշանաւոր գրագէտ մըն է. բաւական է որ հեղինակի մը վրայ գնահատումի մէկ քանի յօդուածներ երեւնան մամուլի մէջ, ժողովուրդը իսկոյն անոր կռատունը կը կանգնէ համակրանքի հողին վրայ: Ու յօդուածի մը աննպաստ ապաւորութեան տակ, օրին մէկը, այդ կռատունը իր աւերակներով կը մսի. մեր մէջ շինելն ու կործանելը դիւրին է:

Տէմիրճիպաշեանի համբաւը նսեմացնողներ եղան, բայց անյաջող պայքար մը մղելով, անոր անունը ապագային մէջ մեծցաւ. գիտակցաբար չի գնահատուեցաւ, քանի որ էն ծանօթ գրագէտն իսկ անոր ընդհանուր գրականութեան լիով ծանօթ չէ: Անգիտակից համակրանքը, անիրական արժանիքի հաւասար հոգեբանական պատրանք մըն է: Ուսումնասիրութեանս նպատակն էր գրականօրէն շօշափել Տէմիրճիպաշեանին մեծածխոր անունը:

Հոս խտացուցի նոյն գրագէտին զգացմունքին հոգեբանութիւնը. ցանուցիք մտրեւրը զրոյի մը ամբողջական պատկերը չեն կրնար կազմել, կարելոր է ունենալ հեղինակին գրուածները դասաւորուած գրական ճիւղերով:

Այդ էական գործ մըն է. հիացողներուն պարտականութիւնը:

Մենք իր գրութիւնները համարժէք կը գտնենք զգացմունքի ուժովը, ստուերը կը կազմէ անգույթ անհաւասարակշռութիւնը:

Համաշունչ նկատողութիւնը կը կասի, և գաղափարներու կորովը կը ջլատուի անդէն՝ չի վերջացած գրութեան ամբողջական գաղափարը:

Չեւը Տէմիրճիպաշեան գրականութեան համահաւասար է հողազանգ փոշիացած ակունքներու:

Պատնասական թռիչքը մերթ ամպածըրար, մերթ գետնաքարշ. միտքերը է՛ զի հսկայախրոխտ և է՛ զի մեղմանոյշ, երբեմն լըջամիտ և երբեմն ալ պարզամիտ:

Քասոսային երեւակայութիւն մը. կ'արփաթեւէ ամէն ճիւղի մէջ, արիական դիմազրոյ, և նպատակին հասնելու դիտումը աննշմարող: Գիւտերուն մէջ կնճոտտ, իմաստասիրութեան խորը կը մտնէ թաղուելու աստիճան: Եւ թանձրախիտ հարցերու բաւիղը կը պտուտկէ ընկերական գիտութեան մէջ: Կը յարգէ հինը, կը պաշտէ իր ժամանակինը և կը հետապնդէ նորագոյնը: Բաղձանքներուն մէջ առողջը չի փնտռեր, այլ սրտին զրաւիչը կը գերազասէ: Դիակին մէջ կը դնէ մատը և

կը մագնիսանայ փիլիսոփայական ա-
նըրջանքով և երջանիկ է եթէ աւանակին
սատած մարմինը գրկելով յաւիտենական-
օրէն գոցէ աշուրներն: Ու եթէ զգացմունք-
ներու յորդութիւնը ողողէ գեղեցիկ մտքե-
րու բուրաստանը, բնաւ ստորջանք չունի:
Շատագիր և շատաբան, ճապաղ, երբ գե-
ղեցկագէտ միտքը չառաջնորդէր իր գրիչը:

Քերթողի աւիւնը իր մէջ ծառայած է,
հմայքոտ ծաղիկ չի բանար այդ ծառը:
Բեղուն յղացող միտք, յղկող ձեռքը իրեն
կը պակսի: Հասարակ պատտառը էն յարգի
ոսկեթել երիզներով կը ժապաւինէ. գրա-
կան ձեւը անխնամ և կարկտուած ցոյց
կու տայ: Գաղափարներու գեղեցիկ խառ-
նակոյտ մըն է: Լեզուն նորակերտ բառե-
րու ձգտող. անխորթ ու խորթ խժալուր
անհեթեթութիւններուն անփոյթ: Եւ այս
առթիւ Զօհրայ ալ իրաւունք կ'ունենար
ըսելու. « Այս գրագէտին շատ մը դար-
ձուածքները, նորակերտ բառերը, գաղա-
փարներու արտայայտութեանց ձեւերը՝ ի-
րենց յանդգնութեան մէջ յաճախ այլան-
դակութեան կը յանգին: » Ու պէտք է
գիտնալ որ բանաստեղծը իր օրով մեծ
հայկաբաններու դասակարգէն էր, և հայ-
կաբան՝ անկարգաբան: Վարժապետի կո-
կողարանութիւններն հոետորական պեր-

ձութիւններ է համարած. դասական գրա-
կանութենէն հին քուրջն էր այդ ձեւը,
որ կառչած կը մնար կարգ մը գրողներու
գրչին: Իր միտքը բազմաբեղուն է, շատ
մը առուակներէ կը սահանքէ իր գիտու-
թիւնը, իսկ կուտակածը փրփուր է:
Ինք իսկ չէր կրնար երաշխաւորել իր
պատկերներուն տեւողութիւնը, գոյներուն
հարազատութեանը անվստահ, կը զանգէր
զանոնք երանգապնակին վրայ. ու երեւա-
կայութիւնը կը գործէր բախտին բերու-
մովը: Եւ իր գեղարուեստը կը խորտակի
գրչին մէկ ծուռ հարուածովը: Իր հմայ-
քէն պիտի մնայ զգացմունքի անկեղծու-
թիւնը: Եւ պիտի չուրանանք հանրագէտ
կարողութիւնը թէեւ իր գրականութիւնը՝
համբաւին իսկ՝ յաւիտենական յուշարձան
մը չի կըցաւ ըլլալ:

ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐԸ

Տէմիրճիպաշեան իբր հրապարակագիր՝
իր բեղմնաւոր գրչին հաւաստիքը ցոյց կու
տայ « Մասիս » ի մէջ, ուր անդրանիկ յօ-
դուածները կը ձօնէ Մինաս Չերազի, որու
մասին անհուն հիացում կը ցուցնէ: Եւ
շարք մը գրական յօդուածներով, ժամա-

նակակից գրագիտական և լեզուական խընդիրներու վրայ կը ճառէ՝ իմաստասէրի և գրասէրի հայեացքներով:

Ելեթ առնելով Ռ. Յ. Պէրպէրեանի բանախօսութիւնները, հայ հրապարակագրութեան մէջ գրադատութիւն կ'ուզէ մտցնել, կարծելով... որ իրմէ առաջ ո՛չ մէկը փորձած ըլլայ այդ ճիւղը: Եւ միամիտ կ'ըլլայ ըսելու, թէ

« Ժամ է որ առնեմ տապարն և մտնեմ գրական աշխարհն: Որպէս զի մատենագրութեան կենսապարզ և ծառն ուռճանայ և առաւել ևս պտղաբեր ըլլայ, հարկ է որ մերթ ընդ մերթ հատանենք նորա գօսացեալ ոստերն: »

Պէրպէրեան երիտասարդ մըն է, իր գործերը գրադատութեան կ'ենթարկուի: Տէմիրճիպաշեան ուրախ է որ երիտասարդի մը գործը կը քննադատէ. Սպարտացոց նման շատ կը յարգէ ծերերը և Աթենացոց նման՝ յաւէտ կը սիրէ—երիտասարդութիւնը... կը յիշէ Պէրպէրեանի « Առաջին տերևք », որ հայկական խնդիրէն և հայկական գարունէն օր մը առաջ է փթթեր: Եւ այդ ինչ յարաբերութիւն ունի հայկական խնդիրին հետ: Տէմիրճիպաշեանի բաղդատականները չափ չունին: Պէրպէրեանի այդ բանաստեղծական հատորը

ինչ որ կ'արժէ, անոր մասին արդէն գրած եմ, մեծ հիացում մը չունիմ անոր. Տէմիրճիպաշեան սակայն ինծի պէս խորհելու ստիպուած չէր. ինքն ալ տարբեր կերպով և աւելի սքանչացումով կը խօսի այդ հատորին վրայ. կը գրէ. « Փունջ մ'է այդ մատենը, այլ և այլ թոյրով, այլ և այլ բոյրով ծաղկներով հիւսուած, անյանգ և յանգաւոր հատուածներով զարդարուած. ու դեռահաս հեղինակն, սիրավառ և լուսապարար, կ'երգէ գեղեցիկն, կը ճառէ բարւոյն վրայ և կը հռչակէ ճշմարիտն: Հայրենեաց և սիրանոյշին սիրով մանաւանդ կը տրոփեն բանաստեղծին սիրտն ու գիրքն: »

Այս տողերը գաղափարական են, քերթողական արժանիքը կ'ուզենք գիտնալ. Տէմիրճիպաշեան միայն յափշտակուած է երիտասարդ բանաստեղծին անունովը, և ինքը այդ քննադատականին առթիւ՝ աւելի բանաստեղծական թռիչք մը կ'առնէ և ճշգրտօրէն կը գրէ իր այս տողերը. « Ա՛հ, ճշմարիտ է թէ վիշտն է որ մարդն կը վեհացնէ, մահկանացուն կ'անմահացնէ. — բանաստեղծ կ'ընէ զոր տաղաչափել միայն զիտէր, մեծ բանաստեղծ կը կացնէ զոր զիւրազնի դափնիներ և եթ կը փառասիրէր: Հանճարի և սրտի տէր կին մը կ'ը-

սէր ինձ երբեմն թէ, ցաւոց և տառապանաց մէջ կը ծնին և կ'ապրին ամենամեծ բանաստեղծներն »:

Տէմիրճիպաշեան իրաւամբ կը սքանչանայ Պէրպէրեանի վրայ, նկատելով անոր մէջ լոյսի ձգտող մարդը, բարձրին ղիմող մարդը. հաւատքի մարդը՝ որ թարգմանած է Լամբնէի « Բաւեր հաւատացեալս » և նախարանով մը հրատարակած:

*
* *

Տէմիրճիպաշեան ընդհանրապէս հանրագիտակ միտք մըն է, կը ճառէ այն ամէն նիւթերուն վրայ ուր տեսած է մարդկութեան մտքին և սրտին սնունդ: Ինքը աւելի ընթերցող մըն է և մատենագրող մը, քան թէ թարգմանիչ. « Մասիս » ի մէջ արդէն յայտնած է. « Արդարև միշտ ազամայ թարգմանած եմ, եթէ մերթ թարգմանութիւն ըրած եմ: Հեղինակութիւնն աւելի սիրելի և նուազ տաժանելի է ինձ համար: » Այս տողերը գրած է Էմիլ Լիդրէի ընկերաբանական հատուածները թարգմանելու առթիւ:

Գրագէտին կեանքը իրեն հետ կը կապէ իր ժամանակակից նշանաւոր դէմքերու յիշատակը: Ուսումնասիրելով գրագէտին

նշանակութիւնը, կը լուսարանուին նաև անոր հետ յարաբերութիւն ունեցող ուրիշ գրական անձնաւորութիւններ:

Եւ միշտ իրաւամբ կ'ուզենք գիտնալ թէ այս ինչ հեղինակին վրայ, ինչ գաղափար ունի այն ինչ գրագէտը: Նշանաւոր գրագէտ համարուած գրողներուն կարծիքը գերազանցօրէն գնահատելի կը համարուի: Տէմիրճիպաշեան այդ նախանձելի գերազանց վարպետներէն էր համարուած: Պէշիկթաշլեան Մկրտիչ, և Սրբուհի Վահան՝ ծանօթ գրագիտուհի Տիւսարը, նիւթ կ'ըլլան Տէմիրճիպաշեանի գրչին: Ահա թէ ինչ կը գրէր անոնց մասին. սկսելով Պէշիկթաշլեանէն.

« Անուն մը կայ որ ամեն Հայ շրթանց վրայ, ամեն Հայ սրտից խորն, — պաշտելի անունն Պէշիկթաշլեանին: Իր հանճարի և մտքի եղբարց Անտոէ Շէնիէի և Ալֆոնս տը Միւսէի նման, սպանուեցաւ և Մկրտիչ Պէշիկթաշլեան: Յեղափոխութիւնն, կամ մանաւանդ Ահարկու կառավարութիւնն սպաննեց « Բանտեալ աղջկան » բանաստեղծը: Դարուս հիւանդութիւնն, Տարակոյսն, սպաննեց « Ռօլա » ի տառապալի հեղինակն. իսկ Սէրն, անապակ և անյագ Սէրն սպաննեց « Հայ Միլվօս » ն, ըստ Չերազի, « Հայ Մեծքիէ-

վիչ»ն, ըստ Տէմիրճիպաշեանի: Անտա-
րակոյս, Պէշիկթաշեան «բնական տրա-
մադրութիւն մ'ունէր ամենափափուկ ա-
րուեստին, և ամենափափուկ ախտին, բա-
նաստեղծութեան և հիւժականութեան. ան-
տարակոյս Պէշիկթաշեան կոչում ունէր
վաղահաս մահուան և անպակաս անմա-
հովեան: Այլ ո՛չ ապաքէն սէրն, չքնա-
ղագեղ կոյսի մը կերպարանօք երևնալով
այն երիտասարդին որ Մուսայից էր սի-
րելին, ու ժպիտ ու ծաղիկ նուիրելով
նմա, ու հառաչ ու արտօսք խլելով ի
նմանէ, ու թաքցելով պուրակաց խորն,
ու փայլելով կոհակաց ծոցն, ու յիշելով
ու մոռացօնս առնելով, ու զգուելով ու
խոցելով, վարդէ ու փուշէ պսակ յօրի-
նելով, ո՛չ ապաքէն Սէրն աստուածային,
այլ և սէրն անագորոյն մերձեցուց բա-
նաստեղծի վախճանն, — և մերձեցուց նո-
րա հրաշակերտն, «Մերձ ի մահ գրուածն»:
... Մանուկ էի դեռ, և յայնժամ համբաւն
իւր հարկւրաւոր բերաններով «Եղբայր եմք
մեք» ի «Զէյթունցի պատանի» ի և «Ար-
շակ Բ» ի հեղինակին անուան գրեթէ հա-
ւասար տարածուած էր նորա «սանուհ-
ւոյն» անունը, որ եկած մինչև իմ ա-
կանջներս ալ զգուած էր: Երկու գրա-
գէտը — շատ կանուխ սկսայ սիրել գրա-

կանութիւնն ու գրագէտներն — օր մը կը
վիճարանէին թէ ո՞րն է Պէշիկթաշեանի
զրուխ գործոցն, երրորդ մը կարծիք յայտ-
նեց թէ Սրբուհի վահանն էր մեր ազ-
գայնն բանաստեղծին առաջին հրաշա-
կերտն: Եւ այն օրէն անզուսպ տենչ մը
մնաց սրտիս մէջ՝ ճանչնալու Սրբուհին
կամ գէթ իր մէկ գրուածով, իր մէկ քեր-
թուածով ճանչնալու նորա հաճարն, նորա
հոգին: Աւաղ, ինչ տխուր առթիւ լրացաւ
փափագս... — Հիւժեալ բանաստեղծն ա-
ւանդած էր հոգին, կարապի երգն երգե-
լով: Ո՞ւմ աւելի բնական էր, ո՞վ քան
իւր «աշակերտուհին» առաւել իրաւունք
ունէր ողբալ Հայոց Բանաստեղծն. Քնարն
առաւ, և արտասուածոր, և հերարձակ,
գնաց Սրբուհին ի վերայ շիրմին իր սի-
րելի վարժապետին: Այլ փոխան սեւ հո-
ղին ու սեւ խաչափայտին, հանդիպեցաւ
բանաստեղծն սպիտակափայլ ու հրաշա-
փայլ, որ կը դիմաւորէր անմխիթար կոյսն
անմահ, երգելով «Տես զիւրդ գեղեցկա-
ցոյց զիս մահ...» է՛ր, ո՞ Սրբուհի, զիւրդ,
ո՞ Քերդուհի, մտաբերեցիր ի զիր արձա-
նագրել արտասուքդ: Ո՛չ մայրդ էր մե-
ռեալն. զի Պէշիկթաշեան զքեզ ծնած էր
բարոյապէս, լուսապարար միտք, սիրահա-
րուստ սիրտ հաստատած էր ի քեզ...»:

Տիւսար կը բանաստեղծէ. ժամանակակից գրագէտներէն ոմանք անոր քնարին մէջ կը տեսնեն ոսկեգարեան հայերէն մը, զայն կը կոչեն Հ. Արսէն Բագրատունիին հայերէնին հոգին... Տէմիրձիպաշեան ամէն ջանք կ'ընէ որ արժանանայ համբուրելու Տիւսարի ձեռքը որ հատոր մը բանաստեղծութիւն էր գրած: Բայց Տիւսար անոր ձեռքը կը դնէ իր գրած «Աշխարհաբար Հայ լեզուն» տետրակը, որուն վերայ Տէմիրձիպաշեան կը գրէ այս քննադատականը. «Միթէ՞ չունէինք իրաւունք նորա մեծահամբաւ հեղինակէն ակնկալել նուազ հասարակ և նուազ տարտամ իմաստասէր, նուազ անկենդան և նուազ անգունակ ոճ. նուազ անհարթ, անճաշակ լեզու: Տիկին Տիւսարի ոճոյն քով կը ժպտի, կը փալփի, կը խոյանայ, կը վսեմանայ Պարոն Պէրպէրեանի ոճն, որ Եւրոպական մատենագրութեան ամենափայլուն ոճոյն քով իսկ չը նսեմանար ստէպ: Միթէ Պիշիկթաշեանի սանուհին անկարող էր մրցիլ «Առաջին տերեւ»-ի հեղինակին հետ. միթէ Տիկին Տիւսար անկարող էր արտադրել այնպիսի մատեաններ զորս կարդալով — առանց հեղինակի անուն իսկ տեսնելու» ըսէր ընթերցողը՝ Այս գրքին հեղինակն անպատճառ կենակցած է Պէ-

շիկթաշեանի հետ, քաղած է, գողցած է նորա մեծութեան զաղտնիքն, նորա մտածման ու բացատրութեան եղանակն, նորա խանդալիւր ոգին, նորա գունալիւր և ստեպ շեշտալիւր ոճն, նորա լեզուն ներզաշնակ ու յստակ ու փափկաճաշակ:» Ընելով այս քննադատականը դարձեալ համոզուած կը մնայ որ Տիւսար Պէշիկթաշեանի մտաւորական գլուխ գործոցն է: Եւ անկէ կ'ակնկալէ գլուխ գործոցներ, անոր մտաւորական կարողութեան վրայ ունի շատ բարձր գաղափար:

Վենետիկի Միխիթարեան միաբանութիւնէն կը հեռանայ երիտասարդ վարդապետ մը: Աշխարհի համար նոր մարդ մը կ'ըլլար, սեւ զգեստը մերկացեր, և աշխարհիկն էր հագած. նոր կեանք մը սկսելու էր. և այդ կեանքը զուտ գրականութեան կը ձօնէր, և գրականութիւնը իրեն չարչարանքի ճամբան ցոյց կու տար: Գրագէտ երիտասարդը այդ ճամբէն կը քալէր ամէն զրկանք թչք առնելով, ու չոր հացի մը կարօտ մնալով, խաներու մէջ քաշկըտ տուելով՝ կը ստեղծէր հսկայ ֆրանսական խոսակցող մը. կեանքը դարձեալ իրեն համար չէր ժպտեր. կոյր բաղդը վերջապէս զինքը կ'ազատէր իր այդ վիճակէն՝ օտարուհի մը պաշտպան կ'ըլլար մեր հարա-

զատ գրականութեան որդեգրուած մեծ վարպետին: Ու երբ անոր բառազրքին առաջին թերթերը լոյս տեսան, գնահատողներու աչուրները մեծ մեծ բացուեցան. Տէմիրճիպաշեան կը փութար իր հիացումը խտացնել այս տողերուն մէջ. «Արդարև սակաւ մատենագիրք ազգին մէջ Պ. Նորայրի չափ արժանի են դրուատեաց. և Հայ մամուլը դուն ուրեք կ'արտադրէ մատեններ Նոր ֆրանսահայ բառարանին չափ ուշադրութեան և քաջալերութեան արժանի: Այս աշխատասիրութիւնն հասարակ դասագրեանց կարգէն կ'ելնէ և մատենագրութեանց կարգ կը մտնէ: Պրանսական անուանի բառագրաց հետ բաղդատելով, Պ. Նորայրի «Գանձարան»-ն — որպէս կոչուեցաւ — Պէշըռելի Բառագրքիև կը հեռանայ և Լիդուէի Փառագրքիև կը մօտենայ, եթէ ներելի է ինձ այս բառախաղն: — Բազմաշխատ և բազմիմաստ հեղինակն, Հայկական և Պրանսական ծովածաւալ մատենագրութիւններն երկար ամեր խղճմտօրէն վերժանել ու բաղդատել է յետոյ, յաջողած է Պրանսական դասական լեզուին բառերուն, ոճերուն և ասացուածներուն համապատասխաններն Հայ լեզուին մէջ գտնել: Այդ հայկական բառերն, ոճերն և ասացուածներն որ դարուն

կը վերաբերին, ինչ կիրառութիւն ունին, պիտի գիտնաս բանալով Նորայր Բիւզանդացւոյ գանձարանն...» Նոյն հմուտ բանասիրին առաւելութիւնները դրուատած է անկեղծ գնահատումներով:

Տէմիրճիպաշեան երթալով հաւասարապէս գնահատելի էր եղած վարպետին, զրագէտին, ժողովուրդին և աշակերտին: Գուրգուրանքով զինքը կը կարդային իր վարպետները. նոյն գուրգուրանքը ցոյց կու տար նաև իր երբեմնի վարժապետ Ներսէս արքեպիսկոպոս Վարժապետեան: Տոբթոր Արժրունիի մեննելուն առթիւ՝ Տէմիրճիպաշեան կը հրատարակէ «Թէրճէմանը Լֆքար» լրագրին մէջ դամբանական ճառ մը, ուր ակնարկութիւններ կ'ընէ Վարժապետեան սրբազանին, և սա իր կարգին կը գրէ. «Բան մը յանձնարարեր էք ինձ ձեր իմաստալից տողերուն մէջ, սակայն այս իմ հիւանդագին վշտալից տագնապալից օրերուս մէջ կարօղ եմ միթէ գձեզ գոհացնելու: Այս քո ըրած յանձնարարութիւնդ առ քեզ կը վերադարձունեմ, և կը խնդրեմ որ գեղեցիկ ճառ մը գրես հոգւոյ անմահութեան վրայ. գրելիք ճառիդ սկզբունքը կամ տարերքը «Թէրճէման» ի մէջ գրած ճառիդ մէջ տեսայ: Քո սուր մտքովը և թափանցող հանձա-

րովը խնդրեմ, Եղի՛րաս, բացատրէ՛ ինձ թէ ինչո՞ւ Արծրունին մերձ մահու աւելի հանձարեղ, աւելի խորախորհուրդ էր քան անցեալ օրերուն մէջ... Ըսէ ինձ. թէ ինչո՞ւ նուիրական է քեզ և ինձ միանգամայն Հասգիւղի մեռելոց բլուրն, ուր մեր եղբայրն Շահնազարեան և մեր սիրելի հայրերն ու մայրերը կը հանգչին: Ինչո՞ւ ասհաւոր ջերմեռանդութեամբ կը համբուրեմք այն հողերը, ուր մեր հայրերը՝ մայրերը՝ եղբայրները կ'սպասեն, թէ և անկենդան, թէ և հող դարձած:» Վարժապետեան պատրիարք՝ իր այդ առանձին մէկ յօդուածովը՝ կարծես կը տարակուսի հանդերձեալ կեանքի վրայ Տէմիրճիպաշեանի տածած գաղափարներուն առթիւ, և անոր համար յաւիտենականութեան վրայ կը խօսի Տէմիրճիպաշեանի հետ: Բանաստեղծ ու գրագէտ Եղիայն՝ նաև կը ծանօթացնէ Վահան վարդապետ Պարտիզակցիին « Հայկական Յիսնակ Առակ » գիրքը՝ որուն բովանդակութեան վրայ չի ծանրանար, կ'ուզէ ուրուագրել անոր նշանակութիւնը. ու կը գրէ. « Վահան վարդապետի գրիչն իր անձին նման ճկուն է. յանգագայ կը խոնարհի և կը բարձրանայ, կը սահի և կը մանրանայ, կը փայլի և կը նսեմանայ, կը լռէ և կը կրկնէ, և կ'ե-

ղերերգէ, կը խայթէ, և կը փայփայէ պարագային և առարկային համեմատ. գիտէ նիւթոյն այնքան քաջայարմար լեզու մը գործածել, մինչ զի կը թուի մարդուս լսել այն կենդանիներն իսկ ոյց բարբառել կու տայ, տեսնել այն բնութիւնն, այն վայրերն իսկ, ուր կը ներկայացունէ իր խոնարհ դիւցազուններն:» Տէմիրճիպաշեան եթէ ըսել կ'ուզէ որ Վահան վարդապետ Պարտիզակցի հաստատուն նըկարագրի՝ ու գրչի մարդը չէր, այդ երկու բառով կարող էր ըսել: Աւելորդաբանութիւնը շատ անգամ յարգուած է Տէմիրճիպաշեանէ: Այդ Պարտիզակցի վարդապետին վրայ գրած յօդուածներուն մէջ դատողութեան, և քննական հոգին շատ թոյլ է, եզրակացութիւնները աւելորդ, անյարմար և չափազանց միամիտ:

Տէմիրճիպաշեան քանի որ անհատի մը գրական միջակ աշխատութեան իսկ հիացող մըն է, բնական է որ անզուսպ սքանչացում կը տածէ միաբանութիւն մը կազմող գրական դէմքերուն:

Վենետիկի Մխիթարեան տպարանէն լոյս կը տեսնէ « Ծաղիկաբայ հատուածք յօտարագրի մատենագրաց » ծանօթ հատորը: Տէմիրճիպաշեան այդ առիթով ցոյց կու տայ հիացում մը Մխիթարեան գրական վաստակաւորներուն վրայ:

Քանաստեղծական և դրական տեսութիւններ կան իր այդ գրութեան մէջ: Շատ լաւ կը խորհրդածէ. « Աշխարհ և աշխարհավարութիւն, արեւելեան ու հայկական խնդիր, ընկերային ու քաղաքական յեղաշրջմունք, դոքա բոլոր ի՞նչ նշանակութիւն ունին Սուրբ Ղազարու վանքին համար: Վանահարք մերթ երկիրդած հանդիսատես կ'ըլլան երկնի և ծովու փոթորկացն: Այլ յաւէտ անծանօթ և անմատոյց են նոցա աշխարհի և հոգևոյ փոթորիկներն... Երանեանլ էակներ. — Կապոյտ ծովուն կը նային ու կ'աղօթեն: Կ'աղօթեն ու կը ննջեն. կը զարթնուն ու կ'աղօթեն:... Ո՛չ ապաքէն բոլոր մեր ոսկեղարեան մատենագիրք և ոսկեղարեան դիւցազունք, նաեւ Հոմերոս և Վիրգիլիոս, Միլտոն և Մասիյոն, որք մէն մի ոսկեղար կ'արժեն իւրաքանչիւրն. ո՛չ ապաքէն դոքա բոլոր, եթէ Մխիթարեանց գործոյն ականատես ըլլային, սքանչացման ու երախտագիտական արտասուօք պիտի համբուրէին Հայր Արսէն կոմիտաս Բագրատունւոյ ճակատն, որ իբր անձնաւորութիւնն է Մխիթարեան միաբանութեան:... Հայկական խնդիրն այն օրէն ծնաւ ուր Մխիթարեանք տպեցին առաջին հայերէն ձեռագիրն՝ զոր Հայաստանի աւերակաց և

փոշեաց ներքեւն « երկիրդիւ և հաւատով » հանած, ի լոյս բերած էին... Արաբացիք Քանալի գիտութեանց կ'անուանէին Քերականութիւնն, նոյնքան իրաւամբ չէնք կրնար մենք ալ Հայաստանի բնաւի կոչել Հայր Արսէնի Քերականութիւնն: » Եւ ուզելով իր կարծիքը յայտնել « Ծաղկաքաղ հատուածք » հատորին վրայ, այս նկատողութիւնները և նկարագրութիւնը կ'ընէ.

« Երբ ծաղկունք բնութեան ծոցոյն մէջ կը սկսին դեղնիլ ու թառամիլ արդէն, Մխիթարեան Հարք՝ իբր ծածկելու համար աշնան տխուր աւերն՝ վերջին անգամ յղած են մեզ գրական երփնեքփեան ծաղիկներ, օտարազգի մատենագրութեանց դրախտներէն քաղուած, և այնքան թարմաւէտ յաճախ, այնքան հոտաւէտ, մինչ զի կարծէիր թէ տակաւին իրենց բունին վրայ կը փայլին ու կը բուրեն այն ծաղկունք: Ընտրէ, որ տեսակէն կ'ուզես, որ ծաղկին սիրահար ես: Այս ծաղիկն իտալական երկնին, իտալական արփուոյն տակ փթթած է. միւսն Ալմանիական անտառաց խորհրդաւոր ստուերաց տակ ծլած է: Ասի հեծեծանք մ'է, անի աղօթք մ'է: Մին առ լոյսն ուղղուած է, միւսն առ Ս. կոյան. մին առ լուսին, միւսն առ թիթեռնիկն: —

Սորա խարագիրն է « Հրդեհ », դորա խորագիրն է « Գիւղն ամայի ». նորա խորագիրն է « Չանգակ »: — Միթէ... հրդեհն չի վառիր մեր հայրենեաց մէջ. — Միթէ՞ Հայոց գիւղօրայք չեն ամայանար մի առ մի. — Միթէ՞ սկսած չէ հնչել տագնապի զանգակն... »: Այս դիտողութիւններով՝ Տէմիրճիպաշեան կ'ուզէ ըսել թէ Հայ հողէն, հայ լեռներէն ալ կարելի է փնջել գրական ծաղիկներ: Ազգային մատենագրութիւնէն կ'ուզէ ըսել: Բայց Միթէ՞ րեանք զուտ գրագիտական վարպետները՝ գտած են մի միայն օտարազգի գրականութեան մէջ. և նոր գրագէտ հայերուն բնակարեւորութիւն չեն տուած:

*
* *

Տէմիրճիպաշեան ընդհանրապէս գրական և իմաստասիրական նիւթերու վրայ գրած է: Բանաստեղծ խառնուածքովը յետոյ իր գրուածքներուն մէջ անձնապաշտ մըն է եղած, և արդէն քերթողներէն մեծ մասը իրենց ետ փայփայած են. այդ անմեղ միամտութիւն է, ներելի միամտութիւն:

Տէմիրճիպաշեան իր առաջին գրուածքներուն մէջ ընդհանուրին հետ է, անոնց կեանքը կ'ապրի՝ իր սրտով, իր հոգիով,

իր զգացումներով: Եւ ամենէն աւելի հայ տառապանքի վրայ գրած է, զգուշաւոր է իր դիտողութեանց մէջ: Պէտլինեան վեհաժողովի ատեն՝ Թուրքիա՝ Հայաստանի բարենորոգումներու վրայ կը խօսէր: Եւ այդ առթիւ կը գրէ. « Երկար ժամանակ է ի վեր թուրքիոյ անկեղծ բարեկամ, իմաստուն անձինք բարեկարգութեան, ապահովութեան, լուսաւորութեան յորդոր կը կարգան Օսմանեան պետութեան, իբր միակ միջոց զօրութեան: Մենք ալ մեր տկար ձայնովն կու գանք կրկնել նոյն յորդորն. — բարեկարգութիւնէ դուրս զօրութիւն փրկութիւն չկայ: » Համեստ բացատրութիւն, սակայն հզօր է ատոր նշանակութիւնը:

Տէմիրճիպաշեան՝ ամէն պարագայի մէջ միշտ բանաստեղծական ձգտումները չէ կրցած զսպել, կը գրէ հասարակաց խնդրի մը վրայ, ընթերցասիրութեան վրայ, խմբագրութեանց վրայ, և ահա իր գրիչը կը փնտռէ ու կը գտնէ բանաստեղծութիւնը, հոն ինքը կը ճախրէ իրեն յատուկ թռիչքովը. կը հարցնէ.

« Գիտէք, ո՞ր ընթերցողք իմ, ի՞նչ է Բանաստեղծութիւնն — որ սրտէն կը բղիւի և սրտերու կը հաղորդուի. որ հեշտաւր կը կացուցանէ կեանքն, և նախանձելի՝

մահն. որ համերց լեզու կը պարգեւէ, և կոյրերուն արեգակներ կը ծագէ բիւր անգամ աւելի մեծապայծառ քան մեր աչաց լուսատու արեգակն. տեսարաններ կը պարզէ բիւր անգամ աւելի հրաշափառ քան բնութեան բիրազան տեսարաններն. զիտէ՞ք ինչ է բանաստեղծութիւնն, որ վայրենի ժողովուրդներն կը քաղաքակրթէ և ամեհի գազաններն իսկ կ'ամոքէ, որ իր արշաւանաց մէջ կը կասեցընէր աշխարհակալ Աղեքսանդրն և իր ամբարհաւածանութեան մէջ կը նուաճէր աննուած Պոնաբարդն: Նոյն Նաբոլէոն Պոնաբարդն ըսաւ թէ, « Մարդն Արձակն, և կինն Բանաստեղծութիւնն է »... Եւ այս ամէնը կը գրէ Տէմիրճիպաշեան, իբր նախարան՝ Մարիամ Պիլլօրեանի մէկ քերթուածին՝ որուն գովեստները կ'ընէ:

Բանաստեղծ մը իր քերթուածին մէջ յաջողելու համար, ըստ Տէմիրճիպաշեանի, պէտք է որ անպատճառ տխուր տպաւորութեան տակ գրիչ շարժէ. և անոր համար ինքը Ներսէս Մէզպուրեանի մահուան առթիւ գրելով, ըսած է.

« Արտասուքն իմ ցօղս է. թախիծն իմ մանանաս է. հեծեծանքն իմ երգս է: Այսպէս կ'ըսէ ինձ իմ անմահ հոգիս »... Սակայն տխրութեան այդ մէկ պահուն ար-

ձակ եղերերգութիւնն ընելով Մէզպուրեանին, Տէմիրճիպաշեան իր գրիչին չէ տուած բանաստեղծի թոխչք:

Նորայր Բիւզանդացի՝ կը տառապի չի գտնալով նեւթական միջոց՝ իր Բառագիրքը տպագրելու համար. կը շրջի Ղալադիայի և Ստամպուլի խաները և մեծահարուստ հայ սեղանաւորներէ կը խնդրէ մէկ ու կէս ոսկի՝ բառարանի բաժանորդագրութիւն... սակայն ոչ մէկ յոյս, ո՛չ մէկ աջակցութիւն, Նորայր իր երիտասարդ կեանքին տամբըչորս գարունները այդ բառագրքին համար սպառած էր, և հիմայ ազգէն կը սպասէր 1000 ոսկի որ կարենար բառագիրքը տպել ու աւարտել, յօգուտ իր ազգին: Եւ յուսահատած պահուն կը վճռէ, որ այդ հոյակապ աշխատութիւնը կրակին մէջ նետէ... Եւ անա այդ առթիւ Տէմիրճիպաշեան կը գրէ. « Գրագէտը մուրալով, մարելով, հառաչելով, հեծելով, կը նկրտին յառաջ վարել Հայ ազգն, մշակել Հայ միտն, յղկել Հայ լեզուն, արծարծել հայրենասիրութիւնն, հալածել օտարամոլութիւնն, անտարբերութիւնն և տգիտութիւնն: Հէգ գործաւորը Հայաստանի վերաշինութեան, երբ պիտի գայ ցանկալի ժամանակն, ուր ձեր վաստակոց արժանավայել տրիտուրն ընդունիք, մուրացկա-

նութիւնէ ազատիք... »: Ու կարծես յաւիտենական ժառանգութիւն մը մնաց մեր մէջ գրագիտաց լքումը: Նորայրէն առաջ և վերջը մեր ամէն գրչի մարդիկ չարչարուեցան յուսախարութեամբ:

Տէմիրճիպաշեանի մելամաղձոտութիւնը բնական է, այդ իր խառնուածքին կը պարտի. ամենէն ուրախ գրութեան մէջ ալ, ինքն իր այդ լեզի հոգիէն տխրանոյշ հոսանք մը կը ծորէ: Իր դասընկեր Ս. Լեթմեքճեան կը հրատարակէ Հէքդոր Ժօրժի հայերէն թարգմանութիւնը, խնդակցութեան նամակ մը կը գրէ թարգմանիչին. նիւթը ուրախ է, խանդոտ, ծիծաղիտ. ու կ'արծես ինքն իր արեւ ուրախութիւնը կամաւորապէս մութ ամպերու մէջ կ'ուզէ սեւցնել:

Յիշատակելով այդ նամակին մէկ քանի մասերը, դիտողութիւններուս հաւաստումը կ'ուզեմ ընել.

« Երբ ես, քաղցրիկ Սահակ, յուսաբեկ և կորագլուխ յուզարկաւոր կ'երթայի իմ վերջին հանգստավայր Վիլեէմի տարաբաղդ բարեկամին, դու յուսախայտ և հրճուալիբ հանդիսատես կը լինէիր ութ-ևտասներորդ դարու գիտնոց հետ նոր գիտութեան մը վսեմափայլ արշալոյսոյն... Հիմայ կը վարեմ կեանք մը որ մահ չէ,

այլ վատթարագոյն. պատառարոյժ մ'եղայ ես ընկերային մարմնոյն, ոյր բարւոքման վե՛հ գործին դու գործաւոր մ'եղար արթուն եռանդուն: »

*
*
*

Գրագէտը կը սիրէ կեանքը, կը սիրէ երկիրքը. կը սիրէ Հայրենիքը. « Անդ սիրելիս, պէտք է որ տանին զիս ». Մինեօնի այս խօսքը Տէմիրճիպաշեան միշտ յիշած է. երբ սիրած նիւթին վրայ գրած է: Կը սիրէ գրականութիւնը. և անոր ամեն մէկ շարժումը նկատողութեան կ'առնէ: Վենետիկի Մխիթարեան մամուլէն լոյս կը տեսնէ « Ծաղկաքաղ հատուածք » ին երկրորդ հատորը, գրաբար և տաղաչափուած քերթուածներ: Տէմիրճիպաշեան կը փութայ անոնց մասին իր գրական կարծիքները, տեսութիւնները յայտնելու:

Եղաւ ատեն մը որ Վենետիկի Մխիթարեանները, ինքնագիր մատեաններուն համար սկսան գործածել աշխարհաբար լեզուն, իսկ գրաբարը թարգմանութեան համար գործածեցին: Ամէն դասական բանաստեղծական գլուխ գործոցները Հ. Բազրատունիի և Հ. Հիւրմիւլի աշխատութեամբ գրաբար թարգմանուեցան, այդ

երկու Մխիթարեան մեծ ղէմքերուն հետեւող մը եղաւ նաև Հ. Սամուէլ Գանթարեան՝ Կլոփշտօքի « Մէսիական » ինքրաբար թարգմանութեամբ: Պէտք է համոզուիլ որ ժամանակին՝ Մխիթարեանները՝ աշխարհաբարին հետ բարեկամացած չեն. ժողովուրդը ստիպած է, և հասարակաց պահանջը յարգուելով, « Բագմավէպ » աշխարհաբար խմբագրուեր է: Տէմիրճիպաշեան այս լեզուական խնդրին առիթով կը գրէ.

« Մխիթարեանը երբեմն զրաբար կը հեղինակէին և զրաբար կը թարգմանէին — արդեօք ստոյգ է թէ զրաբար ալ կը խօսէին: Այսօր Մխիթարեանը աշխարհաբար կը հեղինակեն և զրաբար կը թարգմանեն ընդհանրապէս: Չը գիտենք՝ այս յառաջադիմութիւն մ'է թէ յետադիմութիւն — կամ յետադիմական քայլ » Ծահնուրի բաներով: — Մխիթարեանց կարծիքն իմացած եմ. Աշխարհաբար զրականութիւնն, աշխարհաբար խօսակցութիւնն յիտադիմութիւն, կատարեալ յետադիմութիւն է. — և աշխարհական կեանքն, ընտանեկան կեանքն յետադիմութիւն է վանական կեանքին վրայ: Սուրբ Ղազարու վանքին որմոցն ետև այսպէս կը փսփսան Սուրբ Հարք, և Աղբիական անգաղտնապահ ա-

լիք մինչև ի Պօսֆօր կը բերեն Մխիթարեանց զանգատանքն, Մխիթարեանց ողբու հեծեծանքն»: Ու միամիտ մեկնութիւններ կու տայ Մխիթարեաններու զրաբարապաշտ մնալնուն:

Տնտեսագիտական ղիտումներ կը տեսնէ ան, Մխիթարեանց զրաբարեան մնալնուն մէջ: Բայց կը սխալի, եթէ այդ ըլլար նպատակը, այն ատեն դասագրքերը ինչո՞ւ աշխարհաբար չընէին: Մինչդեռ նոյն իսկ իրենց բնական գիտութեան մէկ քանի հատորները զրաբար յօրինուեցան՝ աշխարհաբարի պայքարի ատեն, և Տէմիրճիպաշեանի այդ յօդուածէն տասը տարի վերջը՝ նոյն Մխիթարեան մամուլէն լոյս տեսաւ երկու հատոր բնագիտական հանրագիտակ բառագիրքը. զրաբար հրատարակուեցաւ ի վնաս տնտեսականին. զի Վենետիկի Մխիթարեանց զրաբարամուլ մնալն գաղափարական էր, ազգասիրական էր, հնութեան վրայ անկեղծ գուրգուրանք էր: Տէմիրճիպաշեան ունենալով հանդերձ միամիտ մեկնութիւններ, կը ղրուատէ զրքին արժանիքը իր այս գնահատականով.

« Եւ սակայն դուք, հայերէնասէրք և հայրենասէրք, որք ընթերցած չէք տակաւին Մաղկաքաղն, ձեր վրայ պարտք կը

դնեմ առնուլ զայն և ընթեռնուլ: Պիտանի գեղանի, հիանալի մատեան մ'է Ծաղկաքաղն, զոր կ'ընթեռնում առաւօտուն, զոր կ'ընթեռնում ամէն իրիկուն — և դեռ չեմ յագինար: Նոցա համար որք կը սիրեն Հայ լեզուն, նոցա համար որք կ'ապրին հոգեկան, իտէական կենօք, ինչ ընտրագոյն, ինչ գերագոյն մատեան քան Ծաղկաքաղի Քերթուածին, Հոմերոսէն մինչև Կէօթէ Ողիմպականն, Վիրգիլիոսէն մինչև Վիրգիլոս Իւլիօ քնարերգակն, Տանդէէն մինչև Հայնէ տարօրինակն, ու Դասսօ որ կ'երգէ Երուսաղէմ ազատեալն, ու Միւտօն որ կ'երգէ Դրախտ կորուսեալն. ու աղքատ ժիւլպէնն ու հիւանդ Միլվուան, ու յուսահատ Լորտ Պայրընն, բոլոր քրնարք, բոլոր նուագք — բոլոր անմահք — ժամադիր եղած են Ծաղկաքաղ հատուածքի մէջ, բոլոր ողբերգակ, եղերերգակ, քնարերգակ, դիւցազներգակ, գերահռչակ քերթողաց ծաղիկն, բոլոր զգայուն, վեհագոյն հոգւոց մեղրն այդ մատեանին մէջ ամփոփուած է: Պաշտելի մատեան, անթառամ ծաղիկ. գանձ իմ, լոյս իմ, զօսանք իմ, սփոփանք իմ — սրտիս վրայ կը պահեմ ես յաւէտ Ծաղկաքաղն:»

Այդ հրատարակութիւնը մեր ազգային վարժարաններուն մէջ կարգ մը սերունդ

ներու յաջորդաբար գեղեցկագիտական օգուտն ունեցեր է:

Տէմիրճիպաշեան ամբողջական յօդուածով մը կը դատապարտէ այն իգական սեռը, որ բնաւ հայերէնը չի կարգար և կը գերադասէ ֆրանսերէնը, իտալերէնը: Բանաստեղծը ուժգնօրէն կը փաստաբանէ, կը պաշտպանէ հայ լեզուի հրեշտակային քաղցրութիւնը:

Տէմիրճիպաշեան թէ՛ վիպական, թէ՛ բանաստեղծական և թէ՛ զրական ո՛ր և է յօդուածի մէջ միշտ ուստուտուն գաղափարներ կը յայտնէ, և ինքնին կ'անդրադառնայ իր այդ ո՞ճ զրութեան վրայ, և անկեղծօրէն կը խոստովանի այդ թերութիւնը. « Ծաղկաքաղ » ներու առթիւ գրած երրորդ յօդուածին մէջ կը պարզէ իր այդ ո՞ճը, այս տողերով. « Էս ինձ յատուկ զրութեան եղանակ մ'ունիմ, այնպէս չէ՞ սիրուն ընթերցող. տարօրինակ գրութեան եղանակ մ'ունիմ ես: Ստէպ առաջին տողերէս՝ բոլոր կարծեացդ և բոլոր ընդունուած ու նուիրագործուած սկզբանց ու կարծեաց դէմ երթալ կը սկսիմ, այն աստիճան, որ պահ մը կը մտաբերես թողուլ յօդուածս և անցնիլ յաջորդ յօդուածոյն: Սակայն յանկարծ կը փոխուիմ, վիպականէ դասական, տարօրինակէ հասարակ,

յեղափոխականէ պահպանողական կ'ըլլամ, ու կը սկսիմ շոյել, փայփայել, համբուրել նախասիրական ու նուիրական առարկայներդ, սիրական ու սրբազան անձերդ: Հուր կը ժայթքէի, և ահա կը գուրգուրամ:» Ինչո՞ւ այս խոստովանանքը:

Տէմիրճիպաշեան փափկասիրտ է. չի գիտեր խորտակել, կը հարուածէ և ահա կը զոջայ իր տուած հարուածին վրայ, և անդէն կը սկսի փայփայել հարուածեալը: Մխիթարեանները հարուածեր էր, նկատելով անոնց գրաբարամոլութիւնը շահագործութեան պարագայ մը. կ'անդրադառնայ ըրած սխալին և զայն կ'ուզէ սրբագրել, ու կը գրէ. «Այսպէս, սկսայ յօդուած՝ Մխիթարեանց դէմ անյարգական կամ անարգական խօսքեր արտասանելով, այսպանելով ու գրեթէ ծաղրելով այն սուրբ, այն պատուական հայրերն, որք այնքան մեծ և անմոռաց ծառայութիւններ մատուցին Հայ դպրութեանց, հետեապէս և Հայ ազգութեան: Անխնայ քննադատել սկսայ Մխիթարեանց ուսանելու և ուսուցանելու եղանակն, Մխիթարեանց կեանքն, ի մի բառ Մխիթարեանց վանքը. — Իսկ այժմ ինչ կ'ըսեմ. — Կ'ըսեմ այժմ թէ Մխիթարեանք պիտանի, սքանչելի, պաշտելի մատեան մը հրատարակած են՝ Ծաղկա-

քաղ հատուածքն... Արդ, ո՞չ ապաքէն ակներև հակասութեան մը մէջ կը գրանուիմ: Զի, կամ Մխիթարեանք անպիտանացած են, և յայնժամ ինչպէս պիտանի գործ մը կ'արտադրեն. և կամ Մխիթարեան միաբանութիւնն ազգօգուտ, հանրօգուտ ընկերութիւն մ'է, և յայնժամ ինչպէս կը համարձակիմ այսպանել և արհամարհել այդ պատուարժան միաբանութիւնն:» Եւ այս տողերէն վերջը, Տէմիրճիպաշեան դարձեալ կը տարտամի իր գովեստներուն մէջ. Ծաղկաքաղի բովանդակութիւնը՝ հին թարգմանութիւններ են կ'ըսէ, արդէն լոյս տեսած «Քաղմովէպ»ի մէջ, և վերջը ամփոփուած առանձին հատորի մը մէջ: Որով աշխատութիւն չի տեսներ անոր մէջ: Ու նոյն օրուան Մխիթարեանները կը նկատէ միայն աղօթողներ... Եւ դատողութեան մէջ ցոյց կուտայ անհաւասարակշիռ ոգի: Անոնց հին գործունէութիւնը չափազանցօրէն կը գնահատէ. և իր օրուան Ս. Ղազարը կը նկատէ «վե՛հ Հայերի գերեզման...» Սակայն վիրաւորուելու, չէ, նոյն բանաստեղծը բերնով կ'ըսէ, սրտով կը պաշտէ Մխիթարեանները:

Նոյն «Ծաղկաքաղ»ին գրաբարին առթիւ, ներբողական մը կը հիւսէ աշխար-

հաբարի վրայ և զայն շատ ներդաշնակ կը գտնէ: Եւ տարօրինակ բաղդատականներ կ'ընէ: Եւ սակայն կը խոնարհի գրաբարի սքանչելի պերճութեան առջեւ. գրաբարի մասին կատարած մեղքերուն վրայ զղջում մը համարելու ենք այս տողերը.

«Դժբախտաբար, ամենազժբախտաբար, չը գիտեմ ես հին յունարէնն: Այլ կը տարակուսիմ... Թէ Հայր Արսէնի թարգմանութիւնէն գերազանց ըլլայ Իլիականին բնագիրն — այն մեղրածորան երգերն զորս կը նուագէր զիցահամբոյր Կոյրն և զորս կը կրկնէր Հելլէն ժողովուրդն: Բազրատունւոյն աշակերտ՝ անուանին Թովմաս Թէրզեան ինձ պատմած է թէ, երբ Իլիական երգի մը թարգմանութեանէն յետոյ կ'երևէր Հայր Արսէն, այլակերպեալ էր՝ նման Աստուածատես մարգարէին՝ որ Սինայէն, ամպերէն վար կ'իջնէր: Ինչ որ լոյս ունի երկինն, ինչ որ հուր ունի երկիրն, ինչ որ ներդաշնակութիւն և վեհափառութիւն ունին երկիր և երկին, Հոմերի մէջ, Հոմեր՝ Հ. Արսէնէ թարգմանութեան մէջ են ապաքէն:»

Կը սքանչանայ գրաբար թարգմանողներուն վրայ, կը հիանայ գրաբարին վրայ, և միառմի ցոյց կու տայ, թէ ինչպէս գրաբարի շնորհիւ Հ. Բազրատունին ան-

նման պերճ բառեր կերտած է իր դասական թարգմանութեանց մէջ: Ինքը Հ. Բազրատունիի գրաբարը կը գտնէ հին յունարենէն հարուստ, աղու, ազղու. ածականները պատկեր պարունակող, հովին ու հոգիին շարժումը նկարող: Տէմիրճիպաշեան աշխարհաբարի ամենէն քաջախիզախ ջատարոյն եղած է, երբ 1880ին մեծ վիճաբանութեան նիւթ կ'ըլլային աշխարհաբարը և գրաբարը. «Մասիս» օրաթերթին մէջ ամէն հայկաբան իր գրական տեսութիւնները կը յայտնէր այդ առթիւ. բայց որպէս զի որոշ գիտցուի թէ ինքը գրաբարի մասին ինչ գաղափար ունէր, կը գրէր այս տողերը.

«Եթէ ոք Աստուածաշունչս ու Հոմերս յինէ փոխ առնու, զիշերն այդ բարեկամիս — կամ բարեկամուհոյս — օթևանին շուրջ կը դեգերիմ, որպէս զի զողերն իմ գանձ չի յափշտակեն տանին. — Այլ ես զբարբարեան չեմ: — Եթէ ոք համարձակի ծանակել գրաբարն երբ կը պանծացնեմ ես զայն, մենամարտութեան այդ ամպարիշտն ես կը հրաւիրեմ. — Այլ ես գրաբարեան չեմ: Եթէ ժխտէ ոք՝ իմ ներկայութեանս՝ Մխիթարեանց գործոյն կարևորութիւնն ու Ծաղկաքաղ Հատուածքի, գեղեցկութիւնն ու պիտանութիւնն, այդ

Պարոնին... Գամպոնի բառովն ես կը պատասխանեմ. — Այլ ես գրաբարեան չեմ: — Իլիականին ու Տէլեմաքայ ու Դաշնակաց թարգմանիչներուն պատկերացն առջև ես կանթեղ կը վառեմ, երկիւղածութեամբ ու գոռոզութեամբ ես կ'արտասանեմ Հ. Արսէն, Հիւրմիւզ և Խոռխորունի անուններն. — Այլ ես գրաբարեան չեմ:»

Որոշ է, ինքը երկրպագու է գրաբար գրողներուն և գրաբարին, բայց գրաբարեան չէ:

*
* * *

Տէմիրճիպաշեան տոկուն աշխատողի մեծ օրինակներէն է, իր այդ աշխատութիւնը մտաւորական անհաւասարակշռութեան նպաստած է. միշտ լոյս... և կարգալով՝ այդ լոյսին զիմած էր: Խորէն Նարպէյ խորհուրդ կու տայ որ Բանաստեղծը մէկ քիչ չափաւորէ աշխատութիւնը և հանգիստ առնէ. որուն կը պատասխանէ Բօր — Ռօյեալի այս խօսքը. « Հանգստեան համար միթէ չունինք յաւիտենութիւն... »: Եւ այդ նշանաբանին ուզելով հաւատարիմ մնալ, միշտ աշխա-

տած է Տէմիրճիպաշեան՝ հակառակ որ խստիւ արգելուած էր իրեն աշխատանքը:

Աշխարհաբարի պայքարը շատ երկար տեւեց, ու ամենէն վերջը Պօլսահայ գրագէտները աշխատեցան ոամկացնել աշխարհաբարը, այդ ժողովրդական լեզուն տակաւ առ տակաւ զտումի և յղկումի շրջաններէն անցաւ և իր վերջնական հանգրուանը չի կրցաւ գտնել. կատարելագործութեան զիմողը բնաւ հանգրուանի կարօտ չէ...

Աշխարհաբարը բարեշրջումի ուղին բռնած կը շարունակէ իր տարտամ քայլերը. բայց ապահովապէս միշտ դէպ ի ընտիրը և կատարեալը զիմելով:

Վաղուց փափաք է յայտնուած զանազան աշխարհաբարներուն միութեանը համար: Տէմիրճիպաշեան այդ առթիւ կը գրէր « Մասիս » օրաթերթին մէջ. « Ազգային լուսաւորութեան երկու գլխաւոր կեդրոնք, Տփղիս և Կոստանդնուպօլիս կը նկրտին այսօր միմեանց մերձենալ: Այդ երկու կեդրոնաց լեզուներն ալ, որք արդի հայերէնին երկու գլխաւոր գաւառաբարբառքն են ապաքէն, պարտին միմեանց մերձենալ և հուսկ ուրեմն միանալ »: Եւ խօսելով Պօլիս տիրապետող մէկ քանի ձեւ աշխարհաբարի նկատմամբ. կ'ըսէ. « Ի բաց առնելով Օտեանի աշխարհաբարն իբր ար-

տաքոյ կարգի մատենագրի մ'անգուսպ, յանդուզն ու հիանալի լեզուն, դէմ առ դէմ կամ մօտ առ մօտ այսօր երեք աշխարհաբարներ կան Կոստանդնուպօլսոյ մէջ: Առաջինն, ամենէն հինն և եթէ կրնանք ըսել ամենէն ազգայինն է Մաւիսին աշխարհաբարն: Երկրորդ, աւելի գրական, աւելի գրարար, աւելի Գաղղիական, երկրորդն է իմ աշխարհաբարս, զոր «փոխանցական» պիտ' անուանեմ: Երրորդն, ամենէն կարեւորն, այլ ամենէն նորն է «ընտրողական աշխարհաբարն», որպէս կը կոչես աշխարհաբարդ ո՛ր Չերագ: Ժամանակը չէ՞, կը հարցնեմ կրկին, ժամանակը չէ՞ որ այս երեք աշխարհաբարը ի մի ձուլուին՝ փոխադարձ ներգործութեամբ ու զիջողութեամբ»: Եւ ահա կարգ մը գրագէտներ աշխատեցան զրական աշխարհաբարը յարմարցնել ժողովրդական բարբառին, և այդ լաւ գրութիւն մըն էր, ինչ որ գնահատուեցաւ շատերէն: Մամուլը աշխարհաբարի զտումին մեծապէս նպաստեց:

*
* *

Բանաստեղծին հիւանդութիւնն ալ՝ բանաստեղծական կ'ըլլայ. այդ մեղամաղձոտ պահուն՝ երեւակայութիւնը մտքին հետ մինակ, և աւելի մտերմօրէն ապրելով, զուտ բիւրեղացած յղացումներ կ'ունենայ հիւանդ մարմնի առողջ հոգին:

Կը հիւանդանայ բանաստեղծ Տէմիրճիպաշեան. զրքերէ զրկուած է, զրական բարեկամներէ զրկուած է, կը տխրի ան, սակայն միտքը բնութեան զուարթ հրմայքներուն հետ է, ան կ'երագէ իր վիճակին անգործութիւնը, բայց միտքը կը կը գործէ, միտքը կը հիւսէ անուրջներ: Մտատանջութեան մէջ կ'իյնայ, իր այդ ողորմելի կացութեան՝ վրան խղճացող մը, վրան մտածող մը, զինքը յիշող մը կայ... կայ իրեն համար աղօթող մը. և կ'ուզէ հարուստութիւն ունենալ, Առողջութեան՝ տաճար մը կանգնելու համար: Մշուշը չարագործ է, բայց գեղեցիկ, և մշուշին մէջ համբոյրը անուշ կը համարի... Եւ կը բանաստեղծէ.

«Դուրս ելնենք. այլ ո՛ր երթանք. դէպ ի կանանչ կամ դէպ ի կապոյտ դաշտն: Երթանք Գատրգիւղի ծայրն, Գատրգիւղի

պատկն, Գատըզիւղի դիտակն — Մօտա-
Պուռնի: Երթանք դիտել լայն ծովն ու ան-
սահման երկինն. երթանք տեսնել Ֆէնէո-
Պաղչէի լապտերն որ կը փայլի ցայգ և
ցերեկ, ու Ֆէնէո-Պաղչէի նոճիներն որ
նսեմաստուեր են ամառ և ձմեռ: Երթանք
ի դէտ կալ այդ սխրալի հակապատկե-
րաց: Գուցէ մեզ նման տկարաձև էակ
մ'ալ դողդող քայլերով կը ղեգերի սպի-
տակափայլ լապտերին շուրջն ու սգարս-
տուեր նոճեաց ներքև, ունկնդրելով կոհա-
կաց կողկողանքներուն ու նոճեաց հեծե-
ծանքներուն, կը ղեգերի խորհելով այն
անյիշատակ ժամանակաց, ուր ո՛չ ալիք,
ո՛չ նոճիք կը բարձրանային, ու խորհելով
մթագոյն անեղագոյն այն ժամանակաց,
ուր ամեն բան պիտի խոնարհի, պիտի
խաւարի, պիտի խաղաղի. — ո՛ր դա-
տարկութեան անեղ խաղաղութիւն:» Եւ
Տէմիրճիպաշեան պահ մը դարձեալ բնու-
թեան ծոցը նետուած է, ու կը զգայ հո-
գիին պարարումը, համբոյրները և արբու-
ցումը. և կը պաշտէ բնութեան բնանկար
գեղեցկութիւնները: Եւ կը յիշէ բնութեան
ամենագեղ և ամենատգեղ երևոյթները, և
իրօք անդիմադրելի բնութիւնն իր գուրգուր
սիրունութեան հետ ունի նաև անողոր հա-
րուածներ:

Ծովին առջև ինքը բանաստեղծ է, Մօ-
տա-Պուռնիի՝ Լօռանտօյի բարձրադիր դի-
տարանէն կը սքանչանայ ծովին վրայ,
աննկարագիր մարդուն պատկեր՝ յարափո-
փոխ ծովը. և այս նմանութիւնը անզլիացի
բանաստեղծին պէս՝ միայն կնոջ վերագրե-
լու չէ: Տէմիրճիպաշեան այդ գեղեցկադիր
հմայքոտ բարձունքին վրայ բանաստեղծա-
կան սաւառնում չունի, այլ կ'իջնէ քննա-
դատական դրական ստորին հարցերուն,
և սնապարծութեան մօտ խօսքեր կ'ընէ.
հաւասարապէս կրկնելով իր հիացումը և
պարսաւը դէպ ի վէնետիկի Միսիթարեան-
ները: Կը դրուատէ անոնց զբարարը և
կը դատապարտէ անոնց կըթական դրու-
թիւնը: Եւ իր յարափոփոխ հոգեբանու-
թիւնը ինքնին կը նկարագրէ.

« Գուցէ առարկէք թէ Գրասէր Ատոմ
ալ Հայ գրականութեան հորիզոնին վրայ՝
ամպիկ մ'է որ բիւր գոյն ու բիւր ան-
հեթեթ ձևեր կը ստանայ. մթագոյն է այ-
սօր, որ վարգագոյն է վաղ. որ մերթ
պարոյկի ձև կ'առնու, մերթ շեշտի, այլ
մանաւանդ հարցական կէտի ու « Ժպիրհ
հարցական կէտ մը » որպէս Անկլիացի
բանաստեղծի մը համար ըսուեցաւ: »

Բարի Տէմիրճիպաշեանը միշտ իրմով
կ'ուզէ զբաղեցնել իր ընթերցողը. անմեղ
միամտութիւն:

Հոգեբան է Տէմիրճիպաշեան, երբ բնութեան տեսարանները ազդեցութիւն ունին երեւակայութեան վրայ, բանաստեղծը կը սիրէ ամփոփուիլ իր հոգիին մէջ, և կը սիրէ պատասխան տալ այն հարցերուն, զոր իրեն կ'ուղղէ անծանօթ թելադրիչ ուժ մը: Կ'անփոփեմ «Վանլըին Մօտան» իր տեղագրական մէկ գրութիւնը.

— «Մեծ Մօտա:

— Կամ Վանլըին Մօտան:

— Անտարակոյս ուրիշ անգամ ես տեսած եմ սիրուն, պիտ' ըսէի խոհուն այս վայրը: Այլ անունն ինձ անծանօթ էր: Վանլօին Մօտան կ'անուանի թէ Վանլըին:

— Ո՛չ անշուշտ Բոսփանսածին պատկերհանին, այլ Վանցի հայ սրճարանի մ'անուամբ Վանլըին Մօտան կոչուած է վայրս:

— Զարմանք չէ՞, Լևոն, ամենուրեք յանակնկալս կը գտնենք Հայոց անունն, Հայոց հետքն. այլ լոկ անուն, աւանդ, լոկ հետք:...

Մեծ Մօտան թէև ոչ առաւել ընդարձակ, այլ առաւել ազատ հորիզոն ունի քան փոքրիկ, քան բուն իսկ Մօտան: Մտերն յոյժ ցանցառ են աստ, և թոյլ կուտան աչաց մարդոյն՝ որ անարգել զիտեն կապոյտ ծովածոցն ու մանիշակ թերա-

կզզին Ֆէնէո-Պաղչէի, և հեռին՝ մանիշակագոյն կզզիներն իշխանաց. — և աւելի հեռի և աւելի բարձր՝ ամպերն, անսահման տարածութեան այն վարդագոյն կըզզիներն ամենիշխան, որք ինձ ի յուշ կ'ածեն ամեն անգամ՝ այսօր յանիրաւի մոռցուած Վարդենիքին անմոռաց Ամպիկե...:

Ես յոյժ սիրեցի Վանլըին Մօտան. — իր առանձնութեան համար. — Այո՛, բայց մանաւանդ այն առանձնակ ուռնետյ ծառին համար որ գլխաւոր զարդն, որ հոգին ու հրապոյրն է՝ գրէթէ «անհետ ու անմարդաձայն» այն սարաւանդին: Ես յոյժ սիրեցի Վանլըին Մօտան, և այսուհետև ստեպ պիտի երթամ այն անդորրաւէտ վայրն ու տեսնեմ վայրակախ ուռին վարսաւոր. — այն ծառն, ոյր երգն այնքան սիրելի էր Պարպարաին, մինչ զի տժգոյն Տէգտէմօնաի մօրն այն հէգ նաժիշտն հոգին աւանդեց երգելով երգն Ուռնետոյն. այն ծառն ոյր «տժգոյն հովանին այնքան քաղցր ու սիրելի» էր Լիւսի սիրահարին, մինչ զի «նա հեզ հովանետոյն ներքև կամէր հանգչիլ ի շիրմին.» այն ժառն որ ննջեցելոց վրայ կ'արտասուէ և որ յարտասուս կը շարժէ կենդանիներն: Եւ դեռ ամպարիշտ իմաստասէրք ոմանք կը ժտին քարոզ հանդի-

սանալ նիւթապաշտութեան: Ի զո՛ւր, ի զո՛ւր... հոգին է որ կու տայ կենդանութիւն Արարչութեան. հոգին է որ կը տիրէ արեգեցեաց, բուսոց և կենդանեաց, դից և մահկանացուաց, հոգին է որ կը հրամայէ, հոգին է որ կը հմայէ:... Ի զո՛ւր, ո՛ նիւթապաշտ, հող կը մտնես աղաղակելով ոչնչութիւն, ոչնչութիւն: Հոգիդ յաւէտ կենդանի է. նա կը սաւառնի տապանիդ վըրայ, նա կ'ապրի սիրեցելոյդ յիշատակին մէջ, և ահա նա կ'արտասուէ ոսկերացող վրայ գլխահակ և հերարծակ: Արտասուած ռուին, այո՛, հոգիդ է այն. հոգիդ են այն կուսանք ու այն երիտասարդք որ անունդ կը կրեն. հոգիդ են համայն էակք որք երբեմն հանճարոյդ ներգործումն կրած են և նոքա որք յապագային զայն պիտի կրեն ի շնորհս անմահ քո գործոց...:

Մեծ Մօտաին ուռենոյն ներքեւ ապաբէն չը կայ տապան: Այլ ո՞վ կրնայ պնդել թէ այդ հնապանձ փանց վրայ, որք դեռ արձագանգ կու տան գոգցես Ոսկերեքաններու ձայնիցն, ո՞վ կրնայ ըսել թէ արտասուած ռուոյն արտասուք չեն թանար աղուագոյն աղջկան մը, պաշտելի և պաշտեալ էակի մը, բանաստեղծի մը կամ բանաստեղծուհոյ մը նուիրական ոսկոր-

ներն...: » Նման քերթողական մտքեր յատուկ է Տէմիրճիպաշեանի երևակայութեան. բեղուն գրիչ մըն է, ուռճացած միտք մը, որ քնարին վրայէն անզուսպ կը սաւառնի դէպ ի վերացական գաղափարներու երկինքը:

Կարելի չէ կանգ առնել իր մէկ հոգեբանութեան վրայ, դարձդարձիկ կը շրջի գաղափարներու առանցքին շուրջը, ու ինչ որ մտքին կը ներկայանայ, հոն պահ մը կը կենայ, կը խորհրդածէ ներշնչուած նիւթին վրայ, և բնաւ փոյթը չէ թէ պատահական արտաքին համայնապատկերը համախմբէ կամ ոչ՝ ամբողջական գաղափար մը:

Հատուածակողմեան բիւրեղացում մըն է իր երեւակայութիւնը, ամէն ցուր կը ծծէ իր մէջ ճառագայթող գաղափարներէն և կ'աշխատի սիրցնել իր խորհրդածութիւնները, ուր ամփոփութիւնը թոյլ կը մնայ միշտ:

*
* *

Բժիշկները թոյլ չէին տար որ Տէմիրճիպաշեան մտաւորական չափազանց պարպումով սպառէ իր առողջութիւնը, զի գուշակած էին, որ անի պիտի անսար ե-

րեւակայութեան խօլ խորհուրդներուն և օրին մէկը անձնասպանութեան պիտի զիմէր:

Բանաստեղծը անփոյթ բժիշկներու խորհուրդներուն, գրամոլ մը կը մնայ գրականութեան մէջ, ծայրայեղ ընթերցող մը և բեղմնաւոր գրող մը:

Միտքը կը տուժէր, դատողութիւնը կը կորսնցնէր իր հաւասարակշռութիւնը, ողջմտութիւնը այլ ևս հիւանդացած էր իր ուղեղին մէջ. և անձնասպանութեան փորձէն առաջ կը գրէր Պ. Մինաս Չերազին, այս տխուր խոստովանութիւնը.

« Գու գիտես ի՞նչ անհնարին վիշտերու մատնուած եմ քանի տարի է: Ալ ժամ է որ հանգչի տառապեալ հոգիս... Էջ մը վերթեր կարգալէ ետև՝ պիտի ուղղուիմ դէպ ի Մօտա-Պոռնին. այն վայրն անգիմաղբելի հրապոյր մ'ունեցած է միշտ հոգւոյս.... Հոնկէ ծառի մը յեց՝ վերջին արվոյս խոնարհիլը պիտի տեսնեմ ծնընդեանս լերանց ետին...: Այն կրօնական ժամուն ուր Գաղղիական եկեղեցւոյ զանգակն սկսի հնչել յամր ու ողբալուր, հոգեվարի աղօթներ պիտի մըմնջեմ, մինչև ակ մարդ չմնայ եզերքին վրայ. այն ատեն պիտի յառաջանամ ի ծով. « Ծոցդ անոյշ ալ չես բանար սիրականիդ..... » կոհակները

վտիտ մարմնոյս հետ պիտի խաղան, ինչպէս այնքան ես իրենց հետ կ'սիրէի խաղալ մանկութեանս ատեն՝ Պայրնի նման. խարտեաշ մազերուս վրայ աղու նշոյլ պիտի սփռէ Ֆէնէտի խորհրդափայլ լապտերը. աղկէնվեայ բոյնի մը նման՝ զլուխս պիտի տատանի պահ մը ջուրին երեսն ու խորասոյգ ըլլայ անհետի, ինչպէս եղան, աւաղ իմ յոյսերս..... Ծննդեանս տօնն է այսօր. մահուանս ալ պիտի ըլլայ տօնը....: « Ծնած օրը մեռաւ » պիտի ըսեն. այնպէս ալ...: Ահ, կեանքիս վրէժը պիտի լուծէ մահս. — Ի՞նչ գեղեցիկ պիտի ըլլայ, Մինաս... Երբ մարմինս ծովէն հանեն ու սեւ հողը դնեն, Յոյն աղջկան տապանագիրը զրէ շերմիս վրայ — եթէ ունենամ... — « Մի ծանրանար վրան, հոգ, այնքան թեթեւ էր նա վրագ: » Այս միակ կտակս —: Ու մնաս բարով:» 1874-ին գրուած է այս տխուր կտակագիրը, և Մօտայի ջուրին մէջ իր փափաքը իրագործել ուզեց:

Տէմիրճիպաշեան իր տաղանդը կարող էր շատ աւելի օգտակար ընել, եթէ հոգեկան ուժը հիւանդ ու վերթերեան վարակում մը չունենար, ինչ կարելի է սպասել այդ մտաւորական մշակուած անձէն, երբ իր կիրքերը ընդվզած են իր

մէջ և զինքը անձնասպանութեան կը մղեն: Հիւանդութիւնը անոր ջղերը կը ջլատեն: Աշխատութիւնը հզօր կրակ մը բռնկցուցեր է իր մէջ. բայց կամքը այլևս թոքախտաւոր է, ուժ չունի որ յաղթէ իր վրայ բռնացած տխրութեան, որուն բուժումը կը նկատէ մի միայն անէացումի մէջ:

Տէմիրճիպաշեան պատրաստուած էր բանաստեղծի անվիճելի մէծ դէմքերէն մէկը ըլլալու, հայկական քերթողներու խումբին մէջ, ինքը կրնար ունենալ մեծ վարպետի դերը, սակայն դատողութեան հիւանդութիւնը՝ խեղդեց անոր մեծ նշանակութիւնը:

Իր ազգասիրութիւնը միայն՝ ջինջ բիւրեղացումով մնաց հիացական. իսկ իր հոգեկան տեսութիւնները մնացին վերացական: Իր կուրծքին մէջ բարախեց մարդկային գուրգուր խանդաղատանքը դէպ ի տառապեալը: Սէրը մաքուր մնաց իր մէջ, իր ձեռքը միշտ թրթռուն:

Երազող մտքերու համար, ներկան քըննադատելի է, յառաջագիմութիւնը կը սպասեն Ապագայէն: Տակաւին Մարինէթթիի

ապագայապաշտ գոռ վարդապետութիւնը գոյութիւն չունէր, Տէմիրճիպաշեան ապագայի արգանդին մէջ յառաջագիմութեան յեղաշրջող յղացումը կը նշմարէր. ըսելով. « Ապագայ, յիսուն, վախճուն տարի յառաջ, նոյն բառն կ'արտասանէր, նոյն բառն կը յեղյեղէր Էմիլ Լիդոէ... Ապագան հասաւ, ապագան կատարեցաւ, ապագան աւարտեցաւ մեծ իմաստասէրին համար: Ապագան՝ Օկիւսդ Գօնդի սանին համար՝ դրական գիտութեանց ծաւալումն, դրական իմաստասիրութեան տարածումն ու զարգացումն էր. և ապագան կատարուեցաւ, ըսի. գիտութիւնն ելեկտրական թևերով կը տարածուի, դրական իմաստասիրութիւնն աշխարհիս ամէն կողմն այսօր աշակերտներ ունի: Ապագան՝ Էմիլ Լիդոէի համար՝ հանրապետութեան, բարեկարգութեան, խաղաղութեան հաստատութիւնն էր աշխարհի մէջ. և ապագան մասամբ կատարուեցաւ Ֆրանսայի համար և ապագան մօտ է կատարուիլ համօրէն աշխարհի համար: »

Տէմիրճիպաշեան կը մարգարէանայ Ապագայի բեղմնաւոր հրաշագործութիւնը: Ելեկտրութեան վրայ կը դնէ մեծամեծ յոյսեր, ինչ որ արդէն այդ դիւթական ազգակը՝ յետոյ ցոյց տուաւ իր հրաշալի

ուժը: Տէմիրճիպաշեանի այդ մարգարէութեան մէջ կը պակասէր ըմբոստ յառաջադիմութեան ոգին, որով ինքը սահմանափակուած կը մնար իր ժամանակի յառաջադիմութիւն համարուած իրականութեան մէջ, ու խրոխտ մտքով չէր պեղեր Ապագային մթութեան հողը, ուր թաղուած են ապագայապաշտին մարգարէութեան մեծ ազդակները. ուր թաղուած են աշխատութեան ծածուկ սքանչելիքը, որոնք կը կարօտին տաղանդաւոր գերմարդկային ձեռքերուն հարուածին, ու այդ ձեռքերուն հպումովը, նոր յառաջադիմութեան արարչագործութիւններ պիտի ծնին:

Տէմիրճիպաշեան եթէ այդ վեհ գաղափարներով թաթխուած ըլլար, բնաւ իր նման և իրմէ ստորին ու վեր անձնաւորութիւնները պաշտումի կուռքեր չէր ըներ. պէտք է ըսել, որ բարի Տէմիրճիպաշեանը՝ կը չափազանցէ իր գնահատումներուն մէջ: Եւ այդ յատկութիւնն ալ կը վերագրենք իր հիւանդ խառնուածքին:

*
* *

Բանաստեղծ Տէմիրճիպաշեանը մեծ հաւատք ունէր հայ գրագէտին ապագային համար, համոզուած էր որ, ապագային մէջ

հայ գրագէտը կ'ունենայ առանձնաշնորհեալ կացութիւն մը և պատիւ: Եւ ապագան ցոյց տուաւ որ իրոք հայկական ստուար զանգուածին համար, հայ գրագէտը խոշոր յարգանք մը փառք մըն է. այդ բարոյական վարձատրութիւնէն չէ զրկուած ներկայ արժանաւոր գրագէտը. բայց նիւթական տեսակէտով՝ դարձեալ անցեալին խեղճ գրագէտին պէս կը տառապի նոր արժանաւոր գրագէտը: Պարզ օրինակ Արփիար Արփիարեանը. չոր հացի պատառ մը՝ լրագիրներու ծրարին մէջ փաթթած տուն վերադառնալու ատեն՝ մէկ քանի գնդակով կը սպանուի, և զայն անօթի թողնող մեծահարուստ հայ փաշայները՝ միւս օրը անոր ճաղին ետեւէն մինչև Մարմինայի գերեզմանը կ'երթային: Հանգուցեալին մէջ կը յարգէին գրագէտը: Մարմինը լքած էին, իսկ գրիչը վարձատրած համակրանքի և յարգանքի ցոյցով...

« Զի հեռի չէ ժամանակն ուր թագ պիտի դրուի գրագիտին գլխուն վրայ »: Արփիարի վրայ ստուգուեցաւ այս մարգարէութիւնը:

Գրած է « Հայ գրագետք » վերնագրով յօդուած մը, ուր դարձեալ կը տեսնես իր ներքին տանջանքներուն յայտնութիւնը: Այդ հայ գրագէտներուն մէջն է ինքը. զրկուած գրագէտներէն է ինքը, և այնպէս

կը զրէ որ ընթերցողը զթուփեան յորդորէ, և պաշտէ հայ զրագէտը:

Ատեն մը մի միայն ամուրիներուն սեփականութիւնն էր զրականութիւնը. խաչատուր Պուէտ Միսաքեան, Գրիգոր Օտեան, Մկրտիչ Պէշիկիմաշլեան, Պետրոս Դուրեան՝ ամէնն ալ ամուրի՝ և պարապած են զրականութեան, այդ դասակարգէն էր նաև Տէմիրճիպաշեան. ատոնց կեանքը դառնութիւններու հետ ունի զըրկանքներ: Գրագէտին սահմանը ուրուազրելով՝ Տէմիրճիպաշեան միևնոյն ատեն կը գծէ անոր տխուր շրջանակը. կը զրէ բանաստեղծը. « Կենանք այս զրագետ բառին վրայ, որուն նշանակութիւնն այնքան մեծ է՝ որ երկիրն ամբողջ կը պարունակէ, որ երկիրն անսահման կը բովանդակէ: Կենանք ու նայինք ո՞վ է, նայինք ի՞նչ է զրագէտը. ի՞նչ իր ծագումն ու ի՞նչ իր կոչումը, ծնունդն ի՞նչպէ՞ս կ'ըլլայ և ի՞նչպէ՞ս կ'ըլլայ զրագէտին վախճանը: — Համեստ արհեստաւոր մը կայ. նայուածքն ու խնամքն այդ արհեստաւորին՝ մի միայն իր տան ու իր գործատան վրայ կ'ամփոփուին. կ'աշխատի ու իր վարձքը կ'ընդունի, կայսեր տուրքը և Աստուծոյ տուրքը կու տայ մեքենաբար ու հաւասարաբար. եթէ տառապանք կը կրէ մերթ, հալա-

ծանք չի կրեր երբէք. իր աշխատանաց երեկոյց կը քաղցրանան ամուսնոյն ու մանկանց ճողողիւններով, և իր կենաց երեկոյն կը քաղցրանայ կողակցին ու դասերց և ուստերց հոգատար ու հեշտաբոյր ներկայութիւնով: Իր որդեկաց այն խարտեաշ գլուխներուն՝ որոնց վրայ թիթեռնիկներ ու ծաղիկներ, աստղունք ու թռչունք կը սաւառնին ու կը փողփողին, այն զգուելի գլուխներուն մէջ՝ մէկ մը կայ՝ որ երբ հօրը դարձնէ աչքերը՝ կը յուզուի միշտ հայրը, ու երբ մօրն ուղղէ նայուածքը՝ կը ժպտի միշտ մայրը. ու հայր ու մայր չը գիտեմ ի՞նչ անբացատրելի բան մը կ'զգան՝ որպէս զգացին մարդիկ որ գերաբուն էակներ տեսան: » Ահա՛ ամուրի զրագետին ներքին տառապեալ վիճակը, այս ուրազրին մէջ, որոշ կը տեսնենք, խեղճ Տէմիրճիպաշեանի հոգեկան զրկումին տխրունի խոստովանանքը: Բանաստեղծը մի առ մի կը յիշէ որ ամուրի զրագէտը ամէն օրինաւոր վայելքէ զրկուած է:

Վշտացուցէք բանաստեղծները. պիտի տեսնէք որ անոնք զեռ աւելի՞ սրտագրաւ էջեր պիտի արտադրեն. « Յաւը ինչ որ ըլլայ սրտէն եկած է » և քանի որ սրտէն կը խօսի ցաւը, բանաստեղծ հոգին անոր

վրայ մտածելով, մեզի հմայքոտ կ'երևի: Տէմիրճիպաշեան իր վշտահար մէկ պահուն գրած է. « Եւ մեր պատուհանին առջեւ թառօղ թռչնեկէն՝ փետուր մը պիտի խնդրենք մեր հուսկ վայրկենին՝ որով թղթի վրայ մարմնացրնենք մեր հոգոյն անձառ վերացումներն: » Բայց բանաստեղծը թաթխուելով զուտ գրականութեան մէջ, վշտերը կը քաղցրանան, պատճառ կ'ըլլան աւելի սքանչելի գրելու, աւելի խոհականօրէն քննադատելու, աւելի լրջօրէն ուսումնասիրելու:

Հ. Արսէն Բագրատունին՝ միայն անոնք կըրցան ճանչնալ, որոնք որ կարողութիւն ունեցան վերլուծելու անոր տաղանդի մարմնացում հայկաբանութիւնը և գրականութիւնը: Հանճար մը ճշգրտօրէն ուսումնասիրելու համար՝ հանճար մըն ալ ինքն ըլլալու է: Տէմիրճիպաշեան հանճար մըն էր, որով կրնար Բագրատունի Հ. Արսէնին արժանիքը խտացնել հիացումի այս գրութեան մէջ. « Հայր Արսէն Բագրատունին արդէն քանի տարիներէ հետէ կը հանգչի ցուրտ մարմարին ներքև, սակայն կը ճառագայթէ յաւէտ Հայ գրական աշխարհին վրայ: Հայր Արսէն Բագրատունին ինքն առանձին՝ ամբողջ ժամանակակից Հայ մատենագրութիւնն է բոլոր իր

ճիւղերով: Բանաստեղծութեան թէ՛ բանասիրութեան, հին մատենագրութեան թէ՛ նոր մատենագրութեան, Հելլէն հանճարոյն թէ՛ Հորոմ հանճարոյն, թէ՛ Հայ հանճարոյն, իմաստից թէ՛ բառից, երեակայուութեան, թէ՛ ճաշակի, հոգոյ թէ՛ մտաց վրայ խօսելով, այսօր առհասարակ Հայ գրականութեան մէջ Բագրատունոյն հեղինակութիւնն ի վկայութիւն կը կոչուի: Եւ շարունակելով գնահատումի տողերն կը վերջացնէ իր գրութիւնը՝ Բագրատունին կոչելով « Իննեւտասներորդ դարուն Հայ Գրագիտաց Հայրն. ազգային մատենագրութեան վերանորոգիչն: » Եւ այս արտայայտութեան մէջ՝ բնաւ չափազանցութիւն չեմ տեսներ: Արդար արժանիքի իրաւացի փառաբանութիւն մըն է:

Տէմիրճիպաշեան իր արտայայտութեանց մէջ անկեղծ է, ընդհանրապէս միամիտ, երկդիմի քողարկեալ բացատրութիւններ չի սիրեր. զգացածը կը յայտնէ անթերի պարզութեամբ: Միայն թէ երբեմն բանաստեղծին սիրտը և լեզուն թէև համաձայն ու ներդաշնակուած կ'ըլլան, սակայն իրականութեան մէջ գործը զգացմունքին հետ կապակցութիւն չունենար:



Տէմիրճիպաշեանը ճանչցողները կը փաստաբանեն որ, ան միշտ ապրած է պղատօնական սիրով: Կը դրուատէ կինը, կը դրուատէ սէրը, կը դրուատէ գեղեցկութիւնը, միտքը սակայն՝ միշտ բարձր գաղափարական մաքրութիւնէն չի ստորնանար: Իր միամիտ կարծիքով. « Այն ընկերութիւնն, ուր բարոյապէս պակաս է կինն, այդ ընկերութիւնն անկենդան է»: Ընկերութեան կատարելութիւնը երաշխաւորուած է, եթէ ան՝ սիրտ ունի, զգացմունք ունի, և դէպ ի գեղեցիկը մաքուր պաշտամունք: Տէմիրճիպաշեան կնոջ համար կ'ընէ նաև այս պարզամիտ նմանութիւնը. « Արդարև հոգի է կինն, և մարդկութեան հոգին է կինն. արդարև ջուր է կինն, և իր ծոցոյն մէջ և իր դիմաց վրայ կը ցոլացնէ՝ զերթ Ովկէանն՝ երկնից երևելի և աներևոյթ գեղեցկութիւններն: Վայ այն մարդուն որ չըմպեր այդ կենդանագործ հեղուկէն, այդ հրաշագործ ջուրէն. վայ այն մարդկան, վայ այն ժողովրդեան՝ որք չեն ազդուիր այդ ամոքիչ, այդ զմայլիչ՝ այդ արարիչ հոգիէն... » Ու նման զառանցանքներ կը շարունակէ, կ'ուզէ նոր գիւ-

տերով դրուատել կինը, բայց գեղեցկագիտական ձեւերով տղայամիտ կը հանդիսանայ, անյաջող, անախորժ և ծիծաղելի:

Միամիտ Տէմիրճիպաշեանը՝ ունի անմեղ մանուկի հոգին, համակրութեան ծովմըն է: Կը ցաւիս թէ ինչո՞ւ հիւանդութիւնէն մղուած՝ անհաւասարակչիւ խորհրդածութիւններ կ'ընէ, ու միշտ ներողամիտ ըլլալու տրամադրութեամբ կը կարդաս իր գրութիւնները, որոնք անհաստատ ո՞՞ մ'ունին՝ թէ՛ գաղափարով, և թէ՛ ձեւով: Այդ դասակարգի գրութիւններէն է « Տէ՛ր սիրսմեայ Հայուն » տխուր խորհրդածող այս պատմուածքը. « Երէկ զիշեր՝ օրագիրս սխալմամբ ուրիշ տեղ տարուած ըլլալով և զիշերները ուրիշ աշխատութիւն կատարելու սովոր չըլլալով՝ պատուհանին առջև նստած խոր խոհանաց մէջ ընկղմած էի: Տրտում ստուերք՝ արտասուաթօր իմ աչացս առջեւէն՝ կ'երթեւեկէին լոին. ստուերք մահուան՝ տրտաթախիծ իմ հոգւոյս վրան՝ գոցցես կը տարածուէին հեշտին... »

Բու մը, բուն աւերակաց ու բուն գերեզմանաց, լսեցուց՝ զիշերային լուսեան մէջէն՝ իր գուժածայն վայումն: Եւ ահա մօրաքոյրս, կին աստուածապաշտ և աւելորդապաշտ, կին սպիտակ սրտով ու սեւ-

ւաթիւ տաղանդաւոր գրագէտներուն մէջ՝
Տէմիրճիպաշեան ունի իր պատուաւոր տե-
ղը: Իր այս փառքը ո՛չ ոք կրնայ նսե-
մացնել:

Իր վիպական միջակ գրութիւններէն
կարելի է համարել «Նահատակ մը ըն-
տանեկան կեկաց մեջ» վերնագրով. մայրը
լաւ չի կրթեր իր Տիգրան զաւակը, որ
անճնասպան կ'ըլլայ: Ընտանեկան դաս-
տիարակութիւնը պակաս ըլլալով՝ Տէմիր-
ճիպաշեան կը յորդորէ որ ծնողք ատոր
կարեորութիւն տան: Տաղտուկ պատճառե-
լու աստիճան կրկնութիւններ ու ճապաղ
ոճ մը կը տիրէ այդ գրութեան մէջ:

ՍԻՐԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

1886 - 1889

Նորագոյն բանաստեղծ Պ. Հրանտ Նա-
զարեանցի շնորհիւ, առանձին հատորի մը
մէջ ամփոփուած կը տեսնենք՝ Ե. Տէմիր-
ճիպաշեանի սիրային նամակները:

Թուրքահայ գորգները, մանաւանդ ժա-
մանակակից նորերը, այդ հանրագիտակ
միտք՝ Տէմիրճիպաշեանի մասին, յատուկ
գուրգուրանք մ'ունին. հիներէն մոռցուած
էր ան, թեթեամտութեամբ. նորերէն գնա-
հատուած է՝ ամենամեծ արժանիքով:

Պ. Լէօ գրագէտ բարեկամս, որ մը ինձի
կ'ըսէր, թէ իրենք կովկասահայերը ծա-
նօթ չեն Տէմիրճիպաշեանի. և ինչո՞ւ,
վասն զի Ռուսահայոց մէջ, անոր մասին՝
նպաստաւոր խօսողներ չեն եղած: Գրագէ-
տին մեռնելէն վերջը, տեսրակներով՝ ա-
նոր նշանակութիւնը շեշտեց թուրքահայ
մամուլը. բայց մինչև որ իր գործերուն
լիակատար հրատարակութիւնը չի հրա-
պարակուի, տակաւին Տէմիրճիպաշեան ան-
ձանօթ կը մնայ: Երկու հրատարակչական

մարմիններ կան (Ռուսաստան և Կ. Պօլիս) չեմ գիտեր որք արդեօք նախանձախնդիր պիտի ըլլայ, հին գրողներու ցանուցիբ գրականութիւնը հատորներու մէջ ամփոփելու: Լուրջ գործեր շատ կան, իսկ լուրջ մտածողները քիչ, շատ քիչ...

*
* *

Մանօթանանք այս նոր հրատարակութեան: Հրատարակիչը Պ. Հրանտ Նազարեանց, այդ սիրային նամակներուն իբր նախարան. ունի մէկ քանի էջ գրութիւն, ուր Տէմիրճիպաշեանի մտաւորական նշանակութիւնը՝ կուսորէն քանդակուած է: Իբր բանաստեղծ՝ Տէմիրճիպաշեանի այնքան չափազանց գովեստներ շոյլելու չենք. և սակայն Պ. Նազարեանց հիացումին մէջ չկրնալով սահմանափակուիլ, Տէմիրճիպաշեանին համար կը գրէ. «Ճամանակակից հայ բանաստեղծութեան պատմութիւնը իրմէ հսկայ ու շքեղ գիսաւոր մը չունեցաւ արձանագրելիք իր վտիտ էջերուն մէջ»: Այդ խօսքը կարելի էր ըսել, եթէ ժամանակակից ծանօթ բանաստեղծներու՝ բաղդատական ուսումնասիրութիւնը կատարուած ու վճռուած ըլլար, և սակայն երիտասարդ յարգելի բանա-

ստեղծ հրատարակիչը՝ գիտէ արդէն, որ տակաւին կան ժամանակակից մեռած բանաստեղծներ, որոնց գործերը անծանօթ են, ու ցրուած լրագրութեանց մէջ, որոնք օր մը լոյս տեսնելով, դիւրին պիտի ըլլայ որոշելը, թէ ինչ աստիճանով՝ գնահատուելու են այդ քնարներու տաղանդը: Ուրեմն առ այժմ, բաղդատական գրականութեան սպասենք:

*
* *

Հետաքրքրականը՝ այս հատորին հոգեբանութիւնն է: Հրատարակիչը ինքնին կարող է պայծառ զաղափար մը տալ աւոր բովանդակութեան վրայ: Յառաջ բանին մէջ, Պ. Հրանտ Նազարեանց՝ կը գրէ, «Եղիային արկածախնդիր և թափառիկ կեանքին մէջ եզական էջ մը կը գրուէ այն շրջանը, զոր 1886էն 1889ը ապրած է մեծանուն Փաբլըր՝ սիրային յարաբերութիւններու յանձնուած: Այդ շրջանը որ կը կազմէ Եղիայի սիրային կեանքի մէկ զրուագը — որովհետև ան միակը չէ եղած — արտադրել տուած է իրեն զմայլելի գրական էջեր նամակագրութեան ձեւով, ուղղուած իտէպաշտօրէն սիրուած աղջկան մը՝ Սրբուհիին: Անոնց

մէջ Եղիա կը ներկայանայ իմաստասիրող բանաստեղծի բարձր թռիչքով զոր Սէրը ալ աւելի վսեմացուցած է: Ամէն անոնք որոնք Եղիան պիտի կարգան՝ պիտի գտնեն այդ նամակներուն մէջ Նիրվանային գաղափարովը տուայտող, բայց նաև կեանքի տենչանքին համար՝ հատնող բանաստեղծին հոգեկան վրդովումներուն սրտաճմլիկ զգայութիւնները: »

Քերթողական միտքը, ընդհանրապէս իր բանաստեղծի երակէն, է՛ն հրապոյր հոսանքը՝ սիրահարական նամակներու մէջ թափած է: Տիւսար, Գրիգոր Օտեան՝ այդպիսի նամակներու մէջ, ցոյց տուած են իրենց բանաստեղծի խառնուրդը: Բայց պէտք է գիտնալ, որ բանաստեղծին սիրահարութիւնն ալ, բանաստեղծական է. իբր սովորական նիւթապաշտ սիրահար մը համարուելու չէ ան: Պ. Հրանտ սքանչելի վերլուծում մը կ'ընէ իր սա տողերուն մէջ. « Կը սիրէ կինը երբ ան իրեն չէր որ կը նայէր, բայց երբ այն իր հրամայուած բիբը կը սեւեռէր Եղիային գեղեցկապաշտ հոգիին, Նիրվանապաշտ մեծ նակեացին գլուխը ակամայ շարժումով մը կը հակէր դէպ ի աջ, դէպի Պարապը՝ Պուտայի գերագոյն հանգստարանը Նիրվանան՝ ամէն բանի բացարձակ վախճա-

նին, մինչ կեանքը կը զեռար իր ձախ կողմը: Եղիա կը հաւատար թէ հաղորդակցութեան և իրական հպումին մէջ, սէրը խոյս կու տայ: » Եւ այս սէրը անծանօթ է նիւթապաշտ սիրահարներուն: Եւ սակայն այդ իսկ է բուն սէրը, որուն լուռ ձայնին մէջ, ներդաշնակութեան նուազը երգի ջրվէժներ ունի, հոն բանաստեղծին հոգին կը լուացուի սքանչացումով:

Բանաստեղծերը և բանասէրները ընդհանրապէս կենդանիներուն վրայ յատուկ սէր մը ունին: Խեղճ Տէմիրճիպաշեան խելագար մը համարուած է, էջը սիրելուն համար: Բայց զիտէք որ է՛ն լուրջ, է՛ն ծանրախոհ պատմաբանը Ռընան, իր երկարաշունչ պատմական և քննական գործերը պատրաստելու համար, միշտ իր կատուն իրեն ընկեր պիտի ըլլար: Ու պէտք չէ մոռնալ, որ Փեթրարբայի է՛ն հարազատ մտերմուհին Լավուրան չէր, այլ իր կատուն, որ տակաւին գմուսած կը պահուի Սըքուա՝ բանաստեղծին սենեակին մէջ:

Եւ ինչո՞ւ Տէմիրճիպաշեանն ալ չի սիրէր էջը. ինչ աստիճան էր այդ սէրը. բանաստեղծը երբ յիշէ իր Հասգիւղը, սիրունիները և հուրիները միտքը չեն խնար,

այլ իր սիրահար էջը: Մտերմունի Սրբուհիին կը գրէ.

« Եւ երբ լսեմ Հասգիւղ անունն, նախ ինչ կը յիշեմ, գիտես: Թերեւս ըսես « գիտեմ ո՞վ կը յիշես »: Չը գիտես, Սրբունի, չը գիտես թէ կը յիշեմ մեր... էջն: Ինչ յարում է զոր մարդ ունի կենդանեաց: Հէգ եղբայրս... և ես, այն իշուն շուրջ կը դեգերէինք, մեզ համար տեսարան մ'էին իր շարժուն ականջը, զորս կը տնկէր, երբ խոտ կերած ժամանակ իրեն մօտենայինք, կից կ'ուտէինք, այլ կը սիրէինք մեր էջը: Երբ նստած գտնէինք զայն ախոռին մէջ մինաւորիկ, խոհուն այլ ժպտուն առ յաւէտ, կը հրճուէր. երկիւղիւ կը մօտենայինք կենդանւոյն և կը փայփայէինք իր երեսն: Եւ ահա Խրիստոն կուգար, հայտէ մեր էջն առջին կը ձգէր ու պօստան տօլապիին կը կապէր. կ'աղաչէինք որ չը կապէ աչքերն ալ. քիչ մը կ'անցնէր, կ'աղաչէինք Խրիստոսին որ ալ քակէ հանէ խեղճ կենդանին « Յոգնեցաւ » կ'ըսէինք: Եւ մեզ համար անգութ մարդ էր պարտիզպանն, որ կը թողուր ժամերով պօստան տօլապիին շուրջ դռնալ մեր սիրելի բարեկամս... »:

Տէմիրճիպաշեան իր այս տողերուն մէջ, աւանակին վրայ չափազանց զթուլթիւն

ցոյց կուտայ. անասնասիրական գուրգուրանք մը միայն իր սրտին մէջ չի բարախեր, այլ այն ամեն անոնց, որ յատուկ ընկերութիւն մըն են կազմած՝ անասունները իբր մարդ խնամելու. չէ որ Եւրոպայի, մանաւանդ Անգլիոյ մէջ, անասուններու յատուկ ծերանոց, հիւանդանոց և նմանօրինակ զթուլթեան վայրեր շատ կան աւանակներու համար. Տէմիրճիպաշեան իր գրգուրանքներովը այդ ընկերակցութիւնէն համարուելու է. ինքը կ'ուզէ մեկնել անասնասիրութեան հոգեբանութիւնը.

« Ինչ է այս յարումն զոր ունին մարդիկ առ կենդանիս, և ոչ միայն մանկունք, տղայ մարդիկ, այլ չափահաս մարդիկ ալ. Սրբին սէրը իր ձիուն համար, Պայրընի սէրն իր իշուն... Ինչ կ'ըսեմ, իր շունին համար: Մենք շուն ալ ունէինք, ազուորիկ կատու ալ, աղանիներ ալ՝ հաւեր ու վառեակներ ու ձիեր ալ, բայց նոյն իշուն նայուածքն ինձ խանդաղատանք կ'ազդէր: Դպրոցէն վերադարձին անհամբեր ախոռն ուղղակի կը վազէի, չեմ ամաչեր խոստովանելու զայս, մանաւանդ կարողալէ յետոյ վիգտօն Հիւկօյի մէկ սքանչելի հատուածն՝ ուր կը հաստատուի խոնարհ չորքոտանւոյն մար-

դոց վրայ առաւելութիւնն իբրև բարեսըր-տութիւն, մանաւանդ կարդալէ վերջ ԲՕԼ Հէյզի Առանակն: Ահ միայն վերջեր կար-դացած ժամանակ այնքան շերմ արտա-սուք թափած եմ, որքան երբ ընթերցայ գերման սիրուն վիպասանին այն փոքրիկ-մեծ-գլուխ-գործոցն՝ Առանակն: Իմ իշուս վրայ ալ լացի միանգամայն: — Եւ զի-տե՞ս, Սրբուհի, ո՞ւմ հետ կ'ուզէի երես երեսի հանգչիլ տապանին մէջ, ո՛չ քեզի հետ՝ որպէս տեսած ես խորհրդաւոր երա-զիդ մէջ, — այլ իմ իշուս հետ...»

Սա կատարեալ անասնասիրութիւն է. տեսէք իր էն մտերմուհին ալ ոտնակոխ կ'ընէ, և էշին սերը գերազանցօրէն շատ բարձր կը բռնէ: Իր այդ սիրոյ մէջ, ինչ-պէս նաև իր ամէն խուռն զգացմունքնե-րուն մէջ Տէմիրճիպաշեան բացարձակօրէն կը չափազանցէ. այդ հիւանդութիւն է, տեսակ մը հոգեկան անհաւասարակշռու-թիւն որ իր վրայ նկատուած է միշտ:

Գրագէտ ընթերցողներս կը յիշեն ան-շուշտ, որ Ալեքսանդր Տիւմա ալ ունէր իր սիրահար անասուն մը կատուն, որուն ա-նունն էր Միզուֆ, շունէն աւելի ընտանի և տիրասէր, կարելի է չի սիրել այդպի-սինները:

Մի առ մի կը թերթեմ Տէմիրճիպա-

շեանի այդ նամակները՝ սիրոյ լարին հետ, կը թրթոյ նաև բանաստեղծական հոգին՝ այն տպուած էջերուն մէջ:

Իր ներքին կեանքին հայելին կը տես-նենք անոնց մէջ: Բանաստեղծը իր և իր սիրածին վրայ մտերմօրէն կը խօսի. գաղտ-նի նամակներուն մէջ, քնար հոգիներուն էն անկեղծ հոգեբանութիւնը քանդակուած է:

Բանաստեղծը՝ գեղեցկագիտականին մէկ յաւիտենական ծաղիկն է, բանաստեղծը մոգելու և հրապուրելու համար ստեղ-ծուած է, ուրեմն շատ լաւ է ըսած նոյ-նինքն Տէմիրճիպաշեան:

«Չէի ծնած ես՝ ուսոցս վրայ թուղթ կրելու, զբիշ շարժելու, մեկն լզելու հա-մար, ծնած էի՝ եթերին երգածայն բնակ-չաց նման՝ թեոցս վրայ տանելու արփ-ւոյն շողն և ըմպելու երկնից շողն, և շարժելու համար գարնանային թերթից ու դիմաց փափուկ աղուամազն: Ես թռչուն ծնած էի և բուռի նման խաներու մթին խուցերուն մէջ կ'անցնեմ իմ թանկագին կեանքս:»

Բանաստեղծը ինքնին աւելի կրնայ զը-նահատել իր անձին նշանակութիւնը, քան ո՛նէ ուրիշ մը: Տէմիրճիպաշեանին համար, իր կեանքը թանկագին է, սակայն ո՞վ

ըմբռնեց անոր արժանիքը, եղեռնական մահը իր արհիւն մէջ ճզմեց զայն. բանաստեղծը որ արժանապէս չի գնահատուիր, բնական է որ օրին մէկը ան կը խեղդուի յուսահատութեան ալիքներուն մէջ: Այդպէս եղաւ Տէմիրճիպաշեան:

*
* *

Ինձի ըսած են իր ժամանակակից բարեկամները, որ ան իբր վարժապետ, շատ սիրելի էր. ունէր շաքար բնաւորութիւն, և գուրգուրացող հոգի, ատոր վկայ են իր սա տողերն:

« Հոն, այն բանաստեղծական միջավայրին մէջ, կը շնչեմ յաւէտ համասարմեան օդ և կ'ըմպեմ նեկտար զովարար անմահարար. կը խօսիք դուք, դաս կ'ըսեն անոնք. ոմն կը գծէ, ոմն կը գրէ, այլ ոմն կը մըմնջէ, և ամենուզ մատանց տակ և ամենուզ շրթանց վրայ կը շրջի երգն որ հոգւոյս մէջ մեղր կը շինէ: »

Այդ քաղցր յիշատակներով ապրած է բանաստեղծը, ատոնց հետ գնացեր թաղուեր է իր Նիրվանային յաւիտենականութեան մէջ...

Բանաստեղծին համար՝ հաճելի է առանձնութիւնը, այն ատեն է որ իր միտքը

մաքուր ու ջինջ՝ կը ցոլայ, և զգայուն պաստառի մը պէս, իր վրայ կը տպաւորէ՝ գեղեցիկը ու բարին. և այն ատեն է որ, մտածութիւնները երգի անուշութեամբ կ'անձրևեն իր հոգիին վրայ: Տէմիրճիպաշեանի մը պէս բանաստեղծը, պիտի սիրէր առանձնութիւնը. իր սա տողերով փառաբանած է զայն:

« Պիտի ըսեմ, թէ ոչինչ աւելի կը սիրեմ քան առանձնութիւնն, որ ինձ կը պարգևէ իմ յիշատակներս, երէկի ու աւելի հին ժամանակի յիշատակներս, մանկութեան ու պատանութեան յիշատակներս: Ոսկի շղթայ մ'է այն, որ որորանէն գրեթէ կը սկսի և գերեզմանին կը յանգի: Եւ այդ շղթայն՝ ոյր մէն մի օղակին վրայ թռչուն մը կը թառի՝ այդ դիւթական շղթայն առանձնութեան մէջ իմ աչացս կը փայլի: Եւ մարթ էր որ չի սիրէի առանձնութիւնն »:

Ու առանձնական այդ վայրկենին, իր մտերմուհիին կը գրէ, սրտանց խօսքեր, բայց ոչ սիրային խօսքեր. մեռելները կ'արթնցնէ և իր էութիւնը Աստուծոյ առջև ալեկոծեալ կը շարժէ:

Բանաստեղծին կեանքը շատ բարձր է. ան պէտք է ամպերուն մօտ գարշանքէ հեռու, մաքրութեան մէջ ապրի, սակայն

առօրեայ պահանջները զայն կը կապեն ստորնութեան հետ. ու պահանջը բռնակալ մը կ'ըլլայ. այդ առթիւ կը գրէ Տէմիրճիպաշեան.

«Ո՛հ, որքան կը փոքրանայ, կը նուաստանայ մարդն՝ իրական օրըստօրէական կենաց մէջ. մեր ոտից տակ տիղմ կամ փոշի, մեր շուրջ սեղանաւորի սեղաններ՝ ոյց վրայէն Մամոնայ դիքն ոսկեծիծաղ կը հեզնէ մեր ազատութիւնն. անարժան էակաց առջև կը խոնարհինք, հալածեալ կամ անտեսեալ արժանաւորին զողունի ողջոյն մը հագիւ կրնանք տալ»:

Եւ արդէն ո՞ր բանաստեղծ սիրտ չէ զգացած գերութիւնը — հարուստին առջև: Եւ ինչպէս չի համոզուինք, որ դրամին պէտքը շատ անգամ ստորնացուցիչ ճամբաներ կը բանայ...

Տէմիրճիպաշեան իր սիրածին նամակներուն մէջ, փոքր կայծերու պէս կը հըրավառէ սիրոյ գաղափարը, երբ խնդիրը մաքուր իտէալ՝ սիրոյ վրայ է, լեզուն ներդաշնակութիւն է ամբողջովին. կը գրէ. «Սիրոյ վրայ խօսիլն ըսուած է «սիրել է»: Սիրոյ վրայ վիճելն ալ՝ կ'ըսեմ ես՝ սիրել է»: Սակայն երբ կ'երազէ նիւթական սէրը, այն ատեն իր քնարը կը խոպոտի, կը խոռվի ու ողջմտութեան սահմանէն դուրս ելած կը զառանցէ:

«Ի՛նչ զգացում կ'ունենայ երիտասարդն, երբ խումբ մը կուսանք շնորհագեղ և ամօթլեաց դիմաւորեն զայն՝ դաշտի մը կամ դրախտի մը մէջ. — Սէր այդ կուսանաց միոյն համար: Ա՛հ, ես, որ շատ ժամանակէ ի վեր ծեր եմ արդէն, մոլեգին կըլիւր կը բոցավառիմ, կ'ուզեմ ակուսներս իրենց մարմնոյն մէջ անցնել, կ'ուզեմ իրենց բերնին մէջ աւազ լեցնել, կ'ուզեմ իրենց ծիծերուն ծայրէն լուցկիւքս վառել և իրենց խիտ գիսակն հրդեհել՝ ամենուն ալ, այո՛...»:

Խեղճը այդ պահուն, ինքզինքը կը նկատէ հոգեկան հրդեհի մէջ, և ամենուրեք կ'երեւակայէ ունենալ հոգեկան հուրին հետ, նիւթական հուր և հրդեհ:

Տէմիրճիպաշեան պատասխանատու չէ իր ցնորքներուն...:

Գեղեցիկ գրականութեան և արուեստի վարպետներն, ընդհանրապէս այն ատեն միայն կրցեր են երևակայութեան թելադրութիւններէն օգտուիլ, երբ վիշտը զրգը՝ ուսած է անոնց միտքը. շատ անգամ վիշտն է որ կ'ըլլայ բանաստեղծին և երգահանին, կամ նկարչին գեղարուեստի մենտորը:

Ըսածս ճշմարտութիւն է. այս առթիւ իբր փաստ կ'արտագրեմ Տէմիրճիպաշեանի սա տողերն:

« Եթէ շիրմին մէջ դեռ գիտակցութիւն պիտի ունենայ մարդ, հոն չէի ուզեր հանգչիլ իմ երկրպագած էակներէս ո՛չ միոյն հետ. ո՛հ, կ'ուզէի գերեզմանին մէջ երես երեսի հանգչիլ վիշտին հետ, որուն միայն թերես պարտիմ Քնարս. իսկ եթէ՛ հակառակ աղերսանացս՝ վիշտն իմ շըրթանցս զլանար իր աստուածօրէն տփոյն այտերն և թեւոցս զլանար իր ճառագայթներէն նուրբ հասակն ի վայելումն յաւերժ գերեզմանին, յայնժամ, այո՛, կ'ուզէի իմ Հասգիւղի իշուս, իմ մանկութեան անմոռանալի բարեկամիս հետ երես երեսի նընջել ի գերեզմանին: « Քնարն » ըսի. կ'աճեալ եկաւ այդ բառն: Երկարագոյն համանիշն յիշեմ, բանաստեղծութիւն: Վշտին, այո՛, պարտիմ բանաստեղծութիւնն, որ իմ կեանքս է, որ զիս սիրելի կը կացուցանէ գերագոյն էակաց, որ եւ քեզ սիրելի կացոյց զիս, ո՛ Սրբուհի, ճառագայթի մը նման նուրբ, լուսատար, երկնային Սըրբուհի: »

Գծրաղբարար Տէմիրճիպաշեան վիշտը վէրթերեան հիւանդ թեւադրութեամբ սընուցեր է իր մէջ. և այդ վիշտը զինքը մէկ քանի անգամ անձնասպանութեան մղած է. վիշտը այնպէս ըրած է որ ինքը այլևս ատած է կեանքը. իր մէկ նամակին մէջ Սրբուհիին գրած է:

« Երբ ի Գատըքէյ գերմարդկային ջանքերով զիս ազատեցին մահուան թմբիրէն, պահապան զինուոր մը՝ ազնիւ անձ՝ քաղցր ձայնիւ հարցուց թէ ինչո՞ւ ծով նետուցայ... Պատասխան տուի. « Զի կեանքէն զգուած էի, և յաւէտ զգուած եմ կեանքէն... »

Սխալ գազափար. վիշտը գերեզմանի դուռը բանալու չէ, այլ ընդհակառակն գայն կեանքին համար պահելու է. զի վիշտը կը կազդուրէ կամքին տկարութիւնը, ու փորձառութիւնը կ'ամրացնէ, և նոյն վշտով է որ ապրած են բանաստեղծները ու արծարծած են քերթողական կըրակը:

Սրբուհիին հետ կը ճառէ սիրոյ վրայ, մանուածապատ մտքեր ունի. ինքը երջանկութեան մէջ չունի ուրախութիւն. երջանիկները իրեն համար թշուառ են. բանաստեղծական ըմբռնումներով իրաւունք ունի սապէս գրելու:

« Աշխարհս իր աշուններով, իր վերջալոյսներով, իր գերեզմաններով աւելի հրապուրիչ է քան իր վարդերով ու վարդագոյն աւտաներով, ու սուլթանական ալհամայրաններով: Երջանկութիւն: Բայց երջանկութիւնն հեծկտուք ունի, մինչ սէրն հառաչանք ու հեծեծանք: Եղկելի՛ էակ է

այն, որ այլևս պատճառ չունի հառաչելու, հեծեծելու:»

Բանաստեղծին համար հառաչանք ու տառապանք միշտ կարևոր են:

Մէրը հիւանդացուցեր, հիւժեր և ծակ-ծկեր է Տէմիրճիպաշեանի հոգին, սեւ հիււանդութեան մէջ կը տառապի: Սրբուհիին հետ սիրոյ վրայ կը խօսի, նամակները ամբողջ սիրոյ մէջ թաթաղուն են, սակայն միշտ պղատոնական սէրն է որ իր մէջ կ'ապրի, իր մէկ գեղեցիկ նամակովը կը գրէ իր Սրբուհիին:

«Եթէ այն աշուններէն մին՝ որք մահաշըջնէ կ'անցնին գլխոյս վրայէն՝ զիս ալ հողմավար թերթին հետ տանէին ու մութ փոսին մէջ նետէին, անշուշտ կ'արտասուէիր վրաս, բայց սուգդ յաւիտենական չէր ըլլար. զի մեր շրթունք իրարու չհպան դեռ, և սիրոյ արտասուքն, ո՛հ, քառեակ այտից կազմած փոսին մէջ չը լճացան դեռ: Հոգեկան սիրոյ մեծութիւնըն ո՛վ կրնայ պատմել, սակայն ո՛վ կըրնայ ժխտել հպման հեշտութիւնն՝ որ կը հատանէ թերևս սիրոյ թելերն, այլ որ կաթնաւէտ լոգարանի մէջ կը վերանորոգէ զայնս:»

Տարտամ մտքեր. չէ՞ որ բանաստեղծները երբեմն յեղյեղուկ գաղափարներու

մէջ կ'ալեկոծուին ու կը կորսնցընեն ողջ-մտութեան պայծառ հորիզոնը:

✱
✱ ✱

Տէմիրճիպաշեան կը սիրէ վարժարանը, կը սիրէ վարժապետը, կը սիրէ աշակերտները, բայց կը սոսկայ այդ ծանր արուեստին ապերախութենէն. իր սիրային նամակներուն մէջ ստէպ կը խօսի վարժապետութեան վրայ և դառնութեամբ կը բացատրէ վարժապետին թշուառ կացութիւնը, միևնոյն տխուր վիճակին մէջ գտնուած է նաև ինքը: Կը մերժէ կեղրոնական վարժարանի մէջ գրականութեան դասախօսութիւնները. կը գրէ.

«Ութսուն երկու աշակերտներէ բաղկացեալ երկու տարի գրականութիւն ուսուցանել, ամեն անգամ սրբագրելու համար ութսուն երկու շարագրութիւն գրուպանդ դնելով և ընդունիլ տարին 40 ոսկի: Շաբաթը երկու ժամ միայն դաս, այո՛, բայց պէտք է առ նուազն 24 ժամ գոհել սրբագրութեանց: Ժամը քանիի կուգայ, հաշուէ: Անհաւատալի կը թուի թէ Պէրպէրեանի նման ուսուցիչ մը յանձն առած է՝ սոյն պայմանօք դասախօսութիւն, գրաստ ու գրագէտ նոյն նշանա-

կութիւնն ունին մեր ազգին համար, ծառայ և վարժապետ նոյն յարգն ունին մեր մեծատանց համար... » :

Տխուր է այս նկարագրութիւնը, սակայն դժբաղդաբար իրական ճշմարտութիւն է, մեր վարժարաններուն մէջ տակաւին շատ նուազ է ուսուցիչին վարձատրութիւնը. մեր մեծ-աղայներուն գլուխին մէջ վարժապետը տակաւին միջակ գաղափարով կ'ըմբռնուի: Ու դարձեալ դրամը իր անարգ նշանակութեամբ կը ճնշէ մտքին և մտաւորական վառարաններուն վրայ: Տէմիրճիպաշեանի դարը փոխուած չէ...

* * *

Տէմիրճիպաշեան ինչ որ է իր քերթուածներուն և վիպասանական գրականութեան մէջ, նոյն գեղեցիկ ցնորակոծ հոգեբանութիւնն ալ՝ ցոյց տուած է իր սիրային նամակներուն մէջ:

Իր հոգին երևակայութեան ճոխ գոյներուն մէջ՝ մանուածապատօրէն թաթաղուն, յուզուած ու չարչարուած կը ներկայանայ:

Իր ալեկոծութիւնը մեծ է, իր տառապանքը՝ անկարեկիր. անագորոյն՝ հոգե-

կան հիւանդութիւնը. իր մէջ լեռնացած են կէանքին հարուածները՝ և խաչի չափ արիւնոտ և անոր համար այդ խաչին առջև ինքը հեթանոս մըն է:

Ու Տէմիրճիպաշեանի ներքինը ծանօթացուցին իր սիրային նամակները:

* * *

Տեսանք մինչև ցարդ որ Տէմիրճիպաշեան գրական ամէն նիւթերու վրայ գրած է, անընդ միտք մըն է եղած, և իրեն շատ անգամ պակասած է մտքի և դատողութեան պայծառութիւն: Նախադասութիւնները գեղեցիկ կը ներկայացնէ, բայց վերջնական ձեւ մը չի տար գրուածքին ամբողջ զանգուածին: Ամէն պարագայի մէջ յայտնի է ըրած իր բանաստեղծական սիրուն բնաւորութիւնը, և յայտնած է բեղմնաւոր գիտակցութիւն մը հանրագիտակ ծանօթութիւններով:



ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Ա.

Սև հովը փոթորկացած կը մարէր կեանք մը ևս. երբորդ եղբայրասպան հարուածը մահացու էր: Եւ Արփիարեան Արփիար իսպառ կ'անհետանայ իր ոսոխներու աչքէն:

Ան կը կճէր, սուր, թունաւոր էր անոր խայթը, և մահացու: Խողխողողը՝ արժանի է անմահներու Պանթէօնին: Ու չեմ գիտեր, արի՞ն թէ թարախ կը հոսի սրտերէն կարգ մը այն յեղափոխականներուն, որոնք զգուելիօրէն կը յանդգնին պղծելու սուրբ անունը յեղափոխութեան:

Անցեալ դարու կէսէն՝ ազնիւ հոգի Պէշիկթաշլեանը՝ ձուլեց կոփեց ոսկի շղթան եղբայրութեան: Անդին կովկասէն՝ Նազա-

րեանց, Նալբանդեանց, Արծրունին՝ հիմնեցին ու բարձրացուցին աշխարհաքաղաքացի գաղափարականին կաճառը. և սքանչելիօրէն քաղաքակրթական շաւղէն սկըսանք արշաւել. միութեան, համերաշխութեան զօղը ամուր էր, ձեռք ձեռքի տուած՝ կ'աշխատէինք: Եւ զիւթական էր մեր յառաջադիմութիւնը. զուտ ազգասիրութիւնը և ազատամտութիւնը այդ համերաշխութեան ծնունդներն են: Անոնց խորթ զաւակներն են հիմա զիրար մորթող զիմաւաւոր յեղափոխականները: Եւ անտարակոյս յեղափոխազան լուրջ մարմինը վերջի վերջոյ լախտը կը շարժէ ոճրագործ զինով վարագներու գլխին վրայ. և հուսկ ուրեմն կը դադրին գայթակղական նենգութիւնները և իսպառ կը զոցուին եղեռնական տեսարանները: Եթէ իրօք կան հասարակութեան մէջ ջնջուելիք դէմքեր, թողունք յեղափոխական կուսակցութեանց կեդրոնական մեծ վարիչներուն. իրենք թող դատախազեն ու կտրեն վճիռը անարժան մատնիչ հայերուն. պատուհասելէն առաջ՝ պէտք է պաշտօնապէս հրատարակուին դատապարտեալին յանցանքները, ցոյց տրուին անոր ազգատեաց գործերը հաստատ փաստերով. առանց այսօրինաւոր միջոցներուն, երբ զաղանի ու

լուլեայն սպաննութիւններ տեղի ունենան, ինքնին զարշելի ոճրագործութիւն է եղելութիւնը, դատապարտելի ազատութեան, արդարութեան և համերաշխութեան հոգիներէն:

Ոճիր մը, այլանդակօրէն տօնքիշօտական սխրագործութիւն մը կը համարիմ՝ Արփիարեանի մը պէս սովատանջ, լքեալ անձնաւորութիւն մը դիտապատ անշնչացնելը: Ամբաստանուած էր, անսիրելի էր, և մահուան դատապարտուած, ցանկալի է սակայն առանց կեղծիքի դրակուն ապացոյցներ հրատարակուին, իր մատնչութեան մասին. նոյնիսկ ընթերցողաց մէջ՝ Արփիարի քաղաքական դերակատարութեան վրայ՝ կը գտնուին անտարակոյս իմ համոզումիս ներհակ մտածողներ: Ամեն պարագայի մէջ թէև այլ ևս ուշ է, սակայն փափագելի է միշտ լուսաւորուիլ:

*
* *

Արփիար-մարդը:

Վենետիկէն ելած՝ Հ. Ալիշանի աշակերտը չստորնացուց զրիչը. ազնուական բանակուող, յամառ իր ըմբռնումներուն մէջ. ինչ որ հայկական էր՝ Ալիշանէն

սորված էր անոր վրայ գուրգուրալ: Պուլիս դառնալուն՝ Պէշիկթաշեանի և Ռուսինեանի փրփրերախ կեանքով յափշտակուեցաւ: Վենետիկէն եկած աշակերտները նոյն ասին մասնագէտները չեին, այլ՝ հայրենասէր լեզուագէտները: Պուլիս խանի մը մէջ՝ գրագիր մըն էր Արփիարեան. օրապահիկ հացը նախ մտածելու էր, և մտածելու էր նոյնպէս ազգային կեանքը: Կովկասի մէջ «Մշակ» խլրտուն գործ մըն էր սկսած. Արծրունին իր ազդեցութիւնը պիտի տարածէր թիւրքիոյ հայութեան վրայ: Երիտասարդ Արփիարը մեծ հրապարակախօսին ձեռք կը կարկառէ. 1878-էն սկսեալ մինչև 1889 «Մշակի» մէջ՝ անընդհատ Պոլսոյ ազգային կեանքէն՝ թղթակցութիւններ կան. գրողն է ինքն Արփիար՝ Հայկակ կեղծ անունով: Յոռետես Արծրունին՝ սքանչացած է Հայկակի գրչին: Հակամշակակամներէ իսկ կը գնահատուի Հայկակի գրիչը: Պատրիարքական և քաղաքական խնդիրներ, որոնք Պոլսոյ հայուն և գաւառացի մեծ հանրութեան էական ջղերն են, քրոնիկի գրչով զանոնք կը յուզէ. Արծրունին այդ թղթակցութեանց արձագանգ կ'ըլլայ ջղուտ խմբագրականներով: Հայկակի այդ նամակներով կարելի է խմբագրել թիւրքահայ

փոքրիկ շրջանի մը ժամանակակից կարևոր պատմութիւնը: Քրոնիկագրի տաղանդը իր անդրանիկ թղթակցութիւններէն յայտնի կ'ըլլայ. վենետիկեան աշխարհաբարով յստակօրէն կը շարէ քննադատական տեսութիւնները. պատ ի պատ մտքեր չկան, երախայական անկեղծութեամբ կը խօսի. տակաւին կուսակցական հովեր չէ առած. իսկ ազատութիւնը զգալի է: Ակնցի է, և ակնցին միշտ ազատամիտ: Իբրև գրագէտ դէմք, շուտով ուշագրաւ եղաւ. իր յօդուածներու շարքը հրապուրիչ փառք մը կուտան «Մասիս», «Արևելք», «Հայրենիք», «Նոր կեանք» թերթերուն. անոնց մէջ ինքը ծանօթ է գրագէտ քրոնիկագիր: Վաղամետիկ կեանք մը ունեցեր է «Բազմավէպի», «Գեղունիի», «Ազատ խօսքի», «Ապտակի», «Մարտի» մէջ: «Բանբեր գրականութեան» հանդէսին մէջ՝ երևցաւ իր ամենէն գեղեցիկ վէպը՝ Կարոյի ժամուրդը, և այդ հանդէսին մէջ նոյնպէս կարդացինք անցեալ դարու կէսէն սկսեալ թիւրքիոյ հայութեան գրական շարժումի պատմութիւնը: Գրական քրոնիկներով պերճապայծառ խայտարղէտ էջեր հիւսեց «Շիւրակ» հանդէսին մէջ, որուն 1906-ին ինքն էր խմբագրապետը: 1903-ին դար-

ձեալ կը տեսնենք զինքը « Մշակի » մէջ՝ բացխփիկ երևում: Եւ որքան զբական բարեշրջում. իր հոն « Մեր կեանքէն » յօդուածները վարպետի զգլխիչ յատկութիւններով խայտաճամուկ յատկութիւններ ունին:

Ոճին, լեզուաբանական բժախնդրութեանց, և գաղափարականին մէջ իրապաշտ դպրոցի սաներէն է:

*
* *

Պրանսական ոռմանդիկ գրականութիւնը հաւատարմութեամբ ջանացեր է իւրացրնել: Գրիգոր Օտեան միշտ զրչին ծայրն է եղած, և գայն բնաւ սրտին մօտ չէ տարած. անոր գաղափարակից չէր. Զօլան զինքը մոգած էր և Օտեանէն Զօլան ամբաստանուած: Թէև Արփիարի վիպական գրականութեան մէջ, Զօլայի իրապաշտ, զգայնիկ և տարփատենչիկ հոգին երբէք գոյութիւն չունի: Ողջախոհ միտք, Աստղիկներէն զգուշացող. իր « Կատակ մը » երիտասարդ անփորձ հասակին գրած նորավէպին մէջ՝ վահրամի ու Մաքրուհիին վաւաշ տեսարանին վրայ՝ ցմիշտ զանգատեր է, և ուրիշ առթիւ սրողեր է գայն պարկեշտագեղ վարագուրով:

Գեղեցկագիտական յեղաշրջումի սիրահար միտքն է եղած. ծայրայեղ յոռետես և ամենէն աւելի ինքն իր զրչին դժուարահաճ և այդ իսկ պատճառաւ 1884ի՝ իր նորավէպերը բացարձակապէս անբաղդատելի են 1906ի գրածներուն հետ: Գրական յառաջադիմութիւնը ուժգնօրէն վազը մ'ունի: Իր վերջին նորավէպը՝ « Ոսկի ապրջան » ալ ևս արեւելեան մտախար սնգոյր մը չունի. գայն կը տեսնենք թաթախուն վիպական ոճի վայելուչ և պաղպաղուն աւազանին մէջ: Համեստ կենդանութիւն մը կայ հոն. հոգեբանութիւնը ընկերական:

*
* *

Երգիծական լեզուն ամեն պարագային՝ անշարժ չի կենար. գրական յօդուածներուն մէջ իսկ և նոյն իսկ լուրջ ազգայնական նորավէպերուն մէջ սրախօսութիւններ, ծիծաղաշարժ մտքեր ունի. անարժան չէր Միւնս անունին: Բանուորական կեանքը, նահատակումը պատկերելուն, թէ և խղճալի է Ղուկաս աղբարի գրաշարի վիճակը, սակայն այդ պարագային բնաւ չի մոռնար երգիծանքը:

Ընդհանրապէս Արփիար երբ ուզած է

հեզնող զրչով ծիծաղի զրական էջեր արտադրել, առած է Սկեպտիկ կեղծ անունը:

Իր ծիծաղը կամ զրական ծաղրը՝ ընդունողին լքում, իսկ ընթերցողին խնդում կը պատճառէ: Նկարէն է իր այդ ձիրքը:

Բ.

Արփիար իբր լրագրող, հայկական մեր հին կադերաֆիկներէն չէ. հեղինակի ու վարպետի անունով փառք մը իրեն շինեց, և ինքն իր ոճով մեր ամենէն գերազանց զրէչը կը դառնայ. թերթերուն մէջ, ուր ինքը կը բերէ արծագանգ մը կրօնական, կրթական կամ քաղաքական ատեաններէ, ուշագրաւ պատրաստականութեամբ հանրութիւնը կը սպասէ իր վճիռներուն, որոնց ծանրութեան տակ Նուրեան հաստափոր փաշաներն ալ կը ճզմին ու կարմիր ոսկիները չեն կրնար կղպել տալ Արփիարի բերանը:

Ընդվզող հրապարակախօսի ասպարէզը բաց է և Արփիար ամենէն աւելի սանձարձակ է պ. Յովհաննէս Շահնազարեանի «Հայրենիքին» մէջ: Փաստարան տրապիզոնցի խմբագրապետին հովանիին տակ՝ Արփիար ասպարէզ կը գտնէ. ալ երկիրը

չկայ պատրիարքէ կամ ո՛րէ հայ փաշայք մը: Այդ ըմբոստ թերթի առաջին թիւով ինքը կ'իմացնէր, թէ ալ որոշած էր աներևութանալ օրագրութենէ. բայց կարծես բնական ներքին ձայն մը զինք կը մղէր՝ իմացնելու իրեն, թէ այդ թերթով լրագրողի հեղինակաւոր փառքին պիտի արժանանայ: Բայց զրական մարմաջը: Գրականութիւնը սիրողը զրչէն ապահարզանի պէտք չունի. մինչև գերեզման՝ հաւատարմութեամբ կ'ապրի անոր հետ: «Հայրենիք» անդրանիկ պրակէն՝ Արփիար իր «Օրուան կեանքը» էջերուն մէջ ճշգրտօրէն կը խոստովանէր զրականութեան իր այն մարմաջը. կը գրէր. «Մենք զրոշնեքս կը նմանինք այն սիրահարներուն, որք կնոջ մը զոհած են իրենց կեանքն ալ, իրենց երիտասարդութիւնն ալ, իրենց ամէն ինչն ալ: Օր մը ծանծրոյթ կը զգան ու հաստատ կ'որոշեն հեռանալ սիրուած կնոջմէն, ու կը հեռանան... Քանի մը օր ետքը անոր ոտքերուն ներքեւ են»: Իր կինը հայկական մամուլն էր. այդ կնկան ըղանձքէն ձեռքը ետ չքաշեց: «Հայրենիք» ի հոգին ալ Պ. Յովհաննէս Շահնազարեանն էր, իսկ սիրտը՝ Արփիար, և այդ թերթը սահմանուած էր ըլլալ ապարանքի, նամանաւանդ խրճիթին թերթը.

անոր ազդեցութիւնը պիտի տարածուէր ընկերական ամեն դասերու վրայ: Արփիար սիրտը ըլլալով այդ տեսակ թերթի մը, լրագրողի բարոյական մեծ պատասխանատուութիւն մը իր վրայ ևս կը ծանրացնէր: Թեթև էր իր այդ ծանրութիւնը. վասնզի իր լրագրողի փորձ և խոհական լրջութեամբ՝ մտադրած էր օգտակար ըլլալ մտաւորական բարեշրջումի վեհ գործին: Եւ ինքը այդ բարձր գաղափարականին երկրպագու կը մնայ: «Մշակ» և «Արևելք» թերթերու մէջ մարզուած գրիչը, հրապարակագիր ասպետն էր հիմա:

1891էն առաջ՝ «Արևելքի» փայլուն օրերուն վեց տարի աշխատած էր և անոր զարգացումին ամենէն զօրեղ ոյժն էր եղած, ազատամիտ «Հայրենիքին» մէջ ամենէն փորձ գրիչը, ամենէն սանձարձակ գրիչը կ'ըլլայ. լայն ասպարէզը շատ մեծ օգուտ կը բերէր թէ՛ իրեն և թէ՛ իր սիրած թերթին: Խստերախ գրիչը աներկիւղ կը սկսի արշաւել. իր ձայնը ամենէն խուլ անկիւնները պիտի հասնէին. գաւառի սրբելի թերթը կը դառնայ «Հայրենիք»․ մայր հայրենիքի ձայնը անոր էջերէն շատ արտրժեղի կը լսուէր: Հրապարակագիրը եթէ ոչ մէկ երկիրը չունի, այն ազդեցիկ է. իր վճիռները ըստ պարագային շինող

կամ փլցնող են: Ազդեցիկ էր Արփիար. իր մասին եղած պարսաւագրութիւնները կ'ունենային աւելի շինիչ, քան թէ կործանիչ ազդեցութիւն. իր լայնսիրտ նշանաբանն էր եղած. «Ես սորված եմ, և ամեն ոք գիտէ թէ հրապարակագրի մը համար թշնամութիւն և բարեկամութիւն չեն պակսիր: Քննադատութենէ ահաբեկողը կարող չէ ձակատաբաց խմբագրի բարձր դեր մը կատարել:» Արփիար իր բազմամեայ լրագրական գործունէութեան աւտեն՝ վայրկեան մը իսկ՝ երկիրը չզգաց, ոչ բամբասողէ, ո՛չ սուր շողացնողէ:



Ռուսահայերը շատ բարձրէն կը դիտեն Պոլսոյ հայութեան գրական ո՛ւնէ գործ. առհասարակ հոս հոսական անկում մը կը տեսնեն անոնց պարբերական մամուլին մէջ: Արփիար իր գրական ընկերներովը՝ ձեռն ի ձեռն ուժգին թափով մը կը սկսին բարձրացնել թուրքահայերու մտաւորական շէնքը և ցոյց կու տան որ վոսփորէն ներս, ոտն առ ոտն գրական յառաջադիմութիւն մը կը ծնի և «ծակ փիլիսոփայ», «իմաստակ», «զրախօս» ու «անճոռնի» գառամ մամուլը ինքնին կը փորէ իր գերեզմանը:

Արփիար իր լրագրական սիւնակներով ոչ չոր լուրեր կը հիւսէր, այլ գրական փառփիւն բեհեգներ կը կարկտէր. հնու- թիւնը զանոնք ազնիւ մօզայիքներու շար- քէն պիտի համարի: Եւ ինծի համար՝ ա- նոնք արդէն իսկ մտած են այդ շարքին մէջ:

Պ. Տիգրան Կամսարական իր զեղուն յոռետեսութեամբը՝ կը պարսաւէր թուր- քահայ գրականութիւնը. իրեն համար նա- խանձելի էր ոռոսահայ մամուլը. տասնը- հինգ տարի առաջ կը գրէր. « Երբ մենք, ի խնդիր ձեռիս, կը կորսնցնէինք մեր ժա- մանակը, ոռոսահայը, իմաստիկ ընծայե- լով գերակշռութիւնը, ունեցաւ գաղափարի գրականութիւն մը մեր բառերու գրակա- նութեան դէմ: » Նախանձախնդրութիւնը աշխատանքի կրակովը կը ձուլէ հրաշա- գործ արձաններ: Թուրքահայ պատրաս- տուած մտաւորական ուժեղ նոր սերունդը՝ այդ նախանձախնդրութեամբ՝ տեսաւ հիմը բարեշրջող գրականութեան, և հիմնադրող- ներու ամենէն մեծ վարիչներէն մէկը՝ Ար- փիարը որ՝ ձեռի և իմաստի գանձարան մը պատրաստելու ճարտարապետը կ'ըլ- լար, բժախնդիր, յոռետես բնաւորու- թեամբ, թոյլ չէր տար որ նոր սկսուած և բարձրին ձգտող գրականութիւնը՝ մի-



Ա. Արփիարեան

Չակ արահետներէ սղոսկի. սաւառնումը միշտ բարձրէն պիտի ըլլար:

Պոլսոյ մէջ հեղինակաւոր ձայնը գոռոզ հարուստն էր. Խնդիր աղային, վիճարանութեան մը մէջ Մագսուտ ամիրա կը գոռայ. « Ամիրա ես ինչո՞ւ այս հարստութիւնը դիզեք եմ, որ ուզածս տի ըսեմ »: Ամէն բան ըսելու հեղինակաւորի մենաշնորհը կը փոխանցի գոռոզ գրագէտներուն, թէ և անոնք բնաւ գաղափար մը չունին թէ « ինչ է ափ մը ոսկին »: Գրական պաշարը՝ բոնաւորի ուժէն, վարչապետին իշխանութենէն և ամիրայական ոսկի շտեմարանէն շատ բարձր ըլլալը խկոյն ցոյց տրուեցաւ: Արփիարն էր ցոյց տուողը: Պոլսեցիք տաք ալիւն, սիրուած արիւն, բայց միով բանիւ ազնուացած թեթեամիտներ՝ իրենք են որ տիտղոսներու կարևորութիւն կուտան, և իրենց բառարանին մէջ կ'արարչագործուի վսեմաշուք, ազնուաշուք, վսեմափայլ, ազնուափայլ ածականները, յատուկ միմիայն վարչական ազնուապետականներու և հարուստ դասակարգին: Իսկ խելք ունեցող աղքատը անարժան էր այդ ածականներուն: Արփիար իր քննադատական մանգաղով հընձեց այդ թեթեապերճ բառերը: Հաւասարութիւն կատարեալ, իր մէջ կը տրոփէր

անարժան կուտքերը խորտակելու ընդվզող սիրտը:

Բարեշրջում ամէն տեսակէտով: Ազատամտութիւնը կատարեալ ըլլալու է. Արփիարին գաղափարն է այն: Անկախութիւն՝ դատելու, վիճելու և գրելու ատեն. դրամը կրօնական և պետական ոյժերը պէտք չեն ներգործել դատաստանի անկախութեան վրայ: « Մեր հաւատքը » առաջնորդող յօդուածով՝ ազատամտութեան հոսանքը կ'ուղղէ հոգւոյն դռներուն. ու կը քարոզէ. « Համոզուած եմ, որ ճշմարտապէս քրիստոնեայ կարենալ ըլլալու համար, անհրաժեշտ է յեղաշրջում մը կրօնական հաստատութեանց »: Իր յեղաշրջումը կը կայանար պարզութեան և անկեղծութեան մէջ: Չի հարցնենք թէ ինչ էր Արփիարի հաւատքը. այդ ուրիշ առթիւ. միայն այսքանը գիտնանք, որ ինքը կը սիրէր հայ տաճարը, ուր հայ հոգիները մխիթարուած կ'ալըրին. կը գրէ. « Երբ կրօն մը, երբ եկեղեցի մը կուտայ ժողովրդին գերագոյն առաքինիներ, մեզ անհնար է ջերմեռանդութեամբ չսիրել այդ եկեղեցին... Եթէ դպրոցի մը տնօրէնն եղած ըլլայի, կը ջանայի. որ կրօնը խօսի աշակերտներուն սրտին... Սիրտը կապելու է եկեղեցիին հետ, որպէս զի օր մը մտքի սառնութիւնը

հալի սրտին տաքութենէն: Իսկ իբր հայ կը մաղթէի, որ մեր եկեղեցականները ըլլան, զթած, ներողամիտ ու խոնարհամիտ նման քրիստոնէութեան վարդապետին: » Արժիար եկեղեցիին դռնէն ներս կը մտնէր միայն բարեկամի մը յուզարկաւորութեան առթիւ. եկեղեցիէն հեռու կը կենար, բայց ոչ եկեղեցականներէն. անոնցմէ շատ բան կը պահանջէր. ըստ իրեն, ինչպէս և ըստ աւետարանին, Եկեղեցականը որ զթած է ու խոնարհամիտ՝ կը խոնարհեցնէ իր առջև ամենն ալ, գիտունն ալ, տգէտն ալ: Ոչ որ կը տրամաբանէ հանդէպ կրօնքի մը, որ մարդկութեան կը պարզէ միւթարիչ բարերարներ: » Ու պէտք է գիտնալ որ այս համոզումը՝ իրեն օգտակար ընելու համար չէր, այլ ուրիշին... Ինքը կատարեալ աշխարհաքաղաքացի միտք մըն է. սակայն կը գործէ, կը գրէ այնպիսի՝ զգուշութեամբ, որ հայութիւնը իր ազգային հոգիէն բնաւ վնաս մը չտեսնէ. իրեն փոյթը չէ կրօնական խտրութիւնները. բողոքական, կաթոլիկ և լուսաւորչական հայր, նոյնպէս յոյն և մահմետական հայր՝ իրեն համար հաւասարապէս Հայաստանի արգանդէն ծնած հայեր են, առանց խտրութեան համահաւասար սիրելի. ինքը ուրիշ ոեւէ օտար ազգ մը չա-

տեր, սակայն բացարձակապէս կը դիմադրէ տխմար և վտանգաւոր օտարամուլութիւնը: Առաջնորդող յօդուածներու սիւնակներէն խրոխտաբար կ'որոտայ, որ հայ ծնողք իրենց զաւակները չյղեն ճիզութիւններուն, ֆրէրներուն, սեռերուն, վասնզի անոնք տղոց ազգային հոգին կը թմբբեցնեն, ուղեղին ծթածութեամբ կը լեցնեն:

Դիտող ու հետաքրքիր լրագրողի մը համար միջավայրը ցուցահանդէս մըն է, ուր դէմքեր անընդհատ սահանքի պէս կը պատկերին գրագէտին առջև: Արժիար արթուն էր այդ պատկերներուն մէջ, իրեն համար նորութիւն չէր պակսեր. և նորութեանց առջև չէր ուզեր անտարբեր մնալ. հարուստն ու գիրքը իրարու քով դնել և խօսեցնել տալն ալ նորութիւն էր: Ու պէտք էր որ գրքի կուռքին առջև՝ հարուստը ծնրադիր մնար. ընդվզող գրականութեան դրօշակը սկսած էր ծածանիլ: Տէմիրճիպաշեան գրասէրը, կ'ուզէր իմաստասէրը կամ բանաստեղծը ըսեմ, օրին մէկը իր դասախօսութեան հաւաքածոյին տպագրութիւնը կը ձօնէ Մկրտիչ Խայեան

դրամատէր էֆէնտին. Արփիար կարծելով որ այդ ձօնին մէջ դրամի երկրպագութիւն մը կայ գրագէտին կողմէն, իր խժբժանքի խարազանը կը շարժէ. սակայն ձօնը զուտ բարեկամական յարգանքէ բղխած էր. և այդ առթիւ տխուր իրականութեանց մէկ էջը կը բանայ ի սաստ անտարբեր դրամապաշտ և զբառեաց անձերու. կը գրէ. « Մեր դրամատէրները գրեթէ միշտ պաղ կերպով վարուած են անոնց հետ, որք աշխարհիս մէջ չունին ուրիշ հարստութիւն, բայց եթէ իրենց տաղանդը: Հարուստներու կողմէ մտաւոր զարգացման համար ցոյց տրուած այս ցրտութեան պատճառն այն է, որ մարդիկ ընդհանրապէս չեն ուզեր յարգել, կամ գէթ զրսէն կ'ուզեն ցոյց տալ որ իբր թէ չեն յարգեր, այն յատկութիւնները որոնցմէ զուրկ են, զոր կը փափագին ունենալ, բայց չեն կարող ձեռք բերել »: Ու կ'իմացնէ հարուստներուն, որ պէտք է հրատարակչական գործին ձեռնտու ըլլալ, թէ « գեղջուկին » համար ձրի գրքեր պէտք է հայթայթել, և այդ առանց հարուստներու դրամական աջակցութեան կարելի չէ. գրագէտներու մեկենաս ըլլալու՝ հինաւուրց ամիրայական յատկութիւնը՝ պոլսեցի հարուստը շուտով կորսնցուց և ալ չգտաւ

ու այսպէս այդ մամուլը լուրջ գործեր արտադրելէ դադրեցաւ. պատմական պաշարով ճոխացած միտք Մարկոս Աղաբէկեանը՝ իր ազգային պատմութեան ստուար հատորները չկրցաւ տպագրել, և իր յոյսը դէպ ի էջմիածին կը կարկառէր. հարուստ ամիրայական սերունդէն խէր չկար: Սյս անտարբերութիւնը բնականաբար այսպանելի է, Արփիար կ'այսպանէ, կը յուզէ այդ խնդիրը, բայց բնաւ բարիք մը չի յուսար:

Արփիար կատարեալ բարոյական մըն էր բառին այս ըմբռնումովը, սակայն օրին մէկը գրագէտին սրտէն կը թռչի. օրագրին սիւնակին մէջ այս բացագանչութիւնը. « Ո՛վ բարոյականութիւն, ինչ գրական ոճիրներ կը գործուին քու անունովդ »: Ու այդ գրական ոճիրները փնտռելու է, Սիմոն Ֆէլէկեան աշխարհական բարոյագէտին մէջ, որ Պետրոս Դուրեանի տաղերը անբարոյական նկատելով՝ զայնս կը սրբագրէ. լաւ որ Սողոմոնի ժամանակները ծնած չէր մեր Ֆէլէկեանը. հիմա արդեօք կրնայի՞նք վայելել հոգեզմայլ տաղերն « Երգ երգոցի »: Արփիար ցոյց կուտար որ այդպիսի անզգոյշ սրբագրութիւնները գրական սրբապղծութիւն են:

*
* *

Օրը օրին գրող Արփիարը կենսագրականներու մէջ կ'արժաթեւէ. սովորական պատմիչ չէ, և միջակ դէմքեր իր գրչին հպումովը փառք մը կը զգենուն. պատուելին, կրօնաւոր աշխատաւոր արեղան, վարդապետ, եպիսկոպոս, էֆէնտի գրագէտը, ազգային վարչական փաշա մը շլացուցիչ գոյներով նկարուած են, և օրին մէկը՝ անոնք թռուցիկ թերթերէն կը մտնեն անշուշտ կենսագրական բառարանի մը յաւերժական սիւնակներուն մէջ: Արփիար՝ գրական պատկերահանութիւնը «Մասիսէն» սկսած է. իր Բաֆֆիին պատկերը՝ գրական սուրբի պէս բան մը ընդունել տուաւ թիւրքիոյ հայութեան. «Մինչև իսկ կային այնպիսիք, որք երանի կարդային այն աչաց, ոյք արժանի եղած էին հայ վիպասանը տեսնելու: Որպիսի փոփոխում ժամանակի:... Գրքերը այժմ մըցում կ'ընեն մասունքներուն հետ»: Բայց իր պատկերներուն գոյնը բարեշքը՝ ջումի ճամբով «Շիրակին» մէջ մեծ փոփոխութիւն կրած է, մատիտէն՝ իւղաներկի անցած: Ու երբ գրագէտը, վարչապետը կամ բանաստեղծը ուզած է կենդանագրել,

իր գրչին արուեստը շատ անգամ նիւթը, առարկան մոռցնել կուտայ. իր արուեստն է ուշագրաւը: Գիտելով Լէօնարտո տա Վինչիի «Լա ձիօգոնտան» նկարիչն է զմեզ յափշտակողը. Մատտոննա Լիզայի կեանքը զմեզ չի հետաքրքրեր: Նման պարագայի մէջ կը գտնուի Արփիար՝ երբ գրական զարդեր շոայլած է աղքատ դէմքի մը համար:

*
* *

Արփիար իբր պատմիչ իր լակոնական ոճով շատ նշանաւոր է. միջազգային քաղաքական հարցերու մէջ խոկալ կուտայ. հեռատեսութիւնները համոզիչ են, թէև մարգարէ մը չէ ապագային ճշտութեան: «Նոր կեանք» Լոնտոնի կիսամսեայ հանդէսին մէջ չեն մոռցուիր իր այդ համագային պատմական տեսութիւնները, որոնք վեց մեծ պետութեանց խորհրդարաններէն բղխելով՝ դէպ ի Հայաստան կը հոսէին, ու անոնք տանջանքի կարմիր ծովին մէջ՝ յուսախարութեան յուզում մը միայն կը պատճառէին: Արփիար այդ տեսութեանց մէջ միամիտ դիւանագէտ մըն էր, կամ ընթերցողները միամիտներ կը կարծէր:

Ազգային ժամանակակից պատմութիւն

մը գրելու փորձ չըրաւ, թէև լաւ պիտի յաջողէր, վասն զի ժամանակի մարդն էր ու պատմական կեանքին հետամուտ: Իր կենսագրականներէն մեծ մասը յատկացուցած է վարչական անձերուն և եկեղեցական նշանաւոր դէմքերուն. անոնց պատկերին մէջ՝ որոշ գծուած են ժամանակակից պատմութեան ճիշտ ու ճարտար ուրուանկարներ: Օրինակ՝ Նուրբանի, Օտեանի, Իւթիւճեանի կենսագրութիւնները կը պատկերեն անցեալ դարու պատրիարքական խորհրդարաններու այն կեանքը, որ հայուն համար էր. և ախորժով կը կարդացուին այդ կենսագրութիւնները, վասն զի հայոց պատմութեան մոռցուած նոր էջերն էին:

*
* *

Ու Արփիարէն դեռ ինչեր կը սպասէինք: Այլ ևս մեր մշակուած գրիչն էր: Իր գրական ունեւէ մէկ գրութիւնը կատարելութեան դրոշմովը հրատարիչ և իր անժխտելի բրոնիկազրի փառքին ապացոյց մըն էր: Չեմ գիտեր ինչու իրմէ չունեցանք կենսագրական կամ պատմագրական լուրջ հատոր մը. և կարծես այդ անկարելի էր, ետեւէն մահը զինքը կը հալածէր. ոճրա-

գործութեան ուրուականը խտրողական չէ: Կուսակցութիւնը երբ կարմիր դիմակով ասպարէզ կ'իյնայ, արդէն ինքն իր ազատութիւնը շղթայած է: Կարող չէ զանազանել գրիչը սուրէն, սուրը գրչէն:

Սուրը՝ սրիկաներու ձեռքով՝ ոճիրներու շարք մը թողուց հայ պատմութեան մէջ. ու պահ մը մտածեցէք. երբ յեղափոխական կուսակցութիւնները փառասիրութեան վրէժխնդրութեամբ ուզեցին գործել, կրցան քողարկել այն լեռնացած վնասները, ուսկից ծնաւ պառակտումի այլանդակ հրէշը, որուն առջև ծնրադիր կը մնայ այն, որ ազգասիրութիւնը կուսակցական էնդրիկնելով կ'ուզէ ըմբռնել:

Գ.

Ինքզինքը չկրցաւ ճանչցնել. թէև իր վրայ համեստօրէն խօսելու ժուժկալութիւն մը բնաւ չփորձեց: Իր հոգեբանութիւնը, գրականութիւնը, դիւանագիտութիւնը և յեղափոխութիւնը կեանքին լապիրինդն է, որուն անել բաւիղներէն առանց շուարումի՝ զինքը չճանչցողները պիտի չկարենան անցնիլ: Արփիարեան Արփիարի մէջ կ'ուզեմ փնտռել նկարագրի մար-

դէն աւելի՛ գրագէտ գրիչը: Եւ իր գրականութեան հոգեբանութիւնը բարեբաղդաբար շատ պարզ է. ես զինքը երջանիկ պիտի համարէի, եթէ հազած ըլլար իր վէպերուն հոգին, որ մեր սրտերուն մօտ է: Այդ հոգին պիտի գտնենք ու ցոյց տանք այս էջերուն մէջ. իր ամենէն բազմաշօնիւ վէպն ընդունուեցաւ « Կարմիր ժամուցը »: Կը վերլուծեմ այդ վէպին արուեստագեղ էջերը. և ատենք գրած է այն պահուն, երբ ինքը արդէն այլ ևս ճանչցուած է բժախնդիր, դժուարահաճ գրագէտ, քննադատ և գեղեցկագէտ գրիչներու դատաւոր: Ու բնականաբար իրմէ կատարելութիւն մը կը սպասուէր, վարպետի յատկութիւն. և եթէ առանց վիպական խոր մարդումի իջնէր գրականութեան կրկէսը ու շարժէր գեղարուեստի գրական վրձինը, այդ պիտի համարուէր յանդգնութիւն: Սակայն ինչ որ ծանօթ էր, անզգոյշ մը չէր Արփիարեան, ուրեմն գեղեցկագիտական պաշարով մը կը ձեռնարկէ գրել իր հասուն հասակի գրական վէպը: Յաջողած է: Սակայն նախ քննենք, թէ ինչ է այդ վէպին նիւթը: Մեծ փոթորիկը, որ Թիւրքիոյ հայուն գլխէն անցաւ, կանխաւ արդէն արշալոյսը կարմրեցած էր հորիզոնի վրայ, ուր նայե-

լով պիտի հասկնանք « Կարմիր ժամուցին » լեզուն: Ու նախ ծանօթանանք անոր վսեմափայլ էֆէնտիին: Երեսուն տարիէ ի վեր Խասգիւղէն՝ Օրթագիւղ փոխադրուած Քիւրքճեան Հայրապետ էֆէնտին է ան. սակայն այնքան ծանօթ՝ որ անոր ո՛չ անուն, ո՛չ մականուն, այլ էֆէնտի յորջորջուժը բաւական էր. ամեն թաղեցի կը հասկնար թէ ան Քիւրքճեան Հայրապետն էր: Ժամասէր, ողորմասէր և միշտ ներկայ իր թաղական ժողովներուն: Իր քայլերը լարուած են եկեղեցիէն խորհրդարան, պահարանէն տուն և տնէն պալատ: Նախանձելի և հանգիստ կեանք մը կ'ունենայ. սակայն 1890 օգոստոս 19-ին կը խանգարի այդ հանգստութիւնը: Այդ օրը ժամուն տօնախմբութիւնը ըլլալով, հանդիսաւոր պատարագին ինքը ներկայ է, և նոր զարիպ ձայնեղ սպասաւոր քահանայ մը, միուած խանդավառ հայրենասիրական անզուսպ կրակէն, ուժգնօրէն բերնէն « Ազատութիւն եղբարցը » կը թոցնէ անեղազոռ. և ժողովուրդը կ'որոտայ « ամէնը »: Կը սարսափի էֆէնտին. ինչ լուր պիտի երթար պալատ... Ու ինքը մտմտուքով ու զայրոյթով կը թողու պատարագը և կ'երթայ մտածելու խորհրդարանին մէջ: Հոն կը հասնին ժողովոյ ան-

զամ միւս ազնուաշուքները, սրբազանը և նաև քահանան, որ բարկաճայթ որոտացած էր « Ազատութիւն եղբարցը »: Էֆէնտին զժկամակութեամբ կը սկսի խօսիլ, սաստել, թէ ինչո՞ւ անխոհեմութեամբ և առանձին շեշտով նոյն օրը « Ազատութիւն եղբարցը » կ'երգուի: Եւ կը վիճաբանէ երգչին հետ. սակայն Հայաստանէն եկած այդ քահանան բնաւ չի պատկառիր վսեմափայլ էֆէնտինն ու իր ընդվզող գաղափարին մէջ յամառ կը մնայ: Քահանային անունը Յուսիկ էր, իր սուրբին բնաւորութեան ալ ուզած էր նմանիլ և մնալ ի սէր ըրիստոնէութեան խրոխտ: Ինքը իր զիւղին, Տօմուզ գիւղի—յեղափոխական քահանան էր, հրացանները կ'օրհնէր և հայ կտրիճներուն կը յանձնէր: Ըմբոստացումի քարոզներ կուտար և կ'ուզէր որ Կ. Պօլիսը՝ իր ժողովրդէն զիւցազնութեան օրինակ առնէ: Եւ այդ տէրտէրին հոգեբանութիւնը, որ Արփարի նիցչէական գրքէն կը բղխի, կը տեսնենք այս պարբերութեան մէջ:

« Նորընծային քարոզներուն համբաւը տարածուեցաւ շրջակաները: Աղէկ եղանակին՝ թէ մօտիկ գիւղերէն, թէ քաղաքէն ժողովուրդը տէր Յուսիկը լսելու կու գար: Բազմութիւնը կը հաւաքուէր գերեզ-

մանատունը, երկիւղած լռութեամբ մտիկ ընելով իր սրտին խօսող պարզուկ լեզուն: Արշամ միշտ ունկնդիրներուն մէջ էր. կը սիրէր ու կը յարգէր տէր Յուսիկը, որուն ինքզինքը հոգևոր ու մտաւոր ծնողքը համարելու իրաւունքն ունէր: Մտերիմներ էին: Օր մը վարժապետը տէրտիրոջ գիտողութիւն ըրաւ, թէ քարոզներուն Աւետարանէն բնաբան չէր դնէր: Միշտ Հին-Կտակարանը, Գործք Աւաքելոցը, կամ ազգային սուրբերը կը ներշնչէին զինքը:

« — Հին-Կտակարանը ալ սուրբ գիրք չէ՞, — հարցուց տէրտէրը ժպտելով:

« — Անակ է, սուրբ գիրք է, բայց Աւետարանն ալ շատ անուշ է, — պատասխանեց վարժապետը:

« Տէր Յուսիկ, քանի մը ըսպէ վարանումէ յետոյ, ըսաւ.

« — Չէս վախնար որ շատ անուշութիւնը մեր ժողովուրդը մեղկացնէ:

« Գիտողութիւնը նոր էր: Արշամ սկըսաւ մտածել:

« — Կը տեսնէս, եղբայրս, — շարունակեց տէրտէրը, — որ մեր արօրներ վարողները եզներ են: Մեզի կեանք տուող ցորենին ան պտըտիկ հատիկները ունենալու համար, խոշոր—խոշոր, ուժով—ուժով եզներ պէտք են: Գառնուկով արտ կրնանք հերկել:

« — Անշուշտ ոչ :

« — Մեր ազգին բարոյական կեանքն ալ դաշտերուն կը նմանի, մանաւանդ որ խոպանացեալ անմշակ է. ու հիմակ տրամ հող դարձած է: Գառնուկին քաշած արօժովը չենք կրնար հոն ախօս բանալ ու սերմնացանք ընել:

« Արշամ ձախ ձեռքին մատներովը իր պզտիկ մօրուքը սկսաւ արագ—արագ քաշկըռտել: Տէրտէրը վերջն ո՞ր պիտի բերէր: Ատ կոշտ գիւղացիին մէջ նոր մարդ մը երևան կուգար, իր մտքէն չանցած:

« Տէր Յուսիկ յանձնապատան մը չըլլալուն, մեծ գոհունակութիւն պիտի գգար, եթէ մտածութիւններուն վաւերացումը իր վարժապետէն լսէր: Միտքը ամփոփելով դաւանանքը կարճառօտ բանաձևեց:

« — Քրիստոսը, — ըսաւ, — իբր գառն Աստուծոյ կը ներկայացնեն: Գառնուկը կը սիրենք, կը փայփայենք բայց առանց իրեն ալ կրնանք ապրիլ: Իսկ կեանքերնիս եզէն է, վասն զի ուժովը ան է:

« Աւ, երկինք նայելով, յարեց.

« — Ուժովը մէկալն է:

« Արշամ ալ ինքնաշարժամբ վեր նայեցաւ, իբր թէ ինքն ալ բան մը տեսնել կը հատար, ու, բան մը չգտնելով, հարցուց.

« — Մէկալն ո՞վ է:

« — Եհովան, — եղաւ պատասխանը:

« Տէրտէրն իր գաղափարը պարզեց:

« — Ես շատ մտածելով՝ համոզուել եմ, որ, — ըսաւ, — մեր ազգին համար տէր Եհովային հովանաւորութիւնը պէտք է: Եգիպտացիներուն ձեռքէն իր ժողովուրդը փրկողը ան եղաւ: Մենք ալ փարաւոն ունինք մեր գլխուն վրայ, մենք ալ անհաւատներուն գերին ենք: Եհովային խրատներուն մտիկ ընելով պիտի ազատինք:

« Արշամին երեսը կ'այլակերպէր. աչքերուն մէջ փայլ մը կը շողար, որմէն տէրտէրը ազդուեցաւ. ու քաջալերուած՝ իր տեսութիւնները աւելի պարզեց: Տէր Եհովան իր ժողովուրդը տանջողին գլխուն ամեն փորձանք կը բերէր: Եգիպտացիներուն զաւակներն ալ սպաննել տուաւ, անոնց ոսկեղէններն ու արծաթեղէններն ալ խարայէլացիներուն հալալ ընել տուաւ:

« Այս յիշատակներէն բոբբոբուած, տէրտէրը զայրոյթի թեթև շեշտով մը աղաղակեց.

« — Հիմակ, օրհնած, դո՛ւն ըսէ, ես ժողովրդիս ընտո՞ր խրատ տամ որ՝ « բաճկոնակդ առնողին, հանէ շապիկդ ալ տուր »: Ատ նգովեալ անհաւատները շապիկնիս ի-

ըննք ձեռքովնին կը հանեն, մեր հանել տալուն չեն սպասեր: Ելլեմ ժողովրդին՝ «մորթի ալ տուր» պատուիրեմ: Արդէն ան ալ կ'առնեն: Շիտակը, Աստուած թող մեզը չհամարի, իմ բերանս առաջ չբռթար ժամ եկողին խրատ տալ, որ մէկ երեսիդ զարնողին՝ միւսդ ալ դարձուր: Ատ շուենբը մեր քէֆին չեն սպասեր, որ աջ կամ ձախ երեսնուս զարնեն: Աջին ալ կը զարնեն, ձախին ալ կը զարնեն, քթերնո՛ւս ալ կը զարնեն, բերաններնո՛ւս ալ կը զարնեն, կոնակնո՛ւս ալ կը զարնեն, սրտերնո՛ւս ալ կը զարնեն: Կը զարնեն, կը զարնեն, կը զարնեն: Ալ տեղ մնաց, որ դարձնենք. եզրայր, դո՛ւն ըսէ:

«Պոլսեցի վարժապետը զգածեալ լուռ կը մնար: Աշակերտը հիմակ ինքն էր: Տէրտէրը՝ մահմեդականին ձեռքէն ոսկրոտի դարձած հայ զիւղացին կը խորհրդանշանէր:

«— Այն ընդ ական, ատամն ընդ ատամն, աս է տէր Եհովային կամքը, և ես ալ ժողովրդիս ասանկ կը պատուիրեմ: Ի՛նչ կ'ըսես, գէշ կ'ընեմ նէ՛ շիտակը գրուցէ, — հարցուց քահանան:

«Վարժապետը, յուզուած, երկու ձեռքովը տէրտիրոջ աջը քաշեց համբուրեց»:

*
* *

Ուրեմն մեր Զարագուտորան տէրտէր մըն է, տէր Յուսիկը. թէև անուս, ժողովրդին ծոցէն բուսած պարզ սիրտ մը, որուն խօսել կու տայ Նիցչէին սիրահար Արփիարը: Սակայն պէտք է գիտնալ, որ Զարագուտորան աւելի գերմարդկային ըմբոստութիւն կը քարոզէ: Տոմուզ գիւղի տէրտէրը կ'ուզէ աստուածաշնչական մնալ, նպատակը սակայն՝ միշտ նիցչէական վեհանձնութիւն, խրոխտութիւն է, և չստրկանալ բնաւ: Տէրտէրի ուրախութիւնը անսահման կ'ըլլայ, երբ յանկարծակի ձեռքը կ'իյնայ յեղափոխական թերթը, Մ. Փորթուզալեանի «Արմէնիային» առաջին թիւերէն մին: «Ուրեմն, ա՛յ գործի ժամը հնչած է» . և կը պարզէ զայն իբր յեղափոխական դրօշակ. իր հրացանէն առաջին գնդակը կը սուրայ... «Թո՛ղ գնդակը ասկէ ետքը թիւրքաց մայրերը լացնէ»:

Տէր Յուսիկ այլևս յափշտակուած՝ խանդավառօրէն ինքզինքը կը նուիրէ իր ժողովրդին կրթութեան և յեղափոխական գործին: Բայց այս յեղափոխական տէրտէրը ի՛նչպէս ինկած էր Պօլիս: Մուսաբէկին նախձիրներու և անիրաւ արդարաւ

ցումի լուրը կը տարածուի. և քանի մը ամիս վերջը, 1891 յունիսին, կարին 1895-ի կոտորածներուն նախատօնակը կը կատարուի: Տէրտէրը իր բարեկամ Արշամ վարժապետը Պօլիս կը յղէ, տեղ-նուտեղը իմանալու համար թէ ինչ կը պատրաստուի: Արձակուրդի ատենն էր, վարժապետը ճամբայ կ'ելլէ ու, Պօլիս հասած չհասած, տէրտէրին նամակ կը հասցնէ, կ'իմացնէ որ յեղափոխական ընկերութիւնները մեծ գործի վրայ են. « Ընկերութիւններ կազմուած էին, կովկասէն կտրիճ երիտասարդներ եկած, Ռուսիոյ հայերը ոտքի վրայ էին, Թիւրքիայի հայոց համար. Եւրոպայի հայերը կը գործէին: Եւ վարժապետը տէրտէրը կը ստիպէր անմիջապէս Պօլիս գալ: « Բաներ պիտի ըլլային, բաներ »... Տէրտէրը ճամբայ կ'ելլէ, և Պօլիս հասած օրը արդէն յեղափոխականները եռ ու զեռ վիճակի մէջ կը գտնէ, հայ բազմամբոխը դէպի պատրիարքարան մայր եկեղեցին կը դիմէ, տէր Յուսիկ անոնց կը հետևի. « Խուռներամ ժողովուրդը, որ տաճար կը մտնէր, զինքն ալ քշեց ներս տարաւ: Խորանին վարագոյրը փակ էր, սեղանին վրայ շատ մը աշխարհականներ կային: Տէրտէրը բան մը չէր հասկնար: Միթէ Պօլսոյ եկեղե-

ցիներուն կարգն ու կանոնները ասոնք էին: Մէկէնիմէկ քար կտրած մնաց: Սեղանին վրայ գտնուողներէն մէկն ալ Արշամն էր: Վարժապետը ֆէյսը հանեց նետեց ու, բազուկները խաչաձև, սկսաւ խօսիլ: Տէրտէրը որոշակի չէր կրնար լսել անոր բոլոր ըսածները, բայց ի միջի այլոց իմացաւ. « Այսօր՝ էրզրում, վաղը՝ Մուշ, յաջորդ օրը՝ Վան, ու ամբողջ Հայաստան: Պիտի ջարդեն, եղբարք, պիտի ջարդեն: « Հիմի էլ լռենք »: « Հիմի էլ լռենք » ժայթքեցաւ ժողովրդի բերնէն, միաձոյլ զանգուածի մը նման, մեծ թափով, ինչպէս թնդանօթի կոկորդէն արձակուած ումբը: Ու բոմբիւնը բոմբիւնին ետևէն տաճարէն բակը, բակէն տաճարը կը պայթէին շրջահարները. ու « օ՛ն ի Երլարզ » զոռումը կը թնդացնէր եկեղեցին ու շրջափակը: Դասէն մեծափառ մօրուքով եկեղեցական մը դողդողալով առաջ կուզար խումբ մը երիտասարդներէ պաշարուած: Ժողովուրդը ճամբայ կը բանար:

« — Աս ո՞վ է, — հարցուց տէր Յուսիկ քովինին:

« — Պատրիարքն է, պատրիարքն է, — պատասխանեց մարդը:

« Ու տէրտէրը մէյմըն ալ ինչ տեսնէ: Արշամը պատրիարքին ետևէն, ընկերնե-

րով, որոնցմէ երկուքը իր աշակերտները: Չեռքերնին մէյմէկ շրջահար: Մէկէնիմէկ իրարու զարնուեցան վարժապետին, տէրտէրին, աշակերտներուն նայուածքները: Աչքերնուն մէջ սէգ հրճուանքը փայլեցաւ: Տէր Յուսիկ ինքն ալ դուրս մղուեցաւ ու իրեններուն ետեէն պատրիարքարան ելաւ: Թիւրքական բան մը տեսաւ:

« — Աս ի՛նչ է, — հարցուց մօտը եւ զողներուն: »

« — Սուլթանին խրկած քոչրան է, — ըսին »:

Տէրտիրոջ երեսը մոայլեցաւ: Իր հին հառաչանքը կրկնեց. « Ընտ՛ր Յուսիկ հայրապետ մը չէր գտնուած, որ զայն կտոր կտոր ընէր »: Եւ այդ թուրան քիչ ատենէն կը պատուտի. և տէրտէրը ուրախութենէն ս. Յուսիկ հայրապետին հոգւոյն մատաղ կ'ըլլար: Ու երբ ինքզինքը դուրս նետելով փողոցը կը գտնէ, տեսարանը փոխուած էր. թիւրք զինուորները սուիններ՝ ու սուրբը կը շարժեն, բացուած էին բանտերու դռները: Տէր Յուսիկը այդ խռովքի օրերուն լաւ կը համարի մնալ Պօլիս և սպասուորել Օրթագիւղի եկեղեցւոյ մէջ: Բայց պահ մը մտաբերենք, որ Օրթագիւղը ունի իր ստուերէն վախցող Հայրապետ էֆէնտին. կարելի է՞ որ

իւր բնաւորութիւնը հաշտ երթայ տէր Յուսիկի կրակոտ ու անզուսպ հայրենասէր քաղաքականութեան հետ: Տէրտէրը ուրիշ օր մը պատարագելուն՝ « Որ օրհնես զայնոսիկի », « Թագաւորաց քրիստոնէից և զինուորեալ մանկանց նոցա » աղօթքին բառերը յատուկ շեշտով մը հնչելուն, դարձեալ կ'ահաբեկի Հայրապետ էֆէնտին և տեսնելով որ տէր Յուսիկին պիտի չկարենայ խօսք հասկցնել՝ զայն իր Տոմուզ գիւղը կը վերադարձնէ: Հայրապետին իշխանութիւնը ամիրայական էր. պատրիարքն ալ կ'երևի չի կրնար դիմադրել: Ազդեցիկ, ձայն ունեցող մըն էր Հայրապետ էֆէնտին. ծագումը ու բարգաւաճումը՝ հետաքրքրական: Մուշտակագործի մը տղան էր, Հայաստանէն եկած ու Խրիմի պատերազմին սկսած էր բաղդ շինել: Յետոյ Մերասկէրի, Թօփհանէի և Թիքրահանէի գլխաւոր և առաջնակարգ հայթայթիչն է եղած. ընդհանուր թիւրք փաշաներու և պաշտօնատարներու գողակից ըլլալու հնարամտութեան մէջ անզուգական ճարտիկ մը: Եւ այդ ընդունակութեամբ՝ ստակ, հարստութիւն կը զիգէ ու պալայի բարձր աստիճանին կը հասնի: Զգուած էր թիւրքին առջև ստրուկ մնալէն, անհունապէս կը սիրէր իր ազգը, այլ է թէ

կը ջանար ազգային անխոհեմ շարժումներուն առջևն առնել: Բայց յեղափոխութիւնը իր ասպետական քայլերը առած էր այլ ևս ու կարելի չէր խոհեմութիւն ու թիւրքին հաւատարմութիւն կեղծել. կը գրէ Արփիար. « Ու հայական դէպքերը իրարու կը յաջորդէին երևակայութիւն սարսող արագութեամբ: Պատրիարք ու վարդապետ շրջահարներու զոհ կ'երթային. երկրէն՝ պայթումներու որոտներ, Սասունը հայկական խնդիրը կը վերաբանար. ու Պերլինէն տասնութ տարի ետքը պետութիւնները հայոց դատին տէր կը կանգնէին: Այս բոլոր նորատեսիլ երևոյթները պահպանողական հայը կը շուարեցնէին: Այլ ևս նաւապետն էր, որ կողմնացոյցը կորսնցուցած է: Մերթ՝ կը տաքնար, կ'ոգևորուէր, կը յուսար. մերթ՝ կը սմքէր, տարակուսանքներէն ջլատուած: Թիւրքերը աղէկ ճանչնալուն՝ « անխ, — կ'ըսէր, — թիւրքը նապաստակը կառքով կ'որսայ. վախնամ թէ հախերնուս զան »: Սեպտեմբեր 18-ին ցնծաց. սխալած ըլլալուն ուրախութիւնը ունեցաւ պահ մը: Տրապիզոնի կոտորածին լուրը առած օրը, երկու ձեռքը գլխուն զարկաւ: Զարդերուն գուժերը, իրարու ետևէ արագավազ, իր բոլոր վախերը կ'իրականացնէին: Ու փրկութեան աղօտ նշոյլ մը չէր ընդնշմարեր :

« — Ա՛հ, չարիներ, չարիներ, — կը կողկողէր, մտերիմներուն հետ յեղափոխականներուն վրայ խօսած ատեն:

« Ու օրին մէկը տէրութիւնը զինքն ալ ջահիլներէն համարելով՝ ինքն ալ կասկածաւոր կ'ամբաստանուի, և երեք տարուան բանտարկութեան դատավճիռ մը կը կատարուի իր վրայ: Սակայն իրատէով մը երկրորդ օրը բանտարկեալներու ներում ըլլալով կ'ազատի էֆէնտին, որ զարմացած կը մտածէր՝ թէ ինքը յեղափոխական մը չըլլալով, մանաւանդ թէ ըստրկային սէր մը ցոյց տալով թիւրքին, և... դատապարտուի: Եթէ իրեն, որ հաւատարիմներուն հաւատարիմն էր, այսպէս կընէին, հապա ուրիշներուն ինչեր չէին ըներ »:

Էֆէնտին շուարած էր: Դարձեալ իր Օրթագիւղի բարեկամները կը գտնէ. բանտէն ազատելուն համար իրեն կ'այցեելեն մտերիմները խնդակցելու: Էֆէնտին իր գլխուն եկած փորձանքները աստուածային պատիժ կը համարի, վասն զի դարիւր տէրտէրին՝ Յուսիկին հետ շատ խիստ վարուած էր, և այդ գործը իրեն խիղճը կը խայթէր. տէր Յուսիկը իր յեղափոխական առաքելութիւնը կը շարունակէ գաւառներուն մէջ. բանտերու, արսորի կ'արժա-

նանայ և յետոյ դարձեալ Պօլիս կ'իյնայ: Հայրապետ էֆէնտին կ'այցելէ տէր Յուսիկին աղքատիկ սենեակը. խօսակցութիւնն ին կը դառնայ կարմիր պատահարներու վրայ, ու Հայրապետ էֆէնտին այլ ևս փոխուած է, հրացած է տէր Յուսիկ քահանայի վրայ, կը սիրէ անոր զաղափարները ու կը մտածէ, որ ազգը իրօք երջանիկ պիտի ըլլար, եթէ այդ քահանային նմանները շատ ըլլային.

« Ու նոյն րոպէին, տէրտիրոջ խօսքերուն տպաւորութեան ներքեւ, որոշեց ազգին՝ տէր Յուսիկին պէս քահանաներ պատրաստելու համար ամեն ջանք ընել: Այս որոշումը նոր հոգի տուաւ իրեն, մէկէնիմէկ զինքը նոր մարդ ըրաւ: Իր կեանքը մեծ նպատակ մը ունէր: Անցեալը անցած էր նայելու էր ապագային: Իր խորհուրդները րոպէաբար ցոլացեր էին՝ տէրտէրին խօսքերուն իր մտքին տուած զարկերէն:

« Մութը կը կոխէր: Հիւրը ոտքի ելաւ մեկնելու:

« — Տէր հայր, — ըսաւ, — թերևս երկար ատեն ալ չտեսնուինք: Աստուած բարի ճամբորդութիւն տայ: Երկիրդ եթէ բանի մը պէտք ունենաս, պատրիարքաւրանի միջոցաւ ինձի հաղորդէ, պէտք եղածը կ'ընեմ:

« — Աստուած պակաս չընէ, էֆէնտի:

« Ու էֆէնտին յառաջացաւ դէպ ի տէրտէրը և, անոր ձեռքը համբուրելու համար՝ քաջած ատենը, իր զրպանէն ալ պզտիկ քսակ մը հանեց, մէջը լեցուն ոսկի, և քահանային ձեռքը դնել ուզեց: Անիկա ետ-ետ գնաց.

« — Կ'աղաչեմ, էֆէնտի, նեղութիւն մի՛ կրէք: Ես բանի մը պէտք չունիմ: Ուրիշ աւելի նեղութիւն ունեցողներ կան:

« — Չէ՛, տէր հայր, չէ՛. ան, աս քեզի համար չէ:

« Ու ծանր խորհրդաւոր ձայնով մը, ցածկեկ, աւելցուց.

« — Ժողովրդիդ համար վառօդ, հրացան գնէ: Խոհեմութիւնը զէնքին մէջն է: « Որ ո՛չ սուր առցէ, սրով անկցի »:

« Տէրտէրը նուէրն ընդունեց և էֆէնտիին երեսը նայելով, ժպտուն.

« — Աս կարմիր ժամուց է, — ըսաւ:

« Ու երկուքին աչքերն ալ նորէն իրարու հանդիպեցան: Անոնց մէջ կը վառէր հայ աղքատին ու հայ հարուստին հազար տարուան ատելութիւնը մահմեդական թըշնամիին դեմ »:

Գերապանծ վախճան: Էֆէնտին յեղափոխական դաւանանքի հաւատացեալն է այլ ևս, իրեն առաքեալն է Տոմոսզ գիւղի

տէրտէրը, որ պահ մը արհամարհուեցաւ, արսորուեցաւ: Եւ ի վերջոյ այդ վսեմափայլ էֆէնտին անոր ոտքն էր ինկած: Նիւթը և ամբողջ վէպին մարմինը ողջ է, կազդուրիչ, անոր երակներուն մէջ կ'եռայ յեղափոխութիւնը:

Տէրտէր և էֆէնտի ամենահաւատարիմ գոյներով նկարուած են: Չմայլելի է խօսակցութիւննին, բնական և շատ յաջողած: Ուշագրաւ է վիպասանին հեգնական ոճը. ամենէն լուրջ և արհաւիրքի վայրկենին իսկ երգիծական խայթոցը չի մոռնար. կը գրէ.

« Հինգ տարուան մէջ արտասահմանէն նորանոր թերթեր եկած էին: Գիւղացի տէրտէրը երբ թերթի մը մէջ կարդաց ո՛չ միայն թիւրքիտն, այլ և ուրիշ պետութիւններ ալ հայոց ձեռքով կործանելու ծրագիրը, վարժապետին խոստովանեցաւ որ մտմտուքը զինքը առնել կը սկսի:

« — Պարոն Արշամ, — ըսաւ, — շատ կը վախնամ, որ գուցէ սա ամենուն վրայ կայ՝ տակը չկայ: Խենթ են ի՞նչ են ասոնք: Մեծ քար վերցնողը չի կրնար նետել: Աս մեր աղբրտանքը շատ կը պոռան և ուժով ուժով. վախնամ թէ «գատարկ կարասը զօրաւոր ձայն կը հանէ» ըսուածը ըլլայ »:

Արփիար ամենէն աւելի իր երգիծական ոգին ցոյց տուած է տէրտէրի և Հայրապետ էֆէնտիի միջև եղած և աղօթքի շեշտերուն վրայ հարցուպատասխանի ասոն. ծիծաղաշարժ է այդ ոճը և սիրուն: Եւ նկատելի է ամբողջ վէպին լըջութիւնը. թեթև ոտմանդիկ ոճ չունի, երևակայութեան խանդավառութենէ ալ զուրկ. այս վէպին հրապոյրը յեղափոխական ըմբոստացումի հոգին է. ու ամենէն զբաւիչը տէրտէրի մը կարմիր առաքեալ մը ըլլալն է, և սրտի ամենէն աւելի զպչողն ու սփոփողը՝ վսեմափայլ պահպանողական էֆէնտիին յեղափոխութեան մէջ մկրտուելն է: Ու այս ամենը ապացոյց մըն է, որ վիպասանը կը սիրէ հայը, անոր շահերը, անոր ազատութիւնը, թէև երբեմն Հայրապետ էֆէնտիին խոհեմութեան ղերը կը կատարէ, բայց գրեթէ միշտ հատուցեալ յեղափոխական մը:

Եւ ուրիշ կերպ կարելի չէր ըլլաւ. գրչով ալ, սրտով ալ ազգասէր էր վիպասանը:

Գ.

Արփիարի ազգասիրութիւնը անգուսպ է. երբ գրչին նիւթ կ'ըլլայ ազգասէր զրական գործիչ մը, այլ ևս կը բացուի խանդը, ու վէպին մէջ արձակ ու միօրինակ գրիչը՝ կենսագրականին մէջ կը սաւառնի քերթողական թևերով, իր գրիչը շատ անգամ քնար կը դառնայ. գողարիկ, սրտագրաւ գեղանի նմանութիւն, պատկերներու փաղփիւններ կը շեղջակուտին կենսագրական էջերուն մէջ: Ու փորձը այդ զրական գեղանկարներու առած են անոնք՝ որ կարգացեր են իր Հոյժարտիքները Եգիպտոսի «Շիրակ» հանդէսին մէջ: Տեսէք ինչ արձակ հովուերգական հրապոյր մը ունի իւթիւճեանի կենսագրականին վերջաբանը.

« Խտալական գիւղի մը մէջ դեռ կ'ապրի ծերօն ծառ մը, որ թէև հազար եօթ հարիւր տարի առաջ տնկուած — ըստ ականգութեան — բայց կը յարատևէ ամեն զարնան ծլիլ ծաղկիլ, վասն զի իրեն հող ունի գերեզմանը սուրբի մը, որուն ոսկորներէն իր կեանքին հիւթը կը ծծէ: Հրաշապատում զրոյց, բայց խորհրդա-

նշան: Ժողովուրդը այդ սուրբը կը ճանչնայ իբր՝ Իլ սանքօ արմեօ, «հայ սուրբը»: Երկրորդ դարուն սկիզբները մեր երկրէն Խտալիա եկած, հոն քրիստոնէութիւն քարոզած, մարտիրոսացած: Այս՝ ճշմարտութիւն: Մեր գրականութիւնն ալ՝ մշտադաւար պիտի ապրի և եկող ու գացող սերունդները պիտի հովանաւորէ, եթէ այդ ծառին հանգունակ՝ մինչև արմատները մեր մտքի սրբերանց ոսկրտանքէն հիւթ ծծեն, իրանն ալ բաց օդին մէջ սաւառուն, դէպ ի վեր, դէպ ի երկինք բարձրուղէշ, արևուն լոյսէն լափէ նոր կեանքին աննդառութիւնը »:

Կան գրիչներ, որ որքան ալ պարզ գրեն սովորական նիւթի մը վրայ, սակայն անոյշ բուրում մը կը կնդրկի անոնց զրած էջերէն. այդ զրական հրապոյրն է, ուսկից ունի Արփիարինը: Եւ Արփիար Արփիարեան, ամեն բանէ վեր, հայ ընկերական զրագէտն է. շատ լաւ ըսած է իր է՛ն յխերիմ զրագէտ պ. Արշակ Զօպանեանը. « Ապստամբ մտքով մարդ մը, ամեն պայմանադրութեան և ամեն նախապաշարման թշնամի, Արփիար Արփիարեան, մեծ աշխոյժով զարգացուց այս ընկերական զրականութիւնը. յուզմամբ ու հեզնութեամբ լեցուն բարբերու

նկարիչ մը եղաւ, կ՛ծու քննադատ մը և հայ մտքին կարևոր լծարձակիչներէն մէկը»։ Ես պիտի ըսեմ անզուգական լծարձակիչն։



Բազմամբոխին մէջն ենք, կրակ ու սուր կը ճարակին, կը յօշոտեն այդ մարդկային կոյտը. կը տեսնենք գլուխներ կըտրուած, կախուած. անդին՝ շատերուն սիրտ ու աղիք սուրերու ու սուիններու հարուածներով դուրս ինկած, ուրիշներուն զանկերը ջախջախուած, ուղեղին դուրս թափած. մաս մը կրակներու մէջ ողջ ողջ կ'այրին. ճիչ, աղաղակ, ցաւերու կսկծազին պոռչտուկ. ու այդ արհաւիրքի դաշտէն երբ անհա մէկը զանգաթի թէ հարբուխ է, ինչ կ'ըսէք. և ինչ որ ձեր մտքէն կ'անցնի, նոյնը պիտի ըսէի այն կարգ մը վիպականերուն, որոնք, մոռցած մեր հասարակաց ամենէն սոսկավիթխար մարտիրոսացումի պատկերը, չեմ գիտեր ինչ միամիտ նորասիրութեամբ ընկերվարական գրականութիւն մը մեր առջև կը հանեն։ Ժամանակն է։ Ո՞վ չի ցանկար, որ մխիթարական ըլլայ աշխատաւորի ապրուստը, բայց քանի որ հիմա նախ անոր կեանքը

ապահովցնելու խնդիրն է մէջտեղ ինկած, ուրեմն ամենէն առաջ կարևորը, էականը մտածենք, յետոյ հաճոյականը։ Արփիարի «Ոսկի ապրջան» վէպը առիթ կ'ըլլայ իմ այս խորհրդածութեանց։ Նախ վերջերը կ'ապենք, յետոյ արդուզարդի խնդիր։ Ինչ է սակայն այդ վէպին նիւթը։ Խնդումերես աղջիկ մը՝ Արմիկը պիտի կարգուի, սակայն պսակը կ'երկարի, կ'երկարի, ու աղքատութեան պատճառաւ ան իր նպատակին չի հասնիր. իր հօրեղբայրը անոր վրայ կը գուրգուրայ, վասն զի ան որը է և սիրելի. Աստուած իրեն զաւակ չէր տուած, այս պարտիկ աղջիկը իր տանը էլտօրայ ծաղիկն էր, այն ծաղիկը, որուն համար կ'աւանդուի, որ երբ վշտահարնեւրու սենեակը դրուէր՝ ամենուն տխրութիւնը կը փարատէր։ Վէպին մէջ սակայն ամենէն հետաքրքրական դէմքն է հօրեղբայրը, Ղուկաս աղան, որուն տարաբաղդ թշուառութիւնը պատկեր մըն է աշխատաւորաց զրկանքներուն. պաշտպանելով անոր դատը, ընկերվարական խնդիր մըն է, որ կը յուզուի վէպին մէջ. և այդպէս Արփիար կը պաշտպանէ շահը, իրաւունքը գործաւորաց։ Արփիար ռամկավարական... այո՛, այլ ըստ պարագային։ Տպարանապետը կ'արտաքսէ այդ բազմամեայ, բազ-

մավաստակ հօրեղբայր Ղուկաս աղա գրաշարը, առարկելով որ շատ գործ չկայան կը պաղատի, կ'ուզէ որ իր վրայ գրթայ, իրեն մեղքնայ. ու տէրը լրբօրէն կը պատասխանէ. «Շատ մեղքնանք նէ, ետքէն մենք ալ մեղքնալու կ'ըլլանք»: Ծերուկը տրամահոծ վիզը ծռած դուրս կ'ելլէ. ու այդ խեղճը՝ տպարանապետին շահերը ամենէն աւելի ինքն էր մտածողը, անոր ամենէն հաւատարիմ ծառայողը, ու ժամանակին, երբ իր ընկեր զրաշարներ տիրոջ դէմ կը գանգատէին, ինքը հեզնաժպիտ գայրոյթով կ'ըսէր.

« — Տօ՛, ի՛նչ կայներ տէ, էւել պահաս խօսքեր կ'ընես. էֆէնտին ի՛նչ յանցանք ունի քի՛ւ ըսելիք բան մը ունիս նէ, գնա՛ Աստուծու բողոքէ, որ քեզի մարդ է ստեղծեր: Ես էյէր մէյմըն ալ աշխարհք գալու ըլլամ նէ, Աստուծու պիտի աղաչեմ որ, եթէ հոս նորէն ասանկ բանուոր պիտի ըլլամ նէ, թո՛ղ ասանգամ վրաս զթա և զիս էշ ստեղծէ: Էշը շատ բեռցնելու ըլլաս նէ, խաֆան կը տնկէ կը կենայ. տէրը բան չունի նէ թո՛ղ վրան փատ կոտորտէ: Ետքը, ետքը՝ կը պարտաւորուի իշուկը փայփայել, ախոտը տանիլ, ջուրը խմցնել, սաման տալ. աղուորիկ մըն ալ կը հանգչեցնէ, սիրտը

կ'աննէ, միւս օրն ալ բերը կը թեթեւցնէ որ չըլլայ թէ նորէն ինատը բռնէ: Իր իրաւունքը պաշտպանող էշը անօթի չեն սատկեցներ: Մարդ չէ քի, կոնակին թեքմէն տան դուրս նետեն »:

Ու այս տողերուն մէջ կը թանձրանայ գործաւորական կեանքի դառնութիւնը, թոյնը, ճակատագրական անժպիտ անզթուութիւնը: Եւ ի՛նչ է իրօք բանւորներու կեանքը:

« Իշտէ թա՛մ իմ կեանքս: Չմե՞ռն է, առտուն մութն ու լուսուն ելիր վապօս վազէ, անձրե՛ւ է, ձո՞ւն է, հո՞վ է. որո՞ն հողը. զընկըռտա՛: Ոտքէդ զլուխդ ջուրերը թաթխուած տպարան եկուր. մինչև իրիկուն ոտքի վրայ դատիր ու դատիր. բերանդ քիչ մը պանիր հաց նետէ, բանէ՛ մինչև մութը կոխէ. ու նորէն թէքնէֆէս վապօս վազէ. պատառ մը բան ճտկէ, շնթըռկէ: Առտուն, նորէն վազէ: Ամա՞ռ է, վերէն կրակնե՛ր կը թափին, վազէ վապօսին, վազէ տէ վազէ: Արուն քրտինքները մտած մինչև իրիկուն խավուռամիշ եղիր, մութուն, հելլանք տուն ինկիր... Էյ աս ապրանք է »:

Ապրելու կերպ մը: Ու ամեն մարդ իր ապրելու կերպին գերին է: Եւ խնդիր է թէ այդ գերութեան ո՞վ է պատասխանա-

տուն. բանդը, ճակատագիրը: Ես բնաւ մտադիր չեմ երկտողի մէջ ընկերավարական սկզբունքներու ջատագով կամ դատաւոր հանդիսանալ, միայն այսքան կարող եմ ըսել. ուսը առած մը ունի՝ « թշուառութեան տունը անմտութեան բռնակարանին քովն է... »: Ես ասով բնաւ մտադիր չեմ Ղուկաս հօրեղբայրներու անբաղդութեան վրայ ծիծաղիլ: Կ'ուզեմ ըսել թէ գործաւորական շրջանին թշուառութեան ամենէն մեծ պատճառը երբեմն անձնական մոլորութիւններէ, ախտերէ կրնայ առաջ գալ: Ու խեղճ Ղուկաս աղան բարի է և միանգամայն թշուառ, սակայն այդպիսիները խղճալի են և քիչ: Մեր խօսքը՝ քնդհանուրին է: Արփիար, իր ուսման վարական ջատագովումին մէջ, չափազանց հակասութեանց կը դիմէ. Ղուկաս աղան կը տրամաբանէ.

« Մենք, փանօք Աստուծոյ, հոս Սթամպուլ, ո՛չ տուրքին ինչ ըլլալը գիտենք, ո՛չ ալ ձեռքերնուս բան մը քաշող առնող կայ, բայց մեր վիճակին նայելով, հազար երնէկ կուտամ Հայաստանի ան հարստահարեալ հայոց: Հո՞ս մեր չորբաջիները, էֆէնտիները բերաննիս չոր հացի մը պատան ալ չեն թողուր. ան ալ խափովը կ'ընեն, իրենք կ'ուտեն »:

Ու հայաստանցիները, հարստահարեալ հայ զաւակները աւելի՞ երջանիկ են, քան թէ Պօլսոյ գրաշարները... Ինչ ողջամիտ տրամաբանութիւն...:

Արփիարի այս վէպը ընտանեկան կամ ընկերական պատկեր մըն է, գեղեցկագիտական մասերը բոլորովին համեստ. թող տուած է, որ Ղուկաս աղան պատմէ պօլսեցի աղքատ հայուն ներքին կեանքը, և մենք կը ծանօթանանք այդ կենցաղին հոգեբանութեան: Անմեղ կեանք մը, մատնուած խստերախ ճակատագրին: Ու կը ցաւինք, որ անհատական հաւատարմութիւնը, անմեղութիւնն ու բարութիւնը վարձատրուած չեն. ինչո՞ւ, վասն զի զըրկուածը չար չէ, խորամանկ չէ, խարդախ չէ, նենգաւոր չէ. չէ՞ որ, ապրելու համար, պէտք է չար ըլլալ. հանգամանքները գիտեն: Չարութիւնը դարուս աւետարանն է դարձած:

Ե.

Հայ դարիպի պատկերը ցոյց կու տայ Արփիար. կը սոսկանք. անգթութիւնը կը հիւժէ կեանքեր, որոնք Հայաստանի դաշտերուն վրայ դարաւոր կաղնիներ ըլլալու սահմանուած էին, ու հալածանքը, պա-

տառ մը հացի ինդիրը, օջախին լոյսը վառ պահելու մտմտուքը նետեր էր Հայաստանի կտրիճները Պոլսոյ խաներու մէջ ու դարիպը երբ հիւանդանար, մահը իր առջև ցոյց կուտար իր դաժան դէմքը: Եւ այն տունը որ ազգին տունը կոչուած ազգային հիւանդանոցն է, դարիպին համար ան գերեզմանի դուռն էր. « Ընդ իս մուտք են ի քաղաքն աղիտաւոր... »: Տանդէական այս տողը թաղմանական՝ կարելի էր արձանագրել այն տան դրան վրայ, եթէ ոչ ամենուն, գոնէ հայ դարիպներուն համար ստոյգ էր այդ: Բայց մենք դիտենք պատկերը:

Բալուցի դարիպ թորոս աղբարը լաստակերտէ մը վայր կ'իյնայ և կը վերաւորուի, չուզեր ազգային հիւանդանոցը երթալ, վասն զի « հոնկէ դարիպի ճաղը դուրս կ'ելլայ »: և իեղծը վաստկած ոսկիները կը հալեցնէ իր կեանքը փրկելու համար. ու կ'ուզէ երկիր վերադառնալ. բայց ինչո՞վ, ո՞վ պիտի հոգար զրամը. տունէն կը սպասէին ստակ, ապրելու ստակ: Կը մտածէ որ ինքը քառասուն ոսկի առնելիք ունի ճարտարապետ Գասպար էֆէնտիէն, կը դիմէ անոր, և այն կոպտաբար ծառայի ձեռքով կ'արտաքսէ զայն: Ու այդ Գասպար էֆէնտին ժամա-

նակին աւագ կրող մը եղած է և իր ճարպիկութեամբ յետոյ ամենէն հարուստ վսեմափայլը կ'ըլլայ: Թորոս աղբարը դարձեալ կը հիւանդանայ ու, մահամերձ, կը ստիպուի ազգային հիւանդանոցը փոխադրուիլ, ուսկից սակայն « ճաղը դուրս կ'ելլայ »: Յուզիչ է այս պատկերը. դարձեալ գործաւորի կեանքը կը պաշտպանուի, ու շատ պերճօրէն: Ծայրայեղ է հայ հարուստներու անզգամութիւնը, և անխիղճ ու անիրաւ՝ ազգային հիւանդանոցի վարչական մարմնոյ պորտաբոյժ, կողոպտիչ արարքները: Սակայն այս վէպին մէջն ալ բաղդի տխուր կատակերգութիւնը զգալի է: Գասպար ու թորոս՝ երկուքն ալ ծագումով ժողովրդի խեղճ աղքատի ծնունդ, երկուքն ալ կ'աշխատին. Գասպարը կը յառաջանայ, կը գործէ, մեծ ճիգ կը թափէ և, վերջապէս, կատարեալ էֆէնտի մը, հարուստ աղա մը կը դառնայ. իսկ թորոսը, իր այնքան աշխատելովը հանդերձ, կը ջախջախուի աղքատութեան հարուածներու տակ: Եւ այս պարագային՝ ինչպէս կարելի է մեղադրել, կամ խորթ աչքով դիտել Գասպարին յաջողութիւնը. ահա՛ ընկերական հարց մը. մենք կը ցաւինք թորոսին թրշուառութեան վրայ և կ'ուրախանանք Գաս-

պարին ճարպիկ ու կիրկիր բնաւորութեամբ փառքի մը հասնելուն համար: Միայն անհունապէս կը դատապարտենք իր այլանդակ ու կոպիտ, անխիղճ վարմունքը, որ կ'ունենայ աղքատ վաստակաւորի մը հետ:

Գրականօրէն արժանիք մը ունի այդ վէպը. յաջող է և ախորժով կը կարդացուի. կը տխրինք, կուլանք տառապանքի գաւակներուն վրայ:

*
**

Գեղարուեստը քայլ առ քայլ յառաջադիմած է Արփիարի մէջ: Սիրած է սրբագրել ու սրբագրուիլ:

Վաղուց ծանօթ էր իր նորավէպերով, որոնց մասին կովկասի մամուլն ալ շատ համակրելի լեզու մը գործածեր է: Թէև քսան-քսանը հինգ տարի անցնելէն վերջը, հեղինակը անոնց վրայ չէր ուզեր նայիլ. իր գրչին խորթ ծնունդներն էին անոնք: Ի՞նչ է իր այդ «Երազի մը գինը» անտարակոյս հոգեբանական մէկ անըրջանք. բայց այդպիսի երազներ հեղինակը չէր ուզեր տեսնել «Կարմիր ժամուցը» գրած օրերուն: «Երազի մը գինը» կեանքով գնուած է: Հոգեբանական աւագ դե-

րասանը միամիտ սիրատարփիկ Հրանտն է՝ Սօֆիին սէրը նախ վառեր, բռնցկցուցեր էր գինը, և յուսախարութեան օրերուն՝ հիւժեր, հալեր էր և դալկահար կը հազար: Խեղճ Հրանտ. «Ախ, աղջկան մը սէրն ուզեց վայելել, երազ մըն էր, բայց կեանքն էր ահա, որ այդ երազին գինը կը լինէր». և ինչպէս. անհաւատարմութիւնը սիրահար սրտին համար գերեզման է. Սօֆին անհաւատարիմ կը գտնուի Հրանտին, և սա, անփորձ ըլլալով կեանքի կծու ու տխուր կատակներուն, փիլիսոփայութեամբ չի խորհիր ու կեանքը սիրոյ զոհ կուտայ. «Հարսնեղաներու կառքերն յանկարծ կանգ առին: Բանկալթիի փոքրիկ տունէ մը ժամկոչ մը, մէկ քանի տիրացուներ, երկու տէրտէր և դագաղ մը դուրս կ'ելլէին. պէտք էր տեղի տալ: Հարս ու փեսայ իրենց կառքերու ապակիներէն դուրս նայեցան. խեղճուկ ձայն մը կուգար.

« — Վախ Հրանտս, վախ գաւակս:
« Հրանտի դագաղը դուրս կը հանէին:
« Սօֆիի հարսանեաց կառքերն էին:
« Այս է կեանքը »:

Համեստափայլ օրիորդ Սօֆին, մեծապատիւ Յակոբ էֆէնտիին հետ կ'երթար հարսանեկան կառքով, և Հրանտ կ'եր-

Թար գերեզման. հողն էր իր սիրահարու-
թեան անկողինը: Հոն ոչ լաց կար և ոչ
Սօֆիին պատրանքները:

Վիպակին հոգեբանութիւնը նորութիւն
մը չէ. ձեւը բոլորովին խեղճ, գիւտը շատ
սովորական, և եթէ կայ շնորհք մը, այդ
վիպակին ողբերգու անակնկալ վերջաու-
րութիւնն է: Թէև այդ կէտին մէջ իսկ՝
Արփիար գրչի և զրական արուեստի տե-
սակէտով խակ է, դեռ աշակերտ:

Արփիար իր վառ երիտասարդութեան՝
դեռ անորոշ քայլեր կ'առնէ ուսմանդիկ
զրականութեան մէջ: Իր վիպակները լրա-
գրական թերթօններու դիմակով կ'ուզեն
դեր մը կատարել: Անտարակոյս ինչ որ
կը սիրէր, զայն կը գրէր. կը պատկերէր
վիպական էջերը, որոնք իր երիտասար-
դական օրերուն արիւն ու սէր կը հոտին.
արիւնը սիրոյ համար թափած, սէրը
Մաքրիկներու, Սօֆիներու, Գոհարիկներու
համար ձօնուած: « Կատակ մը » վիպակը
արժանի էր թեթև օրագրի մը թերթօնի
դեր կատարելու: Այդ վիպակին մէջ խան-
դավառ է իր գրիչը, պատկերները ուսման-
դիկ են: Գիւրին էր այդ տեսակ վիպա-
սանական նկարներ յղանալը. թէև հոգե-
բանական վէպ, սակայն նորութիւն մը
չկար հոն. կեանքի սև կատակներու պատ-

կերացում մըն էր և ընդօրինակութիւն: Իր
պարտիզի տարփատենջիկ տեսարանը չի
յանձնարարեր տաքարիւն դեռափթիթ ըն-
թերցողներուն, վասն զի Մաքրիկն ու Վա-
հրամ գինովցած են: Ու խեղճ Արփիարը
ինքնին ինձ ըսած է, թէ կէս քուն, կէս
արթուն ատեն՝ զրաշարի տողեր հասցնե-
լով՝ հապճեպ, տագնապալից վայրկեան-
ներուն գրեր է գայն, առանց անդրադառ-
նալու թէ գրչէն ինչ կը թափի:

Զ.

Առհասարակ Ա. Արփիարեան պարզ
պատմող ուզած է մնալ, մանաւանդ իր վեր-
ջին վէպերուն մէջ: Նկարագրական պատ-
կերները, որոնք շատ մեծ հետաքրքրական
պահանջներ են վէպերու մէջ, չի յարգեր
Արփիար. 1886-ին պ. 1էօ Արփիարի
« Նորավէպքի » մատենախօսականին մէջ,
որքան ալ շատ լաւատես լեզու մը բանե-
ցուցած է, սակայն ճշգրտօրէն դիտել կու
տայ թէ. « պ. Հայկակ (Արփիար) շատ
լաւ կանէր, եթէ իր վէպերի մէջ զար-
գացնէր նկարագրական բաժինը. սրտի և
հոգու զգացմունքների երկարապատում բա-
ցատրութեան փոխանակ՝ որքան լաւ կը

լինէր, եթէ նա նկարագրէր բնութեան տեսարանները, ընտանիքի շրջանները, ապրուստի պայմանները, մանաւանդ աշխատէր, որ զիմազուրկ գործողներ չը լինեն» : Եւ ուրիշ շահեկան դիտելու կէտեր ցոյց կուտայ Արփիարին :

Նկարագրութեանց բնաւ հետամուտ չեղաւ, բայց վիպական գրիչը զգալի կերպով կատարելագործեց :

Գրչէն անբաժան կեանք մը ունենալով և ի բնէ յարմար՝ գրականութեան բոյրը և գեղը ծծելու և իւրացնելու, կրցաւ աշնուական միտք մը մշակել իր մէջ : Ռընան իր մեծ վարժապետն էր, անկէ սորվեցաւ ոչ ուսմանդիկ գրականութիւն. Ռընան հակառակ էր վիպասանութեան. Արփիար իր այդ վարպետէն սորվեցաւ նորակերտ բառերու յղացումը և անոր փիլիսոփայական հոգին ուզեց հագնիլ. իր երկրորդ վարպետն էր Նիցչէ. ասկէ սորվեցաւ գերմարդկային հոգեբանութիւնը. բայց Արփիար իր հեզահամբոյր խառնուածքովը՝ կարող չէր լիովին արձագանգը ւալ Նիցչէի խրոխտ ձայնին. սիրեց սակայն մեղմ արձագանգը նուազել անոր իմաստասիրականէն : Սկզբունքով աւելի ուզեց հետևիլ Նիցչէի, քան թէ գրչով : Սակայն ուզեց խրոխտ իմաստասէրին պէս

կերտել լեզու մը, իմաստներուն յարմար նոր նոր բառեր կազմել, և այդ իսկ պատճառաւ իր գրական յօդուածներուն մէջ՝ ոչ միայն գրաբար բառարաններէն կը գործածէ սիրուն բնորոշ բառեր, այլ և շատ անգամ ինքը հեղինակ կը դառնայ նոր նոր բառերու. բառամու էր, և իր այդ նորութիւնը ծաւալեց Թիւրքիոյ հայ մամուլին մէջ. այսօր այդ մամուլը լրագրական կամ գրական էջերու մէջ՝ ճոխ բառերու գանձարան մը ցոյց կուտայ : Բառամու ուսման իրաններէն մին՝ Արփիարը նպատակին հաջած էր. մեր նոր աշխարհարարը հին և նոր պերճ բառերով կը հարստանայ : Էմիլ Զօլա, Ալֆոնս Ծօտէ, Փոլ Պուրժէ, Փիէր Լօղի, և Կի տը Մօփասան և ուրիշ ֆրանսացի վիպասաններ սիրուած են Արփիարէն. բայց ասոնցմէ ոչ մէկուն լիովին հպատակած է : Անոնցմէ անկախ է. միայն կրցեր է գաղափար կազմել, թէ ինչ է վիպասանական պարզութիւնը : Անոնք այդ մասին իրեն գեղեցկագիտական դպրոցի, ոճի յստակութեան, գեղարուեստի պարզութեան օրինակ եղած են : Ֆլօպէր իրը վիպասան՝ ձօնարանի պէս վեհութիւն մըն է Արփիարին մէջ : Սակայն մեծանուն վիպասան վարպետէն՝ շատ քիչ օգտուեր է. անոր երեք վիպա-

կները միայն իրեն ներշնչեր են. անոնցմէ առած է Արփիար ընկերական, տնական հոգեբանութեան ցուրերը, մի քիչ հեգնութիւն և ոճի պարզութիւն: Աւետարանը սիրած է և անոր համար միշտ անոր էջերէն օրինակներ կը բերէ իր վիպակներուն մէջ. այդ ալ կը պարտի ֆրանսացի վարպետ վիպասաններու ազդեցութեան:

Ամեն պարագային՝ իր գրութեանց մէջ ակնյայտնի է երգիծանքը, զրչի ծայրով մեղմ խայթերը և սրամիտ հեգնութիւնները. այդ մասին աշակերտած է Անաթոլ Պրանսի: Եւ այդ տաղանդաւոր մեծ գրագէտին կը պարտի նաև իր սկեպտիկ զրիչը և հոգեբանութիւնը: Սիրեց և ուսումնասիրեց Մօրիս Մէթէրլինկը. սակայն ժամանակ չունեցաւ պուտ մը իմաստասիրութիւն խմել անոր խորափիտ փիլիսոփայական շրջորէն: Եւ արդէն Մէթէրլինկ մեր դեռատի գրականութեան համար՝ երբէք շահեկանութիւն մը չունէր:

Արփիար յոռետես էր: Նիցչէն իրեն ներշնչած էր չզոհանալ քիչով: Բարձր, գերազանց զազափարնեքով, մանաւանդ անսովոր նորութիւններով պէտք էր օժտել բարեշրջական գրականութիւնը: «Հայրենիքի» խումբի գրական վարիչները խիստ քննադատական խարազանը սկսան

բանեցնել: Զգուշանալու ժամանակն էր. թեթև գրականութիւնը երկար ատեն շփացուցած էր բիւզանդական հայ գրիչները: Յոռետեսները իրենք անձամբ օրինակ տուին լըժօրէն գրելու և ջանացին ստեղծել գեղեցկագիտական շրջան մը: Վարժարաններէն նոր հասած գրագէտ աշակերտները՝ հոն «Հայրենիքի» էջերուն մէջ գտնուեցան միայն անոնք՝ որ կարող էին գրաւիչ ըլլալ իրենց զրչով: Պ. Յովհաննէս Շահնազարեան՝ «Հայրենիքի» խմբագրապետը՝ ամենէն մեծ յոռետեսն էր. յետոյ կուգար Արփիար. այս երկուքը թոյլ չէին տար որ «Հայրենիքով» տարածուին խեղճ, ողորմելի փքոցուոոյց մտքեր: Այդ ազատամիտ թերթը իր կորովամիտ վարիչներով՝ սանձեց պօլսական անիմաստ գրչակները: Ու Պօլիս սկսաւ արտադրել գեղեցկագիտական սիրուն երկեր: Սակայն 1896ի ջարդի դէպքերը այդ թերթն ալ կը խափանեն. անոր վարիչները տարտըղնած են: Մէկ քանի տարի յետոյ՝ «Հայրենիքի» գրագէտ խումբը Լօնտօնի մէջ զիրար կ'ողջունեն. ազատ և լուսաւորեալ աշխարհի մէջ, ազատ շունչ կը քաշեն գրական ըմբոստ մտքեր՝ Արփիար, Լևոն Բաշալեան. այս երկուքը կը հիմնեն «Նոր-կեանք» կիսամսեայ գրական և

քաղաքական թերթը: Անոր մէջ լոյս կը տեսնեն Օտեան Երուանդի, Վահրամ Սվաճեանի, Սուրէն Պարթևեանի գրական էջերը: Բայց թերթին բուն հոգին ինքը Արփիարն է: Ազատ աշխարհը իր յոռետեսութեան սնունդ տուաւ, գրական շարժումին վրայ միշտ բարձրէն դիտեց: Գրական յոգուածները՝ հոն աւելի բարձր ճամբայ մը բռնեցին դէպ ի գեղեցկագիտականը դիմող: Սոհասարակ ամեն յոգուած յստակ, կտրուկ, որոշեալ բառերով կը ձուլուին: Այդ մասին մեծ վրէժխնդիր է Արփիար: Եւ այդ վրէժխնդրութիւնը դեռ աւելի զգալի ըրաւ իր « Հայ հանդէսին » և « Շիրակին » մէջ: Իր յոռետեսութեամբ և դժուարահաճ բնաւորութեամբ՝ պարբերական մամուլի մէջ կը ստեղծուէր, նկարէն գրական պատառիկներ:

Ճամանակակից գրական, քաղաքական և կուսակցական խնդիրներու մասին՝ խիստ մեծ պաշար ունէր և տարօրինակ դիւրութիւն գանոնք արտադրելու. սակայն յոռետեսութիւնը ամբարտակ մըն էր իր մտաւորական արշաւանքին: Իր կեանքի նիւթական նեղ պայմաններու մէջ՝ ստիպուած էր գրել, յոգուածներ հասցնել. ու մէկ փոքր քրօնիկի համար՝ հարկ կ'ըլլար աշխատիլ վեց ամիս, վասն զի իր վարպե-

տը՝ Ռընան՝ իր « Գօրփիւսի » համար աշխատած էր քսան տարի. լաւ գործ մը արտադրելու համար, պէտք էր երկար, խստապահանջ աշխատութիւն: Արփիար անընդհատ կը գրէր և անընդհատ կը սրբագրէր. տեսած եմ « Մշակի » և իմ թերթերու համար իր պատրաստած լրագրական քրօնիկները, զոր տասը անգամէն աւելի գրեր ու սրբագրեր, ջնջեր և և նորէն գրեր էր. գրուածներուն դժուարահաճ ըլլալով՝ կըցաւ հիանալի ոճ մը ստեղծել: Գրական արհեստն ալ վերջերս անվիճելի էր իր մէջ:

Գրիչ մը որ գրականութեան լեզուով կը խօսի, իր մէջ անբաժան պէտք է ըլլայ գիտութիւնը և գեղեցկագիտութիւնը:

Արփիարի գիտութիւնը սահմանափակ էր, իբրև գեղեցկագէտ՝ գերազանցօրէն յարմար զլուխ մըն էր. մշակութիւնը ոչ լայնածաւալ: Իր կարողութեան աստիճանին համեմատ կը յանդգնէր, գրել, քննադատել նիւթը՝ զոր լաւ ուսումնասիրած էր: Բանասիրական հովեր ալ թէև երբեմն առած է, իր գրական ուղղութենէն պատահական շեղումներ համարելու է, և այդ ճիւղին մէջ բնաւ յաւակնոտ մը չէր: Այդ նիւթերուն վրայ կը գրէր իբր քրօնիկազիր՝ կագիրաձի:

Իր օրերու գեղեցկագէտ դէմքերուն վըրայ խօսելուն, իր ճիւղին մարդն է: Մեծ վարպետն է. իր մէջ ալ համերաշխ են գիտութիւն և գեղեցկագիտութիւն, որով կրցեր է անհամեմատ զրական նրբութեամբ վերլուծել իր դիւցազներուն հոգեբանութիւնը: Այդ տեսակ քննադատական տեսութեանց մէջ, ինքը զլասիք նկարիչ մըն է. ցոյց կուտայ գոյներու ներդաշնակութիւն, լոյսի, ստուերի յարմարութիւն. առարկայական հոգի, կենդանութիւն, նիւթերու դասաւորում. իր գրչին ստեղծումը համապարփակ յաջողութիւն մըն է:

Իր հողվրտիքներուն մէջ՝ գրիչը մեզի կը յիշեցնէ յունական անդրիններու գեղարուեստական ծայրայեղ կատարելութիւնը. ու կը զարմանանք թէ սովորական դէմք մը, դէպք մը՝ այնքան կրնայ յղկուիլ, ազնուանալ և ստիպել մեզի՝ լաւ կամ յոռի գաղափար մը կազմելու: Հողվրտիքի յառաջարանէն կարդա՛հինգ տող, կը տեսնես հոն խտացած տասնըճինգ էջ պատմութիւն, ակնարկութիւն, գիտութիւն, գեղեցկագիտութիւն, հտպտական խայթ, ազնուական յարգանք: Բաղդատականներ, նկարչական ցուքեր, գեղարուեստական անդրադարձութիւններ, նիւթէ նիւթ ուսումներ, իրոյստ լարախաղացի մը զգլխիչ

վարդապետութեամբ. կը սկսիս կարգալնիւթը, դիւցազը որքան և աննշան, սակայն գրիչը զքեզ կը դիւթէ, երբեմն ոչնչութիւնը գոյութիւն մը կ'ունենայ, և անակնկալներ. մոռացութեան անկիւնէն առաջ կուգայ հայ համայնքին պատուաբեր դիւցազ մը: Ու կ'ուրախանաս, որ մենք ունեցեր ենք ազնուական գործիչներ: Ուրիշ խնդիր, թէ իրօք անոնք ազնուական, զարմանալի դէմքեր են, թէ Արփիարն է զանոնք այդպէս փայլակնացայտ պատկերողը:

Բայց չէ՞ որ գեղեցկագիտութեան արհեստը ամեն տեղ կարող է գտնել գեղեցիկը և չեղած տեղը՝ յղանալ և համոզել մեր աչուրները: Կրպակ մը՝ որքան ալ աննշան և սովորական առարկաներ պարունակէ, ահա գեղեցկագէտը երբ իր հրապուրիչ լեզուով նկարագրէ հոն եղածները, ու ճարտար նկարիչը նկարէ զայն, շուտով կ'անդրադառնաք անոր գեղեցկութեան: Արփիար շատ անգամ անկենդան իրերու՝ իր գեղեցկագիտական կարողութեամբ հոգի, լեզու և նշանակութիւն տուած է՝ ճարտար նկարչի և արձանագործի քաջութեամբ:

Արփիար իբր գեղեցկագէտ՝ աւելի զրական քրօնիկներու մէջ փայլեր է, քան

թէ վիպասանութեանց մէջ: Թէև աւելի ցանկալի էր իբր վիպասան՝ իր գեղեցկագիտութիւնը ծաւալէր իր նորավէպերու և վիպակներու մէջ:

Իր գեղեցկագիտութեան ամենէն պաշտելի վարպետն էր Փրանսացի տաղանդաւոր և գեղապաշտ Կիւեօն, որուն գեղեցկագիտական հատորները Արփիարի աղքատ պայուսակին մէջէն անպակաս կ'ըլլային: Աղեքսանդր Մակեդոնացին՝ Հոմերի «Իլիականին» պաշտում մը ունէր. համանման երկրպագու էր Արփիար իր Կիւեօյի գեղեցկագիտութեանց հատորներուն: Ատոնք իրեն գեղեցկին դասատուներն էին: Սիրեց նաև շատախօս Ռէսքինը, և անկէ ներշնչուած է. պէտք է ըսել՝ լրագրական նիւթերու մէջ երբեմն ընտանի շաղփաղփութիւններէ զուշացած չէ. և այդ Ռէսքինին կը պարտի: Այդ մեծ քննադատ գիտուն վարպետին պէս շատախօս է, սակայն միանգամայն գեղեցկախօս և սրախօս եղեր է:

Մտքին աչքը բացուեր է պարկեշտագեղ վեներտիկի մէջ, Հ. Ալիշան՝ բանաստեղծ Նահապետի գրասեղանին առջև: Վոսփորի մշտածիծաղ ծփանքը օրօրեր և զարգացուցեր է իր երիտասարդութիւնը: Եւ իր շանթահար արևմուտքին՝ ան ար-

դէն ծանօթ է և ընտանի գեղեցկագէտ մեծ վարպետներուն: Իր հաշիշը էր գեղեցկին հոգին, և անով հայ զրականութեան մէջ տեսանք յղացումը գեղեցկագէտ Արփիարի մը:

*
* *

Արփիար կը սիրէր սիրցնել իր տարփատենչիկ հեղինակները՝ ուսկից զրական սնունդ էր առած: Կրնամ ըսել՝ միակ հեղինակն է եղած ինքը մեր զրական աշխարհին մէջ, որ անկեղծօրէն իր մուսայ վարպետներուն անունը արձանագրեր է և ամեն պարագային աշխատեր է, որ զանոնք կարգան նաև իր մտերիմ զրագէտները և զրագիտուհիները: «Արևելքի» և «Մասիսի» մէջ հրատարակած վիպակները պարզ գրութիւններ են. իր «Սրտի յաղթանակը» մտքի հոգեկան համոզումի պարտութիւնն է, «Հոգու զաւակը» ընդարձակ վէպ մըն է, փիձի մը պատմութիւնը. անոնց մէջ երևակայութեան թռիչ չկայ, բայց կ'ախորժիս անոնց, սիրով կը կարդաս. վարպետին հոգին հոն է, տոտէական հոգի: Խօսքը փոխանցենք իրեն Արփիարին. «Տոտէ հին բարեկամ մըն է ինձի համար, և թերևս Պօլսոյ

հայոց մէջ իր ամենէն հին բարեկամներէն եմ: Հիւկոյի մէկ գործը գնելու համար 20 տարի առաջ իրիկուն մը Բերա ելած էի, Վլայսի քով չգտայ այդ զիբըը, ու հոն տեսայ ղեղին կողքով հատոր մը, Fromont jeune et Risler aîné, զոր գրեցի: Քանի մը օր առաջ տեղական թերթի մը մէջ այդ գրքին վրայ յօդուած մը կարդացեր էի, Տոտէի անունը միտքս մնացած էր...: Այն իրիկունը, որ Տոտէի վէպը գնեցի՝ աւելի հետաքրքրութեամբ քան թէ համակրանքով էր որ սկսայ կարդալ. բայց քանի կը յառաջանայի, այնքան սիրտս կը տաքնար հեղինակին հետ վէպի մը հանգոյցները չէին, որ զիս շնչասպառ կը պահէին, այլ ամբողջ գրքէն բղխած փափկաշունչ տրտմութիւնը կը գրաւէր սիրտս: Շիտակն ըսելով, այդ միջոցին Տոտէն Հոմերոսէն աւելի հրապուրիչ էր ինծի համար, վասն զի մեր քովիկը գտնուողներուն կեանքի բանաստեղծութիւնն էր: Իրական վէպ այո բայց բանաստեղծութիւնը միթէ իրականութիւն չէ՞, զբացող սրտի մը տրոփիւններէն ներշնչեալ իրականութիւնը: Օտարոտի կեանքի մը նկարագրութիւնն էր այդ վէպը, բայց աչքիս առջև կը բերէի շուրջս գտնուած հայ զէմբերը և կը տեսնէի, թէ անոնց վրայ

ալ Սիդոնիներու դիմագծերը կան: Fromont jeune-ը սիրած գրքերէս մին եղաւ, ու երբ վիպակներ գրելու փորձեր կ'ընէի, չէի գիտեր թէ ինչպէս ազատիմ այդ ընթերցումին ազդեցութենէն: Կը տեսնէի շուրջս կեանք մը, որ շատ կը համապատասխանէր իմաստասիրութեանը մէջ Տոտէի նկարած քանի մը տեսարաններուն և հապճեպով գրուած «Ապուշին» մէջ ջանացի բոլորովին յեղաշրջել կացութիւնները, որպէսզի հետեւելու հարկազրուած չըլլամ: Տոտէի այդ մէկ հատորը կարդալէս յետոյ կապուած էի իրեն ու միւս հատորներն ալ հետգհետէ կը կարդայի կամ աւելի ճիշդը՝ կ'ուսումնասիրէի: «Զեքլ» մասնաւորապէս գրաւիչ էր, իր դառն հեզնութիւններովը, հովուերգութեամբ և սրտմաշուկ եղերբերգութեամբ: Տոտէի տարածիչ մը եղայ, ունեցած հատորներէս - և ոչ մէկը քովս մնաց...»: Տիրութեան վիպասան Տոտէն՝ շատ լաւ ազդեր է գուարթ ու հեզնող Արփիարին վրայ. և արդէն ո՞ր աշակերտը իր սիրած վարպետէն չէ ուզած ներշնչուիլ: Արփիար լաւ վարպետ էր ընտրած:

Մեր յոռետես գրիչներէն՝ պ. Եղիա Տէմիրճիպաշեան իր «Գրական և իմաստասիրական շարժումին» մէջ կը գրէր

Արփիարի վէպիկներու մասին. « Պարոն Արփիար Արփիարեան, որ երկար ամեր թղթակցութիւն միայն զրեց թիֆլիսի « Մշակին » մէջ (և որ՝ փակագծի մէջ՝ կը քննադատէր զիս յայնժամ, զի յօդուած, ատենախօսութիւն, դասախօսութիւն, նորավէպ և այլն կը գրէի), սկսաւ նորավէպեր գրել: Սոցանէ « Կատակն »՝ անստորագիր հրատարակուած « Մասիս » շաբաթաթերթին մէջ՝ վերջին տարիներս հայ լեզուաւ եղած գրական արտադրութեանց լաւագոյններէն, գեղեցիկագոյններէն մին է հաստատապէս »: Հոս յիշենք « Մշակի » ամենէն վաղեմի հրապարակախօս գրագէտ և վիպասան Հ. Առաքելեանի մէկ գրութիւնը. ան՝ Արփիարի « Ապուշը » վիպական հրատարակութեան համար կը գրէ. « Կ. Պօլսի հայ գրականութեան մէջ ծագել է մի նոր, թարմ ուղղութիւն, որից մինչև այսօր, դժբաղաբար, գուրկ էր այդ գրականութիւնը, և այդ ուղղութեան պարագլուխ է հանդիսանում Ա. Արփիարեան իր՝ կեանքից առած և նկարագրած պատկերներով... « Ապուշը » հոգեբանական խոր հետազոտութեամբ գրված մի վէպ է, բայց նա նոր տիպեր, իրեալներ չէ ստեղծում, այլ պարզապէս կեանքից առնված մի պատկեր է, որով Կ. Պօլսի

ժամանակակից հայ հասարակութեան մէջ արմատացած մի քանի տգեղ, վնասակար սովորութիւններ և երեւոյթներ նկարագրելով՝ ցոյց է տալիս այն աղէտալի հետեանքը, որը միշտ արտադրում են այդ ախտերը... Տիպերը բաւական գեղեցիկ և ճշգրութեամբ են նկարագրված, թէև տեղտեղ հեղինակը ձեռքից բաց չէ թողնում ինքը փիլիսօփայական խորհրդածորիչներ անելը՝ փոխանակ խորհրդածութիւններ անելը կատարելապէս իր հերոսներին, իսկ իրողութիւններից եզրակացութիւն դուրս բերելը ընթերցողին թողնելու: Այդ թերութիւններով հանդերձ, « Ապուշը » յափշտակութեամբ է կարդացվում, որովհետև նրա մէջ կայ կենդանի գործողութիւն »:

Արփիարի վիպական տաղանդը գնահատուած է առհասարակ ամեն գրագէտէ. աւելորդ է վկայութիւններ արտատպելով ծանրաբեռնել իմ այս ուսումնասիրութիւնս: Յաւալի կէտ մը կայ. այս է՝ որ իր հին ու նոր վիպակները հանրացնելու մտադրութիւնը կը պակասի: Քարեր կ'ուզենք դնել իր ջախջախուած ոսկրներուն վրայ. իր մտքի ծաղիկներով ինչո՞ւ չգարդարենք իր գերեզմանը: Անմահ վարպետ վիպագրին գործերը հրապարակ հանելու

ենք, և ցոյց տալու նոր սերունդին և նոյնիսկ հին սերունդին ալ՝ թէ ինչ նշանակութիւն ունի Արփիարը երբ վիպագիր:

Է.

Ֆրանսացի գրականութեան զօրեղ ցուրն է իր գրականութիւնը: Յառաջադէմ մտքին համար՝ յաջողութիւնը ապահով է: Արփիարը յառաջադիմական էր և ամենէն աւելի ինքը իր յառաջդիմութեան վրէժխընդիր կը մնար:

Մտաւորական զարգացումի համար կարեւոր է դժուարահաճ ըլլալ՝ նախ ինքն իր մտքին: Արփիարը դժուարաւ կը հաւնէր իր գրչին:

Կատարեալ յոռետես մըն էր: Ինչ որ լաւ չէ, պէտք է յղանալ զայն, և այդ յղացումը բարի արտադրում մըն է. բարին, լաւը աշխատութեամբ կը կատարուի: Արփիարը միշտ դէպ ի գրական լաւը, ընտիրը, գեղեցիկը, և հրապուրիչը ձգտեր է. այդ ձգտումը յառաջդիմական ճախրանք մ'է:

Արփիարը միշտ բարձրէն ուզեց ճախրել: Իբր օրագրող, չէր զգար գրչի գեղեցկին պահանջները «Մշակ» թղթակցութեանց

մէջ, հարկ չէր տեսած շարք մը տալ լրագրական էջերուն, միայն երբ կը սկսի իր վիպակները, այն ատեն կամաց կամաց կ'ըմբռնէ գրականութեան պէտքը:

Իտալական ազնուացած յեղափոխական գրականութիւնը հետը կը բերէր վենետիկէն դառնալուն: Պոլիս ուրիշ գրականութիւն կար՝ Ֆրանսականը, արկածներու վիպասանական նկարագրութիւններ սիրով կը կարդացուին: Պոլիս սալոնական կեանքի համար այդ տեսակ թեթեւ գրականութիւնը պահանջ մըն էր:

Եւ Արփիարը կը յարգէ այդ պահանջը, ու իր հոգեբանական անդրանիկ վիպակներն լոյս կը տեսնեն «Մասիս» թ մէջ: Արփիարը 1884ին դեռ շատ անփորձ՝ կը հպատակի ուսմանդիկ ցնորական հոսանքին, և իր վիպասանական արտադրութիւնները բնաւ ըջուրութիւն մը ցոյց չեն տար. չունի խանդ, զիւտը սովորական անակնկալներ, ձեւը բոլորովին աղքատ. իր այդ վիպակները՝ «Կատակ մը», «Երազի մը գինը», ժամանակին ընդունելութիւն գտած են. գրական խստապահանջ ըննադատական բեմը դեռ գոյութիւն չունէր. նոյնիսկ Կովկասի խորոխ մամուլը ինչպէս տեսանք գնահատումի էջեր նուիրած է այդ վիպակներուն:

Բայց Արփիար անոնց լոյս տեսնելուն յաջորդ օրը դժգոհ էր. իրեն համար անոնք անախորժ, և չափազանց անկատար կ'երևէին և կը ստիպուէր զանոնք սրբազրեւով հրատարակել առանձին հատորի մէջ:

Բայց սրբագրութեան համար տակաւին մեծ պաշար մը չունէր: «Մշակ» ի մէջ իր «Խնդամոլիկ աղջիկը» բոլորովին կերպարանափոխուած՝ լոյս կը տեսնէ Գահիրէի «Շիրակ» ամսագրին մէջ. քսան տարի անցած էր առաջինը տպագրուելէն վերջը. և Արփիար զրական մեծ բարեւշտութեամբ մը կրած էր: «Շիրակ» ին մէջ հրատարակածը ուրիշ վերնագրի «Ոսկի ապրջան» անունը կը կրէ. նիւթը, դիւցազնները նոյն են. զեղեցկագիտականին փոփոխութիւնը դիտելի է: Եւ այդ վիպակը նշանակելի ապացոյց մըն է թէ Արփիար ինչ աստիճանով դէպ ի զրական կատարելութեան դիմած է:

Տարիներ, պատկառելի երեսուն տարիներ զրականութեան մէջ ապրելը, Արփիարի համար կեանք էր. այդ կեանքը զինքը մեր ամենէն մեծ գեղեցկագէտ մարդը քրաւ. ինքը ծանօթացած էր տաղանդաւոր վիպասաններու նշանաւոր հեղինակութեանց. նիւթապաշտ դպրոցին աշակեր-

տած է. մեծ վարպետները իր վրայ շատ ազդեր են. իր մէջ սակայն միանգամայն ներհակ հոգեբանութիւններ կը յուզուին՝ Նիցչէական հասմոլութիւն և Սպէնսէրեան այլամոլութիւն: Սակայն իր ամենէն որոշ փիլիսոփայ վարպետը՝ Էրնէսթ Բընանն է: Ընդհանրապէս ֆրանսական զրականութենէն կը պաշարէ խճբժանքի, խայթի, սրախօսութեանց և սկեպտիկական հոգին. իտալականէն փափուկ քնար ներշնչում:

Գրեթէ կէս դար ամէն օր հայու հետ խօսեցաւ, ազգին կեանքը, միտքը, իրեն համար զուրգուրալի էր. «Մշակով» Ռուսահայը թրքահայ հասարակութեան հետ հաշտեցուց: Եւ իր թղթակցութիւններով Ռուսահայը օգնութեան հասաւ Հայաստանի կրթական գործին: Պոլսոյ «Արևելք», «Մասիս», «Հայրենիք» թերթերուն մէջ Արփիարի ստորագրութիւնները հետաքրքրութեամբ պիտի փնտռուին:

*
* *

Իր ազնուական սիրտը յայտնած է վէպերուն և վիպակներուն մէջ. դեռ 1885-ին կը հրատարակէր Պոլսոյ «Արևելք» ւրագրի մէջ թերթին մը «Դատապարտուածը»: Այդ տեղ յայտնի է անձնա-

նուիրական հոգին. երիտասարդական թե-
թև տարփենի կրակը չէ որ կը շարժէ իր
քայլերը դէպ ի լքեալին և տառապեալ
օրհասական հիւանդի դուռը: Մտերիմին
և սիրած հոգիին համար կատարեալ սիրտ
է. այդ սիրտը կուլայ մտերիմին արցուն-
քով և կը վիրաւորուի անոր վէրքով: Եւ
պիտի պարզեմ այդ մոռցուած վէպը. ան
գեղազիտական արժէք չունի, բայց հա-
մակրանքի տաճարին մէկ դուռն է ըստ
իս: Տիկին Մարի Սվաճեան հին « Հայ-
րենիք » լրագրի մէջ ընդարձակ վէպով
մը պարզած էր ահռելի պատկերի մը է-
ջերը, ուր կը սոսկայինք տեսնելով թէ
որքան ձախորդ ելք մը կ'ունենայ բռնի
ամուսնութիւնը: Այդպիսի էջ մը Սվա-
ճեանէն առաջ Ա. Արփիար բացած էր
կ. Պոլսոյ մեծ օրագրին մէջ: Սիրտը խելք
չունի, որով անոր ներելի է ամէն ոճիր,
ամէն տեսակ խենդութիւն: Սէրը կոյր է,
կ'ըմբռնեմ. բայց սիրոյ պատճառէն բղխած
ոճիրները արզարացնել, այդ ըստ իս կա-
րելի չէ: « Դատապարտեալի » մէջ Ա.
Արփիար ջանացեր է մեղմացնել սրտին
այդ ոճիրը: Ոճրագործը Արամն է, երի-
տասարդը նախ կիրթ, ազնուական զաւակ,
Հայրապետեան տունէն՝ որ գեղանի Սա-
թենիկը գլխէ կը հանէ: Սա հակառակ իր

կամքին կը ստիպուի Քերովքէ էֆէնտիին
հետ ամուսնանալ. այդ բռնի ամուսնու-
թիւն է. ատկէ դրամական մեծ օգուտ
պիտի տեսնէ ծնողքը:

Սաթենիկ իր չի սիրած էրկանը քով
երկու տարի կը մնայ ու կը թողու գայն
և իր մօրենական տունը կը վերադառնայ:
Երիտասարդ Արամը ժամանակ կը գտնէ
և հրապուրիչ միջոցներով կ'որսայ Սան-
թենիկի համակրանքը և օրին մէկը գայն
կ'առեւանգէ՝ առանց ծնողաց հաւանու-
թեան երկուքը մէկ կը հեռանան և Ջին-
ճիլլի գիւղին շալէին մէջ՝ հովուերգական
կեանք մը կը սկսին:

Այդ ժամանակ վիպասանը կը յիշէ ա-
նուններ՝ Մինաս Զերազի և « Հայրենք » ի
խմբ. Յովհաննէս Շահնազարի, երկուքին
ալ կը շռայլէ գովեստներ: Ան իր սիրած-
ներուն յարգը երբ ճանչցեր է, գովեստի
բերանը չէ կրցած գոց պահել: Իրենք
երեքը փախստական ամուլին կը մտերմա-
նան, անոնք ալ գրասէր, իրենք ալ գրա-
սէր: Եւ երեքն ալ օրին մէկը կը դատա-
պարտեն Արամը: Այս վատը արատելով
Սաթենիկի պատիւը, կը թողու գայն և
կ'ամուսնանայ ուրիշի մը հետ: Խղճալի
է Սաթենիկի վիճակը. Արփիար կը գթայ
անոր վրայ. ամէն միջոց գործ կը դնէ

որ ծնողքը ձեռք տան անոր, բայց ի զո՛ւր ան գէշ կնկան մը պէս անարգուած է նոյն իսկ փողոցի տղաքներէն: Սաթե- նիկ սրտին ցաւէն կը հիւժի, կը մեռնի. եկեղեցին օրինաւոր թաղում չի կատարէր, անոր մեռելակառքին ետեւէն կ'երթան միայն Չերազ և ինքը վիպասանը:

Ք Ր Ո Ն Ի Կ Ա Գ Ի Ր

Հիմա Արփիարը պէտք էր...

Սահմանադրութենէն վերջը՝ Արփիարին վրայ հիացողները իր թշնամիներուն հետ Արփիարի պէտքը դեռ աւելի զգացին:

Սմենէն անմիտ ոճիրին զոհը եղած էր. և իրեն հետ կը խորտակուէր զրական լրագրութեան այն շէնքը որ դեռ նոր կը բարձրանար. մտքի հոյակապ վարպետը կը թողու աշակերտներ, որոնցմէ կ'ակընկալուի բրոնիկագիր աննման վարպետին գործունէութեան շարունակութիւնը:

Քրոնիկը ընթերցողին մտքին մտերիմ հիւրն է. Արփիարի բրոնիկներու պատմութիւնն ընելով, պիտի տեսնենք որ ժամանակին անկէ ինչ որ լսեր է ընթերցողը, լսածներն հիմակ պատմական պատկառանքով ապրելու սահմանուած են:

Կարևոր բրոնիկներ լրագրութեան մէջ թաղուած չի մնալու համար, մամուլին կը յանձնեմ այս գրութիւնը, որուն մէջ կը բովանդակուի ժամանակակից բառորդ դարու թուրքիոյ համար մտաւորական կեանքի ուրուսպատկերը:

*
* *

Արփիար հոն է, այն խմբագրութեան մէջ, կամ անոր գլուխը անցած է, երբ թերթին նպատակը յառաջդիմութիւնն է: 1884ին Արևելք օրագրի երեւումով, ծանօթ վաղեմի «Մասիս» լրագիրը կը սկսէր տուժել: Նոր հայաթերթի վարիչները շատ խանդավառ ծրագրով կ'աշխատէին տիրել ընթերցող հանրութեան գաղափարին վերայ: Ու տիրապետող գրիչը աւելի Արփիարն էր որ «Օրուան կեանք» ովը Արևելքի մէջ ուշագրաւ կ'ըլլար: Եւ իր յօդուածները կը խտացնէին ժամանակակից պատմութեան էջերը: 1884 Յուլիս 1էն սկսեալ, մինչեւ 1891 Յուլիս 13 Արևելքը Պոլսոյ Հայութեան նախանձելի թերթն էր դարձած: Օրուան քաղաքական լուրերը աւելի նախամեծար կը համարուէին, ինչպէս սովորական է այս գրեթէ Պոլսոյ ամէն մէկ թերթի համար:

Բայց խմբագրական մարմնոյն ամենէն ազգեցիկ մարդը՝ Արփիար, հայկական ու զրական կեանքի վրէժխնդիր մնալով, Արևելք համակրելի կենդանութիւն մը ցոյց կուտար:

Արփիար իր «Նոր կեանք» թերթին

մէջ կը գրէր. «Մասիսէն ետքը Արևելքի մէջ արդէն ժողովրդական զրականութեան մը ուղղութիւնը երեւան կուգայ. բայց ազնուապետական ձգտումը — բառին ծիծաղելի առմամբը — թերթին վերին վառչութեան անդամներուն մէկ մասը միւսին դէմ կը հանէր, որով և Արևելքի առաջին, երկրորդ, երրորդ երեսները տարբեր հոգով կը խմբագրուէին, և յաճախ իրարու կը հակառակէին: Նոր զրականութեան մը ասպնջականը երրորդ էջը կ'ըլլար:» Եւ ընդհանրապէս այդ զրական նոր ասպնջականը ինքն էր. ինքն էր խաւարամիտ խմբագրական ազնուապետական հովերուն դիմադրողը: Ու երրորդ էջին գրական գոյն մը տալով, գոհ կը մնար:

Արփիար քրոնիկագիր է, զրական բուրաստանին մէջ ամենէն գերադաս ծաղիկը իրեն համար քրոնիկն է եղած. այդ իրեն համար խնկաւէտ բաժին մըն է, ամէն ատեն ուզեր է նոյն ճիւղը մշակել ու մինչեւ իր վերջին օրերը՝ դեռ քրոնիկագիր ուզած է ըլլալ: Այն օրէն որ լոյս կը տեսնէր Արևելքի անդրանիկ թերթը, իրեն հարցնողներ կ'ըլլան. «Բայց ինչ պիտի գրէք քրոնիկի մէջ, կ'ըսէին մեզ զարմացմամբ մի քանի բարեկամներ երբ կը լսէին թէ «Արեւելք» անկիւն մը պի-

տի շնորհէ քրոնիկին: Մենք ալ կը պատասխանէինք, ուրեմն որոշ գաղափար մը չունիք քրոնիկի մասին որ այսպէս կը զարմանաք: Պատմութիան փշրանքերը առնուանա՞ծ են քրոնիկը: Արդ, եթէ կ'ուզէք ձեր սեպհականութիւնը ըրէք պատմութեան սեղանի համադրամները և մեզ տուէք փշրանքները միայն: Երբեմն ժպիտ, երբեմն արցունք, վիշտ ու բերկրանք. կեանքի երեւոյթներու առաջ այդ թող ըլլայ մեր բաժինը: Եւ ո՞ գիտէ որն աւելի սիրելի պիտի ըլլայ ապագային:» Եւ իր գրածները քանի որ ճաշակաւոր ըլլալու ճիգը ցոյց տուած են, թէեւ փշրանք, սակայն թէ նորութեան և թէ՛ հնութեան պահուն, անոնք կը մնան անթառամ նիւթեր, ապագայ գրականութեան յուշարար կարևոր կէտեր:

Բնական է որ քրոնիկը ունի յատուկ ոճ մը, կամ զուտ լրատու չորչորուկ գրութիւն, կամ գեղապաճոյճ խնամուած կուռ գրութիւն: Վերջինին դրոշմը կը կրեն Արփիարի քրոնիկներն: Համառոտ նախադասութիւնները իրենց կտրուկ տղերուն մէջ՝ ընթերցողին կը թողուն մտածել կարգացածին վրայ. ու կը սորվեցնեն մտածել՝ սրամտորէն, և հաճոյք զգալ զրչէն՝ զոր կը կարդան:

Քրոնիկը պատմական շէնքի մը անջատ աղիւսն է, անոնց ամբողջութենէն կը բարձրանայ՝ պատմական կարկառուն շէնքը: Արփիարեան՝ Արեւելքի անդրանիկ քրոնիկէն բնական է որ ցոյց կուտայ՝ թէ դեռ անփորձ թռիչներու մէջ է. երբեմն տարօրինակօրէն միջակ ոճ մը՝ զոր կը խղճաս իրեն վերագրել: Բայց կը խոստանայ ապագային մեծ քրոնիկագիր ըլլալու. ակն յայտնի կ'ընէ իր կուռ ոճը, կ'ուզէ ճարտարօրէն ուստոստել անցնիլ ուրիշ նիւթերու, հեռաւոր ու մերձաւոր ակնարկութիւններ ընել և ամենէն աւելի խնամք կը տանի անյիշատակ չի թողուլ նիւթ մը որ փառք է Հայութեան, զայն մոռացութեան գերեզմանին դռնէն պահ մը կը հեռացնէ: Կրթական հաստատութեանց բարոյական և ուսումնական սատար գործիչները յիշելու ատեն, խտրութիւն չի դնել, ամենէն աննշանին աւելի նշանակութիւն կուտայ: Փոյթ չէ թէ բարերարը ազնուաշուք մը չըլլայ, ինքը ազնուական սիրտը կը փնտռէ. բարերարներուն համեստը իրեն համար աւելի պաշտելի է: Օրինակ, կակիժով կը յիշատակէ կըրթարաններու սատար Յովսէփ Իզմիրեանցի, Յարութիւն Փափագեանի և երկու վարժապետներու՝ Առաքել Բահաթրեանցի

ու Իփէքճեանի մահերն. սակայն երբ նըկարագրէ Չմշկածագէն գաղթական աննշան հաճի Պօղոս աղայի մը մահը, կարծես, տխրութիւնը գորովական զգացմունք մը առած կ'ըլլայ: Եւ ինչո՞ւ. վասն զի, այդ հաճի աղան ինչ որ կը նուիրէ, սրտէն բան մը դրած է նուէրին մէջ. — համեստութիւն: Անունը հռչակուելու համար չէ որ այդ անձը նուիրատու կ'ըլլայ Միացեալ Ընկերութեան դպրոցի մը շինութեան համար:

✱
✱ ✱

Քրոնիկը կը նմանցնեմ այն մուգայիքէ գունագեղ փշրանքներուն, որոնք իրենց ներդաշնակ կարգադրութեան մէջ՝ ճարտար պատկեր մը կը կազմեն, ու կը զիտես անոր ակնախտիա ցոլբերն. մուգայիքի գաղափարը կուտայ Արփիարի քրոնիկը. անոր մէջ յիշուած Պէշիկթաշլեանը՝ շողշողուն երկինք մը կը պարզէ, անոր յիշատակը երգող է. ու թատրոնը յիշուելուն՝ թրքահայ թատրոնի պատմութեան լուսապսակը կը ճառագայթէ իր տողերէն. «Նոր թատրոն, բայց անի հին յիշատակներու սրբավայրին վրայ կը բարձրանայ: Այն Արեւելեան թատրոնէն

Պէշիկթաշլեան նոր զրոշմ կը զրոշմէր հայ գրականութեան և հայ ոգիներու վրայ. Հեքիմեան Սրապիոն, բանաստեղծ և գործի մարդ, փորձ կը փորձէր, արքայավայել շռայլութեամբ, յեղափոխել մեր հին ճաշակը: Հոն Արուսեակ կը ստեղծէր Հայ դերասանուհին և կը պարզէր նոր հորիզոններ Հայ գեղեցիկ սեփին պչերուն: Թերզեան գորովային փափկութեամբ թրթռացող սրտին շեշտերը կը զնէր իր Արշակին մէջ և Հայ երաժշտական հանճարը որ սկսած էր անձուկ գտնել եղեկեցւոյ դուռը, փորձ կը փորձէր Չուխանեանի ապաստանած՝ սլանալ Արշակի թեւերուն վրայ դէպի այն բարձրութիւններն ուսկից կը ցնցէ սրտերն ու հոգիներն:» Արփիար կուռ կը մնայ իր այս քրոնիկին մէջ, որ ընդարձակ էջերու կարօտ է. բայց, միտքը որոշ է, Պոլսոյ Հայ թատերական արշալոյսին շողը կ'ուզէ զրուատել:

Պէտք չէ մոռցուի՝ ինչ որ առողջ միտք մըն է, գեղեցիկ արտադրութիւն մըն է: Եթէ մտեր էք Պոլսոյ տէրութեան թանգարանը, հոն համեստ հայ մը կայ. արձաններու գեղեցկութեամբ ճաշակը ազնուացած. իր վառվռուն աչուրներով քեզ կը նայի, ու թանգարանին մէջ մի սքան-

չէլիբը քեզ ցոյց կուտայ, եթէ տեսնայ զազափարակից զեղեցկին վարդապետութեան: Արփիար կը ծանօթացնէ զայն, և պէտք է որ ծանօթանայ. անցեալները նոր յուշիկներու մէջ պէտք է որ կենդանանան: «Անցողակի ըսենք թէ ոչ միայն ընտիր արձանագործ մըն է Ռսկան, այլ և հմուտ հնարոյզ մը և իր այս յատկութիւնը ցոյց տուաւ աւերակներու մէջ ըրած հետազօտութիւններովը: Ո՞ւր էր թէ Պոլսոյ թանգարանը չբաւականանար միայն երկու հարիւր օրինակ տպագրելով այդ կարեւոր զիբը որ կը պարունակէ Ռսկանի և Համտի պէյի հետազօտութեանց արդիւնքը:» Տաղանդի փշրանք մը ուր որ տեսնէ, Արփիար զայն ակնածանօք կը գետեղէ մամուլի էջերուն մէջ: Եւ Ռսկանին հետ չի մոռնար դրուատիք մը հանելու ճարտարապետ Յովսէփ Ազնաւորի և նկարիչ Սրապեանի: Եւ այդ նկարիչը սուլթան Ազիզի համար «Քիւլչիւք Այվազովսքի» մըն է:

Փոքրիկ տաղանդաւորներուն շարքին մէջ մեծ տաղանդաւորներ կը մտցնէ: Իր օրով արդէն յայտնուած ու հռչակուած էր Նորայր Բուզանդացիի տարօրինակ մըտաւորական հոյակապ կարողութիւնը: Արփիար ամբողջ կենօք՝ ամէն առթիւ գնա-

հատած է այդ գրական մեծանուն վարպետին բանասիրական գործերն:

Ու 1884ին անոր վրայ գրիչ շարժելուն՝ անտարակոյս դեռ իր քրոնիկի դիւցազը կը սպառնար ապագայ բանասիրական մեծ ռահվիրայն ըլլալ. սակայն նոյն իսկ այդ սկզբնական օրերէն, կարելի չէր անյիշատակ թողնել Նորայրի նման վաստակաւորի մը վիճակը:

Նորայր յաւիտենականօրէն դժգոհ է մնացած ազգէն, և պատճառ ունի. առաջ ու վերջ սրտամորմոք տրտունջ մ'ունի ազգին դէմ: Պատճառը Արփիարի երիտասարդ հասակին՝ գրած քրոնիկէն կը հասկընանք: Տեսէք թէ ինչ կը գրէ. «Չը մոռնանք ուրիշ վշտեր, որք եթէ սիրային չեն, բայց և այնպէս վիշտ են: Խեղճ Նորայր, որոյ բողոքներն ոչ միայն մեր մտքերն վրդովեցին այլ մեր սրտերն ալ յուզեցին: Բազմաչարչար վաստակաւոր, գանձ մը կը պարգևէ ազգին և ստէպ կարօտ կը մնայ պատառ մը հացի: Բայց միթէ անչառ է իւր մեծ դժբաղդութիւնը: Չեմ կարծեր: Մեր գրականութեան այդ հսկայ անձնաւորութիւնը հրաւէր կ'ընդունի մենամարտի, բայց ո՞ւր են այն տաղանդները որք կարենան գէթ տժգոյն նմանութիւն մը իսկ ունենալ Նորայրի տա-

դանդին հետ: Ո՞ւր գոնէ իր նմանը: Այս է դժբաղդութեանց մեծագոյնը, մարտնչել փոքր էակներու դէմ»: Անտարակոյս այդ փոքրը Նուպարն է: Ֆրանսահայ բառաւորանի հեղինակը ու Մովսէսի թարգմանիչ Նուպարը որ իր համակրելի գրական ջանասիրութեամբը անտարակոյս պէտք չէր որ ուզեր չափուիլ հսկայ տաղանդի մը հետ: Խօսքը դարձեալ քրոնիկագիր Արփիարին յանձնենք. «Քիչ կը գտնուին առ մեզ լեզուագէտներ որք այնքան խղճահար լինին որպէս Նորայր: Դեռ պատանի արդէն մագաղաթներու ընթերցմամբ աչքերն տկարացած էին: Տպեալ ու ձեռագիր, Ս. Ղազարու մատենադարանները կը լափէր մտօք, սքանչելի յիշողութեամբ զարդարուած: Քսան և չորս տարեկան դեռ չկար և արդէն իւր վրայ հրաւիրած էր Հ. Արսէն Բագրատունիի զարմացումը: Պօսիւէի թարգմանութեան մէջ արծիւի աչքերէն վրիպակներ սպրդած էին, այսպէս ըսենք, և Նորայր կը գտնէր զանոնք: «Աֆէրիմ Արթին աղայ» կ'ըսէր անոր Հ. Բագրատունի, զարնելով ուսին: Բառգիրքը, որոյ ծրագիրն Պ. Նորայր արդէն գծած էր և աշխատութեան ձեռնարկած, բոլոր վանքին ցնծութեան առարկայ կը լինէր: Եւ յետոյ, տեսանք զինքը Պոլսոյ

անկիւններն ման գալ, տուներն պտըտիլ, Հայաստանցի կիներն տեսնել, բառ մը խնդրել, նշանակութիւն մը ստուգել: Այդքան խղճով, այդքան խելքով աշխատութիւն մը մեզ սքանչացում կը պատճառէ, և մենք սիրահարհ Նորայրի՝ կոյր վստահութեամբ կը պաշտենք զնա: «Բայց կըսէր, ի՞նչ է այս ըրածս, դեռ ոչինչ. բազիրքս վերջանայ, երթամ ԼՂմիածին, երթամ վանքերն, պտըտիմ Հայաստանի մէջ անկիւններն և ընծայեմ Հայոց ազգին կատարեալ գանձ մը, որ զբաւական մը լինի ապագային, անցեալին միտիւրանք մը:» — Արփար կը պնդէ որ ոչ ոք կարող է գրական մենամարտ մը ունենալ այդ վարպետին հետ: Ու նշանակելու կէտ մը կայ վարպետին մէջ: Դեռ գործելու խոստում մը ունի. իր հոյակապ ու անզուգական բառարանը իրեն համար մեծ նշանակութիւն մը չունի, մեծ գործունէութիւնը ապագային մէջ կ'երազէ տեսնել, սակայն մենք առիթ կ'ունենանք անդրադառնալու կարեւոր դրական կէտի մը վրայ, և ապացուցանել թէ Նորայր կը նմանի այն բովերուն որ մեր երկրի մէջ հազիւ մակերեսային պեղումներ ունեցեր են: Բովը ինքնին գանձ է, անկէ գանձ չբաղողն է դատապարտելին:

Նման դժբաղդութեան ենթարկուած էր նաև հանրածանօթ Արմենակ Հայկունին. զրագէտներու վարձատրութիւնը եղած է զրկումի տանջանքը: Ու եթէ անոնց վրայ գուրգուրացող մը գտնուի, սիրտ մը միայն սպասէ անկէ, նիւթական օգնութիւն կարելի չէ, վասն զի ստակ չունեցողին սիրտ է տրուած, և անսրտութիւն՝ ստակ ունեցողին: Մեծամասնութեան մը համար ճիշտ չէ՞ այս: Հայ համայնքը չկրցաւ վարձատրել Արմենակ Հայկունիի վաստակները: Սրտաճմլիկ փշրանք քրոնիկ մըն ալ Արփիար տուած է չարչարուած զրագէտին համար: Նշանակելի քրոնիկ մը կ'ընդունիմ Հայկունիի մասին գրուածը. կը գրէ ու կը պատճառաբանէ Արփիար այսպէս. « Գոռոզ հոգիներու համար անտանելի շղթայ է՝ ընդունուած բարիքի մը յիշատակը: Ապրելու իրաւունք ունին և սակայն, ո՛վ որ իրենց պատառ մը հաց կուտայ, պէտք է բարերար կոչուի, և անոր երախտապարտ մնան: Արդա՞ր է: Եւ իր վրէժը լուծելու համար «Աշխատանքն» հրապարակ կը նետէ: Մարդիկ ուսերնին կը թօթուեն և չեն յիշեր իսկ կենդանի է՞ թէ մեռած յուսահատ թշուառներու այդ ներկայացուցիչն որ կը յիշեցնէ մեզ տաբարաղդ Արմենակ Հայկունին: Կարծես

նոյն դէմքերը կը տեսնենք աչքերնու առաջ, նոյն ձայնն է որ կը հնչէ մեր ականջներուն հետ: Բայց եթէ «Աշխատինք» ի խմբագիրը իւր ցաւոց մէջ, որ սերունդի մը ցաւերն են, չի գտներ կարեկից սիրտ մը, Հայկունի աւելի յուսահատ, կը գանգատէր Արարչին դէմ, բայց կը գտնէր մարդասէր սիրտ մը, սուրբ հոգի մը որ կ'արտասուէր Հայ երիտասարդին հետ և իւր աղքատիկ քսակը կը պարպէր տարաբաղդ զրագէտին առաջ: Խրիմեան ճամբարիտ Հայ ու Հայր, կը վշտագնէր վշտահար սրտերու, կուլար անոնց հետ, կը մխիթարէր անկրօնն, ու չէր պահանջեր երախտապարտութիւն:» Արփիար իր այս քրոնիկով հոգեբանական փափուկ հարց մը կ'ուզէ յուզել:

Գոռոզ աղքատը պէտք չէ երախտագէտ ըլլայ իր բարերարին: Միտքը այս է, բայց քանի որ աղքատին հանդէպ հարուստը քար սիրտ մնալով, վատ կը համարուի, և աղքատը անոր մասին ատելութիւն մը կը զգայ, իր կեանքը փրկողին համար ինչպէ՞ս կարելի է որ բարի չի մտածէ, և անոր համար ազնիւ զգացմունք մը չունենայ, այն զգացմունքը զոր կը կոչենք երախտագիտութիւն: Թէ կարելի է բարիք ընել և երախտագիտու-

Թիւն չսպասել, այդ ուրիշ հարց, համա-
միտ եմ այդ մտքին, և արդէն ի զուր է
սպասել, երախտագիտութիւն և բարեբա-
րութիւն համահաւասար հազուագիւտ բա-
նեք են դարձած: Եւ թէ Խորիմեան Հայ-
րիկ գերբնական վեհանձնութենէ մղուած
երախտագիտութիւն բնաւ չէր սպասեր,
ատոր ալ հաւատալու բռնի պարտակա-
նութիւն մը չունինք: Եւ եթէ իրօք այդ-
պէս է, Հայրիկի քաղցր յիշատակը բիւր
անգամ գնահատելի է մեր մէջ, վասն զի
իւր այդ յատկութիւնը կը համարուի այն
ատեն գերբնական դիւցազնութիւն. կըրֆ
ըսած է. « Դիւցազնները երախտագիտու-
թիւն չեն փնտոներ »: Բայց քիչ են նման
դիւցազններ:

*
* *

Յիշեցինք « Քիւչիւք Այվազովսկի » մը.
Արփիար յափշտակուած է, անոր վրձի-
նով կ'ուզէ զբաղիլ և զբաղեցնել: Գեղեց-
կագէտ Արփիարը մեծ կարեւորութիւն կու
տայ գեղարուեստի ամէն մէկ ճիւղի. փոք-
րիկ Այվազովսկին Սրապեան նկարիչն է.
Արփիար անոր « Մանուկ աղբարը » ա-
նունով պատկերը հմայիչ կը գտնէ, իրա-
կանէն աւելի սրտաշարժ, այդ նկարը կը

յիշեցնէ Քամառ — Քաթիպայի « Շլինքն
արևառ, մէյտանին մէջ կայնած, դարիպ
Մշեցին »: Օրինակութիւնը գերադասելով
բնագիրը, կը զրէ, « Արուեստը կատարե-
լագործած է զբնութիւնը: Տաղանդաւոր
պատկերահանը՝ շարժելով վշտամաշ ծե-
րուկի սրտի ամենափոփոկ լարերը, նո-
րա աչքերու մէջ ըմբռնած է նոյն իսկ
հոգեբանական վայրկեանները, որոց մէջ
կը յուզէին նորա սրտի եօթնաստուն տա-
րուան քաշած ամէն մըրիկները:» Արուես-
տագիտական հոգեբանութիւն մըն է Ար-
փիարի գրածը: Դժբաղդաբար այդ պատ-
կերը հայու մը տան մէջ մտալու բաղդին
չէ կըցած արժանի ըլլալ, Բերայի ոռւս
ընտանիքի մը սրահին զարդ կ'ըլլայ այն:
Սրապեանի տաղանդը գնահատող մեկե-
նասը կ'ըլլայ Նիկողայոս Պալեան ամի-
րան. և օրին մէկը դարձեալ Սուլթան
Ազիզ հիացած Սրապեանի նկարչական
տաղանդին վրայ՝ Սարգիս պէյի կ'ըսէ
սա խօսքերը. « Իմ հողիս մէջ մի այս-
պիսի ոռւտս կայ, և ես մինչև այսօր չգի-
տէի »: Եւ քանի որ Թըքաստան և նոյն
իսկ մեր համայնքին մէջ կարեւորութիւն
չունէր գեղարուեստը, բնական էր որ տա-
ղանդները որոնք յատկացուած էին գեղա-
րուեստի վարպետներ ըլլալու՝ պիտի մոռ-

ցուէին, և հիմայ անոնց վրայ լուրջ գրութիւն մը գտնելը դիւրին չէ, քրոնիկի փշրանքով պէտք է կշտանալ: Ու եթէ Արփիար մամուլով յատուկ կարեորութիւն մը տուած չըլլար գեղարուեստի հայ ներկայացուցիչներուն, տակաւին անոնք համահասար ժամկոչական արհամարհական նշանակութիւն մը պիտի ունենային: Արփիարի հայ կեանքի երկինքէն վազող աստղերուն ետեւէն խելք ու գրիչ հասցընելը, ապագայ գրական պատմութեան մեծ նպաստ համարելու ենք: Մեր գեղարուեստական անտարբերութիւնը արդեօք անցեալին մէջ որքան Շահիններ թողած է: Ու ազգ մը որ տիեզերական գնահատումի արժանացած Շահին մը հասուց, ուրեմն ունի իր մէջ գեղարուեստի երակ մը: Յեղ մը որ կարեորութիւն կուտայ մտքի ամենէն ազնուական արտադրութեան — Գեղարուեստի, ան ազնուական ցեղ է, ազնիւ մտածող և ազնուօրէն գործող. և կ'երևի մեր մէջ տկար ըլլալով գեղարուեստի ընդունակութիւննիս, տկար համարուած է նաև ազնուական յատկութիւնը՝ որով Սրապեանի նկարներուն հիացող Նափոլէոն Գ.ի՝ Պոլսոյ դեսպանը կը համարձակի ըսել նկարչին թէ «Այդ փափուկ զգացումներդ հայրենակ-

ցացդ ալ ներշնչէ»: Եւ իրօք վաճառական ազգ մը որ չուզեր գեղարուեստի ազնուական ներշնչումը իւրացնել, միշտ կարծր մտածումներ, և անտաշ բարք մը ունենալը կարող չէ պարտկել:

Ինչո՞ւ կը սրտնեղինք, երբ օտարը մեր ճակտին կը զարնէ յսպս երմեկի նախատական բառերն: Գեռ ազնուանականալու պէտք ունինք:

Մեր բարքերու ազնուացումին համար անտարակոյս գտնուեցան մտքի հրապարակախօս մշակներ, որոնք սակայն անոյշ լեզուով չխօսեցան. անոնց բառերը կրակի պէս կը մտնէին մեր միտքը. վէրքերը բուժելու համար հրաշէկ երկաթ պէտք է, և ազնուանալու ու կրթուելու համար հրատապ գաղափարներ: Այդ գաղափարական հրաբխային աղբիւրը եղած է Գրիգոր Արծրունիի «Մշակ»ը: Քրոնիկագիր Արփիար Արփիարեան, բնական էր որ Արծրունիին համար խանդավառ բռնկածութեամբ պիտի հիւսէր գովեստի ծաղկարուրը անթառամ պսակ մը, որ միշտ յիշեցնէր Արծրունիի գործունէութեան մեծութիւնը: Արփիար 1884ի մայիսին երբ

մտնելով «Մշակ»-ի խմբագրատունը կը տեսնէր այն կոկիկ մեղուանոցը, ուր ազատամիտ կուսակցութիւնը խտացուցած էր ազգին վերասթափումի մեքենական կրակը, տարօրինակօրէն յուզուած, կը դիտէր ազատախոհ Արծրունիին գրասեղանը, ուր եօթը տարիներէ ի վեր Պոլսէն կը դիզուէին այցելու Հայկակ թղթակցին ազգաշունչ քաղաքական և գրական նամակները: Եւ այդ առթիւ ինքը ականատես Արծրունիի եռուզեռ գործունէութեան, անզուսպ հիացումով թիֆլիզէն 1884 Մայիս 22ին «Արեւելք» լրագրի կը գրէր: Եւ նպատակն էր խղճամիտ մանրանկար մը պատրաստել լրագրապետ մեծ վարպետին. ու այդ նկարը կը տեսնէինք «Արեւելք»-ի այս տողերուն մէջ. «Այժմ «Մշակ» շարաթը երկու անգամ կը հրատարակուի, խմբագրին անձնական դժուարակնճիւս խնդրոց համար: Տիրութիւն մը կը ծածանի ամբողջ խմբագրատան վրայ: Անհնար էր ինձ խորին յուզում մը չունենալ, երբ ներս մտայ այն սենեակներէն որ վկայ եղած են, տասերեք տարիներէ ի վեր, Հայ ժողովուրդի մտաւոր նոր և մեծ շարժման: Տակաւին շատ երիտասարդ Պ. Արծրունի աւարտելով իւր ուսումն Հայտէլպէրկի համալսարանը, կուգար վենե-

տիկ և մի պատուական վարդապետի, Հ. Իգնատիոս Կիւրեղեան, այժմ Մխիթարեան Աբբան, առաջնորդութեամբ կը յառաջադիմէր հայ լեզուի մէջ: Կը վերագառնայ թիֆլիզ, զօրապետ Երեմիա Արծրունու զաւակ, հարուստ ընտանեաց անդամ, ուսեալ և կըթեալ. ինքն իւր առաջ ամենայն հեշտութեամբ բաց կը զտնէր կառավարչական ամենաբարձր պաշտօններն և սակայն խմբագիր լինել կ'ուզէ: Զօրապետ Արծրունիին կ'ապշի, արդեօք խելագար է իւր զաւակը: Դժուար էր, և զուցէ այժմ ալ դժուար լինի երեւալ և զուցէ այժմ ալ դժուար լինի երեւալայել որ մի անձնաւորութիւն առ ոտն կոխէ ամէն անձնական առաւելութիւններ և խմբագրական ասպարէզին մէջ ուզէ ազգին ծառայել: Խեղճ զօրապետը, ցաւագին կը խնդրէ որ իւր ժառանգը գէթ ուսերէն հրատարակէ իւր թերթը...: Գրիչոր Արծրունիին չանսար հայրական խրատուց և կը հրատարակէ «Մշակ»-ը: Ինչ դառնութիւններ, և սակայն ինչ յաղթանակ: Դոր և յանդուգն գաղափարներու քարոզում, հայ լեզուի տարածում, ժողովուրդի կենսական պիտոյքները ուսումնասիրելու խնամք. այս է «Մշակ»-ի գործունէութիւնը: Տասերեք տարի խոր արմատ ձգեց ժողովուրդի ամէն խաւերու

մէջ. նոր սերունդ մը գինքը կը պաշտէր, և շատ աղջիկներ որք այսօր մայր են՝ կը խոստովանին թէ՛ առանց «Մշակ»ի, նոքա այժմ մի հայերէն բառ չէին կարող գիտնալ: — Եւ թուրքերոյ Հայոց համար սրբան համակրանաց իրաւունք չունի «Մշակ»: Նորա միջոցաւ գիրար ճանչցան մասամբ թուրքերոյ և Ռուսիոյ Հայք. նորա շնորհիւ տապալուեցան շատ նախապաշարմանց պարիսպներ, ամէն ինչ որ բարձր նպատակ մը ունէր Պոլսոյ մէջ, նա վրաստահ կը լինէր «Մշակի»ի աջակցութեանը, ու արդիւնաւոր կերպով կը վայելէր այդ աջակցութիւնը:»

Արփիարի անդրանիկ տպաւորումի օրինակութիւնը ներկայացուցինք: Բայց պէտք է գիտնալ որ Արփիար իր ամբողջ կենօք առանց Արծրունիի անունը յիշելու չէ կրցած շարաթներ անցնել. Տէմիրճիպաշեան Նիրվանան կը պաշտէր, Արփիարի Նիրվանան՝ Արծրունին էր: Եւ սէրը փոխադարձ էր: Գնահատումը համահաւասար:

*
* *

Եւ այն թուականին որ Արփիար կը նկարագրէր Արծրունիի և «Մշակ»ի դերերը, յատկապէս կաթողիկոսական ընտրութեան առթիւ Պոլսէն կովկաս էր գացեր: Բնականաբար, ամբողջ շարք մը յօդուածներ կը նուիրէ այդ առթիւ. անոնք ժամանակի ծաղիկներ են, որոնք օրը օրին բոյր մ'ունին, վերջը միայն պատմական խոր ուսումնասիրութեանց կարող են լոյս տալ, եթէ գրուած են անկողմնակալ ու խղճամիտ ձեռնհասութեամբ: Արփիար իր այդ յօդուածներու շարքին մէջ, անցողակի կը խօսի թիֆլիզի զրական մէկ քանի անձանց վրայ: Կը ծանօթացնէ պատգամաւորները, և երկար էջեր կը նուիրէ ընտրելեաց մասին եղած խնդիրներու վրայ:

Արփիար յուլիս 20ին արդէն Պօլիս է դարձած, և սկսած է իր «Օրուան կեանքը» քրոնիկները, որոնք որքան թեթեւ, սակայն, զրագէտի ձայնը ախորժելի է հոն, ու պահ մը կը մոռնաս կովկասէն յղած պատգամաւորական նամակներուն անհրապոյր տպաւորութիւնները:

Արփիարէն կը սպասուէր միշտ քրոնիկ,

ազգային կեանքի մոռնետիկն էր ինքը, չոր ձայն չէր տարածեր, գրիչը երբեմն կ'երգէր իր մտքովը:

Ինքը ընդհանրապէս մեծ պաշտում ունեցեր է նաև հիներուն համար, որոնք գրական վաստակաւոր են ճանչցուած:

Իր առջև կը դնէ Գրիգոր Չիլինկիրեանի «Ուղեորութիւն ի. Կ. Պոլիս» գիրքը. այդ ծանօթ գրագէտը հին է. և հիներուն վըրայ զգուշաւոր է խիստ քննադատական գրելէն: Այդ առթիւ լեզի բողոք մը ունի այն ամէն քննադատ ըսուած գրչակներու մասին, որոնք փոխանակ անաչառօրէն արժանիքը կը ռելու, ընդհանրապէս գովեստներու պսակներով կը ծանրաբեռնեն կարգ մը դատարկ ու թեթև հեղինակներու գլուխները: Եւ ահա ողջամիտ դատողութեամբ՝ Արփիար Չիլինկիրեանի գործը քննելու ատեն կ'ուզէ անաչառ ըլլալ: Ինքը այդ յիշեալ վերնագրով գրէ է մը, կը պահանջէ ամենէն աւելի ազգային կեանքի պատկերը և սակայն կարծես այդ ուղեորութիւնը օտարագրի մը գրիչը ըլլայ, որ կարեւորութիւն չի տար այդ պահանջին: Արփիար կը գրէ. «Պօլիս, Հայութեան այդ մեծ ծոփն ուր հինգ դարեր է ի վեր կը թափին Ասիոյ ամէն կողմերէն Հայ գաղթականութեանց գետերն, այդ

կեղրոնն որուն ազդեցութիւնն այդքան մեծ եղած է Հայ ազգին ճակատագրին վրայ, ուրիշ բան չէ Պ. Չիլինկիրեանի համար, բայց եթէ զօսանաց պարտէզ մը միայն: Ո՛չ փիլիսոփայի մտքով, ո՛չ քաղաքագէտի աչքով, ո՛չ տնտեսագէտի խոհերով, քննուած չեն Պոլսոյ Հայերը Պ. Չիլինկիրեանի կողմէ:» Սակայն իբր գեղեցկագիտական գործ գնահատելի կը զրոնէ:

✱
✱ ✱

Խաւարամիտ դասակարգը իրեն համար խոտելի է և զանոնք ամէն առթիւ կը ջանայ կճել, բայց հարուածելու ատեն կոպտութիւն չունի. Շահնուրի ու Գուրգէնի և Ռ. Պէրպէրեանի համակրող մը չըլլալը ամէն պարագայի մէջ ցոյց կուտայ հեզնական ակնարկներով. ու երբ գիտութեան ու գրականութեան յառաջադէմ ազատամիտ մը նիւթ է քրոնիկին, ծամծմելու իմաստներ չեն որ զինքը կը նեղեն, այլ ինքը համարձակօրէն կը զրուատէ: Նորայրի և Ալիշանի համար իր գովեստները անկեղծ են, խմբագրողի վարպետ դարձուածքներ չի փնտռեր իր զրուատիքը յայտնելու համար: Ու ով որ Եւ-

ըրպայէն կը դառնայ և չունի պահպանողական կրօնամով միջնադարեան ըմբռնում և տեսնէ անոր վրայ Արծրունիի ըմբռնած յառաջդիմական լայն գաղափարական կիրքերը, ինքը անոր բարեկամն է. « Հայրենիք » օրագրի մէջ ինքը Պ. Յ. Շահնազարի ձեռք կարկառելէն տարիներ առաջ, անոր հիացող մը ըլլալը չի ծածկեր. Արփիար իր 1884ի մէկ ըրոնիկին մէջ՝ « Հայրենիք » ի ապագայ հիմնադիրը վառվռուն գոյներով կ'ուրուագրէ. փաստաբան խմբագիրը այն ինչ Բարիզէն կը վերադառնայ Պոլիս, անոր մէջ կը կարդացուի ապագային մարդը:

Ու Արփիար տակաւին Շահնազարին հետ « Հայրենիք » ով գրական խնամութիւն մը չի կնքած, եօթը տարի առաջ նորեկ փաստաբանին համար կը գրէր. « Ո՛րքաններ ի մէնջ ախորժանօք կը յիշեն այն հրապուրիչ յօդուածներն զոր Պ. Շահնազար, ի Պոլիս թէ՛ ի Փարիզ, կուտար հայ մամուլ: Ո՛չ միայն հայ մամուլը՝ այլ նոյն իսկ բարիզական մամուլը՝ սիրալիր ընդունելութիւն կ'ընէր Պ. Շահնազարի գրչին: Կը յիշեմ նաեւ որ Պ. Շահնազարի Պոլսէն Տիգրիս գրած մի քանի յօդուածները մեծապէս գնահատուեցան Ռուսաց մայրաքաղաքներու մեծ թերթերէն,

որք զայնս անմիջապէս հրատարակեցին:— Գրական յատկութիւններով օժտեալ, բայց և այնպէս Պ. Շահնազար կը թեւակոխէ օրէնսգիտութեան ասպարէզը. կը վերադառնայ Բարիզէն և աշխատակից կը լինի այնպիսի փաստաբանի մը որ արդարեւ « ընտրողական » լինելու յատկութիւն ունի: Միայն ցաւալի կէտն այն է որ յաղթական օրէնսգիտութեան մնայ գուցէ և գրագիտութիւնը մնասուի Պ. Շահնազարի գրչի արդիւնքներն վայելելէ:— Դպրոցասիրաց ընկերութեան ամենէն հաւատալից և խելացի վաստակաւորներէն մին, կը դիմէր ի Ռուսիա այդ ընկերութեան զօրութիւնը անեցնելու: Ով որ տեսայ, ամէնքն ալ սիրալիր յիշատակներ պահած են Պ. Շահնազարէ: Ահա՛ օրինակ մը թէ ինչպէս « ազգային և գրական » կըթութեամբ օժտեալ երիտասարդ մը կարող է իրեն գործնական ասպարէզ մը ընտրել: » Տրապիզոնցի այդ նշանաւոր դէմքը ինձմէ եւս պիտի ունենայ իր հրապարակագրողի պատկերը:

Քրոնիկներու մէջ աւելի հետաքրքրական են նշանաւոր դէմքերու ուրուանդակարները, վասն զի կուռ գրութեան պահանջը կը խտացնէ նոյն նկարուած դէմքին ամբողջական նշանակութեան հոգե-

բանութիւնը: Ուր աւելորդ կամ պակաս նախադասութիւններ չես գտներ, եթէ քրոնիկագիրը, շատախօս կամ ստախօս չէ: Արփիարին նման յատկութիւններ քանի որ չենք վերագրեր, բնականաբար իր քրոնիկէն կը պահանջենք կարևորը, — ճշգրիտ նկարագրութիւն:

Ներսէս Վարժապետեանի նուիրած քրոնիկին մէջ, այդ ճշգրտութիւնը ուզած է պահել, թէև ընդարձակ քրոնիկ, բայց ի նկատի կ'առնուէր, որ քրոնիկի նիւթը ազգային ու պատմական ամենէն կարկառուն դերակատարներէն մէկն էր: Եւ Արփիար անոր ուրուսպատկերէն չէր ուզեր գիծ մը զանց ընել:

Պոլիս հրապարակագիր և հասարակութեան մտաւորական շարժումին նուիրուած գործիչը, ամէնէն աւելի յարաբերութիւն կ'ունենայ Պատրիարքին հետ: Ներսէս Վարժապետեանին հետ Արփիար յարաբերութեան մէջ կը մտնէր՝ նախ իբր օրուան ամենէն հրատապ գրագէտը, երկրորդ իբր Միացեալ Ընկերութեան աւագ գործիչը: Նոյն Պատրիարքին մեռնելուն, ինքը յիշատակարանէն կը հանէր էջեր, որոնք ցոյց չէին տուած հանգուցեալ Պատրիարքին միւս կենսագիրները:

Վարժապետեանի մահուան առթիւ Ար-

փիար կը գրէր. « Մահը ունեցաւ Հայոց մէջ իւր գլուխ գործոցը: » Ծայրայեղ չէ: Բայց սգաւորին լացող սիրտը լեզուին սահման չի դնէր: Արփիար միշտ Վարժապետեանի անունին շուրջը հմայքի շուրջը լսած էր, և նոյն իսկ Իտալիոյ մէջ իր երիտասարդ օրերուն Ներսէսի անունը իրեն շատ լաւ կը պատկերանար: Առ այն տաճած մեծ պաշտումը, օր մը յանկարծական ու անցողական խաւարում մը կ'ունենայ. « Բայց օր մը, վայրկեան մը վայրանեցայ թէ՛ արդեօք այս այն Ներսէսն է՞ զոր պաշտած էինք առանց լաւ ճանչնալու: » Արարտեան ընկերութեան վարիչներէն՝ Արփիարը պահ մը կը վարանի որոշ գաղափար մը կազմելու Վարժապետեանի վրայ. վասն զի ան իր ընկերութեան վրայ բարեկամի աչք չունենալ ցոյց կու տար. ինքը որ ամէն առթիւ առ այն ջերմ համակրանք ցոյց տուած է և միշտ խանդոտ գրչով գովեստ հիւսած է անոր համար, իր տեսակցութեան մէկ օրին, անկէ չափազանց պող ընդունելութիւն կը գտնէ: Սրբազանը դառնացած կ'ըսէ Արփիարին թէ. « Մատթէոս Սրբազանին հրահանգ զրկեցի որպէս զի գալ կիրակի ամէն եկեղեցիներու մէջ բանադրանք կարդան Արարատեանի համար:

Գո՛ւրջ անհաւատութիւն կը տարածէք, անհաւատութիւն:» Սա սպառնալիք էր, Արարատեան ընկերութեան թշնամիներէն թեւադրեալ բռնի մղուած սաստ մը, որուն Արփիար թէև շուարած, սակայն փոխադարձաբար զիւանագիտօրէն սաստին՝ սաստ կը սպառնայ պատասխանելով ծայրայեղ անխոտվութեամբ, և ժպտելով կը խօսի. «Հոգ չէ՛, Սրբազան, կարող էք փառաւորապէս անաթէմայ կարդալ մեզ դէմ, մենք ալ այդ արարողութեան ներկայ կը գտնուինք, բայց մինչև զալ կիրակի ընկերութիւն չմնար: Վաղը կը հեռագրենք Վասպուրական և ի Տաւրոս մեր տեսուչներուն որ դպրոցները փակեն: Կը հեռագրենք ի Ռուսաստան որ դպրոցներն ի նպաստ մեզ հաւաքեալ մեծամեծ գումարները, որոնք արդէն ամենուն աչքին փուշ եղած են: Յետոյ երկտող գրութեամբ կը յայտարարենք ազգին թէ հայ կղերը՝ իրեն պարագլուխ ունենալով Ներսէս Պատրիարքը՝ կը հալածէ դաստիարակութիւնը, կը հալածէ երիտասարդութիւնը: Կը յայտարարենք, կը քաջուինք հրապարակէն, բայց օր մը ուրիշ կերպով կը վերադառնանք: Պատասխանատուութիւնը ձեր վըրայ:» Ու Պատրիարքը այս խօսքերուն վրայ կը կակղնայ, և իր նախորդ սպառ-

նալիքը, զրուատիքի կը փոխուի, ու կը խոստանայ պաշտպանութիւն այն ընկերութեան որուն վրայ Էջմիածնէն բանադրանք կ'ուզէր թափել տալ: Եթէ իրօք Արարատեան ընկերութեան ազատամտութիւնը չափաւորել մըն էր, որ կ'ընէր իբ սպառնալիքը, բնաւ քննադատելի չէ այդ մեծանուն Պատրիարքը, սակայն եթէ համոզմամբ կը սաստէր, և փոխադարձ սաստէն ահարեկած ետ կը կենար իր մտքէն, այդ քաջութիւն չէ: Բայց Արփիարին պէտք է հաւատալ. Վարժապետեան ներողամիտ է գտնուած, քանի որ ինքը վեհանձն տիպար մըն է, ազգային մեծ մարդ մը, գիտէր ներել, վասն զի «Ներողամիտ ոգին մեծ մարդերու կենսական յատկութիւններէն մին է:» Ու գուցէ զըտնուին անմիտ գոռոզներ որ աններողամիտ հոգին կատարեալ նկարագրի հազուագիւտ ձիրք մը համարին: Սակայն յամենայն դէպս, անկէ ի վեր Վարժապետեան այնքան անվիճելի պայծառ պատկերով մը չէր երեւնար Արփիարի: Հայրիկ՝ երիտասարդ խմբին համար աւելի ազատամիտ երեւցիք է՝ քան Ներսէս Վարժապետեան. սա Ուրնանի փիլիսոփայութենէն կը սրտնեղի, իսկ Հայրիկ անխոտվ կը մնայ: Արփիարի համար՝ Վարժապետեան մեծ սա-

տուածաբան մըն է: Զօրապետ Իկնատիէզ՝
Թուրքիոյ բարձրաստիճան պաշտօնեայի
մը կը ստիպուի մեկնել Ս. Երրորդութեան
խորհուրդը, ու երբ իրեն օգնութեան ձեռն-
հասօրէն կը հասնի Վարժապետեան, զօրա-
պետը Սրբազանին ձեռքը երախտագիտօ-
րէն կը քաշէ կը համբուրէ:

Արփիարի համար Վարժապետեան բազ-
մակողմանի գիտութիւն ունի. « Կերսէս
Սրբազան ստեղծուած էր տիեզերական
տաղանդ ունենալու համար: Ոչ ինչ իրեն
համար անօգուտ էր, ոչ ինչ կը մերժէր:
Այս է ճշմարիտ մեծ մարդկանց էական
յատկանքը: » կը խոստովանի Սրբազա-
նին մեծ ժողովրդականութիւնը, ու իր
յիշատակը կ'ընդունի մեծ հովանի Հայ-
կական եկեղեցւոյ:

Եւ Արփիարի գաղափարակից Գրիգոր
Արծրունին, մեծանուն պատրիարքի այդ
մահուան առթիւ, կը խարազանէ Հայ
ազգը, որ իր գործիչները վիրաւորած կը
թողու, և անոնց վէրքերը իրենց սրտին՝
գերեզման կը մտնեն: Հռչակաւոր հրա-
պարակախօսը Յիւրիխէն կը գրէ. « Հայոց
ազգային ասպարիզից հեռացաւ, որպէս
զի այլևս չվերադառնայ, այն մեծ գոր-
ծիչը, որի անուան հետ կապուած են Հայ
ազգի բարոյական վերածնութեան ժամա-

նակամիջոցի ամենաթանկագին յիշատակ-
ները: Եւ հեռացաւ ինչպէս, միշտ տկար,
միշտ հալածուած նոյն խկ այն ազգից,
որուն ծառայում էր նա, միշտ վշտացած
նրանցից, որոնց նա իր ամբողջ կեանքն
էր նուիրել, հեռացաւ մահը սրտում, դեռ
ևս ֆիզիքական մահից առաջ: Դա, ինչ-
պէս երեւում է, Հայոց բոլոր գործիչների
վիճակն է խաւարասէր ազգերի մէջ բո-
լոր գործողների ճակատագիրն է, գոր-
ծել, և հալածուած մեռնիլ: » Ու մեծ հրա-
պարակագիրը այդ առթիւ իրաւունք ունի
ըսելու, թէ օտարէն աւելի անհամեմատ
կերպով Հայը Հայուն կը վնասէ: Ճիշդ է
Արծրունիի ըսածը, Հայը միայն լաւ թա-
ղել գիտէ. ու եթէ ողջ ըլլար, միևնոյն
խօսքը պիտի կրկնէր նաև իր Հայկակին
ողբալի վախճանին առթիւ: Տխուր էջեր
դարձնելէն զգուշաւոր ըլլալ կ'ուզէմ: Ա-
կամայ շեղումներ, անմեղազրելի թող ըլ-
լան:

*
* *

Փոքրիկ մանրիկ յիշատակները միա-
խըմբելով, դարուն ու ժամանակին պատ-
մութեան պատկերը կը կազմեն: Արփիար
այդ մանրիկներուն ալ կարեւորութիւն է

տուած: Սիրով կ'արձանագրէ Աշնան Պօղոսի մը և Գրիգոր աղայ Տէյիրմէնճեանի մը աննշան պատմութիւնը, որոնք սակայն նշանակութիւն մը կ'ունենան ժամանակակից հոգեբանութեան և գրականութեան վերլուծումին համար: Աշնան Պօղոսը կարծես ամիրայական սաստ ուրուապատկերն է, որ կ'ուզէ շանթահարել հայ խմբագիրները՝ վասն զի իր տգիտութեամբ չի հասկնար թէ անարգութիւն մը չէ կարգէր յոչս նիստ բացատրութիւն մը գործածելը՝ փոխանակ ըսելու արտաքոյ կարգի ժողով. Աշնան Պօղոսը՝ Խօրասանճեան ամիրայի առջեւ հանել կու տայ «Մասիս»ի խմբագիրը իւթիւճեանը. և որովհետեւ Աշնան Պօղոս աղան՝ ժողովական անդամ է, իւթիւճեանի գործածած կարգէր յոչս նիստ բռներն՝ անկարգութեան հոմանիշ համարելով, նախատուած կը համարուի, խմբագրին երեսն ի վեր կը պոռայ.

— Դուն մեզի ասանկ մեծ նախատինք ընես, հէ՛, քեզի կը հասկցնենք: — Եւ զայս ըսելով կը հանէ գրպանէն Մասիսի թերթ մը:

— Կը վայլէ՞ այս գրածդ:

Մասիսի խմբագիրը կը կարդայ, բայց չի կրնար հասկնալ թէ ինչ ըսել կ'ուզէ:

— Չե՞ս հասկնար. — Ամիրա, դուն կարդա:

Ամիրան ալ կը կարդայ, բայց ան ալ ոչինչ կը գտնէ ստգտանելի:

— Ինչ ըսել է կարգէր յոչս նիստ, մենք գէ՛շ ենք, անկարգ ենք:

Աւելորդ է ըսել թէ Պետրոս ամիրայ և «Մասիս»ի խմբագիրը կարող չեն ըլլալ զսպել ահագին քրքիչ մը: Եւ լաւ որ իւթիւճեանի բնական անմեղութիւնը կը ստուգուի, թէ ո՛չ Պօղոս աղան մտադիր էր զայն արքտրել: Տեսէք որքան բռնակալ իշխանութիւն ունին այդ ժամանակուան աղաները: Ու բարքերը որքան փոխուած: Ամիրայական շրջանին՝ մամուլն ալ բռնաբարուած է. ազատամիտ խմբագիրներուն վերագրելու է այդ հայ բռնապետական շրջանին տապալումը: Բայց թէ այդ ազատութենէն օգտուող շանթաժողովուրդի գէնք ընող խմբագիրներ ալ եղան, այդ ալ անուրանալի է: Ատոր մասին ուրիշ առթիւ:

Առ հասարակ մեր ժողովուրդը կը սիրէ մամուլ ու դպրոց ունենալ: Եւ սիրողներէն շատերը փառասիրութենէ թելադրեալ են: Առանց տաղտուկի կարելի չէ յիշատակել սկիզբէն ի վեր գոյութիւն ունեցած լրագրական հրատարակութեանց անուններու շարքը: Եւ ինչո՞ւ չուրախանանք: Կարելի էր ուրախանալ, եթէ, անոնցմէ

հարիւրին մէկը լրջօրէն ու ազգասիրօրէն սկսուած ու վերջացած ըլլար, տեւողական օգտաշատ կեանքով մը. կեանք մը ըսելով բնական է որ անվախճանութիւն չենք հասկնար, գործը գործիչին հետ կրնայ մեռնիլ, բայց փառասէր խմբագիրները, իրենք իրենց ձեռքով կը մեռցընէին իրենց լրագրական գործը, և զոհ էին, վասն զի խմբագրի դասնեպսակ մը իրենք իրենց հիւսած էին իրենց ճակտին:

Խմբագրական գործունէութիւնը մեր մէջը տեւողական գնահատումով հազուազիւտ բան մըն է: Եւ որոնք որ այդ գործունէութիւնը ունեցեր են, պատմութիւնը արդէն անոնց յիշատակը շատ գուրգուրանքով արձանագրած է: Ու այս դիտողութիւնները կը կատարեմ Արփիարի մէկ քրոնիկին դիւցազ Գրիգոր աղա Տէյրմենճեանի առթիւ. ան իրօք իր վաղամեռիկ լրագրական գործովը արժանի կ'ըլլար «ժամանակաւոր անմահութեան»: Եւ այդ ժամանակաւոր անմահութիւնը երազելով է որ մեր խմբագիրներէն շատերը՝ թերթի քուրջ մը հրապարակ հաներ են, և կ'արժէ ատոնց վրայ խօսիլ: Չարէն բարիք հանել, սկզբունքը եթէ մոռցուած չէ, անշահեկան չէ նաև զբաղիլ անոնցմով. և զբաղեցնողը թող ըլլայ Արփիարը, հեզ-

նական կամ շաղակրատ, միշտ իր զբէն խոկումի կաթիլթուկներ կարելի է սպասել: Չենք արհամարեր քրոնիկը, որուն նիւթ է եղած Տէյրմենճեան. որուն համար կը զբէ. «Գրիգոր աղա Տէյրմենճեան կը հիմնէր յուսաւորեալ և խաւարեալի կրակոտ օրերուն մէջ «Արևելեան դար»ը որուն առաջին թւոյն համար հակառակողը կ'ըսէին ծիծաղելով թէ՛ երկու հարիւր քերականական սխալ կը պարունակէ: — «Արևելեան դար»ը, հաւատարիմ իւր անուան, պիտի պաշտպանէր խաւարեպներու դատը. բայց բարբերողբարբ ըսեմ թէ դժբաղդբարբ խաւարի չափ կեանք չունեցաւ — զի խաւարը, մտաւոր թէ հոգեկան, միշտ տոկուն կեանք ունեցած է ինչպէս տեսած ենք միշտ և կը տեսնենք այժմ: — Բայց զբական և պատեւազմական կրակոտ այդ վաղամեռիկ կեանքէն միայն զբականութեան սէրը անշէջ մնաց Տէյրմենճեանի սրտին մէջ և օր մը մտաբերեց թատերաբեմին վրայէն ծափահարութիւններ կորզելով լուծել լրագրական դժբաղդութեանց վրէժը: Վիպական դպրոցը, որոյ տժգոյն նմանութիւնն ունէինք՝ բորբոքած էր նորա երեւակայութիւնը: Մեծ տրամ մը կը պատրաստէր՝ որոյ նիւթն էր Նարուզողոնսոր:... Բայց

ծրագիրը մնաց ծրագիր: » Ու այդ թեթեւամիտ մարդը վատնելով ժամերը գրականութեան և քաղաքականութեան, կը մահացնէ իր բուն կոչումը որ էր երաժշտութիւն. ինքը գիտէ եղեր քնարին լարերը խօսեցնել, հիանալիօրէն երգել և յուզել, ունկնդիրները սքանչացնել ու զինքը կ'անուանեն եղեր, Քանոնի Գրիգոր. սակայն ինքը կը գերադասէր կոչուիլ գրագէտ ու վսեմաշուք քաղաքագէտ: Եւ ինչ լաւ կ'ըլլար եթէ բաղդը կոյր չըլլար գոնէ կոչումի՝ խնդրոյն մէջ:

Չեզի տարօրինակ չի թուիր, թէ ըսեմ որ Արփիար ամենէն աւելի մեռելները սիրած է: Եւ ինչո՞ւ. վասն զի հանգուցեալներու վրայ ալ կրնայ գրել ինչ որ չէր գրած. ինչ որ անձանօթ էր, ինքը դազաղներուն շուրջը կը ծանօթացնէր: Իր բարեկամները իրաւունք ունէին զինքը անուանել. Մեռելոց զանգակ, կեկոսնոց կոչուակ: Ու ինքն ալ իր քնատուր հեգնական խառնուածքով՝ իրաւունք կ'ունենար անկոչ ու անճարակ գրագէտները անուանել կայծակակ խորտակ: Գրեթէ քրոնիկներուն մեծ մասը կը սկսի մեռելներու կենսագրականով: Ու նորութիւն մը կայ անոնց մէջ, ճաշակ մը ամենէն անճաշակ նիւթերու մէջ իսկ: Կարեւորութիւն է

տուած նաև անոնց, որոնք աղմկալից կեանք մը ունեցեր են ժամանակաւոր անմահութեան համար: Եւ այդ տեղ Արփիար գրչով ալ ու նպատակով ալ հեգնական է եղած:

*
**

Քրոնիկի աննշան զիւցազ մըն ալ պիտի համարուի Տիկին Թագուհի Մելիք-Ազարեանց: Քիչ բա՛ն արտադրելով մարդ աննշան չըլլար: Տիկին Ազարեանցի գրական աշխատութիւնը՝ քիչ, բայց ազնիւ, ինչպէս ամէն ազնիւ քարեր, որ շատ չեն: Եւ անոր համար Օտեան՝ Ծերենցի այդ գրագէտ աղջկան վրայ ժամանակին իր հիացումը կըրցեր է յայտնել: Անոր համար Արփիար ընդարձակ քրոնիկ մը նուրած է տաղանդաւոր գրագիտուհիին մահուան առթիւ: Քրոնիկագիր ու թարգմանիչ եղած է նաև Արփիարի քրոնիկին զիւցազնուհին, որ գրականութեան մէջ խնկածոր համբաւ մըն էր շինած իր Օր. Մենիկ ծածկանուն Գարնակ մի առաջ նորավէպով: Հռչակուած էր անոր անունը ու սիրով կը կարդացուէր անոր Տիգրիսէն Մախի գրած Դես ու դէն վերնագրով քրոնիկները: Ինքը տիկին Ազարեանց իր

վիպասան հօր Ծերենցի մուսան կ'ըլլայ, ու մենք կ'ունենանք ծանօթ թրքահայ վիպասանի պատմական թորոս Լեռն ու Երկունք վէպերը: Հայրը իր գրագետ աղջրկան կը նուիրէր զանոնք իր այս տողերով. « Հօրդ հեղգ գրիչը ոգևորեցիր գրելու « զԹորոս », ա՛ռ ընդունէ ի նուէր յոր զիս յորդորեցիր՝ այս « Երկունք »: Եւ Արփիարի այս քրոնիկին մէջ անուշադիր չեմ թողուր րեքիւ նա բացատրութիւնը: Հեղինակը ուրիշ ատեններ ալ զրուատեր է այդ ոճը: Տեսէք ինչ կ'ըսէ. « Թեթե՞ ոճ. միթէ ամէն ոք կարող է գայն ճարտարութեամբ ի կիր արկանել, թեթեւ չի կրնար ըլլալ ով կ'ուզէ, կ'ըսեն Պրանսացիք: Ծանր ու զանգաղ յաւակնոտ ոճ մը ոչինչ ունի գփուարին. խուռներամ են այդ կարգի մեծ մատենագիրք: » Այդ խուռներամէն Արփիար ջանացեր է դուրս գտնուիլ: Որչափ հեղինակներ պիտի կարդացուէին եթէ յարգած ըլլային թեթեւ ոճը: Ու գիտէք որն է թեթեւ ոճը: Երբ ընդհանրապէս չհասկըցուած նախադասութիւններ բիւրիցս կըրկնուին, կարևոր ու անպետ վկայութիւններ խճողուին մէկ էջ գրութեան մէջ. այդ ծանր ոճ գրութիւն կը համարուի, տաղանդի գիտնական արտադրութիւն...

իսկ երբ գրուին ոստոստուն, սրամիտ ու գրաւիչ կուռ յօդուածներ, հեղինակը ծանրութեան գերապատուութենէն կը զրկուի: Արփիարին թեթեւ ոճը՝ անպատիւ է — գրականութեան տգէտներուն համար: Բնական է որ ծանր ոճ կամ թեթեւ ոճ ունեցող գրիչները, հաւասարապէս յաջողակ, կամ անյաջող են ըսել չենք ուզեր: Այդ տեսակ գաղափար մը ունենալն իմաստակութիւն մը պիտի ըլլար. ամէն ոճ ինքն իր մէջ գնահատելի ըլլալու համար՝ գրչէն կը պահանջուի գրական գիտական խոր ուսում:

Գիտնականէն գիտութիւն, գրականէն գեղեցիկ ճաշակ կը փնտուրի — ընդհանրապէս: Եւ քանի որ ես իսկ թեթեւ ոճի զրուատողն եմ, պիտի փափաքիմ որ այդ ոճին հետամուտ գրագէտներն ի նկատի առնեն, որ թեթեւ ոճը այն ատեն զրուատելի է, երբ կարող կ'ըլլան ընթերցողներուն զմայլում ազդել: Արփիար ալ այս ըմբռնումով է որ կը գերադասէ թեթեւ ոճ գրականութիւնը, որ Եւրոպայի մէջ մատնանիշ եղած է միշտ: Եւ աւելի Պրանսացին է այդ ոճը մշակողը, որուն մենք հետեւելով, արդուզարդ մը տուած կ'ըլլանք մեր ազգուրն և անկերպարան գրականութեան:

*
* *

Արփիար թարգմանիչ չէր, բայց կը սիրէր թարգմանիչները, մանաւանդ քերթողական ու վիպասանական երկեր թարգմանողները: Կը յիշեմ թէ մէկ քանի տարի առաջ ինչ աղերսու եղանակով կը յորդորէր որ Հ. Ղազիկեան սկսի թարգմանել ու վարդապետը ընդհատ հրաբուխի մը պէս, դարձեալ կը սկսէր գեղեցկագիտական հեղինակներու թարգմանութիւնները: Ու յորդորողը յետոյ թարգմանչին հետ զրական խելացի վէճեր կ'ունենար, ու բծախնդիր ըլլալէ աւելի քաջալերող մը կ'ըլլար: Գրական երկեր թարգմանելու հետապնդումը իր մէջ միշտ վառ է մնացած, և այդ իսկ պատճառաւ ահա բիւրիցս գովեստներ տեսած ենք Արքա Քօնստանդինի թարգմանութեան առթիւ. Օր. Օտեան արժանի կ'ըլլար ծովացած գովեստներու. թարգմանիչը Աստուածաշունչի պարզութիւնը գործածած է, և գնահատելի է, վասն զի թարգմանելու ատեն հայերէն բառերուն շարքին մէջ զգացմունք թափեր է: Թարգմանիչներէն երբ այդ պակսի, մեռած կը ներկայանայ բնագիր հեղինակը. լաւ է Արփիարի սա-

ղիտողութիւնը. «Մատենագրութեան մէջ զգացումը կենսական մաս կը կազմէ տաղանդի. չէնք կրնար արդեօք ըսել թէ թարգմանիչ մը պէտք է օժտեալ ըլլայ զգացման տաղանդով: Օր. Օտեան ունի այդ տաղանդը:» Ուրեմն զգացմունք պէտք է ամէն պարագայի մէջ. զգալ թարգմանելու ատեն, զգալ զրելու ատեն, զգալ նկարելու և երգելու ատեն: Արփիարի համար Գրիգոր Օտեան մեր ամէնէն զգայուն զրիչներէն մէկն է: Եւ Օտեան զգայուն ըլլալու համար գաղտնիք մը ունի: Վասն զի ան խորհելու ատեն, սրտով կը կառավարէ զբիջը:

Ու քանի որ մեր զիտողութիւնները Օր. Օտեան թարգմանչէն, անցաւ Գրիգոր Օտեանի, հարկ է գեղեցկագիտական մէկ ըմբռնում մըն ալ նկատի առնուի: Արփիար Օտեանի վիպասանական անձուկ ըմբռնումներուն հետ հաշտ մնալ ուզած է բնաւ: Պարզ է խնդիրը. Օտեանի համար վէպը միսթարիչ պէտք է ըլլայ, իսկ Արփիարի համար թշուառութեանց դեղ ու դարման:

Արփիար վիպագրութեան մէջ իր «Կարմիր ժամուց»ով զրական ոչ աննշան էջ մը կը բանար. հետաքրքրական է Օտեանի առթիւ վիպասանութեան ըմբռնումին դա-

ւանանքը գիտնալ. ան կ'զրէր. « Երբ Օտեան էֆէնտի կը յայտարարէր թէ՛ «վէպըն ինչո՞ւ է, որպէս զի մարդը միւթարուի իրականութենէ», կրնանք ընդունիլ այս վճիռն իբր անհերքելի ճշմարտութիւն: Միւթարութիւնը վերջին ապաւէնն է անոնց, որոնք չեն կրնար այլ ևս դարման յուսալ իրենց ցաւոց, իսկ արդի վիպասանութիւնը չուզեր շատանալ վշտաց սփոփ հայթայթելով միայն, այլ նաև կէտ նպատակի ունի աջակցիլ անոնց, որք ընկերական թշուառութեան դարմաններն որոնելու հետամուտ են: Վէպը կը պարզէ իրական կեանքի պատկերն և կը մղէ զմեզ խորհրդածել ընկերական վիճակի վրայ: Թէ՛ արդի երիտասարդութիւնն օր մը ունենայ իր վիպասաններն, որք ուսումնասիրելով մեր ամէն խաւերուն ցաւերն ու վշտերը՝ պատկերացնեն մեր աչքերու առաջ, տխրերանգ վրձինով, տարբարողութեանց նկարները, մինչև իսկ ժանտատե սիլ տեսարաններու վկայ ընել զմեզ և ըսեն մեզ. « Ահա՛ չարիքը, մենք քննեցինք հիւանդութիւնը, ըրինք Հայ ընկերութեան սրտին տխակօսորթն. արդ առաջ թող գան նոքա ոչք պիտի խորհին հիւանդութեանց դարմաններուն վրայ ». պիտի կրնանք ի բաց մերժել այդ երիտասար-

դութիւնը և ըսել. « Է՞ր զմեզ ի ճեմ կը հանէք ցաւոց և տառապանաց հանդիսավայրներն: Առաջնորդեցէք մեզ ծաղկանց բուրաստանները միայն. երթանք Վոսփորի պուրակները, թռչնոց դայլայլիկները լսենք, զմայլինք ծաղկանց բուրմամբ: Ի՞նչ գործ ունինք մենք այն մութ ու խոնաւ յարկերն ուր խշտիներու վրայ յարկիկ է հոգեվարք: Գարշահոտութիւն կայ անդ, և մեր բիւզանդական ոռնգներն շատ փափկասուն են: » Այսպէս միայն պիտի կրնան խօսիլ դասական և վիպական դրարոցներու սիրահարք: Բայց թէ հրճուանք մըն է, անմեղ զբօսանք մը պատկանիլ այդ դարոցներու, սուրբ պարտականութիւն մըն է աշակերտիլ իրականութեան: Այդ պարտականութիւնը պէտք է որ կատարէ Հայ երիտասարդութիւնը: »

Վիպասանութեան համար լայն ասպարէզ կը բացուի: Արժիար միայն քարոզող չէ, այլ և գործնական գրիչ: Գաւառներէն գաղթական հայը պատառ մը հացի համար ընտանիքը, հայրենիքը թողած Պոլսոյ խաներուն մէջ կը հիւժէր. ու բնականաբար ամիրայական ու աղայական հայ դասակարգը միշտ արփիածեմ ու ազնուաշուք բարձրութեան մէջ մնալով՝ պիտի չուզէր հետաքրքրուիլ Հայաս-

առնցի դարիպի կեանքով. և մէջտեղ կ'իյնայ ժամանակին ընկերական պահանջներով զարգացած ու կրթուած երիտասարդութիւն որ ո՛չ ստորնութիւնը այլ ազնուութիւն ընելով, զբիչ կը շարժէ, ու կը պաշտարպանէ դարիպին իրաւունքը, անոր սըրտածմլիկ պատկերը աչաց առջև կը դնէ, կը բանայ խաներուն նամէտ նկուղները, ուր խշտիի մը վրայ հիւանդ անօգնական դարիպը՝ արիւն արտասուքով կը հալի և կը յիշէ իր օճախը: Նոր վիպագիրները, ու նորավէպ գրողները, անոնք որ քիչ շատ բան մը կրնան համարուիլ, ընկերական վիպասանութիւնը մշակեցին: Գրականութեան այդ ամենէն կարևոր ճիւղերէն մէկը, լաւ խարագան եղաւ աղայական անսիրտ ու անտարբեր բարքերուն: Եւ դարիպը անկէ վերջը կ'ունենար իր վրայ գուրգուրացող, իր արտասուքը ազգին ցոյց տուող ազնուասիրտ ու տաք հոգի երիտասարդ գրիչներ:

Նոր ընկերական վիպագրողներ կարելի է համարել՝ ինքնին պարագլուխ Արփիար Արփիարեան, Մեւքոն Կիւրճեան, Գրիգոր Զօհրապ և Յ. Ալփիար. թէև ամէնն ալ տարբեր ճամբով կ'ընթանան, սակայն նպատակին միևնոյն տեղը կը յանգի: Այս յիշատակեալ և անյիշատակ ուրիշ

նորագոյն վիպագիրներու մասին, մենք ունինք յատուկ ուսումնասիրութիւն, առանձինն ամենուն վրայ:

Եւ պէտք է ըսել որ թրքահայ գրականութեան նոր անձնաւորութեանց մէջ՝ զըտնուեցան մէկ քանիներ որ դասական ու անըջական գրականութենէն շատ ու շատ հեռանալով, բոլորովին անձնատուր եղան Եւրոպայէն հասնող ժամանակին պահանջին յարմար գրական ճիւղերու:

Եւ այս կ'ըլլար ազատամիտ գրական գործիչներու շնորհիւ, ու ամենէն մեծ ռահվիրան ինքն էր Արփիար Արփիարեան:

Նոր կեանքով զբաղեցնել նոր մտքերը, նոր գրականութեան հիմ դնել է այդ, վասն զի հին մտաւորական գործիչները հնագունին հնախօսները եղան, ինքնուրոյն գրականութեան մը կարևոր գործին փոյթ չըրին. և անոր համար ամէն առթիւ Եւրոպացին կ'ըսէ թէ հայը գրականութիւն չունի, ու մէկ քանի տարի առաջ միջազգային գրականութեան պատմական գրքի մը մէջ՝ սրտնեղութեամբ կը կարդայի հայկական բաժինը. և ինչ չոր բաժին ուր հեղինակը ջանացեր է համոզել թէ հայը ինքնուրոյն գրականութիւն չունի, միայն թարգմանիչ է եղած: Բնա-

կան է որ այդ գրագէտին անձանօթ էր մեր նորագոյն գրականութիւնը: Եւ հինին մէջ միակ պարծանք թարգմանութիւնները նկատելով սխալած չէր: Այս հարցը քիչ մը որոշ ըմբռնենք: Պէտք է գիտնալ որ պատկեր մը քննած ու քննադատած ժամանակնիս, կարող ենք շատ նրբամիտ դիտողութիւններ ընել, սակայն տտով մենք պատկերահան եղած չենք ըլլար: Թէն և Բէսքին սքանչելիօրէն գեղարուեստի քննադատութեան վարպետներն եղան, սակայն ո՛չ պատկերահան եղան, ո՛չ արձանագործ և ո՛չ ալ ճարտարագէտ: Ուրեմն կ'ուզեմ հետեւցնել, որ միմիայն հնագիտական կամ բանասիրական գիտութեամբ չէ որ կարելի է կանգուն պահել գրական տաճար մը, այդ տեսակ տաճարը դուռ չունի: Ինքնաբուխ, ինքնուրոյն գրականութիւնը պէտք է ստեղծել ու դնել այդ տաճարին խորանին վրայ:

Ուրեմն ո՛չ անցեալը մոռնալ, ո՛չ ալ ներկան, ու ներկային մէջ աւելի ուժեղ գրականութիւն մը ստեղծելու ջանալու ենք, եթէ չենք ուզեր միմիայն թարգմանիչ կոչուիլ: Եւ քանի որ Արփիար առիթ կ'ըլլայ մեր այս դիտողութեան, իրեն պատճառաբանութիւնն ալ կրնանք յարգել. ահա՛ թէ ինչ կ'ըսէ նորին և հինին

համար: « Այսօր կը՞ գուրգուրանք մագաղաթեայ բեկորներու վրայ, կը պրպտենք դարևոր աւերակներ, որպէս զի յուշիկ մը գտնենք անցեալէն և սակայն անտարբեր ենք այնմ որ դեռ երէկուանն է: Թէ օր մը երէկուան այդ յիշատակները ծածկուին մամուսպատ դերբուկներու մէջ և անձկակարօտ լինին անոնց մեր թոռներն, ինչ դատապարտութիւն պիտի չկարդան մեզ:» Ու չի զատապարտուելու համար, շատ բնական է որ մեր ներկայ գրագէտները դեռ աւելի լրջօրէն մշակելու են ժամանակակից գրականութիւննիս: Եւ սակայն նոյն իսկ անոնք որ հին մագաղաթեայ բանասիրութեան հակառակ են, ինքնուրոյն արդի մեծ շահեկանութիւն ունեցող մամուլ մը կազմակերպելուն մէջ՝ այնքան գերազանց ճիգով աշխատելու կրակը ցոյց չեն տար: Եւ ուրիշ կարեւոր հարց մըն ալ է, թէ արդեօք մեր վարժարաններուն մէջ խնամքով կ'աւանդուին մայրենի լեզուն, ազգային ու միջազգային գրական պատմութիւնը, և գեղեցկագիտութեան ո՞րքան կարեւորութիւն կը տրուի: Գիտենք որ այս հարցերուն գոհացուցիչ պատասխան մը կարող չենք առնել:

*
* *

Գրականութեան մէջ մշակուած քրոնիկը եղեմաճեմ պտոյտի գաղափարը կուտայ: Նոր ու ակնապարար տեսարաններ առջևդ կը պարզուին, և դու չես ուզեր, ամէն մէկ գեղեցիկ բնական դաշտանկարին առջև՝ չյայտնել քու հիացումդ. քրոնիկներու ուսումնասէրը դուրիսդ մըն է, ուսկից կը պահանջուի թուրքիկ տպաւորութեանց խտացած նկարագրութիւն մը, այդ համեստ ներշնչումով պիտի չուզեմ մոռացութեան տալ շահեկան քրոնիկներ, որոնք թափթփուկ լրագրական էջերու մէջ թաղուած մնալու դատապարտուած են, եթէ երբէք ձեռք մը չըլլայ որ զանոնք քաղէ ու հրատարակէ:

Կարծես գրական կամ ընկերական մեղք մը կատարած պիտի ըլլայի, թէ զանց առնելի յիշատակել կանացի դէմք մը, որ Կ. Պոլսոյ մէջ համակրանքի բազին մը ունի: Այդ դէմքը Ռուսաստան ծանօթ էր Օրբորդ Գայիանէ Յովհաննիսեան անունով, յետոյ Կ. Պոլիս կը կոչուէր՝ Տիկին Մատակեան: Դեռ թուրքահայ չունեցան իրենց վարժարաններու պատմութիւնը, որ կարենայինք տեսնել Տիկին Մատակեանի

դաստիարակչական կարկառուն դէմքը: Իր յիշատակին արձանագրութիւնով միայն գոհանանք. արձանագիրը /գայն շատ լաւ ճանչցող Արփիարն է. սա տեսէք ինչ կը զրէ. «Օր. Գայիանէի անունը մին էր անոնցմէ զոր Պոլիս շատ անգամներ լսելու բարեբաղդութիւնը ունեցած ենք: Օր. Գայիանէ կրթական դասախօսութիւն կ'ընէ: Օր. Գայիանէ դպրոցի տեսուչ կը լինի: Օր. Գայիանէ մանկական պարտէզ կը հիմնէ. երբ այս ամէնը կը կարդայինք, ո՞վ ի մէնջ կ'ընար մակաբերել թէ՛ մի գեղեցիկ մանկամարդ աղջիկ որ կը պատկանի Թիֆլիզի ամենէն կանոնաւոր ընտանիքներէն միոյն (գուստր բժիշկ Պ. Յովհաննէսեանի) և քոյր Պ. Արզար Յովհաննէսեանի), որ Եւրոպա կը թուած է և կը վայելէ կեանքի ամէն դիւրութիւններն, ինքզինքը կրնայ նուիրել դաստիարակութեան պաշտօնին: Տեսուչ էր Երեւանու Գայիանեան վարժարանին և ունէր մանկական պարտէզ ուր ամէն գգուանաց, ամէն խնամոց առարկայ էին 4-5 տարեկան սիրուն փոքրիկ մանկիկներ:» Եւ այդպիսի տիպար մը կը հալածուէր, ու Կ. Պոլիս բարձր գնահատումի կ'արժանանար թրքահայ կրթասէր համայնքէն:

Տիկին Մատակեանը իր նպատակներուն

լիովին չկրցաւ հասնիլ. ու մամուլը իրեն ամբողջ սրտով երանի չկարդաց, բայց ուրիշ կին մը կարելի է երջանիկ համարել. այդ կինը Տիկին Տիւսարն է, որ թէև սգաւոր օրեր ունեցաւ, բայց իր Մայտան ու Սիրանոյշը գինքը գրականօրէն երջանկացուցին: Արփիար Արփիարեանն է որ զինքը երջանիկ կը համարի. «Երանի Սիրանոյշի հեղինակին»... Էւ ինչո՞ւ, վասն զի անոր էջերուն վրայ փափկասուն սըրտեր արցունքներ թափեր են: Միշտ ուշի ուշով քններ եմ թէ Տիւսարի մասին ինչ գաղափար ունի Արփիար, սակայն պէտք է ըսել որ, թէև անոր վրայ ստէպ գրած է, բայց բնաւ որոշ դատաստան մը յայտնելու բարի կամք մը չէ ունեցած: Այդին Տ. Սրբ. Երիցեան՝ անկեղծ գնահատում մը չէր զլանար այդ կին գրողին: Արփիար աւելի կ'ուզէ խիստ. քննադատել, բայց նուրբ զգացում մը կ'ունենայ, չուզեր կին գրողներու սիրտը վշտացնել: Էւ դժուարութիւն կը զգայ որոշ խօսելու, վասն զի կին վիպասան մը անտարակոյս ունի իր ներքին կեանքը, որ քիչ շատ կը քօզարկէ վէպին էջերուն տակ. քննադատը պէտք է այդ կեանքին ծանօթ ըլլալ որ կարողանայ վերլուծել անոր հոգեբանութիւնը: Արփիարին կ'երևի ծանօթ չէր

«Մայտայ» ի հեղինակին ներքինը: Աւելի ճիշտ է կարծեմ թէ ըսենք, որ Արփիար կին գրողներու կեանքը հրապարակաւ ուսումնասիրել չէր ուզեր: Էւ կարծես կ'ուզէր հաւատալ հեղինակի մը սա ծանր խօսքին, թէ կինը երկու պարագաներու մէջ՝ պարահանդէս ու զիրք գրելու ատեն անկեղծ չըլլար: Ու չեմ գիտեր որ Արփիար ինչո՞ւ Տիւսարի մասին այսքան կասկածաւոր վերաբերմունք կ'ունենայ:

*
* *

Արփիար՝ վենետիկի Մխիթարեան հարց մասին՝ րոյրոյիս անկեղծ է. պէտք է ըսել թէ ինքը այդ միարանութենէն երեք տարուան միջնակարգ կրթութիւն մըն է առած, և ուրիշ շատեր, որոնք անհունօրէն օգտուած են այդ պատուական հայրերէն, ցոյց չեն տուած այն մարդավայել երախտագիտական զգացումները, ինչ որ անզուգական կը տեսնեմ Արփիարի ազնուական սրտին մէջ:

Պշիկթաշլեան կը պարծենար թէ Մխիթարեանց աշակերտ է, սակայն ինքը իր երախտագիտութիւնը յայտնելու շատ առիթ չունէր, ինքը հրապարակախօս մը չէր: Արփիար իր բազմամեայ լրագրական

կեանքին մէջ, երբեք դրօշ չի դարձուց-
անսպառ խանդաղատանք մը կը հոսէր իր
երակներէն դէպ ի կղզին, ուր իր նախկին
դաստիարակները կը ճգնէին բարձր իտէա-
լով մը — Հայաստանի մտաւորական կըր-
թութեան համար:

Թովմաս Թէրզեան, Մկրտիչ Աճէմեան,
Սրապիոն Հէքիմեան, Միքայէլ Փորթու-
գալեան, Սազգ Յովհաննէս, Մատթէոս
Մամուրեան, Մարկոս Աղաբէկեան, Ստե-
փաննոս Պալասանեանց, Հիսարլեան և ու-
րիշ գիտնական ու բանաստեղծ նշանաւոր
անձնաւորութիւններ տաք սիրտ մը ունէին
դէպ ի իրենց մտաւորական օրբանին մայր
դաստիարակները: Սակայն երբ անոնց
այդ սէրը ասուպի պէս նշմարք մը կը
թողու պատմութեան մէջ, անդին Արփիար
իր այդ սիրով արփիի պէս վառ, մշտա-
վառ կը մնայ: Ու դիմադրող իմ այս
փաստացի համոզումիս, պիտի ըլլան միայն
անոնք, որոնք թերթած չեն Արփիարի
լրագրական պատմութիւնը, կամ հետը
չեն ապրած ու չեն իմացած՝ թէ որքան
արծարծունէ է այդ երախտագիտական սէրը:
Ու պէտք է գիտնալ, որ Արփիար իբր
աշակերտ այդ դաստիարակներէն ամենէն
քիչ օգտուողն է:

Քրոնիկի կարգաւ ընթանալով, առիթ

կ' ունենանք Մխիթարեան — Արփիարեան
յարաբերութեանց շահեկան կէտերու վրայ
խօսելու: Հիմայ քննենք թէ Արփիար իր
ամենէն երիտասարդ օրերուն՝ ինչպէս կը
մտածէր ու կը գրէր զինքը դաստիարա-
կող միաբանութեան վրայ:

Գրական ամենէն չնչին մէկ առիթն
իսկ Արփիար չէր ուզեր կորսնցնել, և
անյիշատակ թողուլ օրուան կեանքի քրո-
նիկէն, բաւական է որ այդ չնչին նիւթը
բղխած ըլլայ վէնետիկի Ս. Ղազարէն:
Լուր կ' առնէ Տանդէի «Գթխք» ի գրարար
թարգմանութեան մասին, և ահա ընդար-
ձակ քրոնիկ մը կը լեցնէ «Արեւելք» ի
մեծկակ էջերուն մէջ. աւելի նշանաւոր
գործ մը ձեռքը կ' իյնայ. կը թերթէ իր
հոյակապ դաստիարակ Հ. Ալիշանի «Սի-
սուան» ը և ինքը շուարած, չկրնար փա-
ռարանութեան բառեր գտնել, ու Մկրեան
քահանային օձիկէն բռնած՝ կ' ըսէ. «Հա՛-
կը հիանաք Ալիշանի վրայ, սակայն վաղը
գոնցէ կրօնական ժողովին մէջ՝ որոշէք որ
Շիրակը ու Սիսուանը արգիլեալ գրքերու
էնտէքսին մէջ անցնէք, վասն զի գրողը
կաթուղիկ մըն է:» Արփիար երբեմն կը
չափազանցէ, իր զգացմունքի արտայայ-
տութեանց մէջ:

Աչքիս առջևն է «Մեսիականի թարգ-

մանիչը» օրուան կեանքէն յօդուածը . կ'արժէ՞ այդքան երկայն քրոնիկի նիւթ ընել, գիրք մը որ այդ փառաբանական յօդուածէն քսան տարի վերջը լոյս տեսաւ: Բայց իր նպատակն է իր Մխիթարեաններուն ոսկեթել պատմութիւնը հիւսել: Եւ թարգմանիչն ալ անարժան չէր իբր բեղուն աշխատաւոր քրոնիկի նիւթ ըլլալու: Ընդհանուր հայ մամուլը այդ անձը չի ճանչցաւ. ու եթէ Արփիար ժամանակին գրած չըլլար անոր վրայ, նոյնին վրայ գրողներ պիտի գտնուէին միայն իր միաբանակիցները: Ու այդ աշխատաւոր գրիչը՝ դեռ նոր գերեզման մտաւ, այն ատեն երբ ձեռնարկած էր իր Գաղղ-Հայ բառարանը կրկին տպագրելու: «Մեսիականի» առթիւ՝ առհասարակ Մխիթարեան գրական հոգին՝ Արփիար ուզած է նշմարել այս տողերով. «Մխիթարեան վարդապետները հայոց ամենէն մեղամաղձիկ մատենագիրներն ու բանաստեղծներն են: Ալիշանի ամէն մէկ տողը, տխրաբոյր է, տխրութիւն ազգի, տխրութիւն սրտի: Ս. Ղազարու մենաստանը ծովու և կանանչներու մէջ թաղուած պճնազարդեալ մեռելական յիշատակներով, լուռ, հանդարտ ու խաղաղ, մեղամաղձոտութեամբ կը համակէ ամենէն զուարթ սիրտն իսկ:» Մխի-

թարեանները քիչ բանաստեղծ ունեցեր են. և ընդհանրապէս Ս. Ղազարի վանականներուն գեղեցիկ գրելու համբաւ մը կը տրուի»: Արփիար կը չափազանցէ իր գովեստներուն մէջ: Այդ վանականները իր ըմբռնած բանաստեղծները չեն և չեն կրնար ըլլալ, քանի որ իրենք յատուկ ծրագիրով մը գրիչ չեն շարժած, բան մը որուն պակասութիւնը զգալի կը տեսնուի իրենց հրատարակութեանց մէջ: Իրենք, կարող ենք ըսել որ, մեր ամէն վանականներէն վեր աշխատաւոր անձնաւորութիւններ են. ամէն մէկը ինքնուրոյն առնելով՝ օգտակար ըլլալու կրակ մը ունի. դժուար է գտնել իրենց մէջ վարդապետ մը, որ մէկ քանի հատոր գիրք հրատարակած չըլլայ: Ընդհանուր մատենագրական գործունէութիւննին անզուգական է. այդ վաստակաւոր մեղուններուն միակ և ամենէն մեծ պակասը անսխտէմ գործելու դրութիւննին է:

Մասնաճիւղ մը, որուն կը պարապի երիտասարդ վանականը, քիչ անգամ կարելի է գտնել մէկը, որ լիովին ծանօթ ըլլայ իր սիրած նիւթին: Եւ կը տեսնենք արդէն, որ գրիչ շարժող ամէն վանական, ի նմին ժամանակի հնախօս է, բանասէր է, բանաստեղծ է, վրպասան է, հրապա-

բակախօս է, և նոյն իսկ քիմիագէտ, ֆիզիքոս և նաղիւրալիսդ: Վէրջապէս Ս. Ղազարի Միաբանները ամէն մէկը առանձինն՝ հանրագիտակ գլուխներ են: Եւ եթէ եղած է որ երկար տարիներու շարքին մէջ Ալիշան բանաստեղծ մը փայլեր է, այդ իր անհատական խառնուածքին վերագրելու է: Օր մը « Բանբեր գրականութեան » խմբագիրը, ինձ կ'ըսէր. « Ախ եթէ Ալիշան վանական չըլլար, ինչ մեծ հայ բանաստեղծ մը կ'ունենայինք »: Իրաւունք ունէր դիտողը:

Պէտք է ըսել, թէ ընդհանուր առմամբ՝ վենետիկի Միսթարեանները գեղեցկագիտականին միտում ունեցող շարժում մը ցոյց տուած են և արդէն Բագրատունեան շրջանին եղած դասական գլուխ գործոցներու թարգմանութիւնները՝ մեծղի վկայութիւններ կարող են համարուիլ: Սակայն այդ շրջանը կանոնաւոր ընթացք մը չունեցաւ: Ինձի կը վերապահեմ թէ ինչո՞ւ գեղեցկագիտականին յարմար վենետիկեանները՝ չեն կրնար շարունակել քնարին ու վէպին թոփչը: Արփիար կ'ուզէ մեկնել, համոզուողին ազատութիւնը թող անկապտելի մնայ. ինքը խօսելով Միսթարեաններու բանաստեղծական խառնուածքի մասին՝ կը գրէր. « Ինչ հոգիներ

ստեղծուած սիրելու և սիրուելու համար, կարօտ ունին քնարի մը իրենց հոգեկան վշտերը մի քիչ լռեցնելու: Վարդապետի մը ներելի է այդ միսթարութիւնը ունենալ: Աստուծոյ հաճելի ըլլալու համար պէտք է ջախջախել Աստուծոյ գլուխ գործոցը, սէրը: »

Եւ ուրիշները եթէ համոզուին, բայց ես ոչ: Խուսափողական մեկնութիւններ են ասոնք: Կարելի է երկար վիճել, սակայն մեր նիւթէն շատ շեղում մը ներելի է: Միայն յիշենք որ երբայական ամենէն գողտրիկ բանաստեղծները, սուրբ Մարգարէները, Աստուծոյ հաճելի եղած են, Աստուծոյ գլուխ գործոց սէրը բիրեղային մաքրութեամբ ըմբռնելով, ու նոյն ըմբռնումով՝ Գրիգոր Նարեկացին, մեր ամենէն կարկառուն փափուկ քերթողը կ'ըլլայ: Թողունք այս հարցը:

Ա. Արփիար « Մեսիական » ի թարգմանիչ, Հ. Սամուէլ Վ. Գանթարեանի քնարատարութիւնը յատկանշելու համար կը մեկնարանէ. « Վարդապետները որ չեն կրնար բոլորովին մահուան դատապարտել իրենց սիրտը, փոխ կ'առնուն օտարին քնարը: Ո՛չ ապաքէն Նար-Պէյի սրտի տրոփումները Լամարթինի հովանւոյն ներքեւ հնչուեցան Հայոց սրտերուն մէջ: Հ.

Սամուէլ Գանթարեան, թերևս ոչ այնքան զիւրազրզիւ որքան Ս. Նար-Պէյ, ինքն ալ գրկեց Լամարթինը և իւր սիրտը կը զովացնէր թարգմանելով Լամարթինի «Առաջին մտածութիւնը բանաստեղծական»ը: Այդ գրքէն կրնանք տեսնել թէ Հ. Սամուէլ լուրջ միտք մը ունի և ուղիղ ճանապարհին մէջն է թարգմանելով Քլօքը-թօքն: Այդպիսի ծանր գիրք մը թարգմանելու համար Հ. Ս. Վ. Գանթարեան հարկ եղած ամէն յատկութիւններն ունի: Մխիթարեանց ամենէն քաջ հայագէտներէն մին, ընտելացած կրօնական մատենագրութեան սիրահար Լամբրոնացոյ զօր Հ. Ղ. Ալիշան կ'անուանէ «Սիրոյ սպունգ», վարժ նստողական կեանքի, կրնայ ամենայն համբերութեամբ տարիներ զոհել»: Եւ Գանթարեան վարդապետ 1879ին կը սկսի այդ «Մեսիական»ի թարգմանութիւնը որ կը տպագրուէր գրեթէ երեսուն տարի վերջը: Պէտք կը տեսնէր այդ երկար ժամանակին, քանի որ կ'ուզէր բնագրին լեզուն գերմաներէնը սորվիլ, զոր կը սորվի Կարապետ Գարագաշեանի թելադրութեամբ:

Ա. Արփիարեան՝ Մխիթարեան միարանութեան այդ մէկ անդամին մանրամասն կենսագրականն ընելով, զիտում ունի ա-

նոնց ընդհանուրին դէմ կարգ մը հակառակող հոգիներու դիմակը վար առնելու: Ինքը պարագային համեմատ՝ իր այդ սիրած գրական պատկառելի մարմնոյն դառն ներարկումներ ալ թէև չի խնայեր, սակայն չուզեր որ այլք անհիմն գաղափարներով անուանարկեն իր դաստիարակներու տունը: «Հակառակ այն թեթեալանութեանց զորս իբր թէ ազատամիտ երեւնալու համար կը ժայթքեն հրապարակախօսք ոմանք ընդդէմ Մխիթարեանց, ահա Հ. Ղևոնդ Վ. Ալիշան ամենայն եռանդեամբ կը պատրաստէ Արարատը: Ինչ հոգ, ինչ խնամք: Գեր. Տ. Իգնատիոս Սրբազան Կիւրեղեան, Մխիթարեանց Աբբան, որ գործնական մտքին կը միացնէ ամենանուրբ ճաշակ մը և կը պաշտէ Ալիշանն, ամենայն հոգ կը տանի որ Արարատը գերազանցէ տպագրութեան մասին Սիսուանը:» Աւ այդ հսկայ գործին հետ մատնացոյց կ'ընէ ուրիշ անհամեմատ վաստակաւոր Մխիթարեանի մը՝ Հ. Չամչեանի Հայոց պատմութիւնը. ու կը գրէ. «Ինչ մեծ ազդեցութիւն ունեցած է այդ պատմութիւնն Հայ ազգին վրայ, և երբ նախատինքներ կը տեղան նորա գլխուն, արդեօք կրնան երեւակայել թէ հեղինակը ինչ սարսափելի տառապանաց դիմադրած

է ի զլուսն հանելու այդ աշխատանքը: Շատ ձեռագիրներ որ յետոյ գտնուեցան, կը պակսէին նմա: Շատ շարքներ շուարած կը մնայ եղեր: Ի՞նչպէս թուականները ճշտէ, ի՞նչպէս իրողութիւնները կարգադրէ: Սրտի նեղութենէն կու լայ, կ'արտասուէ, և վարդապետները կը մխիթարեն, կը քաջալերեն եղեր զնա:»

Ռամկին մէջ անկեղծ ներկայացուցիչ մը ճշմարտութեան բերան կարելի է համարուիլ: Չամչեանի հոյակապ նշանակութիւնը եթէ կէսգիտուններու կիսովին ծանօթ է. կատարեալ անկեղծին՝ ամբողջովին ծանօթ է այն: Հնախօս պատմարան կը յիշատակէ Էջմիածնայ միարան Ահարոն վարդապետը, որ հռչակաւոր է իր յիշողութեամբ, բերնուց գիտէ եղեր հոգևոր շատ մը գրքեր մանաւանդ հին և նոր կտակարանի ամբողջ պատմութիւնը և Գրիգոր Նարեկացիի աղօթքները: Եւ օրին մէկը ան կ'աներեւութանայ, ալ մեռած կը համարուի ու հոգևոյն համար հոգեհանգստի պաշտօն ալ կը կատարուի: Եւ տարի մը վերջը զարձեալ Էջմիածին կը հասնի: Ուրտի էր գացած. իր ուխտատեղին Պոլիս Հ. Չամչեանի սենեակն է եղեր. երկարօրէն փնտոելով պատմարան Մխիթարեանի տունը, վերջապէս կը գտնէ. ամբողջ Հա-

յութիւնը զգրող Չամչեան վարդապետի դէմքը տեսնելու համար մտած է անոր սենեակը. հիանալու համար ուխտագնացութիւն մը կը կատարէ, և տեսէք, ուխտաւորը ինքնին ինչ կը պատմէ այդ ասութիւ. «Մտայ և կայնեցի Չամչեանի առաջ, որքան ստիպեց նա ինձ բազմիլ, չբազմեցայ. քառորդ ժամ երեսին նայելուց յետոյ, սենեկից դուրս եկայ և ուղղակի ճանապարհ ինկայ դէպ ի Էջմիածին:» Անկեղծ հիացող մը կընայ մարմնացնել առ Հ. Չամչեան հանուր ազգին հիացումը: Ու այս միջադէպքի առթիւ, Արփիար Արփիարեան դիտել կու տայ. «Ո՞չ ապաքէն Ահարոն վարդապետ կը ներկայացնէ զրեթէ Հայ Ազգին գաղափարները Մխիթարեանց նկատմամբ: Մենք Հայերս որ այնքան կըօնամոլ ենք և կ'ատենք այլադաւան Հայերն — ինչպէս անոնք ալ զմեզ — սակայն միշտ յարգանք տածած ենք Մխիթարեանց համար: Պատճառը պարզ է: Եթէ կաթողիկոսութիւնը կը վիրաւորէ մեր կրօնական զգացումները, Մխիթարեանց գգուած են մեր ազգային զգացումները: Ով կընայ ատել մատենագիր մը որ կը գրուէ սիրտդ ու միտքդ:» Շատ արզար, շատ իրաւացի ղիտողութիւն, պէտք է խոստովանիլ որ Մխիթարեան հայրերը առ-

հասարակ ամէն ատեն հիներն ալ, նորերն ալ միշտ անկեղծ ազգասէրներ են եղած, ու ազգասիրութիւնը այն յուսուածութիւնըն է զոր Մխիթարեանը իր սրտէն կախած, կրցեր է հմայել և գրաւիչ ըլլալ:

Արփիարի յաջորդաբար մեր ուսումնասիրած քրոնիկներուն մէջ պիտի տեսնենք նոյնպէս, որ ինքը միայն իր բարեկամ Մխիթարեաններու համար չէ որ փառապշտակ կը հիւսէ. ինքը անխորական է, հակառակ պարագային միջակ գրագէտ քննադատ մը կ'ըլլար:

Յուշամուտքիւնը շատ աժան բարք մըն է Պոլսեցի հայերուն համար. Արփիար իրն է համեստ, և հաշտ չէր ըլլար կարգ մը թեթև բարքերու երկրպագուներու հետ. իրեն համար թեթևութիւն մանաւանդ թէ ցուցամուտքիւն էր դպրոցական պարգևաբաշխութեան հանդէսները և խմբագիրներու բազմահմուտ հանրագիտակ գրիչներ երեւնալու ձգտումը: Ատոնց դէմ ուժգին պատերազմեր է:

Եւ պարգևաբաշխութեան հանդէսները անցեալ դարու կէսէն կը սկսէին. նոր վարժապետներ, նոր տեսուչներ, հանդիսական բազմամբոխին առջև կ'ուզէին պսակուած տեսնել իրենց քրտնաթոր ճակատը, հին ու արդիւնաւոր վարժապետ-

ներ՝ Ոսկան Յակոբ, Ներշապուհ Գաբրիէլ, Թիւլեան որոնք յիսուն տարիներ տընած են ազգին զաւակներուն կրթութեան՝ առանց երազելու ցուցամուտքիւն մը. Արփիար իրաւունք ունի զարմանալու. «Չարմանալի չէ՞ որ այսպիսի համեստ ու առաքինի ուսուցիչներու օրով տեղի չէին ունենար այդ խեղկատակ պարգևաբաշխութիւնները, որոց մուտքիւնը կը տարածուի հետզհետէ ի գաւառս: Ամէն ինչ պարզ ու համեստ էր»: Այդ համեստութիւնը յիսուն տարի վերջը Պոլսոյ ամէն վարժարաններէն վտարուած կը տեսնենք: Անհուն զգուանքով կարողացեր ենք պարգևաբաշխութեան նկարագրութիւնները, և վարժական խմբագիրները նպաստեր են կրթական վարիչներու փառասէր ցուցամուտքիւն:

Ինչ որ կ'երևի Նուպար-Շահնազարեան սաներու վարժապետութեան օրով ծագեր է պարգևաբաշխութեան մեծադուրդ ցուցամուտքիւնը: Այդ օրը կարգ մը սուփեստներ ճառերով աշխատած են հարուածել այն ամէնը, ինչ որ իրենց անհամակրելի համարուեր են: Եւ այդ առթիւ՝ Խրիմեան Հայրիկ Իսկիւտարի պարգևաբաշխութեան հանդէսի մը մէջ ալ անհամբեր, սկսեր է խօսիլ. «Ինչ փոյթ ձեզի թէ

այսինչը ինչ թերութիւն ունի, այսինչը ինչ թերութիւն, դուք ձեր գործը տեսէք և այդ կը բաւէ»։ Տէմիրճիպաշեան ու Պէրպէրեան այդ անճահ ճառախօս բոլորէն երու կարգէն կ'ընդունուին Արփիարէն։

Իրեն համար ցուցամուլ է նաև Իզմիրի մամուլը։ Պէտք է խոստովանիլ որ այդ մամուլը ֆրանսական հանրածանօթ վիպասանական դպրոցին ծաւալողն է եղած, թէև թարգմանութեանց հարազատութիւնը խնդրոյ նիւթ ալ է, և ամենէն անարգաբանալին չափազանց յաւակնոտ անձնահանճ գովերն են որ խորշելի համարուած են նաև Արփիարէն։

Թրքահայ մամուլը շատ չի կշռեր իր հարուածող ածականները. Տէմիրճիպաշեան՝ Հայրիկէն սկսեալ, ամենէն մեծ պետական հայր Տիրացու մակդիրով հովանաւորելու ատեն, Արփիար կը դժկամակի, սրամիտ խօսքերով կը հարուածէ այն ամեն հրապարակագիր՝ որոնք գրական պուտ մը պաշարով՝ ծովածաւալ հմտութիւն մը ունենալ կը կեղծեն. կը գրէ. «Տիրացուին լաւ տեսակը խասգիւղի բերք է, իսկ ամենակատարեալ տիպարն Իզմիր կը գտնուիքիչ են, բայց արժէք ունին։ Այդ տիպարներէն մին վայելեցինք։ Երբ կը խօսի աչքերը չորս կողմը ժուռ կը բերէ տես-

նելու համար թէ արդեօք ունկնդիրներն յակճի՞րս են։ Երբ կը խօսի նորեկի մը հետ կամ սրահի մը մէջ, անպատճառ Հիւզօին անունը պիտի յիշէ, որուն կը յաջորդէ Ֆլօպէռ և ըստ կարգի։ Խնդրոյ մը վրայ կը բացատրէ Ալէքսանդր Տիւմայի (որդւոյն) կարծիքն աւելցնելով թէ՛ ինքն կը տարբերի Տիւմայէն այս մասին, թէև ուրիշ մասերու մէջ համաձայն է։ Երբ գրական յօդուած մը գրէ սապէս կ'ըսէ. «Այս մասին աւելի կը հակինք Պուրժէի որ Շերէռէն կը տարբերի։ Իրաւ է որ Լամէթոք աւելի ախորժելի է, բայց Պրիւնթիէոն ալ լաւ է։ Բայց այս ամենքը ինչ դպրոցի ալ վերաբերին, տեքնաժիզելով թէ այլ ինչ, տարբերութիւն մը չընեն։ Աւելի Սթէնսէրի յարած եմ քան Տարվինի, բայց ասոնք ձայն չունին կանանց խնդրոյն մէջ. ես Տիւմայ (որդւոյն) հետ եմ։ Բայց երբ գրելու կարգը գայ Ֆլօպէռի հետ եմ որ կ'ըսէր թէ տասն անգամ սրբագրելու է սպա գրելու. Կօթիէ այս մասին կը սխալի, որ կը կարծէ թէ մէկ ձեռքով պէտք է գրել։ Չօլա անիրաւ է որ աւելի Կօթիէի կողմնակից կ'երեւի։ Թոքվիլի կարծիքը ստոյգ չեմ գիտեր, կամ լաւ ևս կարծիք չունի բայց Ռընանի հետ համակարծիք եմ։» Ու այսպէս ոչ միայն Իզմիրցի գրագէտը, այլ

Թրքահայ գրչակներէն մեծ մասը, ու ոչ միայն 1886ին այլ նաև վերջը այդպէս կը խօսին և կը գրեն: Ծաղրական այդ տխուր պատկերը ամբողջովին արտասպեցինք, ուր կարելի է անհամեստ գրչակները տեսնելով իրենց անարիւն հոգեբանութեան հիւանդ պատկերը, ցուցամով մը ԸԼԼալէն առաջ, կարող ԸԼԼան լուրջ և արդիւնաւոր գրագէտներ հանդիսանալ: Զրբենք խարազանելու անկարեկիր հաճոյքը չունիմ. սակայն տաղելով բուժելը աւելի խոր ու արմատական արգիւնք մը ունենալուն կրնամ վստահ ըլլալ: Օրինակ Արփիար՝ իր ծաղրածէն կը զգուշանար, կը զգուշացնէր: Արդ ան գրագէտ վարպետն է:

Քննադատական անողոր ձաղկումին վերագրելու է ինչ ինչ գրական բարեշրջում, զոր ստեղծեց այդ միւսնոյն քննադատութիւնը: Փրոցուսոյց ոճը սիրելի էր Թրքահայ մամուլին, գեղեցիկ և բնական ոճը պէտք էր յաղթանակէր, ատոր համար երկարօրէն գրեր ու աշխատեր է ու այդ ոճին՝ ամենէն մեծ պաշտպանը եղած է Արփիարը. և իր օրով գեղեցիկ ու բնական ոճի մեծ յաղթանակը կը սպասէր, 1886ի շրջանին՝ այդ յաղթանակը չէր տեսներ և ինչո՞ւ, վասն զի գրականութեան ըմբռնումը, ամէն զլիսի մէջ տարբեր էր. ու

ուսցիկ ճախրասլաց ոճը սիրելի է եղած Պոլսոյ իմաստակ գրականութեան. հին շրջանի գրագէտը կը պատճառաբանէ. «Ուսուցիկ ոճը կը նմանի ուռած քառուչու գնդակի մը. որքան զարնենք վրան, այնքան աւելի յաղթանակաւ վեր կը ցատկի:» Ըսել կ'ուզէ՝ թէ այդ լաւ է, և ի զուր լուրջ քննադատութիւնը կ'աշխատի ձաղկել այդ ոճով գրողները:

Արփիարի համար փրոցուսոյց ոճէն շեղողները քիչ են, ու այդ հազուագիւտ գրիչներուն մէջ յարգանք կը յիշէ կարպետ Գարագաշի անունը, որ իր գեղեցիկ ոճ զրութեամբ ուշագրաւ է եղած. սակայն ան դժբաղդարար ինքնագրութենէ աւելի թարգմանութեան սիրահարուած մընացեր է:

Կան զէմքեր որ լուրջ պատմութեան մէջ անջնջելի անուն մը չեն կրնար թողուլ, այլ անցողակի կը փայլատակեն թուսցիկ քրոնիկի սիւնակներու մէջ: Ու այդ զէմքերը Արփիարի տեսութենէն վրիպում չունին: Այդ զէմքերէն է ճանիկ Եազըճեան. «Իւր նորավէպերն և բանաստեղծութիւնները, ֆրանսերէն հանդէսներու մէջ հրատարակուած, ցոյց կու տային թէ գեղեցիկ տաղանդ մը կը պատրաստուէր:» Օտար մամուլը տեսած ու գնահատած էր

այդ անմշակ տաղանդը, սակայն Եազը-
ձեան դառնապէս վիրաւորուած նաև օտա-
րէն. ա՛յ այդ մամուլին ֆրանսական Պատ-
նաս երիտասարդներու յատուկ բանաստեղ-
ծական թերթին չաշխատակցիր: Պատճառ
կայ. այդ թերթի օրէնքով հարիւր մրցա-
կիցներու մէջ, առաջին հանդիսացող բա-
նաստեղծը՝ թերթին մէջ պէտք է տեսնէ
թէ իր կենդանագիրը, և թէ պատույ ան-
դամ ըլլալու բաժինը. երկուքն ալ իրեն
կը զլացուին, թէև և հարիւր մրցակից բա-
նաստեղծներու մէջ զբազէտ յանձնաժողո-
վէն ինքն էր հռչակուած առաջին հանդի-
սացող: Եւ զուցէ աւելի կեանք կ'ունե-
նար, եթէ ազգային մամուլէն անբաժան
մնար. և այդ առթիւ Արփիար կը գրէր.
« Բանաստեղծական տաղանդ մը պահպա-
նուելու և ուռճանալու համար, պէտք է
մեծնայ ազգային սիրոյ տարուկ ջերմա-
նոցին մէջ: » Եւ ինչ ունայնամտութիւն,
օտարէն գնահատուիլ, փառաբանուիլ. ազ-
գային զրականութիւնը վարժարան մըն է,
օտարինը կանառ մը. և ո՛ր աւելի կարելի
է յաջողիլ և համեստ փառք մը ձեռք ձգել:
Ճանիկ Եազըձեան երիտասարդ կը մեռնի,
ու ժամանակ չունենար զրական անփոր-
ձութեան դառնութիւնը քաղցրացնել, մեծ
փառքին ետեւէն ըլլալով, փոքրը ձեռքէն
կը թռչի:

Հարկ չկայ օտարամոլ ըլլալ, օտարէն
գնահատուելու համար, նախ մենք մեր մէջ
հռչակուելու ենք: Ինչ որ կը յիշեմ, այն
ատեն որ Եազըձեան ճանիկ իր քերթո-
ղական զրիչը եւրոպական մամուլի մէջ
կը շարժէր, արդէն Եւրոպան սկսած էր
ձանչնալ Հայուն ինքնատիպ զրիչներու
արժանիքը, բատարակուած էին հանգու-
ցեալ Արդար Յովհաննիսեանի « Հայկական
Մտտենադարան » գերմաներէն հատորները
ուր թարգմանուած էին Ռափայել Պատ-
կանեանի երեք վէպիկները, Հ. Ալիշանի,
Խ. Արովեանի և Մ. Պէշիկթաշեանի քեր-
թուածներն, ուր հռչակուած էին Մխի-
թարեանը, Գար. Սունդուկեանց և Այվա-
զովսիկ սրբազան: Գերմանական մամուլը
շուտով գնահատեց այդ զրական վաստա-
կաւորները: Ուրախ ենք որ Եազըձեաններ
բացառութիւններ կը կազմեն մեր մէջ:

Ու կը ցաւինք որ նշանաւոր ըլլալու
սահմանուած հայ նկարիչները աննշան
մնացեր են. ասոնցմէ էր կարապետ Նշա-
նեան նկարիչը, զինքը Արփիար շատ մօ-
տէն ձանչնալով գրած էր. « Պատկերա-
հանը Պ. Նշանեան, մեր տաղանդաւոր ա-
րուեստաւորներէն մին է: Եւ հնազարեանի
նախկին աշակերտ մը... Աշակերտած համ-
բաւաւոր կիմէյի, կ'երթար 77ին ի Հոռմ

ուր մի քիչ ատեն մնալէ վերջ կ'անցնէր ի Նաբոլի, անդ արքայական Ակադեմիոյ մէջ կը շարունակէր իր ուսումն: Խանդ ունեցող մը ինչ կարելի չէ լինել երբ ամեն օր առընթեր է այնպիսի ուսուցչի մը, որպէս էր Տոմէնիքօ Մօրէլի, որուն համար ըսած է Ֆրանսացի պատկերահան մը, թէ՛ « Բնութեան երկրորդ արարիչն է »: Ներշնչուած է Միքէլ Անճէլոյէ, Ռաֆայէլէ, Դիցիանոյէ, Ժէրոմէ, Մէյսոնիէէ, Քապանէլներէ, և ամէնէն աւելի ուզած է ընդօրինակող չըլլալ, այլ ստեղծել: Այս նոյնինքն է այն « Հայկական հարսանիքի » պատկերահանը, որուն ամենէն յաջող ընդօրինակութիւնը կարող էր տեսնել փոքրազիր « Գեղունի » բացառիկ թերթին մէջ: Որուն վրայ նոյնինքն Արփիար 1901ին իր Լոնտոնի « Նոր կեանք » թերթին մէջ ակնարկութիւններ կ'ընէր: « Գեղունի » ով կը յիշէր տասնըվեց տարի առաջ տեսած գեղեցիկ նկարը:

※
※ ※

Համեստ, հլու է Արփիար, բայց շատ անգամ գրական շաղակրատութենէ խուսափած չէ: Մանաւանդ երբ վէճ մ'ունի գրագէտի մը հետ: Կը ջանայ ծանր ու

քիրտ հարուածներ չտալ. սակայն սրախօսութիւնը աւելի կսկծեցուցիչ է: Ու ինքը միշտ սրախօս է, կը հեգնէ ուրիշին կամ ոսոխին համբարը, կործանելու աստիճան հզօր է երգիծանքը:

Իրեն համար անհանդուրժելի կ'երևին այն ամէն հրապարակագիր, որ պահպանողական խմբին կը պատկանին և կը վիճին իրեն հետ: Զանոնք անպատասխան չի թողուր:

Նորայր Բիւզանդացին իրեն համար, ինչպէս նաև արդէն գիտուն ու բանասէր դասակարգին համար, տիտան քննադատ մատենագիր մըն է, երբ Նուպար ինքզինքը ուզած է չափել այդ մեծ տաղանդին հետ, Արփիար կոռւի կրկէսն է իջած, ու քրոնիկի սիւներ կը կանգնէ « Արևելք » ի լայն էջերուն մէջ ու փաստացի ցոյց կու տայ որ Նուպար պէտք է համեստութիւն ունենայ, Նորայրի հետ վիճելէն զգուշանայ:

Իսկ ծանօթ գրագէտ և գրաբարագէտ Գուրգէն էֆէնտին՝ գրեթէ միշտ իրեն գրական վէճերու զուարճութեան առարկան ընելով զբաղեցուցեր է միտքերը: Գուրգէն Արփիարի Ապելդսի կօշիկին տեղ, Ռափայէլի կօշիկ մը կը յիշեցնէ, ուզելով ըսել թէ Արփիար կօշիկէն վեր չելլէ, և ինքը Արփիար կը խնդրէ որ Գուրգէն ու-

դարևակ բան, սեռակալ բանիքն անդին չանցնի... :

Կը յիշեն բանասէրները թէ գրարարապաշտ մէկ քանի գրագէտներ Պօլիս կը հրապարակեն « Ծաշակ ոսկեղեկ »ը ուր հեղինակաւոր ձայն ունեցեր է Գուրգէն էֆէնտի, և ահա անդէն իր չարածճի ախոյեան Արփիար այդ հանդէսը կ'անուանէ « Ծաշակ ոսկեղեկ » . այս անուանափոխութիւնը գրական վիճարանութեամբ պատմական կը մնայ :

Եւ իրականութիւնը վկայ է որ Գուրգէն այն ծիծաղելին չէ ինչ որ կը կարծէ Արփիարը : Եւ բարեբաղդաբար Գուրգէն էֆէնտի շատ աւելի վեհանձնաբար կը յարգէ իր ոսոխին փայլուն յիշատակը, ինչ որ գրականօրէն ցոյց տուաւ արդէն 1908ի « Արեւելք »ներու վերջին ամիսներուն մէջ՝ հրատարակելով ողբացեալին մասին շահեկան յիշատակարաններու թրուուցիկ էջեր :

Շատ կարելի է որ Արփիար՝ Գուրգէնի մասին ներքին թշնամութիւն մըն ունեցած չէ . ոխակալութիւն չունէր, սակայն գրական մենամարտութեան մէջ՝ հեզնականին չափազանցութիւնը մտերմութիւն չէր տեսներ : Գուրգէն անձնահաճ մըն է եղած . այդ մասին անողոր է Արփիար, անոր

համար կը հեզնէ . « Գուրգէն էֆէնտի դէմ թշնամութիւն մը չէմ ըրած, այլ միայն կը խնդամ նորա վրայ, ինչպէս նաև իրեն պէս խեղճ արարածներուն որք միտքերնին դրած են թէ անպատճառ մեծ մարդեր են : » Զի ներքեւ Գուրգէնին, վասն զի սա Ազգ. Պատրիարքարանի մէջ յայտարարած է . « Ես, սովորական մահկանացուներէն չեմ » ...

Ինծի կը վերապահեմ Գուրգէնի մասին գրական գնահատումներս... :

Պօլիս ներողամիտ ոգի ունենալու է մեր ամեն այն հայերուն համար, որ գրիչ կը շարժեն, անոնց երեսն ի վեր պատկառանք նայելու է, քանի որ գրեթէ մեծամասնութիւնը անպարփակելի մեծամտութեամբ մէկ մէկ տաղանդներ են, անզուգական հանճարներ : Այդ սովորական ու ժառանգական ախտ է, այդ դասակարգի ամենէն մեծ բայց և ամենէն անմեղ միամիտ հիւանդը ողբացեալ Ե. Տէմիրճիպաշեանն էր, որ կ'ըսէր . « Ես Լիզբէին ետեւէն կ'երթամ և հայ ժողովրդեան առջևէն : » Հոն գրագէտներու մեծ մասը՝ Հայ ազգի մտաւորական առաջնորդն է : Ու առաջնորդութիւնը կը սկսին վարժարանի գրասեղանէն :

*
* *

Արփիարի հայապաշտպանութեան վրայ տարակուսիլը՝ ծիծաղելի է: Գրագէտը ըստ պահանջին՝ խարազանող գրիչը շարժեր ու տաղեր է մեր ազգային այն ինչ ինչ գոհնիկ բարքերը, որ մեր արիւնը վաղուց թուանաւորեր են: Քաջ ենք պարագային համեմատ ուզածնիս անմահացնելու ու գերբնական կոպտութեամբ դարձեալ մահացնելու:

Պէտք է որ գայրանանք: Հանրական է մեր այդ թերութիւնը. հայը ամէն տեղ հայ է, նոյնը խոստովանած է և Պատկանեան. Պոլսեցիք կը հարցնեն անոր.

— Ի՞նչ տարբերութիւն Ռուսիոյ և թուրքիոյ Հայոց միջև:

— « Դուք լաւագոյն հայերէն կը խօսիք կը պատասխանէք. բայց Հայերը նոյն են ամէն տեղ: »

Բնական է՝ տխուր մտքով շեշտուած է այս: Սակայն ինչո՞ւ վերլիշում այս անհաճոյ ճշմարտութեան: Արփիարի քրոնիկի թելադրութեան կը վերագրեմ:

Ճամանակակից բազմադրորդ դէմքերէն՝ Մելքիսեղեկ Մուրատեանց արքեպիսկոպոսը, խորշ մը պիտի ունենար Արփիարի

քրոնիկին մէջ: Հրապարակագիրը պաշտպան մը չէր անոր: Բայց Սրբազանը ունէր ջերմ պաշտպաններ, որոնք գրեթէ յաջողած էին զինքը կաթողիկոսական աթոռին վրայ բազմեցնելու. և մէկ քանի տարի վերջը՝ ահագին աղմուկ կը բարձրանայ անոր անուան շուրջը. Իզմիրի հայութիւնը ընդարձակ հանրագրութեամբ՝ Պատրիարքարան կը բողոքէ Մելքիսեղեկ սրբազանի դէմ, որ առաջ բարեխնամ էր և յետոյ չարախնամ: Ծաղրական է պատճառը, վասն զի սրբազանը հիւանդկախ՝ չէ կրցած հարուստի յուղարկաւորութեան հանդէսին ամբողջ տեւողութեան ներկայ ըլլալ. ըստ Արփիարի բացատրութեան. « Յաջորդ օրն ի ժողով գումարուելով բոլոր թզաւաճառք Աստուածավաճառ կը հռչակեն իրենց Առաջնորդն. տարօրինակ չէր. ճէգայիւրեան ամիրան՝ Մատթէոս Պատրիարքը տապալած էր, վասն զի բարձրաստիճան եկեղեցականը այն վսեմաշուք ասիրայի հոգեզաւակին յուղարկաւորութեան ներկայ գլուխուած չէր: » Կը տեսնէք ի՞նչ լաւ կը կշռենք մէկու մը յարգն ու անարգանքը: Երբեմն օտարն իսկ զարմացած է մեր ներքին խնդիրներէն ծագած հակասական և նենգուպատիր արարքներուն վրայ:

Կաթողիկոսական ընտրութեանց առթիւ՝

ինչ տխուր ու հակասական նամակներ Արարատէն ու Պոլսէն կ'երթան կը դիզուին Ռուսիոյ ներքին նախարարութեան դիւանատունը, և այդ միեւնոյն առթիւ՝ օր մը նոյն նախարարութեան անդամներէն՝ բարձրագոյն պաշտօնեայ մը ահա թէ ինչ ըսած է. « Է՛հ, ի՛նչ անարգ ազգ այդ հայ ազգն, իրաւամբ արժանի արմատազրկուելու: Եպիսկոպոս մը իրենց եկեղեցւոյ պետ կ'ընտրեն իրենց հաճութեամբն և յետոյ կը սկսին նորա մասին գաղտնի մատնութիւններ ընել մեզ, ամբաստանութիւններ ընել ու գմեզ ձանձրացնել, իբր թէ մենք չգիտենք մեր ընելիքը: » Ասոնք տխուր մեկնութիւններ են, սակայն իրականութիւններ. եթէ իրօք գիտնայինք մենք մեր թերութիւններէն շոտագունիլ, կարող էինք սրբազրուիլ, ու ճերմակերես պարծենալ մենք մեր՝ ու օտարին առջև:

Քրոնիկներու այդ դառն ճշմարտութիւնները, ուր էր թէ դառն բայց բուժիչ դեղահատներ ըլլային մեր սեւ բարքերուն:

Տխուրէն, սեէն կը սոսկանք: Ակնարկած մեր այդ թերութիւնը, այո՛, շատ սեէ, շատ դառն տխրութիւն: Բայց կան կամ ունինք նաև քաղցր տխրութիւն, անոյշ սև յիշատակներ: Վերյիշելով մեր անմահ մեռելները, կը զգանք տխրանոյշ յուզում

մը. գործով ու մտքով գործօն մեռելներու յիշատակը պարծանքի ցուլը մը կը ցայտեցնէ մեր այտերուն վրայ: Այդ մեռելները Արփիարէն շատ սիրուած են, ինքը կ'ուզէր մեր անմահ մեռելները մէկ գերեզմանատան մէջ ամփոփած տեսնել, ու գերեզմանատան դրան վրայ գրուած Ալիշանի սա տողը « Զէ՛, չէ՛ մեռել Հայ հանձարը ». համեստ և սրտանց ըղձանքն էր. « Թէ ունենայինք փոքրիկ քառակուսի արտ մը զոր թո՛ղ պատէին անշուք անգարը պատեր, ուր չտեսնուէին հոյակապ շիրմներ այլ փայտէ պարզ խաչեր, միայն թէ վրանին գրուած Պալեան, Նալբանտեան, Ռուսինեան, Վարժապետեան, Պէչիքթաշլեան, Հիւրմիւզեան, Տատեան, Գուրեան, Աշտարակեցի, Օտեան: » Ու այս բաղձանքը կ'երազէ Օտեանի մահուան առթիւ: Այդ անուան առջև ա՛լ, իր միտքը սահմանափակ չի մնար, երկարօրէն կը գրէ, բայց բնաւ չէ կրցած խտացնել այդ մեծանուն դէմքին գրական ու քաղաքական նշանակութիւնը, և ինծի քանիցս ըսած էր որ գրեթէ պատրաստած է և կ'ուզէ հրատարակել Օտեանի ընդարձակ կենսագրութիւնը. բան մը զոր ինքը 1887-ին կը սպասէր Օտեանին ամենէն մտերիմ Պ. Մ. Զերազէն: Առ այժմ պիտի չի ծան-

բանամ Օտեանի նշանակութեան վրայ: Անցողակի պիտի յիշեմ թէ քաղաքագէտները երբեմն մարգարէական գուշակութիւններ են ունեցած. Օտեան լաւ գիւանագիտական փափաք մը կ'ունենար որ Պէշիքթաշլեանի քաղցրահնչակ ոսկետառ տողն, « Եղբայր ենք մենք »ը կրկնուէր Արեւելեան ամէն ժողովուրդի բերնով. ու քառասուն տարի վերջը իր այդ փափաքը կը կատարուէր Օսմանեան Սահմանադրութեան հռչակուած օրէն սկսեալ:

*
* *

Ամէն անգամ որ Արփիարի ո՛ր է է մէկ « Օրուան կեանք »ի էջերը կը թղթատեմ, միտքս կ'իյնան հին քահանայապետական լանջանոցիակ անակուռ զարդերն, պէս պէս պատուական թանկագին քարեր ամէնքն իրենց յատուկ գոյներով շէնշող փայլով ակնախտիտ: Տարբերութիւն մը կայ. անոնց քարերը անփոփոխ են, իսկ Արփիարի քրոնիկեան գիւտերը փոփոխ, միշտ նորութիւն մը կը բերեն և որով հնութեան մը նորութիւն մը կ'արձանագրուին: Կան քրոնիկներ որ թրթռուն վառախներու թերթեր են, օրը օրին կը շողան ու ժամանակը զանոնք խնամքով կը խտացնէ պատ-

մութեան կոճղ զրքին մէջ ու անոնք յետոյ մեզի կ'երեւին պերճ զարդագիրներ, նման հին ձեռագիրներու ոսկի երփնագեղ տառերուն ու թռչնազարդերուն:

Գրականութեան քրմապետներն էին և են վարդապետներու ակումբները: Հին մենաշնորհ մը, կարծես անկապտելի մենաշնորհ: Ուզենք չուզենք պէտք ենք խոստովանիլ որ զիտնական մանաւանդ հայկական պատգամը միշտ կը սպասենք վանական գիտնականներու կաճառներէն: Ու քանի որ գիտութեան բանալին դեռ իրենց ձեռքը կը մնայ, վարպետ լրագրութիւնը երբ յառաջդիմութեան բերնով խօսի, պիտի փափաքի որ ատելի յառաջդիմութիւնը սիրելի ըլլայ գրական մենաշնորհեալ վանականներուն: Արփիար կարծես լիովին ըմբռնող կղերական պատկառուկ զաղափարներուն, ջանացեր է գնահատական գրութիւններով շնորհաւորել կղերականներու ո՛ր է է ազատաշունչ մէկ գրական քայլը:

Վէպի սքանչելի նիւթեր կան հին և նոր աստուածային կտակարաններու մէջ: Հայ կղերականը անբովանդակելի երկիւղածութեամբ կը մատչի վիպասանական գրականութեան. սխալ նախապաշարով: Բայց ինչո՞ւ: Չէ՞ որ վիպասանութեան

մէջ կայ լար մը, Սիրոյ լարը. ինչպէս կղերականը կարող է հնչել այդ լարը: Բայց ես կը հարցնեմ. միթէ մաքուր սէր չկայ. սուրբ կտակարանները միթէ մաքուր սէր չեն պարունակեր. և ինչ աւելի սուրբ քան զրքերն աստուածաշունչ:

Այս հարցը կը թողում որ ծեծէ Արփիար:

Ոսկի հարցերէն առաջ, ոսկի գաղափարականին նախապատուութիւն կու տամ.

« Ահա քեզ օրինակ պատկառելի եպիսկոպոս մը որ Արզարներու քաղաքներուն մէջ ղեկերելով իսկ մեռելները մեռելոց կը թողու և կը գրէ... վիպասանութիւն: Այդ նոր վիպասանին անունը լսեց հայ ժողովուրդը, Խորէն եպիսկոպոս Մխիթարեան, և իւր վէպն է « Արկած կատարինէի »:

« Երբ այդ գրքին ազդը կարգացի՝ ըստ իրաւունք ունի նա որ ըսեր է. « Ծեր ի տանէ քումմէ մի պակասեցի »: Ինչ լաւ կ'ըլլար եթէ մէր օրուան մէջ բոլոր մեր վարդապետներն ու եպիսկոպոսները Մարի Հարմրի արկածին հանդիպէին — ինչպէս Արևելքի « Աստի Անտի » ներուն մէջ կարգացինք, Հարմրն մէկ օրուան մէջ ելեկտրական ցնցումով կը ծերանայ: Արդ եթէ մեր բոլոր երիտասարդ արեղաներն ու եպիսկոպոսները ծերանային, այն ատեն ի-

ընք ալ Խորէն եպիսկոպոս Մխիթարեանի պէս կ'ըլլային: Ո՛չ աջ կողմերնին կը ցաւէր, և ո՛չ ձախ, ոչ ցուրտէն կը վախնային ոչ տաքէն, ոչ այսպէս կ'ըսէին և ոչ այնպէս և կը նմանէին Մխիթարեան Խորէն եպիսկոպոսին »:

Արփիար ժամանակին նախապաշարու մովը գրիչ կը շարժէ: Կ'ուզէ իմացնել թէ երիտասարդ արեղայն շատ կը գայթակղեցնէ եթէ ձեռնարկէ վեպ գրել: Ինչո՞ւ, վասն զի կրնայ իր վիպասանութեան էջերուն մէջ սիրոյ բաժինը մտնել, որ յետոյ բերնի ծամոց կ'ըլլայ: Ուրեմն պէտք է արեղան ծերանայ, այն ատեն վաւերական է. ծերուն հասցէին գայթակղական խօսքեր չեն սլանար:

Թէ կը լսէ Արփիար իր կարմիր հողվարքէն, հարցիս պատասխան թող տայ... Երեք եկեղեցական մատենագիրներ ծերօն հասակին զրեցին ու երգեցին, մէկը անոյշ զրգարանի անդրանիկ սէրը, միւսը հրաւիրակ Արարատեանի կուսագեղ սէրը, ու երրորդը թորոս Աջարի այգիներուն ոտնաթոփկ օրիորդներու սէրը մաքուր, սէրը հովուերգական: Իսկ Հ. Բագրատունիին Հայկանոյշը... քողթափ չընենք, գուցէ անով գայթակղողներ զեռ գտնուին: Եւ սակայն այդ վարդապետները առոյգ

հասակի մէջ գրած են իրենց սիրանոյշ էջերն: Անցողակի՛ այս հարցը, լիովին ճանչնանք Արփիարի դրուատած վարդապետին այդ վէպը. « Այդ վէպը կարդացի և ամէն կարդացող պիտի սիրէ զայն գրողը: Պարզ սիրուն աշխարհաբառ մը, ազնիւ զգացումներով գրուած...: Անշուշտ եպիսկոպոս մը աշխարհս շատ ճանչնալու չէ և սակայն խորէն եպիսկոպոս ասդիէն անդիէն սիրոյ վրայ ալ վճիռներ կ'արձկէ իւր դիւցազանց բերնով: » Բայց վարդապետը բարոյական մը կը հանէ այդ արծարծուն սէրէն. ան սիրոյ համար կ'ըսէ. « Դու վարդի մէջ ծածկուած իժ միես, մարդիկ զքեզ կը քաղեն և կը հոտուրտան, բայց դու քու անուշահոտութեանդ հետ թոյնի դառնութիւն ևս կը հաղորդես»: Ինչ կայ այստեղ անբարոյական, ինչ գայթակղական. սակայն գուցէ կը քարկոծուի ձերունի հեղինակը և ահա այդ պատճառաւ Արփիար հեզնական զրիչը կը շարժէ. « Յայտնի չէ թէ կրօնական ժողովը պիտի գայթակղի՞ արդեօք և պիտի հաղորդէ՞ թէ եպիսկոպոսի մը անվայել է սիրոյ խնդիրներու միջամտել... » Եւ եթէ ձախողակ միջամտութիւն մ'ըլլայ, Արփիար կը տեսնէ, Արփիար կը խոստանայ պաշտպանել վարդապետ վիպասանը, և

ապահով է յաղթանակելուն, « շնորհիւ վիպասաններու բարեխօս սուրբին որ է նոյն ինքն Ս. Յովհան Ոսկեբերան »: Ինչ ակնարկութիւն: Ըսել կ'ուզէ որ պէտք չէ եկեղեցական վիպասաններու վրայ գայթակղիլ, քանի որ ոսկի բերան ունեցող Հայաստանի հիւր արսորական մեծ սուրբ հայրապետն իսկ գրած է « Պօղ և Վերգինէի » դպրոցին յատուկ « Եբրայուհի » փոքրիկ վէպը: Ու քաջալերուած այդ դրական փաստէն, Արփիար կը պատճառաբանէ. « Այսպիսի բարեխօսի մը պաշտպանութեան ներքեւ համարձակօրէն կրնան մեր եկեղեցականք խիզախել վիպասանութեան ասպարէզին մէջ »: Ոսկեբերանը ոսկի յիշատակ մատենագրութեամբ մեզի ծանօթ է, և ինչո՞ւ այն միայն բանասէր դասակարգին ծանօթ մնայ. Հ. Ալիշան զայն ուզեց ժողովրդականացնել իր Յուշիկներով: Բայց նոր հայութիւնը կը յիշէ՞ այդ վատվուուն յիշատակները: Նոր հայութիւնը շուտով մոռցաւ զանոնք: Սակայն Մխիթարեանները շատ առթիւ արծարծեր են Ոսկեբերանի յիշատակը. Արփիար այդ մասին բանասիրաց ծանօթ ժողովրդեան անծանօթ լուրեր, ոսկի յուշեր կը շարէ: Վէննայի յարգելի Մխիթարեանները իրենց կը սեփականեն ոսկեդարեան գրա-

բարը, իսկ վենետիկցիք՝ Ոսկեբերանի պաշտպանութիւնը: Արդէն ոսկեղարեան նախնեաց մատենագրութեանց հրատարակութիւնը ամենէն աւելի վենետիկի Մխիթարեանց կը պարտինք: Ու միևնոյն վենետիկցիները Եւրոպային ճանչցուցին Ոսկեբերանի կորսուած մէկ հատորը՝ Եսայեայ մեկնութիւնը: Վենետիկի Մխիթարեան հին վարդապետները վիպասանական զիւցազներգու մատենագրութենէն զատ, մշակեր են նախնեաց մատենագրական ոսկեղարու լեզուն: Փափուկ նկատողութեամբ՝ այդ յարգելի Մխիթարեանց ջատագովութիւնը կ'ուզեմ յանձնել իրենց մօտէն ծանօթ Արփիարին. « Բաւական հետաքրքրական է Ոսկեբերանի թարգմանութեանց գիւտն ու տպագրութիւնը, ոչ միայն հին այլ և նոր թարգմանութիւններ ալ ունինք: Մշուշ ականդութիւն մը կայ եղեր, թէ Ոսկեբերանի Պօղոսի մեկնութեանց և ուրիշ մի քանի ճառերու թարգմանութիւններն ունինք ի նախնեաց, բայց զայնս գտնելու ամէն յոյս ի դերե ելնելով, մի ծերունի վարդապետ Մխիթարեան, Հ. Եղիա Թովմաճանեան, վարժապետ Հ. Արսէն Բագրատունուոյ, կը ձեռնարկէ թարգմանել Անդրիականի ճառերն, առ Թէոդորոսի ճառն և այլն:

Տպագրութիւնը կ'աւարտի երեք հատոր և ահա անմիջապէս լուր կու գայ վանքն թէ նախնեաց թարգմանութիւնները զբանուեր են:

Բնական է որ ուրախութիւնը մեծ կ'ըլլայ. միայն խեղճ ձերունի վարդապետի ձեռքերն ու ոտքերն կը սկսին դողդղալ: Չկրնար ըմբռնել թէ ինչպէս յանդգնած է թարգմանել այնպիսի գործը, սրբապղծութիւն կը համարի և կը մնայ անմխիթար: Մինչ այս մինչ այն նախնեաց թարգմանութեանց օրինակները կը հասնին ի Սուրբ Ղազար: Հ. Եղիա պահ մը կը մոռնայ խղճահարութիւնն և կը սկսի իւր աշակերտներովը բաղդատութիւններ ընել. տրտմութեան արցունքներուն կը յաջորդեն ուրախութեան արցունքներն: Ամէն ոք կը վկայէ թէ ձերունիի թարգմանութիւնը շատ ստոր չէ, և մինչև իսկ շատ տեղ գրեթէ յար և նման է նախնեաց թարգմանութեան:»

Նախնեաց ոսկեղէն լեզուի նմանութեան համար վենետիկցիք պարապած չեն, սակայն այդ լեզուն շատ խոր ուսումնասիրելով և հայկաբանութեան ամենամեծ կարևորութիւն տալով, իրենց հայերէնը անկապտելիօրէն գերազանց ինքնուրուին հեղինակութիւն մը ունի. նմանող ըլլալէն աւելի արարիչ մը ուզած են ըլլալ: Ո՞րն

է զԻւրինը, բայց այդ արդէն խնդրոյ նիւթ եղած է, և կը մնայ. գուցէ այս մասին զեռ առիթ կ'ունենանք խօսելու: Նմանողութեան մասին ինչ գաղափար ունէր տիտան հայերէնագէտն Հ. Արսէն Բագրատունին, այդ հետաքրքրական է գիտնալ. զայն Արփիար քրոնիկով կը յայտնէ:

« Ինչպէս յայտնի է ունինք նախնեաց սքանչելի թարգմանութիւն մը Ոսկեբերանի Մատթէոսի մեկնութեան: Այդ թարգմանութիւնը գտած է Հ. Արսէն Բագրատունի յետ երկար հետազօտութեանց Բարիգուզրատան մէջ. օրինակած և բերելով գեղեցիկ տպագրած է. միայն թէ մի էջ կը պակսէր մէջէն: Պէտք էր լեցնել: Հ. Բագրատունի և Հիւրմիւզեան Արքեպիսկոպոս զլուխ գլխու տալով կը լեցնեն այս պակասը և գործը կը տպագրուի: — Բայց զարմացում կ'ունենան Վիէնայի Մխիթարեանք ոյք կը կարծեն թէ իրենց մենաշնորհն է նախնեաց նմանութիւնը: Օր մը Հ. Ղևոնդ Վ. Յովնանեան երբ վանք կու գայ կը շնորհաւորէ Հ. Արսէն Բագրատունին այդ պակաս էջին թարգմանութեան համար. — Ինչ լաւ ըրած էք, կարծէք թէ ձիշտ նախնեաց թարգմանութիւնն է: — Հ. Արսէն Բագրատունի քմծիծաղ մը կ'ունենայ. շնորհաւորութեան մը անտար-

բեր մնալ կարելի չէ: Սակայն զրարար նմանութիւնը մեծ պարծանք մը չհամարիր Հ. Բագրատունին: Անձնական դրոշմ մը դրոշմելն է մեծ գրագէտին գաղտնիքն: Եւ իր կարծիքը կը յայտնէ իւր վանքի վարդապետաց, իւր խոշոր ու կորովի ճայնովը — Է՛հ, Հ. Յովնանեան զիս շնորհաւորեց, բայց ինչ կ'ըլլայ, ըրածնիս րախիւ լիր էր, րախիւրն ալ դժուար բան մը չէր:»

Համակարծիք եմ, երբ միտքը ստեղծագործող է: Ինչ յարգ պիտի ունենար գեղարուեստը, եթէ միայն դասական նկարներն և արձաններն ընդօրինակուէին, բնական է որ յար և նման ըլլալը դժուար էր, և ո՞վ կրնայ լրջօրէն պարծիլ թէ յաջողած է յար և նման նմանողութիւն մը ընել: Չէ՞ որ գեղեցիկ գլուխ գործոց մը որ կ'արարչագործուի, աւելի յարգ ունի քան թէ դասական ընդօրինակութիւն մը կամ նմանութիւն մը: Միթէ այս ալ երեւակայութեան ու ճաշակի խնդիր չէ՞. « ճաշակ Ոսկեղէն Դպրութեան » հեղինակներէն մէկը, Գուրգէն էֆէնտի՝ անտաւակոյս ինծի համամիտ պիտի չգտնուի: Սակայն ես պիտի ըսեմ ճաշակի խնդիր է, ու որով անվիճելի:

Խօսքը Մխիթարեաններու վրայ կը դառնայ. Արփիար կրօնամուլ չէ, սակայն կրօ-

նամոլներու ամէն գործին վրայ միշտ դիտող աչք մը ունի: Խարազան շարժելու հարկին, կճող զրիչը ժանգոտ չի մնար, բայց գնահատելու պահուն ալ ամենէն արթունը ու անկողմնակալը դարձեալ ինքը կը մնայ: Միայն Մխիթարեաններուն չէ որ մաս կը հանէ իր գնահատումներէն:

Վիպասան վարդապետ Խորէն եպիսկոպոսը՝ մականունով Մխիթարեան, բայց այն չէ արտասահմանի Մխիթարեաններէն. և սակայն կը զրուատէ անոր համեստ վիպասանութիւնը: Այո՛ Մխիթարեան միաբանութեան համար քրոնիկի ընդարձակ էջեր կը նուիրէ, բայց աննպատակ չէ իր այդ գործը. այդ հաստատութիւնը հայ ազգին մէջ մատենագրական ու ընկերական խոշոր նշանակութիւն մը ունի, և բնականաբար, անկէ բղխած ո՛ր և է շարժում աջողակ կամ ձախողակ, ինքը Արգոսական աչքը բացած կը դիտէ, կը խօսի, կը վիճէ: «Մշակ»ը Կովկաս և Արփիար Պօլիս՝ այդ միաբանութեան նշանակութիւնը միշտ արծարծուն պահելու համար խոշոր ճիգ մը թափած են:

Վենետիկի այժմեան Աբբահայր՝ Իգնատիոս Արքեպիսկոպոս Կիրեղեան, իր յօբելեան հանդէսը կը կատարէ՝ համեստ և ընտանեկան հանդէս, և ահա «Մշակ» կը

լսէ ու միայն «Մշակ» խանդավառօրէն յօդուած կը գրէ: Նոյն Աբբան իբր ղեկավար այդ հաստատութեան առաջին յառաջադիմական քայլ մ' առնելու համար, նոյն տեղի վարժարանը դարձեալ փոխադրելու է Փարիզ և զայն կեդրոնավայր ընելու է մասնագիտութիւն սորվող ուսանողաց: Սակայն այդ խորհուրդը՝ առանց տեղափոխութեան կ'իրագործուի: Չորս հինգ տարի վերջը նոյն պատկառելի միաբանութիւնը Եւրոպայի մէջ իրեն բարեբարին գումարովը քսանէն աւելի ուսանողներ կը սկսէր պահել, և ղեռ կը շարունակէ այդ գործը առանց ո՛ր և է ընդհատումի: Եթէ օգտակար եղաւ այդ յառաջադիմական քայլը, Արփիարի թեւադրութիւնը ուրեմն շահեկանութիւն կ'ունենայ: Վենետիկի Մխիթարեան Աբբահայրը Փարիզէն կը խորշէր, բայց ոչ ուսանողներ պահելէն: Նոր յառաջադիմական քայլը, հինին խափանումովը կ'առնուէր, իսկ օգուտը՝ օգտուող ուսանողներէն կը մնայ պահանջել:

Արփիար, զրելէն չի յոգնիր, այլ նուրութիւններ գտնելէն, և կը ջանայ միշտ նոր նիւթ մը քրոնիկի ծամոց ընել: Հիւներուն կամ մեռելներուն վրայ գրել, նորերուն անձանթ ղէպքերուն վրայ գրել,

ասոնք քրոնիկի նորութիւններ են: Ուրեմն չմոռնալ տեղական բարքերու դառն դե-
ղահատ մը հրամցնել: Այս յատկանիշը սովորական է Արփիարեան ո՛ր և է քրո-
նիկներուն:

Ու ամէն պարագային զրականութիւն փնտռել, ծիծաղելին հտպիտ զրչով բու-
ժել, այս ալ Արփիարի գնահատած փա-
փաքն է և անոր կը հասնի: Տարիները Հայուն համար նշանաւոր են, որովհետև հազարաւոր տարիներու աւանդութեանց հաւատարիմ կը մնայ, հայը գերեզմանները կը սիրէ. վասն զի հոն մարմինները ոսկիի կը փոխուին: Նշանաւոր են հայկական տա-
րիները, վասն զի քիչ բացառութեամբ կղե-
րականը դարձեալ իր մոլեռանդութիւնը կը պաշտպանէ. « Այս տարուոյ մէջ էր որ Պոլսոյ կրօնական ժողովը թէպէտ այբի իր Նար-Պէյներէն ու Իզմիրլեաններէն, նուիրագործեց այն դաւանանքը թէ՛ Եկե-
ղեցի մը որ մոլեռանդ չէ, տկար կը մնայ»: Հայուն համար տարիները նշանաւոր են, վասն զի առանց յուզումի Հայը օր չունի, միշտ յուզուած է և միշտ շարժուն. « Յու-
զում ու շարժում ոչ ապաքէն կենդանու-
թեան ապացոյցներ են և ոչ ապաքէն հան-
դարտութիւնն է միայն որ կ'ապականէ արիւնը»: Հայուն համար նշանաւոր է

ամէն տարի վասն զի ամէն տարի անբեր զրականութեան հանդէսը կը դրուատէ: Այս է հեգնականը քանի որ միշտ միեւնոյն գան-
գատը ըսած են, « և անցեալ տարին Հայոց մատենագրութեան համար անբեր տարի մը կրնայ համարուիլ»: Սակայն Արփիար ե՛րբ ցոյց տուած է արգաւանդ զրական տարի մը: Չեղածը ցոյց տալը գերագոյն ոյժ մըն է, սակայն չեղածին վրայ խօ-
սիլն ալ անճահ դատարկաբանութիւն է ըստ իս, որով ինչո՞ւ կարեորութիւն տրուի անոր:

Բայց Արփիար անգուժ չըլլալու հա-
մար, կարեորութիւն կու տայ նաև ամուլ զրական տարիներուն, որպէս զի անյիշա-
տակ չանցնին ինչ ինչ զրքեր, որ նոյն թուականին տպուած են և անյիշատակ չմնան անձեր, որ անցեալին մէջ զրիչ շար-
ժեր ու աշխատեր են: Աճէմեան, Մարկոս Ա-
դաբէգեան և Գրիգոր Մարկոսեան քրոնիկի նիւթ կ'ըլլան, վտիտ նիւթ սակայն անոնց վրայ երկայն գրելու համար երկարաշունչ է քրոնիկագիր Արփիարը: Կարծես կ'ուզէ գովեստ չհիւսել վենետիկեան աշակերտ Աճէմեանի մասին՝ սակայն անգթութիւն կը համարի այդ զլացումը. բանաստեղծին բարեկամները գովելով խօսած են, ճիշտ է, թէ՛րգեան ու Էմ. Եսայեան իրենց վար-

ժարանի ծանօթ բարեկամ բանաստեղծին վրայ լաւ գրեցին, և ահա այդ առթիւ է որ Արփիար կը գրէ. « Բայց Աճէմեան էֆէնտիի բարեկամները իրաւունք ունին թերեւս քիչ մը ուժով հնչեցնել իրենց փողն: Երբ բանաստեղծ մը որ դեռ ապրելու դժբաղդութիւնն ունի և իւր անունը տակաւին խորաքանդակ չէ դրոշմած ազգին սրտին մէջ ու անհոգ կը կենայ երկար ատեն, մոռացութիւնը, գէթ առժամանակեայ մոռացութիւն մը, իւր միակ պատիժն է: Քանիներ առաջին անգամ լինելով կը լսէին անունն այն բանաստեղծին, որ մեզ արդէն ընտանի եղած է: » Ընդունեցէք այս տողերը՝ այն գոյնով, ինչպէս որ ձեր աչքին կ'երևի:

Արփիար աւելի ջանացեր է աննշան ու անծանօթ չի թողուլ Գրիգոր էֆ. Մարկոսեանը: Այդ հեղինակ է, ու թարգմանիչ, և բազմաթիւ սերունդի ծանօթ է, վասն զի ամենուն ձեռքն է տրուած անոր «Քրիստոնէական» ի գիրքը, ան հռչակուած է իր «Մանր Ուսմունք» գրքով, որ 60-70,000 օրինակ տպուած է՝ յօգուտ Միացեալ-Ընկերութեանց: Արփիար կը գրէ. « Այս դասագրքին հետ և անշուշտ անկէ աւելի Մարկոսեան Գրիգոր էֆէնտիի անունը տեւական պիտի պահէ անոր գրա-

կան մի ուրիշ աշխատութիւնը եթէ տըպագրուի. թարգմանութիւն մըն է, բայց հեղինակութենէ մը աւելի արժէք կրնայ ունենալ: Պարսիկ բանաստեղծի մը, Պէնի Աթթարի գործերն են: Թարգմանած է զայն Մարկոսեան էֆէնտի քառասուն տարի առաջ. հին, դեղնած ձեռագիրը կարդալու առիթն ունեցայ. ամէն անոնք որ պարզ յստակ ոճ մը՝ գրութեան մը ամենէն գեղեցիկ զարդը կը համարին, ախորժով պիտի կարդան այդ թարգմանութիւնը. » Վերջապէս Մարկոսեան զանազան լեզուներու տեղեակ է, հայերէնին քաջատեղեակ, լաւ յանգերու տէր, լաւ տաղաչափ. անուշ թարգմանիչ: Մարկոսեան սկսած է թարգմանել նաև իսլամ կրօնից գիրքը արաբերէնէ հայերէն: Եւ ժամանակ մը բաւական անուն մը կ'ունենար՝ ըլլալով «Նոյնեան Աղանի» ի խմբագիրներէն մէկը: Պիտի մեռնէր նաև իր յիշատակը, եթէ քրոնիկներու մէջ ինքը կարեւորութիւն առած չըլլար: Եւ իրմով զրականութիւնը չէր վարձատրուեր, քանի որ իր գրիչն ալ վարձատրող մը չէր ունենար:

Ես կարծեմ Մարկոս Աղաբէգեանն ալ վարձատրուած չէ. Արփիար այդ մասին կը լռէ և կը հռչակէ պատերազմող գրիչը հրապարակագրութեան մէջ, կը շարուատէ

անոր լեզուագիտութեան կարողութիւնը. չեմ կարծեր որ Աղաբէգեանի բարեկամ մը եղած ըլլայ, և սակայն ամէն առթիւ չի մոռնար մի առ մի յիշելու անոր գովելի ամէն յատկութիւնները: Այս ոճը յատուկ է Արփիարին, անյիշաչար ըլլալ մանաւանդ գրականութեան մէջ, գերադասելի է իրեն համար:

Եւ գերադասելի էր քրոնիկի այն նիւթը, երբ գրչին զարդ ուզած է առնել անձ մը, որ աշխատութեամբ պատիւ բերած է ազգին. այդ պատուաւորներէն է բժիշկ Թիրեաքեան, անոր մէկ գիւտը ծափահարելով կը դրուատէ քրոնիկագիրը. գիւտ մը՝ որով եւրոպական բժշկութիւնը պարտական է այդ բժիշկին: Թիրեաքեան ուսանող Բարիզի՝ հոն իբր թէզ Փրոֆ. Պ. Կիւպլէրէ կ'ընդունի ուսումնասիրել Սոկրատեան Մոլախինդի թունաւոր ազդեցութիւնը: Հայ տոքոթը կ'ապացուցանէ թէ թոյնը շարժիչ ջղերու ծայրերուն վրայ բնաւ ազդեցութիւն չունի, այլ ուղղակի զգայական կեդրոնին կ'ազդէ: Իր այս գիւտին նախ կարեւորութիւն չեն տար նոյն ինքն Փրոֆ. Կիւպլէր, նոյնպէս Գլոտ-Պէրնար, Վիւլթիան, Պերթըլօ: Վիճաբանութեան նիւթ կ'ըլլայ այդ գիւտը: Պոշֆօրնդէն նպաստաւոր և Պերթըլօ աննպաստ

կը խօսին. ու կը յաղթանակէ Թիրեաքեան. « Բժշկական Ակադեմիան միտայլ կու տայ հայ բժիշկին, ժիւլ Սիմօն նորա ուսին զարնելով կ'ըսէ թէ՛ մեծ ծառայութիւն մը մատուցիր բժշկութեան, և մինչեւ ցայսօր բժշկութեան զրքերն ամէն անգամ որ այդ մոլախինդի վրայ խօսին, չեն մոռնար յիշատակել Թիրեաքեանի անունն » Արփիար տաղանդաւոր կը համարի այս գիւտը. և ողջունելով բժիշկ տաղանդը, կը համարի ողջունած ըլլալ միանգամայն ազգային կեանքի քաջաողջութեան սպայոյններէն մին:

Արփիար տաղանդներ մշակող մտքի Մշակ Արծրունի Գրիգորին խմբագրատունը կը մտնէ: Նշանաւոր դէմք մը մատնանիշ կ'ընէ, որ չի խառնուիր հակաճառութեանց, անկիւն մը քաշուող՝ ունկնդիր եղողներէն է, որուն այդ լուծութիւնը յետոյ գանձ կ'ըլլայ. լուսկացն է ամենուն համակրելի ուսաստանոց նշանաւոր վիպասանը Բաֆֆի. այդ մեր տաղանդներէն է, անկիւն մը մոռցուած, որուն ձեռքէն՝ Արծրունին Գրիգոր կը բռնէ և առաջ կը քաշէ. քրոնիկագիրը երկու դէմքերուն ալ ծանօթ է, և շատ մօտէն ծանօթ, անոնց դրուատիքը իր բերնէն լսենք. « Պէտք է հարցնել թէ ո՞վ է որ սրատես աչքերով

կը նշմարէ անծանօթ տաղանդը, նորա ձեռք կը կարկառէ, միջոցներ կը հայթայթէ նմա, որպէս զի ապրի ու զրէ: Մի պարզ հաշուակալ էր Բաֆֆի չնչին ամսականով, մի ո՛ր է հայու խանութին մէջ: Չենք գիտեր թէ ի՞նչ կերպով այդ տաղանդն ի յայտ պիտի գար, կամ ի՞նչ տեսակ դժուարութիւններու պիտի հանդիպէր եթէ «Մշակ» ի խմբագիրը նորա աշակիցն ու բարեկամը չհանդիսանար: Ռաֆֆի «Մշակ» ի միջոցաւ ծանօթացաւ հայ ազգին. Պ. Արծրունի ընծայեց նմա ամէն զիւրութիւն հանգիստ կերպով ապրելու և զրելու համար: «Մեծ մարդիկ միայն գիտեն ճանչնալ ու ձեռնտու ըլլալ տաղանդներու: Գրիգոր Արծրունի մեծ էր իր «Մշակ» ով և իր «Մշակ» ին մեծ մարդիկ կը հասցնէր: Լուռ կեցող Բաֆֆին շարժեցաւ, մօտեցաւ աշակցութիւն կարկառող Արծրունիի ձեռքին. ու ապագային սիրուած մեծ վիպասանը առաջին անգամ զինքը քաջալերող հրապարակախօսին կը ներկայացնէ իր առաջնակ վէպը «Խրըվելի», սակայն «Մշակ» էն կը մերժուի: Խմբագիրը կը թելադրէր որ ան սկսի նկարագրել Արեւելեան կեանքը, ու կը զրէ Բաֆֆի իր ծանօթ «Պարսկաստանի նամակներ»ը: Բաֆֆի «Հիւսիսափայլ» ի կայծը «Մշակ» ով կը փայլատակէր:

Մեր մէջ վիպասանութեան դարագլուխ մը կը բացուէր Բաֆֆիով, և Բաֆֆի կը ծանօթանար Արծրունիով: Եւ ահա կովկաս ոտն առ ոտն վիպասանութիւնը նոր գոյնով մէջ տեղ կ'ելլէ և մատնանիշ կ'ըլլան Լէօ և Շիրվանզատէ. Պօլիս ալ զբաղան խլրտում մը կայ, կովկասի վիպասանական կեանքը կը սիրուի, և մտայլ հորիզոնին վրայ կը տեսնուին Գ. Զօհրապ և Տիգրան կամսարական:

Գրիգոր Արծրունի՝ Բաֆֆիով հայկական վիպասանութեան ամենէն մեծ մեկէնան կ'ըլլար: Արծրունիի արժանիքը շատ մեծ էր: Ու մեծերուն թշնամիները շատ ու զանազան, սակայն զարմանալի է երբ գիտակից մարդիկ կ'ելլեն և կ'ուզեն ուրանալ արժանաւորի մը արժանիքը: Ես զարմացած եմ երբ Ծերենցի պէս յառաջադիմական տաղանդաւոր զրիչ մը Պոլսոյ մամուլի մէջ կատարի մենամարտ մը կը մղէր «Մշակ» և անոր խմբագրի դէմ: Մեծ էր սխալը, և ահա անոր սրբազրութեան պաշտօնը յանձն կ'առնէ Արփիար: Ծերենց և Արփիար թէև իրարու բարեկամ, բայց ընդդիմախօսութիւն մը կը սկսի: Արփիար պահ մը կը թշնամանար Ծերենցի, աւելի մեծ օգուտ մը կը քաղէր այդ թշնամութենէն, «Մշակ» ի յարգը

Պոլսէն չէր ուզեր վտարուած տեսնել: Ծերենց հեղինակաւոր ձայն ունէր, կարող էր անոր բռնկած վիճաբանութեամբը վարակել տկար մտքերը, որով «Մշակ»ը կրնար տուժել:

Ծերենց և Արփիար հակառակ ուղղութեամբ ընդդիմախօսութիւններ ունենալով, երկուքն ալ Ազգին սիրուած զաւակները կը մնային նորէն: Կարիպալտի և Քալուր իրարու թշնամի: Բայց համա՞ւաւասար հայրենիքի սիրող, հայրենիքէն սիրուած էին:

Ծանր էր հաշուէտուութեան պարագան, որ կը բացուէր Ծերենցի մահով, ալ ղիմակը վար կ'առնուէր: Արփիար «Մշակ»ի յարգը Պոլիս խորարմատ ամբացուցած ըլլալով, կրնար խոստովանիլ թէ բռնի կռիւ էր մղած Ծերենցի դէմ: Եւ ինչ որ պէտք էր կը զրէր Ծերենցի մասին: Ծերենցի կոչումը գրականութիւնն էր. նիւթական պահանջը զինքը բժշկութեամբ կը պարապեցնէր: Եւ սակայն իր հիւանդ յաճախորդներուն գոհացում տալով, ինքը թրքահայ գրականութեան ամենէն մեծ յաճախորդն ալ կը մնար: Կ'ըլլար ազգային գործիչ, ուսուցիչ, վիպասան և գրագէտ: Եւ ազգը իրեն երախտապարտ կը մնար: Ազգային երախտագիտութիւնը՝ ա-

մենէն բարձր վարձատրութիւն մըն է հեղինակին համար որ անձնանուիրաբար և անկեղծ սրտով աշխատանքի զինուոր կ'ըլլայ և արդիւնաւոր զինուոր կ'ապրի և արդիւնաւոր զինուոր մը կը մեռնի:

Այդ արդիւնաւորներէն՝ Ծերենցի անունը քանդակուած կը մնայ ազգային գրականութեան մէջ, անոր ամենէն գեղեցիկ քանդակը դարձեալ Արփիարի կը պարտինք: «Արևելք»ի մէջ ընդարձակ յոդուածներով՝ ապագայ պատմութեան կը յանձնէր Ծերենցի կեանքի ամբողջական նկարագիրը: Ինքը կ'ուզէր անմահացնել իր ոսոխին յիշատակը: Սակայն միշտ պէտք է յիշենք որ փոխադարձ թշնամութիւնը դիմակաւոր էր:

Եւ արդէն այդ տեսակ թշնամութիւնները հեզնաժպիտ դառնութիւն մը ունին՝ զոր Արփիար իսկ կը խոստովանի. հետաքրքրական և ընդօրինակելի է այդ հարցը. «Տասն տարիներէ հետէ քաղցր ու տխուր շատ յիշատակներ զիս կը կապէին հանգուցեալ տոքթէօրին հետ, այլ երկու տարի առաջ նորա դէմ մարտնչելու հարկին մէջ գտնուեցայ: Թերևս ոչ մի կեանք հոգեկան դառնութիւններով այնքան լի է որքան կեանքն հրապարակագրի: Շատ անգամ երբ ժողովուրդը կը հրճուի

յօղուածի մը ընթերցմամբ, կրնայ կասկածիլ արդեօք թէ կայ անդին սիրտ մը յորմէ գուցէ արիւն կ'երթայ, և այդ սիրտն է նոյն ինքն յօղուածն ստորագրողի սիրտը: Քանի քանի անգամներ երբ ի հրապարակ կը նետենք մին այն յօղուածներէն որք հանրային պահանջման մը կը համապատասխանեն և կը պատճառեն ընդհանուր գոհունակութիւն, չենք յիշած Ներոնի խօսքն. « Իցէ թէ ինձ գրել սորվեցուցած չըլլային: » Զի հրապարակագիրը չմարտնչիր միայն ընդդէմ այնպիսի հակառակորդաց որոց ո՛ր և է յարգանք նուիրելու պարտականութիւն չգգար, որոց համար սրտին խորը գորովալիւր խանդաղատանը չէ պահած, այլ մերթ սիրելիներ են զորս կը վիրաւորէ, մերթ կը հարուածէ անձնաւորութիւններ որոց պատկառանք միայն պարտական էր, մերթ թանակոխ կ'ընէ հինաւորց հաստատ բարեկամութիւններ: Այլ պէտք է զոհել ամէն զգացում, որքան ալ խոր արմատ ձգած ըլլայ մեր սրտին մէջ, երբ կը ներկայանայ պարտականութիւնը կատարելու հարկն անողոքելի: »

Անկեղծ, տրամաբանական չեն այս տողերն: Սա յառաջարան է Ծերենցի ընդարձակ կենսագրականին. ուրեմն կը կանխէ, կ'իմացնէ թէ իր նախընթաց բա-

նակդիւններն սրտանց չէին, թէ ինքը միշտ սրտանց բարեկամ է եղած Ծերենցի, բայց անկարեկիր պարտականութիւն մը բռնացեր է իր վրայ, և այդ պարտականութիւնը որքան անգութ, այնքան և ազնուական, այնքան և իրաւացի էր, և ինքը չպաշտպանելով « Մշակ »-ը, անիրաւած պիտի գտնուէր իրաւունքի, ճշմարտութեան և յառաջադիմութեան դրօշին: Թողունք որ այդ անողոքելի ճշմարտութեան պաշտպանութիւնը նոյնինքն Արփիար կատարէ:

« Սակայն ինչ որ մենք կ'անուանենք ծառայութիւն, զայն Տոք. Շիշմանեան այլ կերպ կը մեկնէր: Այդ համոզմամբ կարծեաց հակառակորդ մը հանդիսացած էր Նալբանդեանի, Րաֆֆիի, Արծրունիի, Նիկողոսեանի և անոնց գաղափարակիցներու: Այդպիսի հակառակութիւն մը մեզ զարմանք չէր պատճառած: Երբ ազգ մը կը գտնուի այնպիսի կացութեան մէջ ուր գծուած չէ այն ուղին ընդ որ պէտք է ընթանայ յառաջադիմութեան հասնելու համար, ամէն անոնք, անհատներ ըլլան թէ կուսակցութիւններ, ոյք անկեղծ կերպով կ'ուզեն ծառայութիւն մատուցանել ազգային յառաջդիմութեան, կը կարծեն թէ մէկ եղանակաւ միայն հնարաւոր է այդ ծառայութիւնը մատուցանել և այդ եղա-

նակն ալ իրենց յարմար տեսած եղանակն է, յորմէ դուրս կորստեան վիհ մը բացուած կը տեսնեն ազգին առջև: Ով որ խորհի տարբեր իրենցմէ, կը մղէ ազգն յայդ վիհ: Անգամ մը որ այս համոզումն իրենց մտքին մէջ լաւ մը կը զետեղուի, այլ ևս մոլեռանդ կ'ըլլան, ամէն մոլեռանդութիւն, կրօնական թէ ազգային, անգուժ է և անարդար. տխուր ճշմարտութիւն, որոյ ակներև ապացոյցները կը շոյալեն այնպիսի ազգեր որոց բարոյական զարգացումն անհամեմատ բարձր է քան զմերն: »

Պէտք է ըսել որ այս ակնարկութեանց հիւանդ մասերն, ամէն ստեղծ և ամէն ազգաց մէջ մատնանիշ եղած է, հիւանդ գաղափարներու վարակում և ո՛վ վարակուած չէ, ի զուր անկեղծ, անաչառ գրիչներ ինքզինքնիս չի հուշակներ: Ամէն մարդ քիչ շատ իր քմահաճութեան եղանակով կը սուլէ հրապարակախօսի սրինգը: Ու երբեմն կամաւոր կոյր, և կամ կամաւոր թշնամի կը ձևանայ: Պատմութեան մէջ առանց ներքին համոզումի՝ պայքարներու օրինակները շատ են, և կարծես բնական երևոյթներ են անոնք, և մենք շատ չենք զարմանար, քանի որ հանրացած թերութիւն մըն է, մանաւանդ թէ և ոչ իսկ կը

մեղադրենք այն բռնի հակառակորդները, որոնք թշնամիի դիմակը երեսներն՝ անկեղծ սրտով կը կռուին ընդհանուրի մեծ բարւոյն համար: Արփիար ամենէն աւելի իրաւունք կ'ունենայ Ծերենցի վրայ գրելու, քանի որ անոր կենդանութեան ատեն իբր բարեկամ անոր դէմ համարձակօրէն կոուած է, այս պատճառաբանութեամբ կ'ուզէ թուել Ծերենցի ամէն մէկ ազգային գործունէութիւնը: Եւ խղճամիտ լըջութեամբ ո՛չ ուրուագիծը, այլ Ծերենցի ամբողջական կենդանագիրը ստեղծական գոյներով կը նկարէ:

Արփիար օրին մէկը փափաք կը յայտնէր որ հրատարակուի Հայ տարակողմ վերնագրով հատորներու շարք մը, ուր ըլլայ 19րդ դարու Հայ իմացականութեան պատմութիւնը: Իր կենսագրականները այդ շարքերուն մէջ ամենէն ճոխ և ամենէն առաջին կարգը կրնան բռնել:

Կան անձինք որ իրենց գործերով արդէն անսահմանութիւն մը ապահովուցած են, փոքրիկները ընդհանրապէս լրագրական բէզլամներու պէտքը կը զգան: Այդ համբաւի սովը քաջողներուն համար՝ Արփիար ժլատ չէ եղած. մեծերը կը դրուատէ, փոքրերը կը քաջալերէ: Թուրքահայերն ունեցեր են շատ նշանաւոր տաղանդաւոր

դէմք մը՝ Տէրոյենց Պատուելին. ժամանակակից մամուլը զգուշաւոր փափկանկատ զրչով կը խօսէր անոր մասին. աստուածաբանական խնդիրներու մէջ՝ այդ պատուելին չափազանց անաչառ կը մնար, որով իր հոգեբանութիւնը ճշգրտօրէն մեկնելու համար, իր ժամանակի մամուլը պէտք էր դիմակաթափ խօսեր. ու դիմակ սիրող մամուլը այն վեհանձնութիւնը չէր կրնար ունենալ: Պատուելին անունը փոթորկի մէջ ամպածրար կը մնար: Մահուան առթիւ մրմնջեցին մէկ քանի դրուատող դամբանականներ. Տէմիրճիպաշեանն ալ դամբանական մը կը գրէր անոր մասին. ժամանակը ամէն բան կը յարգարէ, կ'ողորկէ, ժանգաթափ կ'ընէ: Տէրոյենցի նշանակութիւնը մագիստրոսօրէն արձանագրելու համար սպասելու էինք Մըմրեանի գեղեցիկ հատորին, որ արդէն ծանօթ է: Հոն է Տէրոյենցի ամբողջական պատմութիւնը: Թուրքահայերն այն մեծ դէմքով կրնան հպարտանալ. Ռուսահայերն նման բազմաբեղուն դէմք մը չեն ունեցած, անոր ինքնագիր և թարգմանած ստուար հատորները գրատուն մը կը կազմեն. և զժբազդաբար մեծ մասը անտիպ կը մնայ: Ինչո՞ւ այս պարբերութիւնը:

Կ'ուզենք գիտնալ թէ Արփիարեան այս-

պիսի մեծ դէմքի մը արժանիքը ինչ աստիճան կըցեր էր ըմբռնել: Ինքը կը ցաւի որ անոր հետ հազիւ մէկ անգամ տեսնուեր է: Բայց կը խոստովանի անոր մեծութիւնը, վասն զի Հիւրմիւզեան Եղուարդ Գերապայծառ և ամբողջ Մխիթարեան վարդապետները զայն շատ յարգած են, վասն զի անոր համար Տ. Նորայր Բիւզանդացի ըսած է. « Հայոց ամենէն մեծ աստուածաբանն, որուն յարգը սակայն շատ չեն գիտեր »: Ազգային ժողովականք սակայն թթուելով բերաննին կ'առնէին պատուելին անունը: Ու Արփիար պատի պատ գաղափարներով կ'ուզէ չուրանալ անոր արժանիքը, վասն զի իր զրչին վերայ պահպանողականներու աշուրներ շատ մեծ բացուած են: Չէ որ պատուելին շատ սիրուած չէ. ինչպէս կարելի է հրապարակաւ լի ու լի գովեստ կարգալ անոր մասին. և կը շատանայ այսքան տողերով. « Մեր արդի Սահմանադրութիւնը կը կրէ Տէրոյենցի գաղափարաց անջնջելի դրոշմը: Կարելի է դատապարտել, կարելի է դրուատել Տէրոյենցի գաղափարներն ու ազդեցութիւնը, բայց կարելի չէ չգարմանալ անոր վրայ. աղքատի մը գաւակ և աղքատ, իւր տաղանդովն ու կարողութիւններով նշանաւոր դեր մը կատարեց: Տէ-

րոյնց կեանքը տաղանդի մը փառաւորումն է:»

Տատեան Յովհաննէս պէյ զայն կոչած էր հայալը բիւրիպիսակե (շրջուն գրատուն) այն ատեն, երբ ապշած էր անոր յիշողութեան վրայ լատին պատգամաւոր Ֆէրրարիի դիմաց՝ կը ջատագովէր Հայ Եկեղեցին աստուածաբանական փաստերով, լատին նուիրակին կ'իմացնէր վատիկանի մատենադարանին այս ինչ դարանին, այն ինչ հատորին, այս ինչ էջին վրայ գտնուած վկայութիւնները, որոնք ստոյգ էին: Յիշողութիւնը ծայրայեղօրէն ապշեցուցիչ էր: Բազմաբեղուն և ամենէն մեծ տաղանդաւոր մարդը և գործիչը, յարատե աշխատողի աննման օրինակը՝ նկատելու է որ աղքատ էր, իր գրչին վաստակովը քառասուն փարայ ձեռք կը ձգէր. այդ էր օրուան վաստակը:

Գրիչը այդքան միայն... կրնայ փոխարինել. գրագէտի կեանքը ճակատագրական գրկում ու քաղցածութիւն է: Զարմանալի չէ, իրականութիւնը օրինական ըրաւ այդ սե բաղդը: Տխուր ճշմարտութիւն:

*
*
*

Սակայն տխուրին մենաշնորհեալներն՝ տխրունի երգիչներն են. Յովհաննէս Սեթեան իր «Յուզման ժամեր»-ով տխուր յուզում մը կ'ուզէր ներարկել մեր երակներու մէջ. զմեզ տխրեցնողները կրնանք սիրել: Լէօբարտի տխրունի է և կը սիրուի. պատիւ սիրահարութիւն: Տխուր տաղանդը յարգենք, բայց ինչո՞ւ սիրենք. Արփիար շուարած կը հարցնէր. «Անոնք որ ազգ մը տրտում կը պահեն, կը հիւժեն զնա. դրուատենք զանոնք»: Բայց տրտմութիւնը յուսահատութեան հարսն է. եթէ ատոնք ազգին ջղերը կը թուլցնեն կամ կը կթոտեն, ինչո՞ւ սիրուին: Գրչէն ու քնարէն կեանք կը սպասենք, զուարթութիւնը՝ կենդանութիւն, տրտմութիւնը՝ յուսահատութիւն, երկու աղբիւրներէն ո՞վ կենդանութիւնը չի սիրեր:

Արփիար կարծես չուզելով վիրաւորել իր բարեկամ տխրունի քնար Սեթեանի սիրտը, միշտ պատ ի պատ հարցումներ կ'ընէ. «Արդեօք տխրութիւնը մեր մարդկային սրտի ամենէն կենսական պիտոյրներէն մին է որպէս զի, հակառակ ամէն համոզումներու, թախծութեան երգերը —

սրտէ բղխած երգերը — մտիկ ընենք իբր նուագ մը հեշտալուր:» Եւ կը հակի իր բարեկամի սեւ տխրութեան, զոր սակայն հեշտալուր կը գտնէ: Կը գրէ. « Երբ կը կարդանք մին այն գրքերէն որ պիտին է Սէթեանի գիրքն, առանց վարանելու կ'ըսենք: Եթէ կայ եսականութիւն մը որ սիրելի է, բանաստեղծին եսականութիւնն է այդ. անոր հառաչանքներուն մէջ ամէն ցաւած սիրտ կը լսէ արձագանգն իր եսին. կարծես թէ վշտահար ոգիները միասին եկած մէկ քնար կը թրթռացնեն:» Ու հիասքանչ տաղանդներու խուլ արձագանգը կարծես կ'ուզէ լսել Սեթեան քերթուածներէ. այս չապացուցանէր սա տողերն. « Սեթեանի բանաստեղծութիւնները կարդալով Լամարթինի անուշ ձայնը կը կարծես լսել. և « Հրաժեշտ »ը կը յիշեցնէ Մանժոնի լուչիային « Մնաց բարով »ը, թէպէտ Սեթեան Մանժոնի տեսած չէ և քիչ անգամ Լամարթին կարդացած:» Ու այդ քերթուածներու առթիւ շահեկան միտք մըն ալ կ'արձարծէ. կ'ուզէ իմացնել թէ բանաստեղծ ըլլալու համար, սիրահարական երգեր պայմանադրական համարելու չեն:

Ինչ կ'ըսեն մեր բանաստեղծները. հեշտալուր չէ կարծեմ Արփիարի նկատողու-

թիւնը, սակայն անուրանալի է այդ ճշմարտութիւնը. ընդհանրապէս բանաստեղծի մը համար որքան լայն է ճշմարտութիւնը՝ այնքան անձուկ է ըմբռնումը: Ուրեմն Սեթեան բացառութիւն կը կազմէ. « Սեթեան սիրոյ երգ գրեթէ չունի. կը կարծուի թէ ճշմարիտ բանաստեղծ ըլլալու համար պէտք է երգել սէրը — կամ լաւ եւս սիրահարութիւնը: Բայց ինչո՞ւ: Միթէ միայն սիրահարութիւնն է մեր կեանքը. չունին մեր սրտերը ուրիշ բարախումներ. և ճշմարիտ բանաստեղծ է ան որ կ'երգէ հպատակուելով աւանդական օրէնքներու: Սեթեան օրէնք չի գիտեր, ինչ որ զգացեր զայն գրած է, մէկ զրչով — ինչպէս պէտք է գրէ ճշմարիտ բանաստեղծը, առանց սրբազրութեան. » Արփիար այս տեղ որոշ ու յայտնի խոստովանանք մը ունի: Գրական կանոններու շարքի մէջ կարելի է ներմուծել այդ գաղափարները: Գիտենք արդէն թէ ինքը որքան կը սրբազրէ իր գրուածները, սակայն այդ օրէնքը, բանաստեղծին համար ապօրէն կը նկատէ, և տրամաբանական է:

Արփիարէն սիրուած է այդ բանաստեղծը, և սիրուած է նաև ուսմկին անձնատուր երգիչ Միհրան Յովհաննէսեան: Արփիարի համար պաշտելի է ով որ ազգին

ծառայութեան մէջ շատ բարձր կը նկատէ
 ուսմիկին զարգացումի գործունէութիւնը.
 ու այդ է պատճառը որ ուսմիկին առաջ-
 նորդ Արծրունին, ուսմիկին վիպասան Լէօն,
 ուսմիկին բանաստեղծ Քաթիպան սիրելի
 են իրեն համար: «Սփոխակք Ռամկիւն»
 հեղինակ բանաստեղծ Միհրան Յոնվան-
 նէսեան ղրուատելի է, վասն զի ուսմիկին
 թշուառութիւնը կ'աշխատի սփոփել: Գը-
 րուատելի է անոր քերթողական հատորը,
 վասն զի ուսմիկին խրախոյս կը կարդայ.
 «Ե՛լ, հայ գործաւոր, գօտեպնդէ. թո՛ղ
 գոռան զարբնոցին մուրճն ու սալ, թո՛ղ
 խեղդեն գանգատն ու տրտունջ:» Ահա այս
 գաղափարներն են որ ջլապինդ կը կազ-
 դուրեն աշխատաւորին բազուկները: Եւ
 ինչո՞ւ չի գնահատուին այն հեղինակները
 որ կը յղանան այդ գաղափարները: Նա-
 խատինք չէ ըլլալ սփոփիչ, առաջնորդ
 ուսմիկ զասակարգին, բեռնակրին, ձկնոր-
 սին, մշակին, խանութպանին, բաղնեպա-
 նին, կօշկակարին, ստնտուին, ներկարա-
 րին, երկաթագործին: Ազգի մը կառքին
 անիւները ժողովուրդն է որ կը կազմէ,
 և այն ուսմիկ ժողովուրդը: Լաւ կը խոր-
 հրրդածէ Արփիար. «Ազգի մը կեանքը
 ժողովուրդն է. իմաստուն հայրենասէրը
 ժողովուրդին համար կը խորհի. այդ ժո-

ղովուրդն երկրագործն է, արուեստաւորն
 է, աշխատողն է, «անարգեալ ուսմիկն» է:
 Թուրքիոյ մէջ վիպասանական զրահանու-
 թիւնը սկսած էր պաշտպանել ուսմիկին
 կեանքը և զատը. Յովհաննէսեան Միհրան
 իր քնարով նոյն գործը աւելի սփոփիչ
 կը ներկայացնէր:

Եւ այսպիսի կազդուրիչ շարժումներու
 ատեն, խոռվայոյզ աստուածաբանական
 խնդիր մը կը բռնկի, և իմաստուն կար-
 ծուած մամուլն է որ աւելի կը բռնկցնէ
 այդ խնդիրը որուն որոշումը կամ բա-
 ցատրութիւնը անկ էր կրօնական ժողովին.
 ժողովուրդը լրագրէն ուրիշ շատ սպասելիք
 ունէր արդէն. Արփիար այդ առթիւ է որ
 Լևոն ԺԳ սրբազան պապի Միութեան
 հրաւերի կոնդակի նկատմամբ լուռ չէր
 մնար. բայց իր գաղափարներն այս կը
 նշանակէր թէ ժողովուրդի միամտութիւնը
 պէտք չէ փոթորկել. և փոթորկողը մա-
 մուլն էր: Կրօնական խնդիրներու մէջ ժո-
 ղովրդի միամտութիւնը Արփիար ինքն իր
 սրտին հայելիէն կը դատէր, և ատով է
 որ կը գրէր. «Դպրոցն եղած ժամանակ-
 նիս կիրակի օր մը Հ. Ղ. Ալիշան խրատի
 ժամուն հաւատամքը մեզ երբ կը բացատ-
 րէր, նոյն ինքն հանագոյսիկի հօր բացատ-
 րութեան վրայ խօսելով բազդատեց զայն

նոյն ինքն բնութիւնէ հօրին հետ և ցոյց տուաւ թէ այս վերջինս որչափ խորունկ, գեղեցիկ բացատրութիւն մըն է զոր սքանչելապէս դրած են նախնիք, բայց Բարսեղ անունով մէկը կայ եղեր, այդ տգէտը ամէն ինչ փոխեր է: Այնուհետև ես ալ երբ հարկ կ'ըլլայ որոշել թէ ո՞րն է մերը, ո՞րը հոռոմէականներուն, ինքրին կ'ըսեմ. Հ. Ղևոնդ որը կը գովէր՝ բնականաբար այն հոռոմէականներուն է, և միւսը մերն, այսինքն համագոյակից հօր, բայց արի տես որ բոլորովին հակառակն եղած է, և եթէ վարդապետ եղած լինէի ապահով ամէն ատեն պիտի շփոթէի:» Արփիարը գրագէտը անտարակոյս անտարբեր է աստուածաբանական ո՞րն է խնդրոյ նկատմամբ, ոչ թէ տգէտ է անոր համար այդ միջոցը բռնած է, այլ զիտէ որ ամէն անհատ իր պաշտօնը ունի, խմբագրին ու գրագէտին պարտքն է միտք մշակել, իսկ եկեղեցականին՝ հոգիները փրկել: Իր վերոյիշեալ գրութեամբ ցոյց կու տար որ գրագէտը որ աստիճան որ զարգացած ըլլայ, սակայն իր մասնագիտութիւնը չէ աստուածաբանական խնդիրները: Բայց ամէն խմբագիր կամ հրատարակախօս Արփիարի պէս լայն ըմբռնում չունի. լայնամիտ կամ ազատամիտ խմբագիրներ ղժբաղժաբար քիչ ունեցեր ենք:

Քրոնիկի գրութեանց մէջ Արփիարը սիրուած շատախօս մըն է եղած. մանաւանդ երբ նոր գրիչ կը շարժէր «Մշակ»ի, «Արեւելք»ի և «Հայրենիք»ի մէջ. սակայն իր այդ քրոնիկները գրական ձեւ, զմայլելի արուեստ մը կը հագնին, երբ Արփիար այլևս իբրև վարպետ մը գրիչ կը շարժէր իր արեւմուտքի տարիներուն. Եգիպտոսի «Շիրակ» հանդէսին մէջ՝ ատոնք անգուգական բարձր արժանիք մ'ունին: Արփիար իբրև վիպագիր, իբրև հրատարակագիր մեր գրականութեան մէջ կ'ապրի վարպետի համբաւովը:



ՌՌԻՍԻՆԵԱՆ ՆԱՀԱՊԵՏ

Ռուսինեան փարիզէն հասած բժիշկն էր, որ աւելի իր պերճախօսութեամբ, ազատամտութեամբ և հանրածանօթ «Ուղղախօսութիւն» քերականութեամբ թուրքիոյ հայոց անմահներուն կարգէն կը դասուի։

Չքանսայէն կը սորվէր հալածել եկեղեցականները, համարձակութեամբ ազգային ժողովքին մէջ կը կոուի, և եկեղեցականներու երեսն ի վեր կ'որոտայ. «Դո՛ւք, դո՛ւք, դո՛ւք էք հայութեան ամէն զժբաղդութիւններուն ծնողը»։ Կատարեալ ոամկավարական մըն է եղած։ Ազգային ժողովին ձեռքը կու տայ ներքին կանոնագիր մը, որուն միջոց ժողովը երկարատեն ըստ Արփիարի՛ բոլորակ անիւով անսայթաք ընթացաւ մինչև Աշրգեանին պատրիարքական աթոռ բարձրանալն։ Իբր

զրագէտ կը թողու «Ուղղախօսութիւն»էն զատ թարգմանութիւններ. ինքն է Հիւկոյի «Ռիւյ Պլաս»ի թարգմանիչը: Հայերէն լեզուին բարեշրջողն չէր, այլ յեղափոխականը, անփոյթ էր եթէ հասարակութիւնը իր լեզուն չէր հասկնար. ինքը կը յոխորտայ. «Ինչ փոյթ որ չհասկնան. եթէ կ'ուզեն հասկնալ թո՛ղ լեզուս սորվին»: Ինքը իր սկզբունքը հասարակութենէն շատ բարձր կը համարի. շատ անպատկառ կը գտնեմ սա խօսքն. «Թո՛ղ կորսուին գաղթականութիւնները քան թէ սկզբունքները»: այս սկզբունքին Ռուսիանեան ջերմ պաշտպան էր. Արփիար հիացումով մատնանիչ կ'ընէ Ռուսիանեանի այդ յատկութիւնը:

*
**

Լեզուները կը կերպարանափոխուին. ժամանակը իր ազդեցութիւնը ամենէն աւելի կը թափէ ցեղերուն բարբառին վրայ. այդ չի բաւեր, մերթ ընդ մերթ լեզուական օրէնսդիրներ ալ հրապարակ կու գան. բնական կերպարափոխութիւնը ոստումներ կ'ընէ. անբնական ոստումներով լեզուն կրնայ տուժել: 1853ին Ռուսիանեան իր «Ուղղախօսութիւն»ով հայ լե-

զուի անբնական քայլ մը կ'ուզէ առնել տալ: Նպատակը չար չէ. բնական է այդ. ոչ ոք իր սկզբունքը չար կը նկատէ: Ամէն ցեղ իր լեզուն բարեկարգելու կ'աշխատի. ինքն ալ մեր լեզուին բարեկարգիչն ուզած է ըլլալ. տեսէք թէ ինչ մըտքով կ'ուզէ օգտակար ըլլալ իր ազգին.

«Մեր ազգն ալ շատո՛ւց ի վեր իր հին լեզուն՝ ան վսեմ գրաբառը կորուսած, կը զգար իր կրթութեանը համար ընդհանուրին հասկընալի ազգային լեզուի մը կարօտութիւնը: Սա լեզուն կար, բայց այնչափ խեղճ վիճակի մէջ էր, որ ո՛չ ոք կը համարձակէր լեզու ըսելու անոր: Սակայն տաս տաս—հինկ տարիէ՛ ի վեր, ուսումնական անձեր՝ մասնաւոր ու պարբերական գրվածներով՝ զանի շատ շրտկէցին շրտկըտէցին. և ազգն իր հին կորուսած լեզուին տեղ՝ ունի ասօր, թէ ո՛չ կատարեալ, գէթ բաւական գործածէլի արդի լեզու մը ազգային, ՚զոր շատ մարդիկ իրարմէ քիչ տարբերութեամբ կը գրէն, ու հասարակութիւնը՝ քանի կ'երթայ, վարժ ու անուշ կերպով կը խօսի»:

Բայց այդքանը չի բաւեր. լեզուն դեռ կատարելութեան զիմած չէ, ատոր համար կարևոր են ոչորոխօսուորէն և քառօրյոյ. առանց ատոնց ամէն զրոյ ըստ կամս

սեփհական ոճ մը կ'ունենայ, և ըստ կամս ուղղագրութիւն մը կը գործածէ: Այդ անկարգութիւն է, ինքը կ'ուզէ կարգ դնել, հայ լեզուն կատարելութեան համբէն քայլ մ'առաջ մղողը ինքը կ'ուզէ ըլլալ. իբ հրատարակած քերականական հատորը նուազատակ մ'ունի:

«Արդ՝ — կ'ըսէ — աս արդի լեզուն կանոնաւորելու, և միանգամայն կատարելութեան շաւղին մէջ քայլ մ'առաջ մղելու մըտքով է, այսինքն՝ անոր աւելի պարզութիւն, ճշտութիւն, անուշութիւն, ուղղագրութիւնը ղիւրութիւն, ու բառերուն համառօտութիւն տալու մտքով է, որ ձեռք զարկինք՝ ուսմանական անձերու խորհրդակցութեամբ, ուղղախօսութիւն մը յօրինելու նոյն լեզուին:... Մեր աշխատութիւնն ընթացքին մէջ՝ արդի լեզուն գրաբառին ըստ կարի մօտէցնելու նպատակն ալ երբէք աչքէնէս չը հեռացնելով, ուղիղ տեսութիւնն ու միաձեւութիւնը՝ մեզի երկու գլխաւոր զիտակէտնէր եղած են: Ինչ որ գրաբառին մօտ երթալ կրնալով՝ ուղղութեան ու միաձեւութեան դէմ կը մեղանշէր, 'զանի հարկ կ'ըլլար գաւառական բարբառներու մէջ սովորյթ էղած կերպին հետեցնելով համեմատել մեր կանոնին»:

Ռուսինեան ուրեմն ուզած է աշխարհաբարը գրաբարին մօտեցընելով կարգադրել զայն. նոյն սկզբունքը երկու տարի առաջ քարոզած էր Գրիգոր Օտեան: Ռուսինեան իր այդ գրքին մէջ յատուկ նորութիւններ կը ստեղծէ. ինչ են ատոնք: Կը գրէ.

«Գլխաւոր բան մը աս ուղղախօսութիւնն մէջ ան է, որ հոլովումը մէկի՛ վերածած էնք. որով ամէն բառ ընդհանրապէս միօրինակ կըրնան հոլովվիլ նոյն վերջաւորութեամբ. բայց քանի մը բառէր, որոնց արտուղութիւնն անկարելի երեւցած է մեզի կանոնաւորէլ... Դարձեալ՝ բայերուն խոնարհման զաղտնիքը լաւ մը զիտէլէն ետեւ, բոլոր բայերն իրեք յանգով, իրեք կանոնաւոր խոնարհման տակ ձգած էնք, աբով դուրսն ամէնեւին անկանոն բայ չը՝ մնայ»:

Կը խոստովանի որ այդ և ուրիշ լեզուական փոփոխութիւններուն միակ նպատակն չէ՛ նորաձեւութիւն՝ այլ կարգադրութիւն:

Սակայն դատելով հին և ներկայ քերականական ընդունուած կանոններէն՝ Ռուսինեանի «Ուղղախօսութիւնը» զբախօսութիւն մը կը մնար: Այբուբէնին տարօրինակ հնչում մըն էր տուած, պէտք էր հըն-

չել ա, բը, գե, դե, եե, զը, և այլն. իր օրէնքը սա էր, որ տառերը պէտք են պահել իրենց պարզ ձայներն, այսինքն այն հնչումն, ինչ որ կ'ունենան բառերուն մէջ՝ առանց բաղադրուելու ձայներով խառն հնչումներու հետ: Ասկէ զատ, տառերու հնչման մասին ունի յատուկ սա վճիռը.

«Ան գիրէրն որ իրենց ձայնակից էրող գիրէրուն հետ կըրնային շփոթիլ, անոնք միայն է ով դրինք. իսկ միւս բոլոր բաղաձայնէրը՝ ը ով. եե, գե, դե, ձե, չե, ֆե գիրէրը՝ լըծորդ ու ձայնակից էն է, կը, սը, ծը, ձը, փըր գիրէրուն հետ, և շատ անգամ աս ետքիններն առջիններուն տեղը կը դրվին. ուստի գեն՝ աւելի կըին մօտ հընչելու է քան քրին, որի հետ լծորդ չ'է. դեն՝ տրին մօտ քան րըին. ձեն՝ ծըին մօտ քան ցըին. ջըն՝ ձըին մօտ քան ջըին և փըն՝ ֆեին մօտ քան րըին: Ճիշտ հայկական հընչումն սա է»:

Սակայն ճիշտ հնչումը Պօլսոյ հայոց բերնին մէջ միշտ արուեստակեալ մնաց. Հայաստանցին միայն կըրցաւ ճշգրտօրէն հնչել տառերու ձայնը:

Թուականներու մէջ ալ նորութիւններ ներմուծելով, տասնըչորսը կ'անուանէ տաս-քստ, եօթանասունը՝ եօրտն և այլն:

Իսկ Նան կը հոլովէ — Նա, Նատր, Նակե, Նաով, Նա:

Ուղղագրութեան մասին ունի զիտողութիւններ, ի միջի այլոց կը յիշեմ սա տողերն.

«Միջակ գիրէրն ապաբէին (այբուբէն) կարգին մէջ եով դրված էն. ինչպէս, գե, դե, և այլ. իսկ միւս բոլոր բաղաձայն գիրէրը ըով դրված էն. ինչպէս, բը, զը, րը, և այլ: — Եթէ երբէք այս սովորութիւնն ընդունվի, այն բառէրու մէջ որ ուրիշ նմանաձայն բառէրու հետ կըրնան շփոթիլ, երբէք ընդունելի չ'է. ինչպէս, տեղ՝ դեղի հետ. կիր՝ գիրի հետ. կող՝ գողի հետ կը շփոթին. վասն զի տեղ, կիր, կող, արդէն ուրիշ նշանակութեամբ բառէր էն»:

Նման փոքրձեր շատ անգամ եղած և անընդունելի մնացեր են:

Հետաքրքրական է Ոչրիւն մասնիկին հոլովումը. անոր սեռական ու գործիականը.

«Ութեան, ութեամբ ի տեղ՝ ութիան, ութիամբ ըրած ենք, կըրնայ վայելչապէս ութեն, ութեմբ ալ ըլլալ. զօրօրինակ՝ զօրութն, զօրութեն, զօրութեմբ...»:

Կարելի չէ աւելի երկար խօսիլ Ռուսինեանի նորաձևութեանց վրայ, քանի որ անընդունելի մնացին իր յեղաշրջական կարգադրութիւնները, որոնք քերականական անկարգութիւններ կըրնան կոչուիլ:

*
* *

Արմէն Լուսինեան՝ գերահանճար կ'անուանէ զՌուսինեան: Այդ ածականը կուտար այն առթիւ, մինչդեռ կը կարգար Ռուսինեանի «Մանուկ և Արտուշիկ» քերթուածը: Մանուկներուն զուարճալի պիտի երևնայ իր այդ երգը. մանուկն է որ արտուտին կ'երգէ.

«Գարանամուտ կամ վաղուց ես լռիկ
Եւ ոչ դիւրաւ քեզ բերի ձեռք հիմիկ,
Պէտք է երգես իմ սիրուն Արտուտիկ,
Որ զու տաս սրտիս զուարթ քու դայ-
լայլիկ:

Մի՛ դողար ի տես վանդակիս անել,
Ծաղկօք եմ պատած ես անոր թելեր:
Դու քեզ մարգերու կրնաս մէջ կար-
ծել,

Երգէ ինձի հետ թռչնիկ սիրաւէր:
Երբ գայ նոր գարուն բընութեան նոր ոյժ,
Եւ մեզի պայծառ օրեր ու տայ յոյս
Գողտրիկ մարմանդին մէջէն ձայնդ անոյշ
Չամբիժ քու սիրոյդ կը տօնէ զխնճոյս»:

Հիացումի արժանի չէ այս երգը, գերա-
հանճարի նշան չկայ այդ տողերուն մէջ:
Արփիար սքանչացած է Ռուսինեանի

զրչին. իր վրայ զրական համառօտ մէկ
կենսագրականին մէջ՝ յիշատակուած է
«Փառատենջ անուրջ» էն առաջին տունը.
որուն համար կը գրէ. «Ահ բանաստեղ-
ծութիւն մը որ չորս տողի մէջ մեր աչ-
քերուն առջև կ'երգունէ մեկուսացման,
մոռացման համար երազուն հոգի մը: Իր
ու իր սերունդին ըղձանքներուն հոգեբա-
նութիւնը զուցէ»: Այս տողերը «Գեղու-
նի» էն են. անտարակոյս Ա. Արփիար զիտէր
որ «Փառատենջ անուրջ»ը Յրանսացի
Ժօզէֆէն Սուլարի բանաստեղծին քերթու-
ծին թարգմանութիւնն է. Ռուսինեան զայն
թարգմանած է, զոր ամբողջովին կ'ար-
տատպեմ հոս.

«Մին եզվար հող ունենայի՛ դիւր ըլլար,
դար կամ թէ ծործոր,
Վագուկ շըրով՝ թէև քըչիկ՝ վըտակ ըլ-
լար, ահ կամ հեղեղ.

Մէջը մին ծառ կը տընկէի՛ ծիրանի, ծոր
կամ խնճոր.

Մէջը մին հիւղ կը շինէի՛ աղիւս, եղեգ
և կամ բաղեղ:

Ծառիս վերեւ մին սիրուն բոյն՝ բըրդէ,
փետրէ կամ սիգահիւս,

Հանգիստ կու տար մին երգեցկի՛ ճահրիկ,
ճնճղուկ կամ ծիծառնիկ

Հիւղիս ներսեւ հեշտ ընկողնիկ՝ առկախ,
 օրրան կամ պրտուահիւս,
 Հանգիստ կու տար մին մանկուհւոյ՝ թուխ,
 կաակահեր կամ խարտեշիկ:
 Մին եզվարէն եւել չ'ուզեմ. չափա ըլլան
 ճիշտ թող լոյս և սէր,
 Ամենագեղ կուսին գողարիկ՝ որ սիրտս ու
 աչս յ'ինքն գրաւէր,
 «Կանգոն կաց դու հող՝ կ'ըսէի՝ ահա
 ծնաւ նոր աշալուրջ.
 Արչափ հեռին տանէ զ'ըստուերդ արեգն
 ընդ դաշտ յ'որ և է կոյս,
 Նոյնչափ հեռին երթամ գլծեւ հորիզոնիս
 ծիր սիրալոյս:
 Տենչալին յ'որ չը հասնի ձեռք իցէ այլ
 ինչ քան մին անուրջ»:

Ռուսինեան այս թարգմանութիւնը հրա-
 տարակած է Տէմիրճիպաշեան բանաստեղ-
 ծի «Երկրագունտ» հանդէսին մէջ: Փափ-
 կութիւն, ազնուութիւն կայ թէ՛ հեղինակին
 և թէ՛ թարգմանչին ոճին մէջ:

Չափազանցութիւն չէ կարծեմ՝ եթէ ը-
 սենք որ հարազատ թարգմանութիւն մը
 որ բնագրին ամբողջական գաղափարը կու
 տայ, թարգմանիչը հեղինակին արժանիքին
 հասցուցած կ'ըլլայ: Սքանչելի թարգմա-
 նութիւնը՝ կրկին հեղինակութիւն կը համա-

րուի: Ռուսինեանի թարգմանութիւնները
 բնագիր կը կարծուին. պատճառը մաթե-
 մաթիքական ճիշտ թարգմանչի գրիչ ու-
 նենալն է. իրեն ժամանակակից վիպասան
 գրագէտ Ծերինցը՝ դրուատած է Ռուսի-
 նեանի այդ թարգմանչի հիանալի կարո-
 ղութիւնը:

Ծերինց՝ կարծես փափուկ երակազըն-
 նութեամբ՝ վերլուծած է Ռուսինեանի հո-
 գեբանութիւնը. մենք որ այն իմաստասէր
 մարդուն ժամանակակից չենք եղած, զայն
 ճանչնալու համար, իր հոգեբանութեան
 խղճամիտ հետախոյզ ձեռնհաս գրչին կը
 յանձնենք այս տողերն. կը գրէ Ծերինց.

«Ռուսինեան առանց մեծ հանճար լի-
 նելու՝ զարմանալի և հետաքրքրաշարժ
 տաղանդ մ'էր, անդրդուելի անձնաւորու-
 թիւն մ'էր: Իմ առջի տեսութենէս, աս-
 կից երեսուն տարի առաջ, մինչև վերջին
 ժամանակները նոյն մարդը տեսայ նոյն
 սկզբունքներով՝ նոյն մտածութիւններով
 անյողդող և անփոփոխ: Նոյն ժամանա-
 կէն իւր համոզմունքը հայ աշխարհաբար
 լեզուն բարեկարգել և հարստացնել էր.
 երկրորդական ինդիր էր նորա համար
 ազգն և ազգութիւնը և նորա բարոյական
 վիճակը: Անոր համար զարմանք ինձ պատ-
 ճառեց, ինչպէս հաւանական է ամէն անոնց

որ զինք ճանչցեր էին, թէ փրկիսօփայական գրութեան մը կ'աշխատի եղեր նա իւր վերջին օրերուն, նա՛ որ «ոգին կը զոհէր ձեռն»։ նա՛ որ բանը կը զոհէր բառին։ Եւ իրօք, ի՛նչ կը պատասխանէր երկու տարի առաջ երբ մէկն իրեն հարցնէր թէ ի՛նչ կը կարգայ. «Ես հիմայ հայկազնեան բառարանէ գատ բան մը չեմ կարգար»։ Եւ այս պատասխանը թէ ձայնին և թէ ձեռքին շարժմունքին մէջ այնպիսի շեշտակի կտրուկ դանակի ձև պատգամ մ'ունէր, որ ամէն մարդու ժպիտ կը բերէր։ Վասն զի ազգին յուզմունքն այն օրերն իւր վերջին ծայրը գտած էր Խրիմեանի հրաժարականի խնդրով. լրագրութիւնն երկու բաժնուած, Մշեցիք գՍամաթիացիս կը թոպէին Պատրիարքարանի սրահներուն մէջ, խումբ մը մարդիկ Պէշիքթաշի եկեղեցիէն Խասգիւղ կը վազէին պատարագի յիշատակութիւն խառնելու համար, և երեսփոխանք կային որ Պատրիարքը պաշտօնանկ ընելու դաւադիր՝ առ երեսս «Հայրիկ, ամո՛ւր նստէ աթոռիդ վրայ» կ'ըսէին։ Իսկ Ռուսինեան նոյն միջոցին Հայկազնեան բառարան միայն կը կարգար»։ Մենք Մերենցին զխեղ կու տանք որ Ռուսինեան շատ լաւ կ'ընէր չը մասնակցելով նենգամիտ զիւանագիտական բռնկած

խնդիրներու։ Գրագէտը ուրեմն այդ ձեռնպահ կացութեամբ՝ կ'ուզէր հասկցնել թէ մտքի մշակումի հաճոյքը՝ զիւանագիտական կուսակցական եսամուլ խնդիրներու մէջ թաղելու ոճիրէն շատ հեռու է ինքը։

Ռուսինեան և իր ժամանակակից ու գաղափարակից մտաւորական անձնաւորութիւնները, ինչպէս արձանագրած են մէկ քանի գրիչներ, Օրթագեղի մէջ ունէին ընտանեկան Ակադէմիա ըսուելու արժանի միջավայր մը. Պաւեան Յակոբ պէյի բնակարանն էր այն, ուր լեզուասէր ու բանասէր եռանդուն ուժեր քաջալերուութեամբ նոյն պէյին, մեր հայերէն լեզուի բառերուն վրայ վիճելով՝ ուսումնասիրուութիւններ կը կատարէին. պէյը կազդուրիչ առաջնորդը կ'ըլլար իբր գրասէր յորդորներովը։ Պէյը պոլսական Բերայի իր ընտանեկան ճոխ հաճոյքներէն ինքզինքը զրկած, իբր շուրջը եղող գրագէտ ուժերուն հետ կ'ապրի, անոնց առջև կը բանայ ճոխ գրատուն, և շատերուն նիւթապէս կ'առատաձեռնէ իր բարեգործութիւնը։ Հոն նախնի լեզուն՝ պարզապէս կը կոչուէր Հայերէն, իսկ նորը՝ Արմեներէն. նորը յեղափոխելու խորհուրդները՝ պէյին կաճաօրն շուրջը կը յղանային. իրենք էին որ թատրերգութիւններ թարգմանե-

լով, հասարակութեան առջև ներկայացումներ կու տային. իրենց ակումբը ժրջան գործունէութեամբ արդէն համակրելի կ'ըլլար: Պէշը կորսնցընելով իր տիկինը, սրտին ցաւէն կը հեռանար Գաղղիա ու կը վախճանէր. իրեն հետ կը գոցուէին Օրթագեղի կաճառին դռներն: Ժամանակակից հիղինակներ կը վկայեն որ ժողովքի ատեն Ռուսինեան դառնապէս լացեր է պէշ բարեկամին մահուան լուրը առնելուն. բայց և պատմական է իրեն պաղարիւնութիւնը. իմաստասիրական հանդարտութիւնը սառնօրէն պահած է և ըսած է օր մը. «Թէ որ մահուան ժամը հասած է, պէտք է հանդարտ մեռնիլ, ինչ օգուտ ալեաց յուզման սրտի յուզմամբ պատասխանել»: Ու բարեկամի մահը աւելի զգայուն լեզու կ'ունենար, քան թէ ալեկոծութեան փոթորկող սպառնալիքն:

Ամէն հեղինակ յատուկ և եզակի գերամեծարութիւն մը կ'ունենայ իր սիրած մէկ զրքին: Տոքթոր Ռուսինեանն ալ գերամեծար է համարած՝ Վիքթոր Հիւկօի «Ռիշ Պրաս»ը, զոր կը թարգմանէ և կը հրատարակէ 1873ին: Հոչակաւոր բա-

նաստեղծին հետ իր ունեցած թղթակցութիւնն ալ թարգմանութեան սկիզբը գետեղած է: Գործին վերջը ունի գրութիւն մը, ուր թատրոնին մասին կը գրէ նոյն ինքն Ռուսինեան.

«Լուսաւորեալ դարուս մէջ ուր կ'ապրինք՝ ժողովրդային կրթութեան ազդու և բիւրարեղուն միջոցն է թատրը, չափահասից դպրոց մը՝ ուր հրահանգը ծրարեալ է զուարճութեան ակնախտի դրոշին տակ: Թատերաբեմին բարձրէն՝ իբր քարավազէ մը հեշտ կարկաջմամբ կ'իջնի ցիր ու ցան գետնայարկին վրայ այլեակն իմաստից, որ կը բերէ՝ բարոյական դաս, կենցաղօգուտ խրատ, զբաղան և գեղարուեստական ճաշակ, ուստի անձնիւր հանդիսական կ'առնու իր մասն ու կը տանի կը ծաւալէ իր ընտանեաց ծոցը: Այսպէս ըմբռնելով թատրային զբօսանաց նպատակը, ուրախութեամբ կը տեսնենք ազգայնոց այս մասին նոր արթնցած սէրը: Փառք այն ազգասիրաց որ սոյն զգացմանէ շարժեալ՝ պաշտպան և ձեռընտուր կը հանդիսանան թատրական հաստատութեանց: Երանի թէ ազգային վարչութիւնն ալ ուզենար յօգուտ վարել ընդհանուր դաստիարակութեան այս հզօր օժանդակը»:

Նպատակը կրթական է. այո՛ւ պէտք է ըմբռնել որ թատրոնը մեր երկրորդ կըրթարանն է վարժարանէն վերջը, բնականաբար խօսքս՝ կրթիչ թատրոններու մասին է:

Ռուսինեան իր այդ յօդուածին մէջ կ'արծարծէ իր աշխարհաբարին հարցը. կը գրէ.

«Մեր գործածած գրական ոճը՝ զոր անբազիւտ կարծելէ շատ հեռի ենք, գիտենք աղէկ՝ շատ ունի քննադատներ, մանաւանդ հայկաբանից խումբ մը և իրենց կուսակիցները, որք զբարբառէն առնելով միշտ փաստերնին, զաշխարհաբառը կ'անգոտնեն, և որք՝ իբր թէ հնով ճոխացեալ այս արդի լեզուն ժխտումն է հնոյն կամ հայկաբանութեան սպանիչը, և իբր թէ մի և նոյն հայ ցեղին բարբառը չէ, չեն կրնար հաշտ աչօք տեսնել արմենաբանութեան աշխարհակալութիւնը, և ուրանալ իսկ կ'ուզեն զանի: Ատոնց ըսելիք չունինք. մեր յոյսը՝ այդպիսեաց ընդունել տալ չէ մեր գրութիւնը»:

Ռուսինեան հրապարակաւ հրաւեր կը կարգայ որ կ'ընդունի ողջամիտ քննադատութիւնը և թէ ինքը պատրաստ է հակաճառելու: Ու համոզուած է որ ապագան անոր լեզուական յարթանակը կը հռչակէ:

Շարունակելով իր դիտողութիւնները կ'ըսէ.

«Մենք համոզեալ ենք սա ճշմարտութեան — ժողովուրդի մը համար չի՛ք յառաջագիմութիւն՝ թէ՛ բարոյական, չի՛ք մտային մշակութիւն առանց գրականութեան, և գրականութիւնն աւելի է ուր որ ժողովուրդ և գրականը մի և նոյն լեզուով չեն խօսիր, կամ որ նոյն է գրականը՝ մարց խօսած լեզուով չեն գրեր: Մեծ է զօրութիւն մայրենի լեզուին, զի մարք են մարդկային լեզուաց ի բնէ ուսուցիչները, էնոնցմէ կը ծնի լեզուին ոգին, ու գրականացմէ կ'առնու իր զարդն ու հարստութիւնը: Ըստ մեզ ազգի մը ընկերական վիճակը զոյգ կ'ընթանայ իր գրական վիճակին հետ, անանկ որ գրականութիւնն ամէն տեղ աստիճանացոյց կրնայ նկատվիլ ընդհանուր յառաջագիմութեան: Խորին է այս համոզումնիս. ուստի և մեր խարխափանքը ոամիկ լեզուին մէջ՝ ժողովրդային գրականութեան մը գալուստն աճապարելու եռանդն է, և ոչ յաւակնութիւնը: Արդէն ըսած ենք, նոր գրիչներէն կը սպասենք մենք և նորակիրթ մայրերէն՝ որ դպրոցներէ ելլելու վրայ են, այս գրական յեղափոխութեան պսակումը որ տի հանդիսանայ արմենա-

բանութեան, այսինքն մեր գործնական լեզուին գրականորէն մըշակմամբն ու աշխարհորէն ծաւալմամբը: Հոս է մեր յոյսը, բոլոր մեր ակնկալիքը. զի հաւատ ունինք ապագային, զի հաւատ ունինք յառաջագիտութեան»:

Յոյսերով ապրած է Ռուսինեանը, և յաղթանակին ապահով է, երիտասարդութիւնէն կը սպասէ այդ լեզուական յեղափոխութիւնը: Ինքը փորձ մըն է, զիտէ որ ամէն նորութիւն, ընդդիմութիւն կ'ուսննայ, և կ'ըսէ.

«Կը մխիթարվինք տեսնելով՝ թէ մեր թարգմանած հեղինակն ալ իր գրական նոր ոճին համար քիչ չդատափեսովեցաւ, բայց վերջապէս յաղթանակեց իր դպրոցը»:

Ինքն ալ այդ յաղթանակին կը սպասէր:

*
* *

Ռուսինեան իրեն յատուկ ճաշակ մ'ուսնէր. նորածեղութեան մոլեռանդ մըն էր մնացեր:

Իր գիւտերուն մէջ զմայլելի եղած չէ. թէև նպատակն էր օգտակար հանդիսանալ իր ամբողջ մտաւորական կարողութեամբ:

Ինքը ազգին վարչական մարդն էր, գրագէտէն աւելի իր մէջ շեշտուած է գաղափարական անձնաւորութիւնը:

Գեղեցկագիտական մեծ ճաշակ մ'ուսնեցեր է, բայց զայն մշակելու համար պարսպած չէ: Կան դիւանագէտ մտքեր, որ ընդհանրապէս պարտէզի սիրահարուած կ'ըլլան, դիւանագէտ մըն ալ Ռուսինեանն էր, որ աւելի չոր քերականական կանոններու սահմանները որոշելով հաճոյք կը զգար:

Ապագայ կարգ մը վիպասաններ մեր մէջ, զինքը իբրև գրագէտ վարպետ մը ընդունեցան:

Ռուսինեանի ամենէն ազդու քարոզն էր իրաւունքի շատագովութիւնը: Մարդուն կրքերը սանձահարելու համար՝ անհատի մը իրաւունքին ու պարտքին համար կը գրէ.

«Կեանքը աստուածատուր բարիք մըն է մարդուն համար. զայն բառնալու ոչ իսկ ինքը՝ անհատը՝ իրաւունք ունի, որովհետև ինք չէ զայն տուողը: Իր առաջին իրաւունքը, աշխատուրեան իրաւունքը՝ եթէ կարող է, և ձեռնառուրեան իրաւունքը՝ եթէ անկար է:

Այս բնական իրաւունքը որ մարդու նիւթական պէտքերը կ'ապահովէ, անկորընչելի է նոյն իսկ իր վայրենի վիճակին

մէջ: Ոչ ոք իրաւունք ունի առողջ անձի մը աշխատութիւնը արգիլելու, ոչ ոք իրաւունք ունի անկար անձի ձեռնտուութիւն զլանալու:

Այս անկորնչելի իրաւունքները փոխադարձաբար անդրժելի պարտաւորութիւններ կը ծնին. ոչ ոք իրաւունք ունի զինքը անօթութենէ մեռցնելու, ոչ ոք անօթութենէ մեռնողի մը ձեռնտուութիւն ընելու պարտաւորութենէն կրնայ ինքզինքը զերծ համարիլ: Ամէնէն սոսկալի եղեռնագործն անգամ այս իրաւունքը կը վայելէ իր բանտին մէջ. ընկերութիւնը չի կրնար անոր նիւթական պէտքերը լեցնելու պարտաւորութենէն ինքզինքը զերծ համարել: Այս իրաւունքն ու այս պարտքերը չը ճանչնալը՝ մարդկութենէ դուրս, գազանութիւն է:

Մարդ իր նիւթական պէտքերէն զատ բարոյական պէտքեր ալ ունի, որոնք, քաղաքակրթութեան վիճակին մէջ ուր հասած ենք, նմանապէս անկորնչելի իրաւունքներ, և փոխադարձ անդրժելի պարտականութիւններ կը ստեղծեն իրենց: Ինչպէս ներելի չէ թողուլ որ նիւթապէս մէկը մեռնի, նոյնպէս և ներելի չէ թողուլ որ բարոյապէս մեռնի: Քահանան՝ բանտին մէջ անդադար հրահանգելէն զատ՝

մինչև սակրաւանդ կ'ընկերանայ մահապարտին: Մարդուն նիւթական, բարոյական պէտքերէն իր բնական և անկորնչելի իրաւունքները կը ծնին, որոնք ժամանակէ, տեղէ և պարագայէ անկախ՝ բնական օրէնքով հաստատուած են անփոփոխելի կերպով, և որոնք ո՛չ մէկ կերպով, ո՛չ մէկ պատճառով չեն կրնար իրմէ յափըտակուիլ:

Այս բնական իրաւունքներէն զատ, մարդ ուրիշ իրաւունքներ ալ ունի, շնկերական իրաւունքներ, որոնք ընկերութեան մէջ կը ծնին և ընկերութեան մէջ կրնան կորսուիլ: Ընկերական իրաւունքներու կորուստը իրեն հետ կը բերէ ընկերական մահ. այս չարիքին վիճակողը ընկերապէս մեռած կը համարուի, բայց նորէն իր բնական իրաւունքներէն զրկուած չըլլար:

Ընկերական իրաւունքներն ու անոնցմէ ծագած փոխադարձ պարտքերը ընկերութեան անդամներուն իրարու հետ ունեցած յարաբերութիւններէն առաջ կու գան. անոնք զրական կամ քաղաքական օրէնքներով կը հաստատուին, և պարագաներու համեմատ կրնան փոխուիլ՝ արդարութեան սկզբունքներուն աւելի կամ նուազ համաձայն եղանակով մը: Մեր ազգին համար՝ այսինքն ազգային հաստատութեանց

մատակարարութեան վերաբերողները, Ազգային Սահմանադրութեամբ հաստատուած և անոր մէջ ամփոփուած են. Ազգային Սահմանադրութիւնն է որ ազգային անհատներու իրարու հետ ունեցած ազգային յարաբերութեանց մէջ իւրաքանչիւրին իրաւունքը ու պարտքը կը կանոնաւորէ մէկ կողմէն, և միւս կողմէն՝ Ազգն ու Ազգային Վարչութիւնը փոխադարձ պարտքերով կը կապէ իրարու հետ»:

Պահ մը թուրքահայ գրողներու վրայ ֆրանսական փիլիսոփայութիւնը մեծ ազդեցութիւն է ունեցած. Ռուսինեան նոյն ազդեցութեամբ թաթախուն՝ ընկերական կեանքի մասին ֆրանսացի յեղաշրջող մատենագիրներու պէս սկսած է ճառել և գրել: Հնութիւնը կերպարանափոխելու հրատապ գաղափարով կը գործէ: Եւ Գուզէնի պէս կը սիրէ բանասիրական գիտութիւնը, բայց աւելի անձնատուր կ'ըլլայ քերականական ու լեզուաբանական խորնադիրներու: Բնդհանուր հասարակութեան հասկանալի լեզուին կարեւորութեան համար՝ լրջօրէն այս բացատրութիւնը կուտայ իր Ողորտութիւն գրքովը.

«Լեզու կ'ըսվի ան կարողութիւնը՝ որով մարդ իր մտածութիւնը յօդաւոր ձայնով կը յայտնէ: Աս կարողութիւնը բնա-

կան ձիրք մըն է. և միշտ նոր ծնունդն իր ծնողներէն լսելով, իր գաւկնէրուն խօսելով կ'աւանդէ:

Լեզու մը՝ որդիէ որդի աւանդութիւն մը անցնելու ատեն, իր դարական ընթացքին մէջ մեծամեծ փոփոխութիւններ կը ընայ կրէլ. որոնք ժամանակին պարագաներէն կախում ունեն: Ժամանակով լեզուի մը վրայ էղած փոփոխութիւններն էն՝ նորանոր գաղափարներու իմաստ յայտնօղ բառերուն աւելնալը, բառերու մէջէն գրէրու պակսիւլը, գրէրու հընչման այլայլիւլը, և այլն: Երբեմն աս փոփոխութիւններն այնչափ մեծ էն՝ անցած ժամանակին երկարութիւն համեմատութիւնները, որ եթէ լեզուի մը արդի վիճակը՝ նախկին վիճակին հետ բաղդատվի, կը տեսվի որ մի և նոյն լեզուն՝ հին վիճակին մէջ ուրիշ լեզու մըն է. նոր վիճակին մէջ՝ ուրիշ: Աս դէպը տեսված է Հայ, Յոյն, Հռոմացի և այլն, լեզուներուն վրայ. իւրաքանչիւրին գրարաւէն ծագած է իր աշխարհաբանութիւնը, ինչպէս Հայերէնէն՝ Արմէնէրէնը, այսինքն՝ արդի լեզուն, Հելլենէրէնէն՝ Բուսէրան, Լատինէրէնէն՝ Իտալէրէնն ու Ֆրանկէրէնը և այլն:

Ասկէ քանի մը դար առաջ՝ երբ մարդկային իմացականութիւնը դեռ չ'էր ար-

թընցած իր թմրութենէն, ամէն ազգ իր մէջ՝ այնպիսի մարդէրու ժողով մ'ունէր, որոնք ազգին ուսմանականէ՛րը կը սեպւէին. և ասոնք իրենց գրվածներուն լեզուն՝ քիչ շատ իրենց նախնիքներուն լեզուին կը նմանցնէին. որով գէ՛թ ուսմանականներու մէջ՝ խանգարված կերպով մը հին լեզուն կը պահպէր. ու գրածնին իրենց համար միայն կ'ըլլար: Երբ մարդկային միտքը քիչ մ'արթննալ ըսկսէց, և ուսմանականներն աւելի խնդր հասուցէլ ըսկսէցին ժողովուրդներու կրթութիան հարկաւոր էղած միջոցներուն, իմացան որ մինչեւ իրենց գրվածները ժողովուրդները չը հասկնան, անոնցմէ յառաջդիմութիւն ըսպասէլն անօգուտ է: Աս բանիս համար երկու բան պէտք էր. կամ ամբողջ ազգի մը ուսման իր հին ու քանի մ'ուսմանականներու հասկըցած լեզուն ուսուցէլ, կամ ուսման նոյն ատեն խօսած լեզունովը գրէն: Առջինը՝ փորձեցին տեսին որ անկարելի է. երկրորդը՝ խիստ յարմար: Ան ատենէն ի վեր է, որ Եւրոպայի վարժարաններու մէջ՝ Լատիններէնի տեղ՝ իւրաքանձիւր ազգի իր խօսած լեզուն տիրէց: Յոյները՝ Հելլեններէնը կենդանացնէլու համար երկար ատեն աշխատիլէն ետեւ, վերջապէս Րումէքային ուղ-

ղախօսութիւն ու բացօյց շինէցին: Օսմանեան տէրութիւնն ալ՝ որ քանի տարիէ ի վեր իր ազգին կրթութիանը ո՛ւշ կը դնէ, ան ալ էտես որ Արպերէնի հետ խառն մութ տաճկերէնը յարմար չ'է՛ ժողովըրդին ուսուսման յառաջդիմութիանը. ուստի նոր ուղղախօսութիւն մը հանէց բուն Օսմանեան լեզուին, պարզէլով՝ զանի ըստ կարի. և միանգամայն ինչպիսի ոճը պարզէց ու զիւրացուց: Հիմա Եւրոպայի մէջ ժողովուրդ մը չը՝ կայ, որ խօսած լեզունովը չը գրէ ու չ'ունէ իրեն պէտք էղած բաները: Նոյնպէս կ'ընէն արեւելքի մէջ տիրող գլխաւոր երկ ազգերը՝ Օսմանցին ու Պարսիկը:

Մեր ազգն ալ՝ շատ ուշ ի վեր իր հին լեզուն՝ ան վսեմ գրաբարը կորուսած, կը զգար իր կրթութիանը համար ընդհանուրին հասկընալի ազգային լեզուի մը կարօտութիւնը: Աս լեզուն կար, բայց այնչափ խեղճ վիճակի մէջ էր, որ ո՛չ ոք կը համարձակէր լեզու ըսելու անոր: Սակայն տաս տաս—հինկ տարիէ ի վեր, ուսմանական անձէր՝ մասնաւոր ու պարբերական գրվածներով՝ զանի շատ շրտկէցին շրտկըտէցին. և ազգն իր հին կորուսած լեզուին տեղ՝ ունէ ասօր, թէ ո՛չ կատարեալ, գէ՛թ բաւական գործածէլի արդի

լեզու մը ազգային, 'զոր շատ մարդիկ իրարմէ քիչ տարբերութիամբ կը գրեն, ու հասարակութիւնը՝ քանի կ' երթայ, վարժ ու անուշ կերպով կը խօսէ:

Յայտնի է որ Պօլիսի մէջ գործածված արդի լեզուին վրայ է խօսքէրնիս. վասն զի Պօլսէցուն խօսած Հայերէնը՝ թէպէտեւ աւելի խառն է օտար բառերով քան ուրիշ տեղացոց Հայերէնը, սակայն արտասանութիան կողմէն աւելի յստակ աւելի մաքուր ըլլալէն զատ՝ երկու զխաւոր պատճառներ կը վաւերացնեն անոր նախապատուութիւնը: Նախ՝ Պօլսէցուն խօսածն անոր ազգին մեծագոյն մասին լեզուն կը սեպվի. զի ո՛չ ուրէք այնքան Հայերու բազմութիւն մէկ տեղ հաւըրված կը տեսվի՝ որպէս ի Պօլիս. և բազմութիան լեզուն է անտարակոյս ընդհանուրին ալ լեզուն: Երկրորդ՝ մայր-քաղքին լեզուն աւելի դիւրան կը տարածվի քան ո՛ր և է գաւառական բարբառ. վասն զի հոն յաճախելով գաւառականներու բազմութիւն, և հոն՝ արհեստական ու վաճառական զանազան գործողութիւններէ հարկադրված՝ երկար ատեն մնալով, երբ իրենց երկիրը դառնան, հետէրնին կը տանէն վերջապէս մայրքաղքին լեզուն ալ:

Աս արդի լեզուն՝ կը տեսնենք որ, ա-

մէն տեղ, օրէ օր փոփոխութիւններ կրէլու վրայ է. և աս՝ երկու պատճառով. մէյ մ'որ՝ կատարելութիւն ըստացած լեզու մը չ'է. երկրորդ որ՝ ուղղախօսութիւն ու բարոյց չ'ունէ: Ասոր համար՝ ամէն ուզած կերպովը կանոն և ուղղազրուութիւն կը սեփհականէ իրեն: Աս ետքի պատճառը՝ անանկ անպատեհութիւն մըն է, որ կըրնայ լեզուն շատ դժար ու անկանոն ընէլ ատենով. վասն զի ժամանակը հաստատութիւն կուտայ սովորութիան հնարած կերպ կերպ այլանդակ կիրառութիւններուն: Դարձեալ աս անպատեհութիւնը՝ նոյն լեզուով գրօղնէրուն մեծ դժարութիւն կը հանէ. վասն զի իւրաքանձիւր ոք չը՝ գիտնայ որ կանոնին հետեւիլ:

Արդ՝ աս արդի լեզուն կանոնաւորելու, և միանգամայն կատարելութիան շաւղին մէկ քայլ մ'առաջ մղելու մըտքով է այսինք՝ անոր աւելի պարզութիւն, ճշտութիւն, անուշութիւն, ուղղազրուութիանը դիւրութիւն, ու բառերուն համաօտութիւն տալու մըտքով է, որ ձեռք զարկինք՝ ուսմնական անձերու խորհրդակցութիամբ, ուղղախօսութիւն մը յօրինելու նոյն լեզուին: Աս Աշխատութիւնն ուշադրութիամբ աչքէ անցնօղը կը տեսնէ, որ սովորութիան տրած կանոններուն հետեւած էնք ամէն

ուր որ բանաւոր պատճառն ուրիշ կերպ մը չ'է՛ ցուցած. միայն զգուշութիամբ ու հասուն դատամամբ անոնցմէ ինչ ինչ ամփոփած ու միաձեւութիան տակ ձգած էնք: Մեր աշխատութիան ընթացքին մէջ՝ արդի լեզուն զբարառին ըստ կարի մօտէցնելու նպատակն ալ երբէ՛ք աչքէքնէս չը հեռացնելով, ուղիղ տեսութիւնն ու միաձեւութիւնը՝ մեզի երկու գլխաւոր դիտակէտներ էղած էն: Ինչ որ զբարառին մօտ երթալ կրնալով՝ ուղղութիան ու միաձեւութիան դէմ կը մեղընչէր, 'զանի հարկ կ'ըլլար գաւառական բարբառներու մէջ սովորոյթ էղած կերպին հետեցնելով համեմատել մեր կանոնին:

Գլխաւոր բան մը աս ուղղախօսութիան մէջ ան է, որ հոլովումը մէկի՛ վերածած էնք. որով ամէն բառ ընդհանրապէս միօրինակ կըրնար հոլովվիլ նոյն վերջաւորութիամբ. բաց քանի մը բառէր, որոնց արտուղութիւնն անկարելի երեւցած է մեզի կանոնաւորել: Աս բանս մեծ պարզութիւն ու շիւրջութիւն կը բերէ լեզուին. և ամէն բառ՝ մանաւանդ յատուկ անուններն իրենց ամբողջ զիւրէն ու ճիշտ հընչումը կը պահէն ամէն հոլովներու մէջ. որ խիստ հարկաւոր բան է:

Գարձեալ՝ բայերուն խոնարհման գաղտ-

նիքը լաւ մը դիտելէն ետեւ, բոլոր բայէրն իրեք յանգով, իրեք կանոնաւոր խոնարհման տակ ձգած էնք. ասով դուրսն ամէնեւին անկանոն բայ չը՛ մնայ: Գրաբառին չորրորդ լծորդութիւն ըսած ոչ յանգը մէկդի թողէցինք. ասոր ալ պատճառ՝ արդի լեզուին մէջ հազի՛ւ մէկ երկու բայ կը գտվէր ոչ յանգով, որոնք ո՛չ միայն չ'արժէն զատ խոնարհում, այլ մանաւանդ միւս յանգերուն մէկին տակ խիստ վայելուչ կըրնան երթալ. և ասով՝ չորրորդ յանգի մը աւելորդ բեռը կը վերնայ:

Աս երկ երեւելի բանէրէն զատ, այսինք՝ հոլովումին մէկի, և խոնարհումին եռ յանգի վերածելէն, խօսքի մասէրուն վրայ ալ մանր մունր փոփոխութիւններ ըրինք. և նոյն իսկ ուղղախօսական բառէրն ալ տեղ տեղ փոխէցինք: Սահմաններու մէջ՝ աւելի պ'արզ աւելի ճշգրիտ ըլլալու նայեցանք. ամէն բանին պատճառները՝ տղայական մըտքին տկարութիանը համեմատելով բացատրել ուզէցինք: Ուղղագրութիան բարեկարգութիւնը հարեւանցի՛ մը շօշափեցինք, սովորոյթը չ'ապստամբելու չափ. 'զոր եթէ զրականները մի՛տք առնէլ ուզէն, ու սովորութիւնն աս բանիս մէջ մէյ մը բանակա-

նութիան կո՛ղմն անցնի, կատարելութիան ու զիւրութիան մասին՝ ամբաւ օգուտնէ՛ր կը քաղէ արդի գրականութիւնը: Վերջապէս, տղայական միտքը՝ ուրիշ լեզունէքու ուսման՝ անզգալի կերպով մը պատրաստելու զիտաւորութեամբ, հայ ուղղախօսութիան մասնաւոր ըսկըզբունքնէրը՝ իմաստասիրական ուղղախօսութիան ընդհանուր ըսկըզբունքներո՛ւն վերածել ջանացինք, որչափ կարելի էր: Բայց աս ամէն բան չէ՛ թէ նորածեւութիան մը մըտքով, այլ լեզուին կանոնաւոր ընթացք մը տալու զիտաւորութիամբ. և ասոր համար՝ թէ ազգային և թէ այլազգի ուղղախօսութիւննէր ու բառցոյցնէր երկար խորհրդակցութիամբ քննելով:

Աս ուղղախօսութիւնը՝ երբ ըլլայ պիտի ելնէր. եթէ մէկը չը հանէր, մէկ ուրիշ մը հանելու էր. վասն զի լեզու մը՝ որով ազգ մը կը կարդայ, կը գրէ ու կը խօսի, անց ուղղախօսութիւն չ'ըլլայ: Ուղղախօսութիան կանոնի ելնիլուն աղէկութիւնը սա՛ է որ, քանի որ լեզուն չ'է խրթինցած այլևայլ կանոններով ու զարտուղութիւններով, 'գանի պարզութիան մէջ կը պահէ ուղղախօսութիւնը. և զեռ հաստատութիւն չ'առած քանի մ'անկանոն ձեւէր՝ կըրնայ սկիզբէն՝ վերցնել:

Աւելորդ է հոս երկան բարակ ցուցել թէ աս ուղղախօսութիւնը հարկ էր տալ արդի լեզուին: Երբ ան է և պիտի ըլլայ մեր ազգին ընդհանրական լեզուն, տարակոյս չը մնայ որ ուղղախօսութիւն մ'ալ պէ՛տք էր անոր: Ասորս ազգին մէջ երեւցած զրվածներուն հարիւրին հինկը հազիւ գրաբառ է. իսկ ինսուն—հինկը աշխարհիկ լեզուով է: Ան վսեմ ու հարուստ գրաբառն անկարելի՛ է ազգին ընդհանրութիանը լեզու ընէլ. թո՛ղ որ խորենացիի, Եղիշէի, Եղնիկի ան ըսքանչէլի լեզուն՝ ազգն ո՛չ երբէք խօսած պիտի ըլլայ. հապա կ'երեւայ որ ազգին մէջ ամէն ատեն ռամկական լեզու մը կայ էրած, ուսմականէն շատ տարբեր, զուցէ մեր արդի լեզուէն աւելի՛ մօտ գրաբառին: Նոյն իսկ իրարու մօտ ժամանակի հեղինակներուն զրվածներուն լեզուն անգամ՝ իրարու խիստ անման է: Եղիշէին ու Ղ. Փարպէցիին մէջ քիչ միջոց կայ. սակայն զրվածներուն լեզուին տարբերութիւնը՝ միջոցէն մեծ է: Ո՛ր Հայազգի չ'ուզէ զրաբառն իր ազգին բերնէն լսել. սակայն ո՛ր յառաջադէմ կ'ուզէ սուտ յուսով ինք 'զինք խաբել անկարելի բանին համար՝ ու անդին ընէլիք հարկաւոր բանը զանց ընէլ:

Աս մըտքով է ահա, որ մենք աս գործն ի լոյս ընծայեցինք. փափաքէլով որ գէթ գրաբառին տեղ, անոր զաւակը՝ արդի լեզուն՝ պատշաճ վայելչութիւններն ու կանոնաւորութիւնն ըստանալով ազգին լեզուն ըլլայ և ո՛չ թէ խառնաբընդոր: Եւ եթէ աս փափաքնիս կատարվի, ան աստիճաններն իր մօրմէն վար չը՛ կրնայ մնալ. և եթէ վսեմութիամբ չէ՛, անուշութիամբ ու պարզութիամբ կրնայ՝ զանի գերազանցել:

Արդի լեզուին վրայ աւելնալու կատարելութիւնները՝ մենք մըտքէրնիս չ՛էնք դրած որ մեր հանած աս ուղղախօսութիամբը պիտի լմըննան. հասպա ազգիս ուսմանական անձէրուն՝ արծակ ու չափով ընտիր ընտիր գրական աշխատութիւններովը. որոնք՝ կը յուսանք որ, աս ուղղախօսութիւնն ալ ներօղամտութիամբ կ'ընդունեն և անոր թերութիւնները՝ իրենց հմուտ դիտողութիւններովը լրացնելէն ետեւ, ձեռք կը զարնեն հարկաւոր գիրքէրու հեղինակութիւն՝ կանոնաւոր լեզուով մը:

Ազգիս մէջ կենդանացած յառաջդիմական ոգիէն կ'ըսպասէնք՝ զասի. և անոնցմէ՛ որ ազգին մտաւոր կրթութիւնը կը պարապին սիրով, ակնկալութիւննէ՛ր

ունենք: Պէ՛տք է որ ան բարերար անձէրը՝ մեր արդի գրականութիւնն ոճը մաքրէն, պարզէն ու ճշտէն. և յստակ գրութիամբ ու առողջ իմաստներով՝ նոր ընթացք մը պատրաստէն ազգային դաստիարակութիւնն, որի մէջ նոր ու յաջորդ ծնունդը կարէնայ գտնել իր մըտքին սընունդը»:

Բնական է որ կարելի չէ համամիտ ըլլալ Ռուսինեանի՝ նկատմամբ Պոլսոյ հայերէնի արտասանութեան մաքուր և յստակ ըլլալուն: Կ'ընդունինք սակայն իր միւս խօսքը թէ Պոլսոյ հայերէնը աւելի տարածուած է, որ սակայն վերագրելու չէ Պոլսոյ հայաշատութեան, այլ որովհետեւ գաւառը մամուլ չունէր, Պոլսոյ հայ մամուլը իր բնիկ լեզուովը կը տարածէր աշխարհաբարը:

Ռուսինեան կեսարացի մըն է, Էվքէրէ գիւղէն, ու կեսարացին միշտ գրէթէ գործի տէր անձնաւորութիւն մըն է. իր Ազգային Հանգանակորչիւն անունով գիրքը արդէն իսկ ապացոյց մըն է, որ կենսական հարցերու մէջ ինքը գիտնականօրէն ուսումնասիրած է տնտեսագիտական խընդիրները: Գրագիտական կամ պատմական ու հետազոտական շահեկանութիւն մը չունի այդ 148 միջադիր էջերէ կազմուած գիր-

ըր, բայց Սահմանադրութեան պայծառութեան և ազգային ընթացիկ կեանքի առաջնորդութեան համար վերին աստիճանի կոկիկ և օգտակար գործ մըն է և ատոր օգուտը յայտնած է քառասուն ստորագրութիւն կրող երեսփոխաններու հետեւեալ գրութիւնը ուղղուած՝ հեղինակին.

«Կոստանդնուպօլիս 6 Օգոստոս 1864.

Մեծապատիւ Էֆէնտի, փոխանորդ Ատենապետ ազգային Ընդհանուր ժողովին:

Կախընթաց Յուլիս 26ի նիստին մէջ տրոց խնդրին վրայ յանուն Գիււանին Չերըրած ատենախօսութիւնը լաւ մը չը կըրնալով լսել և հետեւաբար ըստ արժանւոյն ըմբռնել, անոր հրատարակումը խընդրած էինք Մասիս լրագրէն, որում հաղորդած էիք միայն մինչև ուր որ կարդացված էր Ընդհանուր ժողովին մէջ. շնորհակալ էնք այս մասին:

Յիշեալ լրագրին 648 թրուով յաւելւած թերթին մէջ ժամանակ ունեցանք ուշի ուշով կարդալ և սերտելու այն գեղեցիկ սկզբունքները, զոր տրոց վրայ կ'ընդունիք և զոր այնքան տրամաբանութեամբ բացատրած էք: Մենք կը մակարեբէնք թէ նոյն սկզբանց համաձայն տնօրինեալ էն նաև Չերըրած բաշխումն ու հաւաքումը, և թէ այնպիսի տնօրէնութիւն մը

ուղիղ տեսողաց ամենուն ալ հաճոյ և հաւանելի պիտի ըլլայ, չենք տարակուսիր: Մանաւանդ հաւաքման եղանակը՝ որոյ համար սաստիկ կերպով քանիցս անգամ պնդեցիք թէ տեղեկագրաց մէջ ևղակակի բառն անգամ չըկայ, և զոր մեծագոյն մասը՝ վէճն իսկոյն լմընցնելու անդիմադրելի կարեօք յափշտակեալ՝ չ'ուզեց Չենէ մտիկ ընել, այսօր մեր ամենուս ուշադրութիւնը կ'արթնցնէ:

Մէկ կողմէն այս նկատմունքը, միւս կողմէն տրոց խնդրին ստիպողականութիւնը՝ որ այսօր չէ նէ օր մը և զուցէ խիստ մօտ օրէքս ո՛չ թէ միայն երեսփոխանաց այլև հասարակութեան ընդհանուր ուշադրութիւնը պիտի զբաղէ, որոշեցին մեր միտքը փափաքանօք խնդրել Չենէ, որ նոյն ատենախօսութեան ամբողջը տպագրութեամբ 'ի լոյս ընծայելու բարեհաճիք, որպէս զի թէ մեր և թէ հասարակութեան միտքէրը պատրաստվին խնդրոյն յօգուտ Ազգին. ասով թէ զմեզ և թէ շատ մը ազգայիններ շնորհապարտ կ'ընէք Չեզի:

Հաւաստի գիտնալով թէ չ'էք կրնար դուք անտարբեր մնալ հասարակաց օգտին մնամք Չերըրէրը անձնանուէրք»:

Որուն կը պատասխանէ հեղինակը.

«Մեծապատիւ Երեսփոխանք,

Այնքան ազնիւ և շնորհալի նամակը՝ որով մեր ընդունած սկզբանց բարեկամ կը կանգնիք և 'զոր պատիւ մեծ կ'ընէք առ իս առաքելու, ընկալածիս պէս պարտ անձին համարեցայ՝ հասարակութեան ուշադրութեանը արժանաւոր հանդիսացնելու նախանձով, նախ խնդիրն ամբողջացրնելու աշխատիլ, 'զոր փորձեցի ըստ իմ կարեաց՝ քանի մը հարկաւոր յօգուածներ աւելցնելով և ատենախօսութիւնը տեղ տեղ ամփոփելով և տեղ տեղ ընդարձակելով, միշտ նոյն ոգւով և նոյն իմաստով որով պատիւ ունեցայ ներկայացնել 'զանի ժողովին:

Սոյն աշխատութենէն ետքը ի խորհրդակցութիւն հրաւիրեցի դիւանին միւս անդամքը, որոնք ուշի ուշով կարդալով և քննելով խնդրին ամեն մէկ կետը համաձայն գտին ընդունելի սկզբանց, և անոր բոլոր տրամադրութեանցը մէջ միացան ինծի հետ իրենց կատարեալ հաւանութեամբ: Բայց նկատելով թէ ֆաղաքական ժողովը իր երևակայած հաւաքման եղանակովը ստակ ժողովելու ելած է հասարակութենէն, և թէ՛ եթէ չը յաջողի, անյաջողութեան միակ պատճառանք սոյն աշխատութեան հրատարակումը կրնայ բռնել իբր թէ ասի ազդեցութիւն պիտի

կարենայ բանեցնել մտքէրու վրայ, խրատեցին ուշացնել առ ժամս սոյն հրատարակումը:

Թէպէտ զիջայ սոյն պատճառաբանութեան, և յուլիսի վերջէն մինչև դեկտեմբերի վերջէրը հինգ ամիսի չափ 'զանի յապաղել բանաւոր կարծեցի, որպէս զի սոյն միջոցին մէջ հաւաքման ուզված փորձառութիւնը կարենան ընել որոնք որ կը ցանկան՝ առանց ինչ ազդեցութեան:

Բայց մէկ կողմէն սոյն հնգամսեայ միջոցին մէջ դեռ ամենևին արդեան մը երևան եկած չ'ըլլալը, և միւս կողմէն երեսփոխանաց ոմանց զրութեամբ և ոմանց բերնով ըրած ստիպանքը մեզի սա հետեալ խորհրդածութիւնը ազդեցին. Եթէ մեր առաջարկութեանց մէջ յիրաւի ազգօգուտ ճշմարտութիւններ կ'ենթադրվին որք պիտի կարենան գուցէ բարեմասնապէս ազդել մտքէրու վրայ, միթէ ազգասիրութեան դէմ մեղանչած չ'էնք ըլլար 'զայն ազդեցութիւնը խափանելով՝ ֆաղաքական կամ որ և է ժողովի կամ անձի ակնածութեամբ: Իսկ եթէ չը կան այնպիսի ճշմարտութիւնք, մենք ամենևին մղտքերնէս չ'էնք անցներ անոնց անճահութեանը վրայ կարևորութեան շուք ձգել ուզել որ տպագրութեան լուսոյն առջև կը

փարատի: Եւ որովհետև ամեն երեսփոխանը կարծիքնին յայտնեցին այս խնդրին վրայ, և Ընդհանուր ժողովը մերինը միայն չ'ուզէր լսել ու դատել, թող մերինն ալ Ազգը դատէ:

Սոյն խորհրդածութիւններէ խրախուսեալ, և մեր այսքան յապաղմանը վրայ ստրջալով, կը փութամ կատարել այսօր Չեր ազնիւ փափաքը՝ ընծայելով այս դոյզն աշխատութիւնը թէ՛ բարեսէր Հասարակութեան որ 'զանի իր քննադատութեամբը պիտի պատէ, և թէ՛ մեզի գրելու պատիւն ընող Երեսփոխանացո՛ւ իբրև հրապարակաւ պատասխան և իբրև հանդիսաւոր վկայութիւն մեր շնորհապարտ զգացմանց»:

Ռուսիսեան Ազգային Սահմանադրութեան հեղինակներէն մէկն ըլլալով, Չերմապէս կ'աշխատէր անոր յաջողութեան համար, որով անհրաժեշտ կարևոր էր իր վերոյիշեալ երկասիրութեան հրատարակութիւնը:

Իբրև բժիշկ՝ իր կենսագրականը ունի անբանասէր Տօքտ. Թորգոմեանի շնորհիւ:

Իր անունը անմահ կը մնայ քերականական նորագիւտ կանոններովը. նպատակն էր ներդաշնակութիւն մը տալ հասարակութեան զործածած բարբառին՝ թուրքահայ աշխարհաբարին:

Դժբաղդաբար անտիպ են մնացած իր բանաստեղծութիւնները. քերթողական թարգմանութիւններովը ցոյց տուած է որ ինքը տէր է ճաշակի, թէ սիրած է գրականութիւնը և գեղեցկագիտութիւնը:

Ազգային պատմութեան մէջ անմահ կը մնայ՝ ազգային ժողովներու մէջ ատենապետի փայլուն պաշտօնավարութիւններովը:

Կղերը և պահպանողականները զինքը չի սիրեցին զի 1854ի իր հրատարակած «Տարեցոյցով» ատելի էր եղած:

Կը վախճանէր Պոլիս 1876ի նոյեմբեր 28ին:

Աղբատ լքեալ վախճան մը կ'ունենար:



ԴՈՒՐԵԱՆ ՊԵՏՐՈՍ

Դուրեանի քնարը յաւիտենական կեանք մ'ունեցաւ, երիտասարդներ անմահացուցին զինքը: Իր երգը տաք անուրջներու քներգն եղաւ, ու պարմանները ուզեցին զինովնալ իր ձայնին հմայքով:

Դուրեան շփացուցած է սիրոյ զիցանուշը. Սէրը բիւրեղացած գեղեցկութեամբ, իր իղձերուն տաճարին մէջ կուտք մ'ունեցեր է, որուն առջև Դուրեան քաշկուտեց իր ծաղիկ կեանքը. որուն առջև խամբեցաւ կեանքին բուրաստանը: Եւ իրօք իր խառնուածքը ծաղիկներու քաղցրարոյր փունջ մըն է եղած. քիչ զրեր, քիչ ապրեցաւ, բայց շատ ապրելու պայմանով աշխատեցաւ:

Վշտին ու համբոյրին երգիչն եղաւ, բանաստեղծներ կան որ զրած են, միայն

այն թեւազրուութեամբ որ իրենց գրերուն վրայ թափին տարփենիկներուն նայուածքին անուշութիւնը:

Մուսաները շատ երկար բռնեցին Դուրեանին սուզը. ինքն է անտարակոյս քնաբերգութեան ամէնէն անգուլթ հունձքը, և ինքը՝ նոր հարսերու շիրմին այցելու թիթեռնիկը:

Գերեզմանէն՝ սիրահարը, խարտիշագեղ կոյսին կ'իմացնէ թէ տերեւներուն թափելուն, երբ գաս փնտռելու գերեզմանին մէջ իմ խոչս, անկիւն քը զայն պիտի գտնես, և ծաղիկներու հոյլեր անոր չորսղին ծլած: Դեղձան վարսերուդ համար՝ անկէ քաղէ ծաղիկներ, որոնք սրտէս ծլեր են. անոնք այն երգերն են զոր չեմ գրած, բայց մտածեր. սիրոյ խօսքեր զոր քեզ չեմ ըսած: Այսպէս երգած է Սթէքքէթիի քնարը: Ու Դուրեանի յիշատակը համանման ողբերգ մը չէ: Ինչ կը նշանակէր իր այս խօսքը.

«Կոյս մ'է նաեւ գերեզման...»

Կայ խորունկ սիրտ մ'անոր նման...»

Ու այդ խորունկ սրտին մէջ՝ թաղուած է Դուրեանի ատրուշան խանդը. անոր հողվարքին վրայ կոյսը թող ցանէ ծաղկի սերմեր, և Դուրեանի մեռած հառաչներէն՝

ան պիտի անըջէ աննման ծլող հարսնուկներ: Դուրեանի կոյսը թող ժլատ չըլլայ, թող այցելէ գերեզման, բանաստեղծը պիտի գոհանայ, պիտի մխիթարուի... պիտի հառաչէ,

«Իցիւ թ'անոր գերեզմանին քարն լինիմ,
Եւ դու թօշնած գաս շնջել շուրջս... արտասուել...»

Քեզ հըպելու համար հարկ լուր գոլ շիրմա...»

Աշուղային անծայրածիր սիրոյ խանդին մէջ կը լողայ, փոյթ է կարծես հոն ծովամոյն ըլլալը. բաւական է որ սերը ըլլայ ծովը, ս'վ կարող է սանձահարել սիրոյ ճախրը քնար սրտերու. մանաւանդ երբ անսովոր տաղանդ մըն է որ կը յուզէ սիրոյ քնարին լարերը: Դուրեան ամէն քնքուշութիւն կ'ուզէ հագնիլ, որպէս զի յաջողի գրաւել իր սիրուհւոյն սիրտը. և ինչ յուզիչ իղձեր են ասոնք.

«Պարտէզդ իցիւ թէ փթթէի վարդ լացող.
Եւ երբ գայիր այգուն շաղին ժպտով պերճ՝
Գոյնով ներկել այտերդ, թափել գոգդ իմ
ցօղ

Վերջին շնչիկս ի գերկդ առնէր ելեւէջ:»

Կ'ուզէ ըլլալ առու մը վճիտ, ուր ցոլար հուրիին ժպիտը: Կ'ուզէ ըլլալ ճառագայթ և շողալ տարփանոյշի այտերուն վրայ ու անուշաբոյր մագերուն մէջ մաբիւ. կ'ուզէ ըլլալ հեւացող հով մ'անուշիկ և սրբել սիրուհւոյն արցունքները: Եւ միայն Գուրեանը չէ որ կոյսին գեղէն կը շառագունի և կ'այլայլի. մանիշակը գլխիկոր սուգ կը բռնէ, վարդը կը շիկնի, շուշանը կը տժգունի.

«Եւ դեռ ըսեմ... օր մ'երկին
Սմայտեցաւ... էր արդեօք...
Երբոր կ'ընէր նէ աղօթք
Վերն յառած աչքն ու հոգին:»

Փափուկ գոյներով դաշտանկար մը կը ստեղծէ. կ'ըլլայ սրնգահար սիրուհւոյն՝ որ թաւուտքի մը խորը՝ ընկողմանած է, նուաղկոտ ամրան սիւզին պէս՝ կը հեւայ, շուշան մատներով ծաղիկ կը փետտէ. հիացած է Գուրեան, կ'ըսէ անոր.

«Ըրիւ աչացդ մէկ կայծին
Եւ մէկ վանկիդ զիս գերին,
Շըղթայեցիր զիս, անգութ,
Նշոյլներովն վեհ հոգւոյդ:»

Եւ ինչ յուսահատ, և սրտաբեկ այրած կուրծքով կ'երգէ այս տողերը.

«Երբ կը փախչիմ ժայռ ու սառ՝
Ձախջախել սիրտս եւ քընար,
Հովին մէջէն միշտ մընչես՝
Թէ բնաւ զիս սիրած չես:»

Ու այս պարագային՝ սիրով ու սրտով կը գրկէ ցուրտ հողը: Պ. Սըշակ Չօպանեանի անսահման պոռնիկը չէ գերեզմանը, այլ կոյս մը, խորունկ սիրտ մը անման:

Գուրեանի յուզուած սիրտը իր քերթուածներուն մէջ թափեր է զգացմունքի, վշտի կրակը, ըստ իս՝ շանթերն ալ այդ սրտէն կրնան կրակ ծծել: Խեղճ Գուրեան, կարծես քարէ քար կը զարնէ իր գլուխը. «բոյլ մը նայուածք՝ փունջ մը ժպիտ՝ քուրայ մը խօսք» դիւթեր են զինքը. իր ճակատագրին սեւ զիծը զարհուրելի է, ինչ դարման իր ցաւերուն, թող ինքը խօսի ջինջ վտակին հետ, սիրել զեփիւօր, առտուան շաղը, իրիկուան բալը, գրկել քնարը. սիրուհին յուշիկ անոր կը մօտենայ ու կ'ըսէ. «Քնարդ է ցուրտ սիրտ, և սէրդ՝ ցաւ». բանաստեղծը կը զմայլի անոր անապակ սրտին, բոյլ մը նայուածքին, փունջ մը ժպիտին: Դիւթուած է:

Բլրակներով գրկուած լճակը՝ ուր ճերմակ կարապները կը լողան, տարփատեն չիկ պարմանիկն և օրիորդ՝ երբ երգն ի բերան կը թիավարեն. ուռենիներ կը քած ճիւղերով կարծես մեռելներու սուգը կը թափեն ջրին մէջ. ու մարմանդի մը պուրակի մէջ, կոյս մը՝ ճերմակ աղանի մը արինը կը ձօնէ շիրմին, ուր կը հանգչի անձնասպան սիրահարը: Այս պատկեր է, զգացմունքի կաթիլ մը, պուտ մը բնական գեղեցկութիւն. հոս կ'ընդօրինակեմ Գուրեանի լճակը, ուր կը գտնես զգացմունքի ծով, անբովանդակելի գեղեցկութիւն.

«Ինչո՞ւ ասլած ես, լըճակ.
Ու չեն խայտար քո ալեակք,
Միթէ հայելոյդ մէջ անձկաւ
Գեղունի՞ մը հայեցաւ:

Եւ կամ միթէ կ'գմայլի՞ն
Ալեակքդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ
Որք նրմանին փըրփուրիդ:

Մեղամաղձոտ լըճակ իմ,
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւել, լոել ու խոկալ:

Ո՛րքան ունիս դու ալի՛,
Ճակատս անքան խոկ ունի,
Ո՛րքան ունիս դու փըրփուր,
Սիրտս այնքան խոց ունի բիւր:

Այլ եթէ գողդ ալ թափին
Բոյլքն աստեղաց երկընքին,
Նըմանիլ չ'ես կըրնար դուն
Հոգւոյս՝ որ է բոց անհոն:

Հող աստղեր չ'են մեռնիր,
Ծաղիկները հող չ'են թոռմիր,
Ամպերըն չ'են թըրջիր հող,
Երբ խաղաղ էք դու եւ օդ:

Լըճակ, դու ես թագուհիս,
Ձի թ'հովէ մ'ալ խորշումիս,
Դարձեալ խորքիդ մէջ խորով
Ձիս կը պահես զողդալով:

Շատերը զիս մերժեցին,
«Քրնար մ'ունի սոսկ» — ըսին.
Մին՝ «Դողդջ է, գոյն չունի» —
Միւսն ալ ըսաւ. — «Կը մեռնի»:»

Ոչ ոք ըսաւ. — «Հէք տղայ,
Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,
Թերեւս ըլլայ գեղանի,
Թէ որ սիրեմ, չը մեռնի:»

Ոչ ոք ըսաւ, — « Սա տըղին
Պատուենք սիրտը տրամագին,
Նայինք ինչեր գրուած կան... »
— Հոն հրդեհ կայ, ոչ մատեան:

Հոն կայ մոխիր... յիշատակ...
Ալեակըդ յուզեն թող, լըճակ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Յուսահատ մը նայեցաւ...: » .

Պահ մը երազներով մխիթարուեցաւ.
վասն զի համբոյր մը առաւ ներանէ, երբ
հորիզոնին վերեւ կարմիր շողերը կը մա-
րէին. անոր կուրծքին վրայ իր ձեռքը
զգաց թէ « սիրոյ երկին մ'որոտար », ան-
հուն համբոյրի մը պէս անոր գիրկը կը
թօշնի դալկահար, ան զինքը իր քովը
դալարեայ գորգի վրայ կը նստեցնէ. խօ-
սիլ սիրուհւոյն հետ, իրեն համար հատ-
նիլ է.

« Նէ թողուց որ վարսքն ազատ
Սիւզը դէպ յիս բերելով
Միշտ հովահրէ բըռնկած
Ճակատս զով բոյրերով: »

Բայց բանաստեղծին այդ ոսկեզօծ ժա-
մը կը սահի, կը թռի՝ հալածական ճա-

կատագրի սեւ երկաթէ ձեռքերէն: Իրարու
սէր կ'ուխտեն, և այդ երդումէն աստղերը
կը դողդղան ահարկու: Բայց կ'երագէն
թէ ինչ է դրժումը: Դուրեանը ուզած է
յաւէտ պաշտել իր սիրուհին, սիրել ա-
նոր սեւ աչերուն աստղերը, իր փափա-
քներն շատ են. երգած է.

« Ես ուզեցի միշտ քովն ըլլալ,
Մտիկ ընել թընդին սրտին,
Շնչել՝ իրմեւ ներա հոգին,
Եւ շօշափել լոկ ձիւնափայլ
Ծոծրակին վրայ ծալ ծալ
Թափող վարսից ալեակքն ծըփին:
Ովկէան մը տըրտունջ լսեցի.
« Զիս կը նեղես » հըծծեց ինծի: »

Սիրուհին երես դարձուցած է, գոչեր
է անոր « Սիրել չես կրնար զիս ». այդ
սաստերու ամպրոպ մըն է հոգեցունց. ու
կը հեռանայ սիրուհին.

« Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,
Մոխիր դարձան երազներս յիս,
Ճակատագիրս խնձղաց ի վեր.
Խորը մը կար, որ զիս չէր ծաղրեր
Այն լուռ փոսն էր գերեզմանիս...: »

Փունջ մը կընճիտ՝ բոյլ մը կայծակ՝
Դըժոխք մ'անէժք խոցեց հոգեակս:»

Ինչ անոյշ սփոփանքի խորշն է այն.
գերեզմանին փոսը, մեր երկրորդ մայրը,
յաւիտենական մայրը ուր կը գտնենք մեր
վշտերուն անկողինը, ու որքան հանգիստ
անկողին: Լամարդին իրաւունք ունէր գե-
րեզմանը իր հայրը անուանել, և իր մար-
մինը պատող որդերը՝ եղբայրներ, քոյրեր:
Քիչ մ'ալ երագենք Վոսփորի չքնաղ
մէկ պատկերը. Դուրեան իր բարեկամ
Վարդան Լուսֆեանի գերեզմանին առջև
կը հեծէ, անոր հոգիին կը հարցնէ.

«Ո՛հ, կը յիշես, Չամլըճայի
Սարը նըստած լուս մըխայինք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սեւ հովանոցը վըշտահարի:»

Ասոնք չէին խօսեր, կը կարծէին թէ
խօսքը իրենց հոգւոյն անհունութիւնը կը
պղծէ, զերթ երկու տոգոյն բոցեր իրարու
մէջ անոնք կ'այրէին. սեւ կը ծծէին, սեւ
անհատնում, իրենց հոգիներն նոճիներու
թուխ թիթեռնիկներ էին: Ինչ սոսկալի
է՛ սրտաբեկ սեւ մըմունջներու այս փունջը.



Պետրոս Դուրեան:

« Անյուսուլթին գերեզմանի
Այդ սեւ կաթը շատ ըմպեցինք,
Քեզ յափրեցուց այդ ըմպելիք,
Եղար երկնից արժգոյն որդի: »

Կը հարցնէ իր անմոռանալի մեռած
բարեկամին.

« Երջանիկ ես հող թէ թըշուառ,
Զուարթնոյ թեւով լուր մ'ինձ ղըրկէ.
Ա՛հ, այս աշխարհս միշտ տաղտուկ է...
Յաւերու մեծ մայր մ'է աշխարհ: »

Ու եթէ վարդան պատասխանէ թէ հոն
իր ուզածները կան, բանաստեղծը յօժար
է թօթվել հոգևոյն աղտոտ ձորձը, և հող
հագնիլ, հող սգաւոր:

Մահը միշտ աչքին առջեւն է, գերեզ-
մանը իրեն համար պատրաստ փոս մ'ու-
նի. թեւերը ջախջախ աղանիւի մը պէս,
դէպ ի շիրիմ կը դիմէ, բայց մեռնիլ, ան
սոսկալի է, սէրը իր մէջ դեռ մեռած չէ,
ու թէեւ սեւ նոճիններու մէջ հառաչ մըն
է, թափելու մօտ աշնան մէկ տերեւ, բայց
դեռ կ'ուզէ ապրիլ.

« Ո՛հ, կայծ տըւէք ինձ, կայծ տըւէք,
ապրիմ... »

Ինչ, երազէ վերջ գըրկել ցուրտ շիրիմ...
Այս ճակատագիր ինչ սեւ է Աստուած,
Արդեօք դամբանի մրուրո՞վն է գըծուած...
Ո՛հ, տըւէք հոգևոյս կրակի մը կաթիլ,
Սիրե՛լ կ'ուզեմ դեռ ւ'ապրիլ ու ապրիլ՝
Երկնքի աստղե՛ր, հոգևոյս մէջ ընկէ՛ք,
Կայծ տըւէք, կեանք ձեր սիրահարին հէք:
Գարունն ո՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար,
Ո՛չ երկնի շողերն ժրպիտ մ'ինձ չ'են տար.
Գիշերն միշտ դագաղս, աստղերը ջահեր,
Լուսինն յար կու լայ խուզարկէ վըճեր,
Կ'ըլլան մարդիկ որ լացող մը չունին,
Անոր համար է որ նա ղըբաւ այդ լուսին,
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան,
Նախ կեանքը, վերջը լացող մ'իր վըրան...
Ի գո՛ւր թաւուտքներ լըռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերեւը չառին երէք շունչ,
Որ չը խուզեն երազըս վըսեմ,
Թոյլ տուին որ միշտ գնէ երազեմ,
Եւ ի գո՛ւր ծաղկունք վըթիթներ գարնան՝
Միշտ խընկարկեցին խոկմանցըս խորան...
Ո՛հ, նոքա ամէնքը զիս ծաղրեր են...
Աստուծոյ ծաղրե՛ ե աշխարհ ալ արդե՛ն... »

Իր Տրտունչը Աստուծոյ դէմ քնարին
դառն հառաչն է, իրմէ յափշտակուած է
ճակտին վարդը, աչքին բոցը, շրթանց
թրթուսները, հոգևոյն թռիչք. անպարա-

գրելի անէծք մը կը խորհի ըլլալ. զԱստուած իրեն մասին ռիսերիմ կը նկատէ, բայց օր մը վերջը զղջումի երգը կը վու՛վուէ. երէկ պաղ քրտանց մէջ սեւ մրափ մ'էր քաշած, թօշնած զոյգ մը վարդեր իր այտերուն վրայ կ'այրէին, ճակտին վրայ մեռելի դալկութիւն մը կը պլպլար, մահու թռիչ մ'ունէր, կը լսէ մօրը հեծեծումը, բանալով խոնջած աչուրները, մօրը արտօսըն կը նշմարէ, ճշմարիտ գորովի մարգարիտներ են այդ կայլակները: Եւ ինչո՞ւ մայրը անհուն ցաւ մ'ունի, ապաշաւի քնարը կը լսեցնէ:

« Այն սեւ ցաւը ե՛ս էի... »

Ա՛հ, գըլուխըս փոթորկեց,

Այս սեւ հեղեղն տըւի դուրս.

Ո՛հ, ներէ՛ ինձ, Աստուած իմ,

Մօրըս արտօսըր տեսի... »

Փափուկ սիրտ, փափուկ քնար, խոռովքի ժամուն իր ահաւոր անէծքը կը բարձրանար դէպ ի երկինք, զայն վար կը քաշէր իր զղջական աղօթքով:

Դուրեան կը տեսնենք որ անասանելի սէր մ'ունի, թէեւ յուսախաբութիւնը իր մէջ գերեզմանական ձայն մ'ունի, սակայն սէրը իր մէջ այնքան բռնկած է, որ կա-

րող չէ յուսահատութեան թոյնը խապառ գինքը ջլատելու, մինչեւ գերեզման իր սիրունւոյն սէրը կ'երգէ:

*
* *

Մեր մէջ ընդհանուր գաղափար մըն էր դարձած, որ բանաստեղծը, անհրաժեշտ թատերագիր ալ պիտի ըլլար. այս գաղափարին հաւատարիմ մնացեր են Պէշիկ-թաշլեան, Հէքիմեան, Թէրգեան և նաև Դուրեան: Բայց գեղեցկագիտական այդ երկու ուրոյն ճիւղերու մէջ համահաւասար յաջողութիւն գտնելը դիւրին չէր: Դուրեան իբր թատերագիր շատ երկիրոյցած է. յառաջաբանին մէջ կ'ըսէ. « Մէկ քանի տարիէ ի վեր յղացած երկոցս մէջ սոյն ժամանակակից թատերախաղն ահա կը համարձակիմ ի լոյս ընծայել իբր առաջին պտուղ իմ ճգանց զոր կ'ուզեմ նուիրել Ազգիս: Սոյն հրատարակումն ինձ համար նոր է. ուստի զողողալով կ'իջնեմ յասպարէզ առաջնորդող աստիճանները, ներողամիտ ժպիտներ ակնկալելով: » Այս համեստ մտքով հրատակած է իր Ղուկասոփի արկածներուն թատերագրութիւնը: Սիրահարներ՝ վարդուհի և Եղուարդ աղբատութեան պատճառով չեն կրնար ի-

րենց փափաքին հասնիլ, և անձնասպան կ'ըլլան: Աղքատութիւնը անբարոյական վատ միջոցներ ցոյց տուած է. Ղուկասոֆ յիսուն ոսկիի համար՝ իր դուստրը Վարդուհին Նահապետոֆի հաճոյքներուն կը մատնէ: Յիսուն ոսկին չի փրկեր զինքը. սապատող Մակարը՝ որ գործակատար է Նահապետոֆի՝ կեղծ ոսկի յանձնած է սնանկացած աղքատ Ղուկասոֆին: Դուրեան վիպասանական հանգոյցներ կը գործածէ այդ ողբերգու տեսարաններուն մէջ: Թատրոնին վերջերը կը լուծուի ամէնէն մեծ հանգոյցը. Նահապետոֆը՝ Ղուկասոֆի ապօրէն զաւակն է, որով Վարդուհին՝ աւնոր քոյրն է: Բնտանեկան աղտոտ տեսարաններ բացուած են: Ու Վարդուհին իր բուն սիրական բանաստեղծ Եղուարդին հետ կարգուելու համար, հասարակ կնկան դեր մը կատարելը՝ անբնական ու անբարոյական չի գտներ. միայն հայրն է որ չարաչար խղճի խայթ կը զգայ, թէ ինչո՞ւ աղքատութեան պատճառաւ կը ստիպուի արատաւորել իր ազգկան կուսուութիւնը:

Յանդուգն դատաստան չի համարուիր անշուշտ, եթէ ըսեմ, թէ բանաստեղծ սիրահարը, աղօտ պատկերն է Դուրեանին: Ղուկասոֆի ազգկան՝ Վարդուհին սիրա-

հարեալ է բանաստեղծ Եղուարդը, բայց Ղուկասոֆ կ'իմացնէ Եղուարդին որ բանաստեղծութիւնը աղքատութեան դարման չէ: Ղուկասոֆ ժամանակին ուսահայ նշանաւոր հարուստներէն էր, սնանկանալուն ալ կը կոչուի թովմաս. այդ թովմասը Եղուարդին կ'ըսէ.

« Եղուարդ, Ղուկասոֆի տպարանը կը վայլէր կարդալ, զրել, նուագել և զբօսնուլ... բայց թովմասի հիւղը ատոնք չընդունիր, եթէ չես ուզեր իւղոտ օձիքով, մաշած ու պատուած հագուստ հագնիլ, ում կեզօծ թշուառ մը, ինծի պէս մուրացկան մ'ըլլալ, սա տարբերութեամբ որ եթէ ես պղնձէ թաս մը ունիմ, դու քնար մը պիտի ունենաս... Վերջապէս եթէ չես ուզեր բացարձակ մուրացկան մ'ըլլալ, կրակը նետէ այդ մրոտած թուղթերը, որոց վրայ ընդունայն քիրտն ու լոյս կը թափես... Տաղերգութեանց մէջ սիրուհւոյդ առջեւ խոստմունքներ, անձնուրացութիւններ կը շարես... Չախշախէ այդ մուրացկանութեան նպաստող քնարը: »

Եւ Եղուարդ կը պատասխանէ.

« Բայց օր մը անշուշտ անոր յարգը կը ճաչցուի »:

Թովմաս կ'ըսէ.

« Այո՛, գուցէ անունդ ոսկեզօծ պիտի

յիշատակուի խեղճ ու անշուք մեռնելէ վերջ, յօրանջող քահանաներ՝ գերեզմաննոցին ճամբուն վրայ գտնուած փոսի մը մէջ քեզ նետելէ ետքը, երեսկախ ու դժգոհ մեռելաթաղներ՝ քանի մը թի ցուրտ հող վրադ թափելէ և տարիներ գերեզմանիդ հողակոյտը հարթ և անյայտ ընելէ վերջը: Մարդն է ապրողը թէ փտած ոսկորը, սիրան է զգացողը թէ գերեզմանը... կը հասկնաս... գնահատուի, գործաւոր եղիր, բայց երբէք մի փափաքիր հայ մատենագիր ըլլալ:»

Քնարի ու մատենագրութեան վրայ ամէն ակնարկութիւն վերագրելի է Գուրեհանին: Բանաստեղծը ըմբռնած էր որ օր մը անշուշտ իր քնարին յարգը կը ճանչցուի. կը տեսնէր որ քնարը զինքը ազրատ կը պահէր. այս ամէնը իրեն շատ ծանօթ էր:

Նիւթը բոլորովին աննպատակ, անմարս է այն ատենուան հայ մտքին, հայ ընտանեկան կեանքին և կարծես բոլորովին բռնազրօս բան մը. ինչ նպատակով կը գրէ իր այս թատրոնը. կ'ըսէ յառաջաբանին մէջ. «Չայս երկասիրելով՝ իմ մասնաւոր դիտումն է իմ աննշանութեամբ օրինակ ըլլալ ուրիշ թատերագրաց՝ որ աւելի արդի ընտանեկան անցքերը պարունակող բարոյալից թատերախաղեր յօր-

նելու աշխատին, որով աւելի օգուտ կըրնան ընծայել Հայ ժողովուրդին:» Նպատակը բարի է. բայց իր այս թատրոնէն հասարակութիւնը բարիք մը չէր քաղեր. ընդհանուր հոգեբանութիւնը բացարձակապէս թոյլ է. ոճիւրներ, խաբերայութիւն, հասարակ գոեհիկ անբարոյական միջոցներ գնահատելի չեն. վատ նպատակ մը, որ թէեւ հեղինակին մտքին մէջ բարի է: Գուրեհանի է երկու սիրահարներու անկեղծօրէն զիրար սիրելին. բայց ինչ հարկ անձնասպանութեան զիմել, քանի որ էական կամ ստիպողական պատճառ մը չկայ: Աղջիկը ապօրէն զաւակ մը ունենալու սուկումէն՝ կը մղուի անձնասպանութեան և իր Եղուարդը պարզ իրմէ անբաժան ըլլալու համար, երկուքը միասին կ'որոշեն թոյն խմել. «ապրիլն այն է, երբ մահուան դալուկն զգեցած՝ երկու զուարթադէմ դիակ զիրկընդխառն կ'իջնեն այն լռիկ փոսը...» և աղջկան համար քաղցր էր բանաստեղծ մը սիրել և հետը մեռնիլ: Եւ այս խենթ փափաքներն կը կատարեն: Բայց չէ՞ որ սիրահարութիւնը կոյր է. նկատի չառնէր, ո՞ր և է բարոյական պահանջ. մարդկային օրէնքն ալ երբեմն ոտնակոխ կ'ըլլայ. սիրահարական տոամներն անգին չեն նաև միջազգային հանճարեղ

Թատերագիրներու ողբերգութեանց մէջ: Ժամանակին սովորութեան հետեւած է նաեւ մեր բանաստեղծ Գուրեանը: Սպանութիւն, թունաւորում, ժամանակին կարծես ամէնէն կարեւոր պահանջն էր դարձած. թատրոն մը առանց այդ հրէշային ոճիրներուն՝ հետաքրքրական ըլլալու համայքը կը կորսնցնէր: Գուրեան ուզած է զգուել այդ համայքը:

*
* *

Երջանկութիւնը Սիրոյ մէջ է. Գուրեան կը կարծէ թէ Սիրով կ'երջանկանանայ. «Երջանիկ է այն ծաղիկը որ քու շրթանցդ վրայ կը թառամի, երջանիկ է այն հողմիկը, որ քու ճակատդ կը շոյէ, երջանիկ է այն ճառագայթը որ քու մազերուդ մէջ կը նուաղի, և ամէնէն աւելի երջանիկ է այն որ զքեզ կը սիրէ ի բոլոր սրտէ:» Երիտասարդ Վարդին համոզումն է այն, իր սիրուհին Շուշան կը պատասխանէ. «Ահ, յիրաւի ինչ քաղցր է այն սէրը, Վարդ, սէրը կենաց գարունն է որ մեր սրտին մէջ կը փթթի, և համբոյրը անոր գեփուսն է որ մեր սիրաբորբոք սրտերը կը զովացնէ... Տես, Վարդ, բոլոր բնութիւնը սիրով կը խայտայ... Լուսինը սէր

կը ցօղէ, ծաղիկը սէր կը բուրէ, հողմիկը սէր կը շնչէ, թռչունը սէր կը գեղգեղէ, տերեւը սէր կը սօսափէ, առուակը սէր կը մրմնջէ, ո՛հ, ամէն ինչ սէր... սէր...»: Եւ Գուրեան յաւիտենականօրէն սէր քարոզած է, թէ՛ քերթուածներով և թէ՛ թատերագրութիւններով: Միշտ և ամէն բանէ վեր սէր և դարձեալ սէր: Շուշանին սէրը շատերը զլիսէ հանած է, և այդ սիրոյ շատերը զոհ են եղած. մէկն ալ Սահակն է, աւագակ Գէորգին որդին. իր օրհասական ժամերուն կը մրմնջէ. «Աներեւոյթ ձեռք մը գերեզման կը ցուցնէ ինձ անդադար, զոր սէրը իր արիւնլուայ մագիլներովը ոտքերուս տակ փորեց. հոն պիտի իջնեմ ես, Շուշան, վասն զի չափազանց սիրեցի զքեզ... Գերեզման, թո՛ղ յատակդ խոր ըլլայ, որպէս զի գիշերուան լուսնի մէջ աշխարհիս երեսէն սլացող սիրոյ մրմունջը չըլլայ որ գերեզմանիս թափանցէ և իմ վշտահար ստուերս իր խոր բունէն արթնցնելով՝ աչքերէն արցունքի սառած կաթիլներ հոսեցնէ... Ո՛վ Սէր, դահլիճ երիտասարդաց, դու սրեցիր տապալդ...»: Ու այդ տապալին անգութ հարուածներուն տակ կը փշրին Գուրեանի «Վարդ և Շուշան» թատերագրութեան դերակատարները: Ու Գուրեանն ալ այդ տապալի

հարուածէն կրցաւ ազատիլ: Սիրոյ մատաղ մըն ալ ինքը: Իր «Վարդ և Շուշան»ը սիրային զաղափարներով կատարեալ վարդ և շուշան մ'են, սակայն կը բուրէ ոճրագործութիւն, աւագակութիւն, կը տեսնես սպանութեան երկայն շարք մը որ սպանդանոցի պզգալի տեսարան մը կը յիշեցնէ: Իր օրերուն պահանջն էր հանդիսականներուն ուշադրութիւնը սիրային դէպքերով գրաւել. և անվերջ խողխողումներով գրգռել երեւակայութիւնը: Հանեցէք այդ թատերգութենէն մէկ քանի սիրային բացատրութիւններ, կը մնայ գեղարուեստական տգեղ կմախք մը:

Դուրեանին վրայ գրող Պ. Արշակ Չօպանեանը, բանաստեղծին թատերագրական գործերը անաչափօրէն կը քննադատէ. գրած է. «Երբ մարդ Շէքսպիրի հոգեբանութիւնը, Շիլլէրի քնարերգութիւնը, Հիւկոյի թոփշը չունի, կատարելապէս ծաղրելի բան մը կ'արտադրէ այդ արուեստին կապկորէն հետեւելով: Եւ Դուրեանի թատերգութիւնները այդպէս են: Նիւթը տղայական կերպով ընտրուած և աւելի տղայական կերպով հիւսուած, առանց բարբերու ժամանակի և նկարագիրներու մանրակրկիտ ուսումնասիրութեան, յաճախ պատմութիւնը խօսակցութեան վերածուած

բացազանչութիւններով, հնչուն բառերով ծանրաբեռնուած, հագիւ տեղ տեղ իրապէս պերճախօս հատուած մը՝ պոռոտախօսութեանց մէջ կորսուած, կամ զգացմամբ բարախուն խօսակցութիւն մը՝ սնամէջ գոռում-գոչումներու տակ թաղուած:» Շատ իրաւամբ Սրապիոն Հէքիմեան Դուրեանի համար ըսած է սա խօսքը. «Մեղք որ այդ տղան թատերգութիւն կը գրէ. անիկա բանաստեղծ ծնած է»: Բայց այդ մեղքին առաջնորդողը ամէնէն աւելի Պէշիկթաշլեանն էր եղած:

Հրատարակիչ և գրավաճառ վահան և Պիմէն Զարդարեան Եղբարք՝ Սահմանադրութեան հռչակուած առաջին օրէն սկսան հիմնել Ազատ Մատենաչար հրատարակչական շահեկան գործը, որ դեռ կը շարունակուի: Այդ հրատարակութեանց ամբողջ շարքը կու գայ հաւաստելու թէ թուրքիոյ հայերը կը սիրեն գիրքը: Եւ ուրախ եմ որ ամենէն աւելի սիրուած բանաստեղծէն սկսուած է այդ հրատարակչական ձեռնարկը:

Դուրեանի Սեւ Հոյերը «Ազատ Մատեն

նաշար»ի առաջին թիւը կը կազմէ: Հրատարակիչ եղբայրները արդեօք կ'ուզէին իմացնել թէ Հայաստանի Սեւ Հողերը Սահմանադրութեան ճերմակ յոյսով ճերմակցան թէ գերութիւնը, գրաքննութիւնը թոյլ չէին տուած որ մեր սիրուած հեղինակներու աշխատութիւնները լիովին ծանօթացնէինք — Սահմանադրութիւնը թոյլ կուտար, ուրեմն օգտուելու էր:

Բռնակալութիւնը դեռ գոյութիւն չունեցած, Գուրեանի Սեւ Հողերը անձանօթ չէր, բայց ան շուտով մոռցուեցաւ, վասն զի բռնակալ գազանը շուտով իր հարուածը կ'իջեցընըր Ազատ Մամուլի վրայ. Հայաստան ու ազգային բռնեքը ժանտախտի պէս կը հալածուին մամուլէն. Գուրեանի այդ թատերագրութիւնը այդ բռնեքով ապականուած էր բռնակալ հրէշին համար ու բնականաբար հալածանքի արժանի:

Սահմանադրութեամբ՝ առաջին պատիւը առաջին հալածուողին կ'ըլլար:

Եւ մենք կ'ուենենանք Սեւ Հողերու նոր սպազրութիւնը:

Գուրեանը մեր մէջ ամենէն աւելի ժողովրդական բանաստեղծն է, և զրագէտներէն շատ աւելի դպրոցականներուն սիրելի բանաստեղծը: Իր քնարը գերազանցօրէն և անհամեմատ բարձր է իր թատ-

րոններէն: Չանոնք եթէ չի գրէր, իր անմահութեան փառքը գուցէ դեռ աւելի ըլլար: Բայց պատառ մը հացի կարօտութիւնը իրեն զրական այդ վիժումներուն պատճառ կ'ըլլար: Աղքատութիւնը ինչ նախճիրներ կը գործէ:

Սիրուած բանաստեղծը իր ազգասիրական թատրոններուն մէջ գաղափարական մարդ մը նկատելով, անշահեկան չեմ համարեր իր «Սեւ Հողեր»ը: Մէքը ողբերգելով ազգին սիրտին չէր ըլլար, ինքը ազգին վէրքերը կ'ուզէր բուժել: Ու ամենէն մեծ վէրքն էր պատմական Մատուռիւնը: Խեղճ բանաստեղծը զգացուած կ'ողբայ մեր ազգային այդ խառնագազանային թերութիւնը, և շատ իրաւամբ մեր այդ վատ բարքը ազգային ժանտախտ կոչուած է:

Լանկթիմուր Սերաստիոյ վրայ կը խուժէ. իշխանն Նորայր քաջաբար կ'ուզէ դիմադրել. վաչէ կ'ապստամբեցնէ իր զօրագունդը և իր հայրենիքը Լանկթիմուրի կը մատնէ: Սրածուլութիւնը կը սկսի: Սեւ փատտիա աւերակ կը դառնայ: Կործանումը մեծ չէ, վասն զի Լանկթիմուր՝ Սերաստիոյ իշխան Նորայրի աղջիկն՝ Նազենիկը շատ սիրելով, անոր հայրենասիրութիւնը կը վարձատրէ: Ահա՛ թէ ինչպէս: Լանկթիմուրի զինուորները Նազենիկը սպան-

նեւու վրայ են. աղջիկը իր հօր գիրկը կ'իյնայ: Լանկթիմուր անոր կը հարցնէ.

« Ո՛վ նազելի հայուհիդ, տիեզերակալ այր մը կ'ուզես՝ եթէ դատապարտեալ հայր մը.

« Կազեկիկ. — Հայրս:

« Լանկրիմուր. — Կ'երդնում որ շնորհեցի իւր կեանքը... իմս եղիր:

Կազեկիկ. — Իրեն հետ կը մեռնիմ:

Լանկրիմուր. — Իսկ հայրդ կ'ուզես՝ եթէ հայրենիքդ:

Կազեկիկ. — Հայրենիքս...

Լանկրիմուր. — Քաջ Հայուհի, քեզի թող ըլլան հայրդ ալ հայրենիքդ ալ, քակէ հօրդ շղթաները, իշխանդ Սերաստիոյ, խօսք մը զքեզ ազատեց, Հայուհի մը սիրտս շարժեց: »

Դուրեան իր թատրոնին մէջ միշտ կը քարոզէ Հայրենասիրութիւն և Միութիւն: Ժամանակին այդ քարոզները շատ կըրկնուած են, վասն զի մեր պատմութիւնը մեր կործանումի պատճառ միշտ նկատած էր Մատնութիւնը և Անմիաբանութիւնը: Դուրեան իր թատրոնին ամէն էջերուն մէջ կը կրկնէ այդ քարոզները: Նիւթը աւելի հետաքրքրական պիտի ըլլար, եթէ Դուրեան հաւատարիմ մնար պատմութեան: Լանկթիմուր մատնութեան պէտք չունէր.

Սերաստիոյ բնակիչները տիեզերակալ անձնաբերու գազանին դէմ դիւրաւ չէին կրնար դնել: Լանկթիմուր կը շարժէր իր բանակը, ամէն կողմ դիակ կը սփռէր. սուրէն աւելի հօր զէնքը ստախօսութիւնն էր: Կը խոստանայ Սերաստացուց որ եթէ անձնատուր ըլլան՝ զիրենք սրէ պիտի չանցընէ: Սակայն քաղաքը ձեռքը անցնելով, նախ երիտասարդները գերի կ'ընէ. մեծատունները չարաչար տանջելով, անոնց հարատւութիւնը կ'առնէ ու զուլսնին ոտուրներնուն պրկելով՝ զանոնք մեծամեծ փոսերու մէջ կը նետէ. իսկ կիները իրենց մազերէն ձիերու ազնիւրուն կապելով՝ դաշտերու մէջ քաշկուտել կուտայ, ու բոլոր մանուկները դաշտավայրի մէջ ժողվելով՝ անոնց վրայէն կը վազցընէ երիվարները. այդ զարհուրելի վայրը անկէ ի վեր կը կոչուի սե՛ հողեր: Եւ որովհետև խոստացած էր որ սրով մէկը պիտի չի սպաննէր, բոլոր զօրքերը ողջ ողջ կը թաղէ:

Այս է Լանկթիմուրի Սերաստիոյ մէջ Սեւ հողերու պատմութիւնը:

Իսկ մեր սիրուած բանաստեղծը ըստ իր քմաց կը պատկերէ Լանկթիմուրի արարքները:

Բայց իբրև թատրոն բոլորովին անյաշող գործ մը կ'արտագրէ:

*
* *

Ազատ Մատենաշարի հինգերորդ թիւը Գուրեան բանաստեղծին երգերէն ու տաղերէն կտորներ կը պարունակէ:

Հայրենասիրութեան աշտարակին անկիւնակալ քարերն են այդ երգեր: Պէտք է մոռնալ Հայաստանը՝ « Երբէք, այլ սև նոճի մը ըլլալ, քեզ շո՛ւք տալ »:

Բանաստեղծի աղօթքը հրեշտակի երգ է, անէծքը սատանի թուր:

Սեւ արցունքով կը դիտէ Հայաստանի Սև օրերը, հայրենիք մառախուղ է հազաճ և հոգւոյն ծաղիկն է թոռներ, և քրդին տապաքը ազատ կը շողայ: Մեր թշնամին հայ ռամկին հայ յեղափոխականին թէ չի լսեց, անմեղ հայ բանաստեղծին թող լսէ:

« Մենք պահանջենք՝ բարօրութիւն մեր ազգին.

Զ՝այս պահանջենք՝ զ՝այս Սուլթանէն սրտագին »:

Գուրեան « Աւերումն Անի մայրաքաղաքին Բազրատունեաց » թատրերգութեան

մէջ, հայը չափազանց արիւնարբու կը պատկերէ. մինչև քահանան իսկ կը նկատէ տէրվիշներու պէս մոլեռանդ, անգութ: Պատմութիւնն իսկ ցոյց կուտայ որ հայը կը պատերազմի ոչ թէ դիակներ փռելու, այլ պատառ մը հացը ձեռքէն յափշտակել չի տալու համար, մինչդեռ Գուրեան՝ հայը արիւն ու դիակ սիրող կը կարծէ: Տուրիլի բանակը Անիի վրայ կը շարժի, Գագիկ և Թաթուլ իրարու խօսք կուտան թէ քանի պարսիկ պիտի սպաննեն. իսկ ձերունի հայ բարի քահանան կը պատասխանէ. « Եթէ ես չեմ կրնար զարնել, զոնէ դիակները կը կոխկոտեմ »: Այս տեսակ հայրենասիրութիւնը խաւարամտութեան և անզըթութեան եղբայրն է:

Սակայն Գուրեանին ծանր կ'ըլլայ այս դատաստանս, Գուրեան բռնկաճ հայրենասէր է և միանգամայն բանաստեղծ. չէ՞ որ քնարը դատաստանի մէջ կշիռ չունի, շատ անգամ բանաստեղծի միտքը սրտին վրայ իշխանութիւն չունենար:

Գուրեան արիւնոտ մտածութիւններու հետ՝ ունի նաև շատ ազնիւ հայրենասիրական հոգի. կ'ուզէ որ հայը այն անձնանուէր կտրիճ ցեղերէն ըլլայ, որոնք պատերազմի մէջ մեռել մը ունեցած ատեն մեծամեծ ուրախ հանդէսներ կը կատարեն.

և այդ ըմբռնումով չուզեր որ հայը ողբայ պատերազմի մէջ ինկած որդին, էրիկը. «Յանցանք է հայրենեաց նահատակի մը վրայ լայլը:» Գուրեան որ անյուսուլթեան երգիչն եղաւ, հայրենասիրական դաշտին վրայ, յոյսի վաճառական կը դառնայ. «Յոյսը գերեզմանին զրանք մէջ անգամ կը շողայ... Յոյսը Աստուծոյ ժպիտն է:» Խրախոյսի պէտք ունի մարտիկը և բանաստեղծը կը խրախուսէ. Աստուծոյ ամբ մը հողը կրնայ թաղել ամբողջ հայութիւնը, սակայն անհուն անդունդ մը թշնամիները փորելով դեռ չը կրցան թաղել հայութիւնը:

Կրնանք ըսել՝ թէ Գուրեան ուսմկավարական է: Պիտի ըլլար, եթէ իր ժամանակին այդ վարդապետութիւնը ունենար այն քարոզիչները՝ որ այժմ մատնանիշ կ'ըլլան մեր մէկ քանի հայ պարբերականներու մէջ: Գուցէ առանց անդրադառնալու, Գուրեան ուսմկավարական զաղափարներ կ'ունենայ իր այս տողերովը. խօսողը Տ. Վահրամն է, բարի և ազգասէր եկեղեցականը, որ իշխաններուն համար կ'ըսէ. «Միջնաբերդը քաշուեր են, անտերունջ թողլով խեղճ ժողովուրդը, այդչափ իշխան ինչպէ՞ս միաբաներ են առանց երկպառակութիւն հանելու, վասնզի դիւցազնական

գործի մը համար չեն միացած. Թող չըսեն թէ անմիաբան է հայը, կը միաբանի՝ երբ գործը վատութիւն կը բուրէ... միջնաբերդը կը քաշուին առանց ժողովուրդը մտածելու այն մեծ և հսկայ իշխանները... վատերը... առանց յուսահատ քաղաքացիները խրախուսելու... անհարուածը միշտ ժողովուրդին գլխուն կիջնէ. բայց ժողովուրդը դեռ հայր մը և զօրապետ մը ունի, քահանան... ինչուան հիմա աղօթեցի, արդ զօրապետի մը պէս դարձեալ կը քաջալերեմ ժողովուրդը:»

Գուրեան նաև իր «Աւերումն Անի» թատրերգութեան մէջ գրագիտական տեսակէտով բոլորովին անճարակ և անյաջող է: Եւ դժբաղդաբար ասոր մէջ կը պակսի նաև վիպասանական հոգի, իր խանդավառ երեակայութենէն պուտ մը ճաշակ, կուժ մը հրապոյր չէ թափած: Հայրենիքը փոթորկի մէջ է, Աւփասլան Անին պաշարած է, մատնիչներ գործի վրայ են. Գուրեան հայրենիքի տագնապը նկարագրելով, կը մոռնայ արծարծել իր բանաստեղծական կրակը: Եւ թէև գրական նշանակութիւն մը չունի իր այդ թատրերգութիւնը, սակայն ինչ ինչ իմաստալից գեղահանճար բացատրութիւնները անմոռանալի պիտի մնան:

Յաւով և շատ ցաւով պիտի ըսեմ որ
Թատրերգութեանց մէջ իր մէկ քանի քեր-
թուածներն տարօրինակօրէն միջակութիւն-
ներ են. լաւ որ ներկայ զրիչներէն չէ
եղած. շատ քարկոծողներ պիտի ունենար:
Իր առանձին ազգասիրական քերթուած-
ներուն մէջ կրակ է, շնորհք է. ինչ կա-
թողին ողբերգած է հայ հայրենիքի աւե-
րակները. իր սիրոյ երգերու ծովէն՝ զգաց-
մունքի սահանք մը թափեր է Հայաստա-
նին վրայ:

Երկար ատեն իր ազգասիրական քեր-
թուածները գողունի կ'երգէինք. հին սե-
րունդը մոոցեր էր զանոնք, իսկ նորը և
ոչ իսկ զիտէր թէ Դուրեան ազգասիրա-
կան սիրուն քերթուածներ ունէր. «Ազատ
Մատենաշար»-ի հրատարակիչ Զարդարեան
եղբայրները՝ Դուրեանի հայրենատրոփ քը-
նարը գերեզմանէն դուրս կը հանեն:

Գրադատականովս մի համարիք թէ ան-
մահութեան սյակով ձեզի կը կարկառեմ
Դուրեանի յիշատակը:

Բանաստեղծը այն դէմքերէն է որ մա-
հով՝ աչուրնին գոցուելուն՝ բացուած կը
գտնեն յաւիտենական համակրանքի դռ-
ները:

*
* *

Դուրեան իսկիւտարի ճեմարանին ա-
շակերտներէն է, դասերուն մէջ ամէնէն
անյաջողը, բայց վարժարանին բթամիտը,
ինքնօգնութեան մեծ դպրոցին ամէնէն տա-
ղանդաւոր դէմքերէն մին կրնայ ըլլալ:
Դպրոցական շրջանի անմիտ աշակերտնե-
րէն էին Վալթեր Սկօտ, Հումպոլտ, Վոլ-
թա, Նեւտոն, Ալֆրէդի, Թիէր և Տիւմա
Հայր: Ասոնց շարքէն դուրս չի մնար և
մեր բանաստեղծ Դուրեանը: Վարժարա-
նին ինքը կը պարտի հայերէն և ֆրան-
սերէն լեզուները և ընթերցումներ Հ. Ար-
սէն Բագրատունի, Հ. Ալիշան քերթողնե-
րու երկերէն: Եւ դասարանի զրասեղան-
ներու առջեւ ինքը զգացեր է բանաստեղ-
ծական խանդի մոգութիւնը, զայն ո՛չ վար-
ժապետները և ոչ ալ աղքատութիւնը կրցեր
են մարել:

Հայրը ջրհանկիրներու պետն է, ընտա-
նեկան աղքատութիւնը անտանելի է. տունը
հաց կը պահանջէ: Դուրեանի բուխ սիրտը
կարող չէ դիմադրել խեղճ կացութեան,
իրեն կ'առաջարկուի նիւթական գործ, հա-
շուակալութիւն, կամ պայուսակ բռնել
իլիաս էֆէնտիի ձիուն ետեւէն վազել. և

ինչ դառնացած շեշտով կը հառաչէ. «Ասանկ ստորին գործեր ընելու համար է, որ դպրոցին մէջ այնչափ ատեն միտքս յօգնեցուցի»: Ու կը ստիպուի խաներու մէջ հաշիւներով զբաղիլ. Օրսպիթ թերթին օգնական խմբագիր կ'ըլլայ, դաս կու տայ, և վերջապէս թատրերգութիւններ գրելով, կ'ուզէ ստակ շահիլ. և ծնողաց հաց հասցընել: Բայց թատրերգութիւնները իրեն մէկ քանի ծափ և երկու երեք ստակ կու տային: Սակայն գրիչը ստակ չի շիներ. տունէն իրեն կ'ըսեն. «Պետրոս, գրելով չլմնար, գործ մը գտիր»: Դերասան կ'ըլլայ. «Ամիսի մը չափ մինչեւ անգամ խոնարհեցայ դերասանութիւն ընել, ընտանիքիս կարօտը լեցնելու համար»: Բայց մեծ յաջողակութիւն մը ցոյց չի տար դերասանութեան մէջ, թատերապետ Յակոբ Վարդովեանը անոր կը յատկացնէ ամսական 300 դրուշ: Բայց նախատինքով մը Վարդովեան թշնամացած է Դուրեանին, ու խեղճ բանաստեղծը կը գրկուի դերասանական շահէն: Աղքատութիւնը իր ճիւրանը անոր թօքերուն մէջ կը մխէ, և կը ծծէ բանաստեղծին անոյշ կեանքին ճրագը:

*
* * *

Դուրեան գրականութեան մէջ զարգանալու համար իւսկիւտարի Վարժարանը իրեն նշանակութիւն չունէր. առանձին աշխատութիւնը, կարգալ, անընդհատ կարգալ միջազգային գուլիս գործոցները միակ միջոցներ են ինքնագարգացումի: Եւ Դուրեան ըմբռնած էր ընթերցումի դիւթական օգուտը. իր մահէն յետոյ սենեակէն երկու սնտուկ զիրք կ'ելնէ. բաց աստի յաճախակի ընթերցասիրաց ընկերութեան գրադարանէն 10—15 գիրք կ'առնէ կը կարդայ ու կը վերադարձնէ: Ինքը սիրած է Աւիշանի և Պէշիկիթաշլեանի քերթուածները, ու անոնց համար մեծ պաշտում մը ցոյց տուած: Իր օրերուն եւրոպական տաղանդաւոր հեղինակներուն գործերուն ծանօթ է. իր մէկ թատրոնին մէջ կը յիշէ Լամարգինը, Մօլիերը, Ժան Ժաք Ռուսսօն, այդ միեւնոյն զրքին մէջ գրած է այս տողերը. «Անհարին է որ մարդ Շէքսպիրի, Հիւկոյի և Տիւմայի թատրերգութիւնները կարդացած ժամանակ չսքանչանայ. կը պաշտեմ ես այդ հանճարները, ժողովրդոց այն շանթեռանդն ու կարմիր զաւակները:» Ինքը իրօք հիացող մըն է այդ

հանճարներուն, և անոնց գործերէն ինչ ինչ կտորներ ալ թարգմանած: Իզմիրի և Պոլսոյ Մամուլը արդէն սկսած էր ուսման դէք եւրոպացի հանճարներու նշանաւոր գործերը թարգմանել և հանրացնել. Դուրեան այդ կրակոտ շրջանի զաւակներէն է. կը լափէ այդ թարգմանութիւնները և արդէն ֆրանսերէն լեզուի ծանօթ ըլլալով, կը կարգայ եւրոպացի հեղինակներէ ֆրանսերէն վէպեր, քերթուածներ ու թատրերգութիւններ: Պ. Արշակ Չօպանեան կը գրէ. «Գալով Դուրեանի ընթերցումներուն, սխալ մըն է նորէն կարծել թէ «ինչ կ'ըսեն» ի հեղինակը բան մը կարգացած չէ: Անշուշտ բոլոր գրականութեանց շրջանը ըրած չէ, և շատ հեռու ատկից. բայց կարգացած է ամէնէն փափուկ ու ամէնէն տաք հեղինակներն այդ գրականութեան, որ ամէնէն տաքն է բոլոր գրականութեանց, գլխաւոր ուսմանդիք բանաստեղծները, Հիւկոն (բանաստեղծութեանց առաջին մասը, թշուառները, և թատրերգութիւնները), Լամարդինը (բանաստեղծութիւնները, Ժոսւլէնը, Ռաֆայէլը), Տիւման (վէպերը և թատրերգութիւնները), թերեւս Պայրընէն ալ մէկ քանի թարգմանութիւն կարգացած, և կէօթէի վէրթերին վրայ գաղափար ունեցած ըլլայ»: Եւ հարկ չկայ

տիեզերական ծանօթութիւն միջազգային գրագէտներու. Դուրեան ամէնէն կարեւորներուն ծանօթ էր. լաւ կ'ըսէ Պ. Չօպանեան. «Դուրեանի պէս մտքի մը համար, քանի մը մեծ գործերու ընթերցումը ամբողջ տիեզերքի մը բացումն է:» Բանաստեղծին միտքը արդէն վառ կրակ մըն է, զեղեցկագիտական աստղեր ձայթըող վառարան մը. ընթերցումը կ'արծարծէ այդ կրակը: Դուրեան օտար զեփիւտի պէտք չունէր, իր մէջ կրակը բնական էր. ընթերցումը միջակ կիսկատար ձեւ մը մը տուաւ իր քնարին:

Ամէնէն առաջ ինքը իր քնարին հանած է, ճանչցեր է իր բարձր արժանիքը: Կը պատկառի Պէշիկթաշլեան բանաստեղծէն. բայց կ'ուզէ գիտնալ թէ իր տաղանդը արդեօք կը գնահատուի՞ անկէ, իր «Սեւ Հողեր» թատրերգութիւնը կու տայ անոր, և կը փափաքի կարծիքը իմանալ. մէկ քանի օր վերջը Պէշիկթաշլեան կը վերադարձնէ զայն, յայտնելով որ բաւական լաւ է, և թէ հեղինակը փայլուն ապագայ կը խոստանայ: Բայց անոր ապագան ճանչցողները քիչ էին, իր կենդանութեան

ոչ միայն կը տեսնէր կոյսերու սիրոյ ժլատութիւնը այլ և գնահատումի անտարբեր ճղճիմութիւն մը հանրութենէն. այս ամենաստոյգ է, ասոր համար է որ բանաստեղծը իր օրհասական օրերուն դառնացած կը հառաչէր իր այս խօսքերը. « Իմ՛ յարգս չճանչցան, բայց պիտի փնտռեն զիս »: Եւ համոզուելով որ ինքը արժանիք մ'ունի, քնարը անսովոր յարգ մը, կ'աղերսէ. « Ախ, գոնէ զբաժներս տպեցէք. չմոռցուիմ »: Տաղանդ մը մոռնալն ոճիր մը չէ՞: Մենք ոճրագործ չենք: Մենք այդ սիրուած և սիրոյ ողջակէզ տաղանդը չի մոռցանք, մահուրնէ վերջը իր բարեկամները Գէորգ Չօպանեան և Ա. Գոռանեան հանգանակութիւն մը կ'ընեն, և տետրակներով կը սկսին հրատարակել բանաստեղծին քերթուածներն ու թատրերգութիւնները. ասոնք ընդունելութիւն կը գտնեն. և զրքերուն հասոյթովը Պաղլար պաշիի գերեզմաննոցին մէջ համեստ շիրիմ մը կը կանգնեն բանաստեղծին հողաբլուրին վրայ: Իր համբաւը կ'արտաթեւէ օր աւուր վրայ, քանի որ երթալով զգալի կարեւորութիւն և յարգ կը տրուի քնարերգական զրականութեան, և մամուլին մէջ կարեւորութիւն կը տրուի գեղեցկագիտական քննադատութեան, ու վերլու-

ծելով մեր բանաստեղծական արտադրութեանց կոյտը, կը յաջողինք որոշել թոյլը կորովիէն, բնականը անբնականէն, շնորհալին անշնորհքէն: Եւ հիմայ, շնորհիւ անկեղծ քննադատութեան, կ'ընդունինք Գուրեանի քերթուածները, յաջող, սրտազրաւ, բնական և զգայուն մտքի և գորովի ծաղիկներ, որոնք անթառամ փունջ մը կը մնան մեր զրականութեան տաճարին մէջ:

*
* *
*

Գուրեանի քնարը տխուր է երբ յուսահատութիւնը սեւցուցած է իր ոսկի երազները, ու երազներ են անոնք, ուսկից կ'առնէ իր քնարին համար կրակ, քաղցրութիւն, հմայք, և այդ երազներով կ'ապրի ու կ'ապրեցնէ իր յիշատակը: Գերեզման: այդ սեւ հողը յիշեր է, երգեր է, մրոտած ճակատագիրը անիծեր է, բայց յոռեատեութիւնը չէ՞ որ զինքը կը մղէ մեղամաղձոտութեամբ կեանքը ողբերգելու, հիւանդութիւնը զինքը կը կրծէր, և զիտէր որ փրկութեան յոյս չկայ, ինքը զուարթ է եղած, աղքատութիւն, թոքախտ ամպոտեր են այդ զուարթ ճակտին երկինքը:

Պ. Տօբթ. Պօղոս Քօլօլեան Լոնտոնի

Նոր կեանք հանդէսի « Հայուն Յոռետեսութիւնը » յօդուածին մէջ Գուրեանի մասին գրած է. « Գուրեան ճշմարիտ բանաստեղծը, ջախջախուած խեղճութեան ու հիւանդութեան տակ, ունեցած է դառնութեան յուսահատ վայրկեաններ: Աղքատ ծնած, աղքատ ապրած, աղքատ մեռած գրեթէ պատանի, առանց կեանքը ճանչնալու, առանց զգացած ըլլալու, սիրած ու ատած է զայն, ու պորթկացած իր անհուն ցաւը, հիւանդի ու կարօտի կսկծելի ցաւը, կեանքը իրմէ խլողին դէմ: — Իր բանաստեղծի կազմութիւնը երգել տուած է սէրը իր ճերմակ ամբժուութեանը մէջ. ու թոքբախտաւորի ցաւը անիծել տուած է երկիրը:...

Ու երբեք չպիտի համարձակիմ յոռետես ըսել Գուրեանի համար. պատանի, ապրելու սէրը ունէր, ու իր ցաւը, իր անէծքը կեանքին դէմ չէր, ընդհակառակը, իր ցաւը անհուն է որովհետեւ կը զգայ թէ մահացու կերպով խոցուած է... Գուրեան կեանքը չ'ատէր: Տխուր բանաստեղծ մը եղած է Գուրեան, ու իր վայրկեանական արցունքները բացատրելի: Անկարելի է յոռետես յորջորջել այն բանաստեղծը, որ այս տողերը կը գրէր.

« Ո՛հ, տուէք հոգևոյս կրակի մի կաթիլ,
Սիրել կ'ուզեմ դեռ, եւ ապրիլ ու ապրիլ »:

Լուրջ են Պ. Քօլօլեանի այդ դիտողութիւնները:

Ապրիլ կ'ուզէր, սիրելու համար, ապրիլ կ'ուզէր երգելու համար: Բայց քիչ ապրեցաւ, շատ աւելի գեղեցիկ արտադրութիւններ իրմէ կ'ակնկալուէր, աղքատութիւնը իր հակիրճ կեանքէն ալ օգտակարին կէսը յափշտակեց: Գուրեան մեր գրականութեան օգտակար է իր քնարով, բայց հաց ճարելու համար իր գործօն շրջանի մեծ մասը մսխեր է թատրերգութիւններով: Քիչ ապրեցաւ, քիչ գրեց, բայց իր գեղեցկին տաղանդը անմահացուց վառվառ մտքերով. փնջակ մը իր մտքերէն, օրինակ իր գեղեցկին.

« Դժուար է խօսիլ անհունի համար. անհունը շուրթներ չը կրնար ունենալ, անհունը ինքն իր մէջ կը թաղուի, ինքն իր մէջ կը փողփողէ: »

« Կը հաւատամ Աստուծոյ, կը հաւատամ այն հանդերձեալ ապառնիին, ո՛վ որ կը հաւատայ, երջանիկ է: »

« Սին ճակատագիրը... մեզ՝ մանուկ հանճարներս դալկահար շանթերու փունջ մը ըրաւ »:

« Ով որ երգ չունի կամ երգել չգիտեր՝ գեղեցկին սիրունին իտէականը շօշափելու քաղցրութիւնը չունի: Մարդուն նշանա-

բանը երգն է, բնութիւնը ամբողջ երգ մ'է, ես ալ կ'ըսեմ. « Երիտասարդ ըլլալ՝ երգել, ծեր ըլլալ և աղօթել: »

« Աշխարհիս մէջ միայն անհաւատը ապերջանիկ, յուսահատ և թշուառ է, թերեւս բարեկամք զիս միատիքական կամ այլաբանական գտնեն տողերուս մէջ, արդէն ես ալ այլաբանութիւն մ'եմ, խորհուրդ մ'եմ »:

« Եթէ ճակտիս վրայ վարդ ունենայի, կիները զիս պիտի սիրէին. ան աւելի լաւ է որ դալուկն ունիմ և բանաստեղծները զիս կը սիրեն: »

« Համոզուէ՛, որ քու եղբայրդ գերեզմանի տեղ Նոյեան Տապանը կը մտնէ աշխարհի արիւնահեղեղէն փրկուելու համար »:

« Ինչ, ինչ հանճարներ հիւզին այն քառասային սեմին վրայ խամբեցան կամ մարեցան: Հասարակաց գերեզմաննոցնեւրուն մէջ հողակոյտներ կան, որոնք հրաբուխներ պիտի ըլլային, բայց կայծը սրտի խաւարին մէջ առանց երբեք հրահրելու թաղուած է... Հանճարը վհին մէջ գանկ մը եղաւ առանց մարդկութեան եթերին մէջ զլխաւոր մը ըլլալու »:

Կարելի է որ բանաստեղծ մը իր մէջ զգայ պառնասական խանդի մաքուր կրա-

կը, և տարբեր ու ցուրտ շեշտ մ'ունենայ իր ո՛ր և է գրուածոց մէջ: Ֆնարին հետ նաեւ ընտանեկան խօսք նամակին հետ, միշտ միեւնոյն բանաստեղծ հոգին է. ու թատրերգութիւնները եթէ անյաջող են իբրև բեմական գործ, գեղեցկագիտական արտադրութիւն, և չունենան արուեստ, ձեւ, հրապոյր, բայց անոնք քնքոյշ դերակատարներու կուրծքին տակ կը տրոփեն բանաստեղծին զրաւիչ քնարը, ու եթէ կան անոնց մէջ տափակութիւններ, նիւթին անկատարութեան վերագրելի են, և թատերական գործին մէջ թոյլ, փութկոտ անփորձ զրիչ շարժելուն: Իր քնարին ձայնը անկեղծ ու բնական ըլլալուն համար է որ հանրութեան ուշագրաւ եղաւ. ու ամէնէն աւելի զինքը սիրեցին իրեն պէս մտածողները. կոյսերը և երիտասարդները զինքը շատ սիրեցին: Դուրեան յոյսերու և հրատապ երազներու մէջ օրօրուն՝ ծաղկատի հայ սրտերու քնարն է: Ու այդ քնարը մաղձոտութեան գերեզմանին դուռը չի բանար, այլ յոյսերու, գեղեցիկ պատրանքներու, ու խաբուող պատանին կամ օրիորդը սիրով կը խմէ յուսախաբութեան բաժակը, վասն զի Դուրեանի հոգին հոն թափած է իր անկեղծ իտէալին ամէնէն ջինջ ու կրակոտ կաթիլները: Անըջող

սրտերը՝ չեն ուզեր որ այդ կաթիլները չորնան իրենց թարթիչներուն վրայ: Դուրեան տխուր շեշտեր ունի, բայց իր տխրութիւնը գրաւիչ է, իր յոռետեսութիւնը սիրելի: Լամարզինի երկինքը Դուրեանի քնարին վրայ ցօղեր է անոյշը. և ինչ սիրուն ցօղեր կան հոն, բայց դաշնակներու մեծ վարպետին գոյները անտեսած է, և արդէն շատերը մեր բանաստեղծներէն Լամարզինի միայն քնքոյշ լեզուն սիրեր են, և դեռ աւելի լաւ պիտի ըլլար, եթէ սիրէին նաև անոր սրինգով յղացած պատկերները և աշակերտէին իրեն այդ ճիւղին մէջ ալ:

*
* *

Ամէն գրագէտ իր քննադատական ըմբռնումով յատուկ հիացում մ'ունին Դուրեանին, պուտ մը, կուժ մը կամ ծովացած հիացում:

Կենսագրողը՝ Բարսեղ Ե. Էքսէրճեան կը գրէ.

« Աղքատութեան ծոցին մէջ ծնող մանկիկ մը, ցաւերու ու արցունքի մէջ սնանող պատանի մը, տառապանաց ու աղքատութեան եզրը մարող հանճար մ'է, նա՛ որ իւր զգայուն սրտին ու հիանալի հոգւոյն թռիչներովը կը սլանար անհու-

նին մէջ, ու մարդկային ամէն զգացումներն բնական, անջատ ու յստակ գոյներով կը պարզէր, նա՛ որ փափկազգաց, շնորհալի, կորովի ու վսեմ ոճովը կը փայլէր, երկիրն բովանդակ իւր անձայրածիր տարածութեամբ բաւական չէր գտնէր զինք հասկնալու... Այս հանճարը վերջին անգամ աչքերն երկրիս վրայ կը դարձնէ խորշ մը գտնելու համար. երանգ, ցնորք, յանկարծ իւր աչքերուն կը հանդիպի ցուրտ գերեզման մը բերանարաց. պատրաստ՝ կուլ տալու հիւժած, մաշած մարմին մը, ու այս գրին եզերաց վրայ ակնապիշ հոգին, այն միշտ բարձր ու վսեմ հոգին՝ որոտագոչ կը գոռայ. « Բանաստեղծ մը մահուանէ չի սոսկար, այն ատեն իրաւունք ունէի ցաւելու, երբ ամէնքը անմահ ըլլային, և ես միայն մահկանացու »: ... Հանճարի հրաբուխ մը կար հոն, ներսը, որ իւր տկար հողէ պատեանին մէջ միանց, ու միաց, ոչ ոք ուզեց ըրբըլ հանքերով ակաղձուն այդ հողն: — Այդ հրաբուխ վերջապէս իւր հողէ պատեանէն դուրս նետեց իւր գանձերն, այլ այդ մատաղ հասակին մէջ, կենաց գարունին մէջ, այդ ժայթքումն այրեց, մոխիր դարձուց զինքն ալ: »

Պ. Արշակ Չօպանեան հիացող, հեղինակաւոր քննադատը Դուրեանին, կը գրէ.

« Բեղուն շրջանին մէջ, ուր մեր մեծագոյն քնարերգակները ունեցած ենք, Աւիշանը, Պէշիկիթաշեանը, Թէրզեանը, Հէքիմեանը, Աճէմեանը, Դուրեան եկաւ այն միջոցին, երբ հոգիները լեցուած էին վսեմ բառերով, յուզման ճիչերով, արցունքով, արիւնով, ճախրանքով. ինք ազնուազգի միտք, բնութեանէն օտուած, սնաւ այդ հրեղէն միջոցում, ու այդ զգացման գրականութեամբ ամէնէն հոծ ու ամենէն տաք ներկայացուցիչը եղաւ, ու վերջինը: Այն գործը, զոր արտադրած է, իր ժամանակին ոգիին խտացումն է. աւոր ամբողջ շինծու փրօցուողոյց, դերասանական մասը կը պարունակէ (Թատրերգութիւնները), ինչպէս անոր յափշտակութիւնը, աւիւնը և զգայնութիւնը: ... Ինչ ձեւ ալ առնէ հայ բանաստեղծութիւնը, ինչ զարգացման ալ հասնի, այդ միամիտ երգերը, իրենց անկատարութիւններով և իրենց անհաւասարութիւններով հանդերձ, միշտ պիտի պահեն իրենց անթառամ երիտասարդութիւնը, որովհետեւ անկեղծ ներշնչման մը ծնունդ են և որովհետեւ հանճարի կնիքը կը կրեն: Ապագան վերջապէս պիտի նուիրագործէ բանաստեղծին անունը զոր իր ժամանակակիցները չգիտցան յարգել: Այդ սիրոյ տաղերու պատիկ

հաւաքածուն, ամէն մտքերու մէջ քանդակուած, ամէն բերաններու վրայ թռչելով, ազգային իր մը պիտի դառնայ, և ամէնէն աւելի սիրուածներէն մէկը: Ու սերունդները, որոնք պիտի գան սերունդներէն յետոյ, իրենց երազանքի և տրամուլթեան ժամերուն, նոճիներու սուգին մէջէն և վերջալոյսի տրամուլթեան տակ այդ դալկահար ստուերի՝ թափառիլը պիտի տեսնեն, ցաւով սար ռացող տողերու երամով պաշարուած, որոնք, մեծութեան մէջ թեւարաց՝ յաւերժապէս կու լան: »

Հայ հանճարներու և տաղանդաւոր մեծ դէմքերու վրայ սքանչացող Պ. Մելքոն Կիւրճեանը (Հրանդ) իր « Զատկական օրագիր » վերնագրով շաբաթական քրոնիկներուն մէջ անհունօրէն կը հիանար Դուրեանի բերթողական գրչին. կը յիշատակէր բանաստեղծին անտիպ նամակներէն ամէնէն զեղեցիկ մտքերը, ու կը յայտնէր իր գնահատական այս տողերը.

« Դուրեան իր այս ամէն գրուածոցը մէջ անձանօթին ալ հետ է, կը զարնուի, անէճք ու արհամարհանք ի ձեռքին բռնած հին աստուծոյ մը պէս որ կայծակն ունէր իր աջոյն մէջ. թէ բժշկին զեղազրին առջեւ, թէ լուսնի տակ, թէ մտերիմի մը և կամ գերեզմանի մը քով, հոգի մը չէ որ

կը խօսի, այլ գերեզմանաց բանաստեղծութեան հազարաւոր բերաններ, որ դալկահար ճակտի մը ներքեւ անհունի դաշնակութիւնը կը յօրինեն, մեղմ, ուժգին, նուազկոտ և որոտընդոտ ձայներ իրարու խառնելով, հապա իւր վէճքըն որ կուրծքին տակ միշտ արիւնով կը հռնդայ, հապա իւր կենսական ուժերը՝ որ միշտ կը սպառին, հապա անլուելի պատերաճման գոր աննկուն կը մղէ Գերագոյնին դէմ...»

Միեւնոյն գրագէտը Գուրեանի մութ մտքերուն մեկնութիւն տուած է, ո՛չ հին Արեւելքի այլ հին Հայրենիքի մէջ 1891ին կը գրէր. «Իր մթութիւնն ալ, որ տեսնուած է ուրեք ուրեք, տաճարի մը ստուերն է որ աւելի խորհրդաւոր կ'ընայ Սրբութեանց վրայ, խաչին ու պատկերին վրայ, կամարին և յատակին մէջ երերուն»։ Եւ միեւնոյն օրագրին մէջ Ասպետ կեղծանունով ուրիշ գրագէտ մը հիացումով կը զբուռատէր Գուրեանի քնարերգական հմայքը. չէ որ ինքն է եղած ամէնէն անկեղծ սիրերգուն. Ասպետ մեծ խանդավառութեամբ կը գրէր. «Ի՛նչ գերազանց սիրող մը այդ պատանի Գուրեանը։ Խունկ որ մինչև հատնումը, մինչև սպառումը, ծխած է բագինին առջեւ՝ իր անտարբեր ու անըզգայ արձանի անմատչելիութեամբ բազ-

մած է կինը... Հէգ ջախջախ քնար, որ միշտ միեւնոյն երգը երգած է հետզհետէ աւելի սուր ու աւելի ջղաձգական խաղերով, մինչև այն ժամուն ուր ա՛լ քնարը կոտորտուած է զինքը սեղմող ձեռքին ճգնաժամային պրկումին տակ»։

Գուրեան փշրուած արեւ մըն էր. չէ եղած այնքան մեծ որչափ իրեն առատաձեռնուած անսահման համբաւը։ Քարկոծումի արժանի՛ եմ արդեօք այս խօսքովս, սակայն ինձմէ առաջ քարը պէտք է ինկնայ մեծանուն գրագէտ և անաչառ քննադատ ողբացեալ Արփիար Արփիարեանի վրայ, որ միշտ անճրկած էր, երբ պիտի գրէր Գուրեանի վրայ, իմ ստիպումիս չկարենալով դիմագրել, երկու տող գրեց արտասահմանի խողխողուած թերթի մը մէջ, և տեսէք ի՛նչ ժլատ է իր գրիչը. «Պետոս Գուրեան ի՛նչ պիտի ըլլար։ Գաղտնիքը հետը գերեզման տարաւ։ Բանաստեղծ ծրնած, իր բնածին կարողութեանց զարգացումովը մեծկակ տեղ մը պիտի բռնէր մեր նոր գրականութեան մէջ։ Հիմակ սրբտերու մէջ է իր տեղը։ Քսանամենի վաղամահիկը երսուն տարիէ ի վեր է որ նոր նորածիլ երիտասարդներու զրաւիչն է։ Տրտմաթախիծ սրտերու ալ սփոփանքն է։ Ահա ինչո՞ւ շատ ժողովրդական անուն մը, քանի մը բանաստեղծութիւններով։»

Չեմ գիտեր որ եթէ այժմեան բանաստեղծներէն ըլլար նաեւ Դուրեան, պիտի կարենա՞ր ժամանակակից գրական ըմբռումներու համեմատ արժանանալ այն գովեստներուն ինչ որ անցեալը իրեն պարգեւած էր:

Թող դարձեալ իր ոսկի բազկաթոռով անխախտ մնայ իր ոլիմբական բարձունքը. վասն զի ան կրցաւ զբաւել շատերուն սիրար: Անուրանալի է իր ինքնարուխ և բնատուր քերթողական շնորհալի կրակը, զոր վառ պահեց, բռնկցուց և այդ կրակէն կայծեր ցանեց զինքը պաշտող նոր բանաստեղծներու կուրծքին մէջ:

Իր քերթուածներէն ամէնէն գեղեցիկները թարգմանուած են անգլիերէն, ֆրանսերէն, ռուսերէն և գերմաներէն: Իր վրայ մեր գրականութեան մէջ գրողներ շատ եղան: Եւ միշտ անհուն համակրանքով հիւսեր են անոր նկարէն ուրուսպատկերը:

Աստղերը շատ երգեց, և արդեօք ո՞ր աստղին մէջ օթեւան գտաւ իր շողշող հոգին:


Պիտի տեսնե՞նք Աշտիշատի բարձունքը հայ փանթէոն մը, Դուրեանի ու նմաններու աճիւնէն ափ մը՝ սափորներով գետեղուած հոն՝ մարմար խորշերու մէջ...:


Յ Ա Ն Կ

=

Եղև Տէմերճիպաշեան	5
Արփիար Արփիարեան	205
Ռուսինեան Նահապետ	395
Պետրոս Դուրեան	435







65.712